

ՀՀ ԳԱԱ ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Ս. ԱՂԱԲԵԿՅԱՆ, Զ. ԲԱՌՆԱՍՅԱՆ, Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Վ. ԿԱՏՎԱԼՅԱՆ, Հ. ՄԵՍՐՈՊՅԱՆ, Ժ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ,
Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ, Գ. ՄԿՐՏՅԱՆ

ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՐԱԿ Բ.

ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

ՀՏԴ 811.19'28
ԳՄԴ 81.51-025.7
Բ 344

Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ Վ. Կատվալյան

Բ 344 Բարբառագիտական հետազոտություններ: Պրակ Բ.- Եր.:
ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023.- 293 էջ:

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշատակիցների հոդվածները, որոնք 2014 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում, գրքերում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են բարբառների ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր խնդիրների, ներկայացնում են բարբառային լեզվի հնչյունաբանության, բառապաշարի ու ձևաբանության ոլորտներում կատարված հետազոտությունների արդյունքներ, պատմահամեմատական բարբառագիտությանն առնչվող հարցեր: Ժողովածուն կարող է օգտակար լինել բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, ազգագրության մասնագետներին: Ներկայացված նյութը կարող է օգտագործվել հանրագիտարանային բնույթի աշխատանքներում, ուսումնական դասընթացներում:

ՀՏԴ 811.19'28
ԳՄԴ 81.51-025.7

ISBN 978-9939-9305-4-1
© ՀՀԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2023

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Բարբառագիտական հետազոտությունների» Բ. պրակը ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների հոդվածները, որոնք 2014 թվին հրատարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում, գրքերում: Ներկայացվող նյութերը վերաբերում են բարբառների ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր խնդիրների, ներկայացնում են բարբառային լեզվի տարբեր մակարդակների միավորների ու իրողությունների հետազոտության արդյունքներ:

Պրակի առաջին գլխում («Բարբառների ուսումնասիրության հարցեր») ընդգրկված են հոդվածներ, որոնցում հեղինակները արծարծում են բարբառների գոյատևմանն ու ուսումնասիրությանը, բնութագրական առանձնահատկություններին վերաբերող խնդիրներ, Մշո բարբառին առնչվող հարցեր: Երկրորդ գլխում («Հնչյունաբանության հարցեր») քննության առարկա են Արցախի բարբառային միավորների քմային բաղաձայնները: Ժողովածուի երրորդ գլուխը («Բառագիտության հարցեր») առավել ընդգրկունն է: Այս բաժնի հոդվածներում հեղինակներն անդրադառնում են հայերենի բարբառային բառապաշարի բառակազմական իրողությունների, դարձվածքների, փոխառությունների: Անդրադարձներ են կատարվում բառապաշարի իմաստային մի շարք խմբերի՝ դիտարկելով ազգակցական հարաբերություններին, ծաղկազարդին, տոնական օրերին ու քրիստոնեական խորհրդանիշներին, գունանուններին վերաբերող բարբառային բառաշերտերը, քննության ենթարկելով որոշ հասկացությունների բարբառային բառանվանումները: Պրակի չորրորդ գլխում («Ձևաբանության հարցեր») դիտարկվում են դերանունների դրսևորումները առանձին բարբառախմբում, անդրադարձներ են կատարվում հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի կառուցվածքային ու գուգադրական քննության հարցերին, արևմտյան խմբակցության մի քանի բարբառների ընձեռած նյութի շրջանա-

կում դիտարկվում են բայի երկրորդական վերլուծական բաղադրյալ ժամանակների դրսևորումների յուրահատկությունները: Պրակի եզրափակիչ գլխում («Պատմահամեմատական բարբառագիտության հարցեր») ընդգրկված հոդվածներում հեղինակները քննում են հայերենի բարբառների պատմական ու համեմատական ուսումնասիրությանն առնչվող խնդիրներ. դիտարկվում են բարբառային հայերենի և ուրարտերենի մի շարք համապատասխանություններ, հինհայերենյան ու միջինհայերենյան իրողություններ Բայազետի բարբառում, կատարվում է միջին հայերենի և Մշո բարբառի անվանական համակարգերի առանձին իրողությունների համեմատական քննություն, դիտարկվում է միջին հայերենի տարբերակվածության հարցը:

Ժողովածուն օգտակար կլինի բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, ազգագրության մասնագետներին: Ներկայացված նյութը կարող է օգտագործվել հանրագիտարանային բնույթի աշխատանքներում, ուսումնական դասընթացներում:

Վ. Կատվայան

ԳԼՈՒԽ Ա. ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ¹

Ջենմա Բառնասյան

20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ 1,5 միլիոն հայերի ոչնչացումը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերում, որը ծրագրավորված իրականացրել են երիտթուրքական կառավարողները 1915-22թթ., ուղղակի աշխարհով մեկ տարածեց մեր ժողովրդին՝ գոյացնելով հայ Սփյուռքը: Հայության այն պատառիկները, որոնց հաջողվել է փրկվել կոտորածներից և ապաստան գտնել օտար ափերում, իրենց հետ տարել են մեր ժողովրդի արժեհամակարգում ամենավերին նիշերն զբաղեցնող հավատքը, լեզուն, սովորույթները: Ջարմանալի չէ, որ գաղթելիս նախ ապաստանել են փոքրիշատե ապահով մի վայրում, այնուհետև ձգտել են վերաբնակություն հաստատել առավել հայաշատ գաղթօջախներում՝ չկորցնելու համար իրենց ինքնությունը: Հին գաղթօջախները պարբերաբար համալրվել են գաղթականության նորանոր խմբերով, խաչավորվել են հայերենի տարբեր բարբառներ:

Հայերենի բարբառների ուսումնասիրության արդի փուլում հրապարակի վրա են առանձինբարբառների նկարագրությանը նվիրված տասնյակ մենագրություններ: Ականավոր լեզվաբան Հ.Աճառյանի շնորհիվ հայ բարբառագիտությունը վերջնականապես առանձնացել է որպես ինքնուրույն գիտակարգ, իսկ հայերենի մի քանի տասնյակ բարբառներ ծավալուն մենագրությունների նյութ են դարձել: Բարբառախտաբար, բարբառների մասին բավա-

¹ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 438-440:

կան առատ նյութեր կարելի է քաղել նաև բանահյուսական գրառված նյութերից, երգերից, հեքիաթներից, առածներից ու ասացվածքներից:

Ինչպես ժամանակին Շ. Աճառյանի, այնպես էլ հայ բարբառագետների հետագա սերնդի նվիրական երազանքը եղել և մնում է բարբառագիտական ապագա ատլասի կազմումը, որի քատեզներում պիտի արտահայտվի բարբառային այս կամ այն երևույթի արեալը՝ տարածույթը: Հայ բարբառների պարագայում դա չափազանց բարդ գործ է, եթե ոչ անհնարին՝ նկատի ունենալով տեղահանություններն ու բռնագաղթերը: Հին գաղթօջախները պարբերաբար համալրվել են գաղթականության նորանոր խմբերով, նրանց մայրենի բարբառներից շատերն անդառնալիորեն կորել են՝ լավագույն դեպքում թողնելով միջբարբառային խոսվածքներ: Եթե մենք գործ ունենայինք այնպիսի լեզվի հետ, որը կրող բնակչությունը դարերի ընթացքում արմատական տեղաշարժերի չի ենթարկվել, և որի բարբառների տարբերության (հասկանալիության) աստիճանը գրեթե ուղիղ համեմատական է բնակավայրերի հեռավորության աստիճանին, շատ հեշտ կլիներ բարբառների դասոսման և քարտեզագրման գործը: Ներկայումս ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում ընթանում են վերջին 40 տարիների հավաքչական աշխատանքների արդյունքում կուտակված խոսվածքային 500 միավորների ընձեռած նյութերի դասոսման աշխատանքներ: Ապագա ատլասը մեծ նպաստ կարող է բերել նաև մեր ժողովրդի էթնիկական կառուցվածքի, ծագումնաբանական հարցերի լուծման գործին: Այլ խոսքով՝ պատմագիտությունը մեծապես կարող է շահել, եթե իր եզրակացությունների ժամանակ օգտագործի նաև բարբառների լեզվական նյութն իբրև աղբյուրագիտական արժեք ներկայացնող նյութեր:

Մինչև 20-րդ դարասկիզբը հայ բարբառների տարածման սահմանը եվրոպական երկրներից, Թուրքիայից, Իրանից, Հնդկաստանից հասնում էր մինչև հեռավոր Ավստրալիա, Կանադա, ԱՄՆ և այլն: Մեծ եղեռնից հետո է՛լ ավելի ընդարձակվեց հայ բարբառների աշխարհագրությունը: Կասկածից վեր է, որ պատմական ճա-

կատագրի բերումով մեր ժողովրդին պատուհասած անթիվ-անհամար տեղաշարժերը անդառնալի կորուսներ են պատճառել հայ ազգագրությանը, բանահյուսությանը, բարբառների, մեր նյութական և հոգևոր մշակույթին: Բարբառների՝ որպես հայ ժողովրդի ոչ նյութական մյակույթի հիանալի նմուշների կորուստը ցեղասպանության գործոններից մեկն է: Ցեղասպանության կոծանարար ազդեցությունը ոչ միայն ֆիզիկական բնաջնջմամբ է հատկանշվում, այլև բարբառի, մայրենի խոսվածքի տարագրությամբ և աստիճանական կորստով: Այսինքն՝ բնօրրանից կտրվելով, այլ լեզվական միջավայր տեղափոխվելով (կարևոր չէ՝ օտարալեզու, թե հայախոս), բարբառակիր հանրությունը կարող է փրկվել ֆիզիկապես, որոշ ժամանակ հաղորդակցվել դրանով գոնե ներընտանեկան միջավայրում, սակայն հաջորդ սերունդների լեզուն արդեն մայրենի խոսվածքը չի կարող լինել:

Հայ ժողովրդի մեծ ու փոքր տեղահանություններն ու միգրացիաներն արտացոլող՝ «Հայ գաղթականության պատմություն» աշխատության էջերում Հ. Աճառյանը նկարագրում է հոծ գաղթականության պարագայում ներընտանեկան և համայնքային հաղորդակցության մեջ մայրենի բարբառի միավորող դերն ու նշանակությունը: Հեռավոր գաղթօջախներում մայրենի բարբառների արձագանքները փնտրելը Հ. Աճառյանը համարում է ոչ այնքան արդյունավետ աշխատանք: Նա իր «Հայոց լեզվի պատմություն» հիմնարար աշխատության մեջ, քննելով Հայաստանից դուրս գտնվող հայ գաղթօջախների բարբառները, ցավով նշում է. «Մենք չգիտենք, թե մեր ո՞ր գաղութը Հայաստանի ո՞ր գավառից դուրս եկավ, միայն գիտենք, որ այսօրվա մեր ոչ մի արտաքին բարբառ ոչ մի ներքին բարբառի հետ ամբողջապես նույնը չէ»: Տեղահանություններն ու բռնագաղթերը փաստորեն պատճառ են դարձել մեր ինքնության գլխավոր նշանի՝ լեզվի կորստին:

Ներկայացնենք իրողություններ, որ հատկանշական ենք համարում բնօրրանից կտրված հայ գաղթօջախներում մայրենի բարբառների վիճակի համար: Ընտրողաբար ներկայացնենք հայրենի մի քանի բարբառներ, որոնք, հայերենի բնօրրանից տարագրվելով,

ցաքուցրիվ են եղել աշխարհով մեկ և բարբառախոս միջավայրից զրկվելով՝ աստիճանաբար մահացել են:

Ամենաընդարձակ տարածքում մշտապես գործառել է Վանի բարբառը, որը հաղորդակցման միջոց էր Վանա լճի արևելյան ափին գտնվող Վան քաղաքում և շրջակա գյուղերում, Մոկսում, Ոզմում, Ոստանում, Խոշաբի, Բերկրիի, Արձեշի գավառներում: Հերոսամարտից հետո Վանի ցավալի անկումը ողբալի հետևանքներ ունեցավ: Կոտորածներից փրկվածները թեև շատ էին, սակայն գաղթի քարավանները տարածվեցին ամենատարբեր ուղղություններով: Համեմատաբար հարուստ շատ վանեցիներ գաղթեցին ու վերաբնակություն հաստատեցին Ֆրանսիայում, Իտալիայում, ինչպես նաև Իրաքում, Լիբանանում: Արևելյան Հայաստան գաղթածների մի մասը Արարատյան դաշտի գյուղերում, նաև Երևանում ապաստան գտան (հատկապես Կոնդ թաղամասում), գերդաստաններ կային Աշտարակում և շրջակայքի գյուղերում, մի սովորականով էլ գաղթեց Ռուսաստանի տարբեր քաղաքներ, և այդ ճանապարհին որոշ գերդաստաններ մնացին բնակվելու Թիֆլիսում: Տարածական այսպիսի ընդարձակությունն անհետևանք չմնաց, և անգամ Մայր հայրենիքում, ասենք, Երևանում վերաբնակվածները բարբառը պահպանելու հիմքերից զրկվեցին Երևանի բարբառի և գրական արևելահայերենի ազդեցությամբ: Բարեբախտաբար, Գևորգյան ճեմարանում դասավանդելու ընթացքում բարբառի քննությունը 20-րդ դարի սկզբին իրականացրել է մեր մեծ լեզվաբան Հ.Աճառյանը՝ որպես բարբառախոս ունենալով Վանից նոր գաղթած տասնյակ ուսանողներ: Գրքում առկա են բանահյուսական պատառիկներ՝ գրառված կենդանի բարբառախոսներից, ինչպես նաև նմուշներ 19-րդ դարի երկրորդ կեսին Պոլսում Գ.Մրվանձտյանի «Մանանա», «Համով-հոտով» ժողովածուներից, Թիֆլիսում Շերենցի հրատարակած «Վանա սազ» ժողովածուից և այլն: Աշխատանքն իրականացնելուց 46 տարի անց մեծ գիտնականը հնրարավորություն ունեցավ ծնունդով վանեցի մի դասախոսի օգնությամբ մշակելու և 1952 թ. հրատարակելու իր այդ խիստ կարևոր ուսումնասիրությունը: Հետագայում, երբ ԳԱ լեզվի

ինստիտուտում իրականացվեցին հայ բարբառների հավաքչական աշխատանքներ, մենք՝ բարբառագետներս, հատուկ մշակված հարցարանների օգնությամբ գրառեցինք բազմաթիվ խոսվածքային միավորներ՝ Վանի բարբառն իրենց ծնողների մայրենի բարբառը համարող բարբառախոսներից, այսինքն՝ վանեցիների 2-րդ, 3-րդ սերնդի ներկայացուցիչներից: Հիմա արդեն անհնար է գտնել բարբառին տիրապետողի, պետք է բավարարվենք բանահյուսական պատառիկների, զվարճախոսությունների, պարերգերի շտեմարանից քաղած նյութերով: Ահա այդ ճոխ ու հնամենի բարբառն արդեն մեռած կարելի է համարել: Այլ խոսքով, ոչ նյութական մշակույթը՝ լեզուն, բարբառը մեռնում է բնօրրանը կորցնելու հետևանքով:

Բնօրրանից դուրս համեմատաբար լավ պահպանված բարբառներից է Սասունի բարբառը: Հայտնի իրողություն է, որ Արաքսից այս կողմ հանգրվանած անմտահայերը նոր բնակատեղի ընտրելիս հիմնականում ապրել են գերդաստաններով, կորցրած բնօրրանին մոտիկ գյուղերի բնակիչներով, ինչն էլ նպաստել է մայրենի խոսվածքներն իբրև հաղորդակցման միջոց գործածելուն ու պահպանելուն: Մեծ եղեռնի տարիներին Անդրանիկի զորքի ուղեկցությամբ Արևելահայաստանում իրենց փրկությունը գտած մշեցիների մի ստվար զանգված բնակություն հաստատեց Շիրակի դաշտի գյուղերում: Ակնառու փաստ է, որ Մշո բարեբեր դաշտի գյուղերից գաղթածները ձգտել են հարթ, սևահողային տարածքներում վերաբնակվել, մինչդեռ լեռնային Սասունից գաղթածները գերադասեցին Արագածոտնի քարքարոտ սարահարթը՝ հնարավորինս կորցրած բնօրրանի նմանատիպ տարածքում ապրելու համար: Ավելացնենք նաև, որ բնակություն են հաստատել սահմանին որքան հնարավոր է մոտիկ՝ առաջին իսկ հնարավորության դեպքում էրգիր վերադառնալու հույսով:

Նկատելի է, որ եթե միևնույն գյուղից կամ հարևան գյուղերից գաղթած ընտանիքներով վերաբնակեցված գյուղերում լավ են պահպանվել այս կամ այն բարբառի խոսվածքները, ապա տարբեր բարբառներով խոսող վերաբնակիչները թեպետ առանձնացել են

տարբեր թաղերում, այնուամենայնիվ, տասնամյակների ընթացքում առաջացել են միջբարբառային խոսվածքներ, ինչպես, օրինակ, Շիրակի մարզի այժմյան Ոսկեհասկ, նախկինում՝ Մուլա-Մուսա գյուղում (Գյումրիից 5 կմ հեռավորության վրա):

Գյուղը հիմնադրվել է 1923 թվականին՝ վերաբնակեցվելով բացառապես գաղթականներով՝ Կարսի մարզից և Մշո դաշտից: Հետաքրքիր է, որ գաղթական անվանում էին միայն մշեցիներին, իսկ Կարսի մարզի տարբեր գյուղերից գաղթածներին մշեցիներն անվանում էին «եռլական» տեղացիներ: Բնականաբար, միմյանցից բավական տարբեր բարբառներով խոսող վերաբնակիչների համար օտարոտի խոսվածքը անջրպետ էր առաջացնում շփվելիս, անգամամուսնությունները խիստ հազվադեպ էին: Մակայն մի քանի տասնամյակի ընթացքում բարբառային էական տարբերությունները նկատելիորեն հարթեցվել էին, ինչին մենք առնչվեցինք անցյալ դարի 80-ական թթ. այդ գյուղում Մշո գավառի Մկրագոմ, Քրդագոմ, Բոստաքյանդ, Հացիկ, Կոպ գյուղերի խոսվածքները գրառելիս: Ողջ մնացած ծերունիներն անհամեմատ լավ էին տիրապետում մայրենի խոսվածքներին, իսկ նրանց զավակներն արդեն իսկ հաղորդակցվում էին միջբարբառային խոսվածքով: Անդրանիկի գորքի հետևից Սյունիք և Ղարաբաղ հասած մշեցիների ու սասունցիների մի քանի տասնյակ ընտանիքներ բնակություն հաստատեցին ու մնացին այդ տարածքի բնակավայրերում: 2002թ. Երևանում ինձ հանդիպած մարտակերտցի բժիշկը պահել էր միայն հուշը այն մասին, թե իր հայրական ընտանիքը սերում է Մշո դաշտի Հացիկ գյուղից: Իսկ ինքը տիրապետում էր միայն ռուսերենին և Ղարաբաղի բարբառին, ինչպես Խոյի, Մարաղայի բարբառները կրողներն էին ժամանակին աստիճանաբար ձուլվել 19-րդ դարում Ղարաբաղ գաղթելով: Բայց եթե խոյեցիների մայրենի խոսվածքի լեզվատարբերն առկա են Հաղբույթի բարբառում, մշեցիների և սասունցիների բարբառներն անհետ կորել են Ղարաբաղի բարբառի միջավայրում:

Պատկերն այլ է Թալինի տարածաշրջանի շատ գյուղերում: Ներկայիս Արագածոտնի մարզի Թալինի և Աշտարակի շատ

գյուղեր բնակեցվել են բացառապես Սասունի տարբեր գյուղերից գաղթածների գերդաստաններով, ասենք, Լեռնարոտում բնակություն են հաստատել գելիեգուզանցիներ կամ գլեցիներ և հիթինքցիներ, Դաշտադեմում՝ Սասունի Դաշտադեմ գյուղից և Խութի տարբեր գյուղերից գաղթածներ, Կաթնաղբյուրում փեթարցիներ, իշխնձորցիներ և այլն: Չնայած այդ տարածաշրջանում մտավորականությունը զգալի թիվ է կազմում, բայց ներընտանեկան հաղորդակցման լեզուն, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, Սասունի բարբառն է: Վերջին տարիներին իբրև զբոսաշրջիկ թուրքիա այցելած մի խումբ մտավորականներ իրենց պապենական բնօրրանում՝ Սասունի Փեթար գյուղում, գտել էին քրդախոս սասունցիների, որոնք մասամբ պահպանել էին մայրենի խոսվածքը:

Հայտնի է, որ Մեծ եղեռնից հետո Սիրիայում հանգրվան գտան կոտորածներից և Դեր-Ջորի տառապանքներից մազապուրծ հազարավոր հայեր, այդ թվում՝ նաև սասունցիներ: Սասունի բարբառը բավական անխաթար պահպանած ընտանիքներ կային Սիրիայի Հալեպ քաղաքում, ուր եղանք 2001թվին: Մեզ բախտ վիճակվեց Առաջնորդարանի և Քառասուն մանկանց եկեղեցու հարևանությամբ գործող «Տարոն-Սասուն» հայրենակցական միության անդամներից տեղեկություններ քաղել սիրիահայերի մայրենի խոսվածքների մասին: Գրական արևմտահայերենի ազդեցությունը, բնականաբար, շատ մեծ էր, սակայն ընտանեկան հարկի տակ սասունցիները հաղորդակցվում էին մայրենի խոսվածքով: Ինչ վերաբերում է Քեսաբ քաղաքում տեղի բարբառը գրանցելու մեր առաքելությանը, ինչ նպատակով էլ մեկնել էինք Սիրիա, ապա այն հաջողությամբ իրականացրինք՝ շնորհիվ բարբառին կատարելապես տիրապետող քեսաբցիների, որոնք դարերով, սերնդեսերունդ փոխանցել էին իրենց մայրենի խոսվածքը:

Մեր բողոքի ձայնը բարձրացնելով 20-րդ դարասկզբին հայ ժողովրդի հանդեպ թուրքական իշխանությունների կողմից հետևողականորեն իրականացված ցեղասպանության և մշակութային եղեռնի դեմ՝ գտնում ենք, որ հայ ժողովրդի արդարացի պա-

հանջատիրության հիմքում դրվող գիտական անժխտելի փաստերի մեջ կայուն տեղ պետք է վերապահել նաև հայ բարբառներին: Այսինքն, եթե կան վաղնջական ժամանակներից եկող Մշո բարբառը, Վանա, Ակնա, Տիգրանակերտի, Սասունի, Կարնո և բազում այլ բարբառներ, ուրեմն մերն են եղել և՛ Մուշը, և՛ Վանը, և՛ Կարինը և՛ Արևմտահայաստանի մնացած բոլոր տարածքները:

Լինելով Հայ դատի պահանջատեր՝ անբեկանելի ենք համարում այն դրույթը, որ ցեղասպանությունը նաև լեզվասպանություն է:

Jemma Barnasyan- The Armenian genocide and the Armenian dialects.- The first genocide of the 20th century-the extermination of 1,5 million Armenians in Western Armenia and in other Armenian populated places of Ottoman Empire, that was organized and in a planned way implemented by Young Turks' leaders 1915-1922, straightforwardly spread our nation all over the world forming the Armenian Diaspora. There is no doubt that from the force of historical fate the innumerable displacements of our people have caused irretrievable losses to the Armenian ethnography, folklore, dialects, as well as to our material and spiritual culture.

ՏԱՐԲԵՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ ԲԱՐԲԱՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՏԿԱՆԻՇ¹

Վիկտոր Կատվայան

Ինչպես մարդկային լեզուն ընդհանրապես, այնպես էլ յուրաքանչյուր կոնկրետ լեզու գործառու է որպես բազմազանությունների, տարբերակային ձևերի մի ամբողջություն²: Տարբերակայնությունը լեզվի կարևորագույն հատկանիշներից է, և իրականության մեջ լեզվական ցանկացած համակարգ ու լեզվի ցանկացած մակարդակի միավորներ հանդես են գալիս տարբերակային ձևերով³: Լեզվական միավորների տարբերակային դրսևորումները դիտարկելի են ինչպես համակարգի գործառության ներսում, լեզվական նույն հանրույթի լեզվագործածության մեջ՝ առանց խոսողների շերտավորման, այնպես էլ նույն համակարգի տարբերակային դրսևորումները (հասարակական և տարածական) համեմատելիս: և իրականության մեջ լեզվական ցանկացած համակարգ ու լեզվի ցանկացած մակարդակի միավորներ հանդես են գալիս տարբերակային ձևերով: Լեզվական միավորների տարբերակային դրսևորումները դիտարկելի են ինչպես համակարգի գործառության ներսում, լեզվական նույն հանրույթի լեզվագործածության մեջ՝ առանց խոսողների շերտավորման, այնպես էլ նույն համակարգի տարբերակային դրսևորումները (հասարակական և տարածական) համեմատելիս: Տարբերակայնությունը, այսպիսով, ունենում է ներհամակարգային և արտահամակարգային արտահայ-

¹ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 273-277:

² Տե՛ս Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1987, էջ 90-92:

³ Խոսքը ոչ թե լեզվի համակարգային նույնարժեք ձևերի մասին է, որոնք գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերությունների մեջ և իրար փոխարինել չեն կարող, այլ նույն իրողության ձևային զուգահեռ դրսևորումների մասին է, որոնք ազատ իրար փոխարինում են համակարգի ներսում կամ համարժեք են համակարգի տարբեր դրսևորումներում:

տություններ: Ներհամակարգային տարբերակայնությունը նույն լեզվական արժեքով և իմաստով մեկից ավելի համագոր ձևերի գուգահեռ գործածությունն է նույն լեզվակիրների խոսքում, իսկ արտահամակարգային տարբերակայնությունը լեզվի տարածական ու հասարակական դրսևորումներում նույն լեզվական արժեքով և իմաստով տարբեր ձևերի գործառությունն է տարբեր լեզվակիրների խոսքում⁴: Այսպիսով, եթե առաջին դեպքում լեզվական տարբերակայնությունը դրսևորվում է նույն լեզվակիրների խոսքում, ապա երկրորդ դեպքում տարբերակայնությունը դրսևորվում է տարբեր լեզվակիրների խոսքում: Տարբերակայնությունը արտահայտվում է ն՛ գրական լեզվում (թե՛ գրավոր, թե՛ բանավոր), ն՛ ժողովրդախոսակցական լեզվում, սակայն տարբեր ծավալներով: Գրական լեզուն, հասկանալի է, ձգտում է ձևերի ըստ հնարավորին միօրինականացման, ուստի այստեղ տարբերակայնության ծավալմանը խոչընդոտում է նորմավորման գործընթացը: Ժողովրդախոսակցական լեզվում տարբերակայնությունը դրսևորման ավելի լայն հնարավորություններ ունի, սակայն ընդհանուրի կողմից հասկանալի և ընդունելի լինելու մղումը այնուամենայնիվ որոշակի սահմանափակումների պատճառ է դառնում: Երևույթը առավել ազատ դրսևորվելու հնարավորություններ ունի բարբառային խոսքում, որտեղ լեզվական ցանկացած ձև կարող է գոյատևել, եթե հասկանալի է տվյալ լեզվական հանրությանը և այս կամ այն չափով գործածական է լեզվական այդ միջավայրում: Այլ կերպ ասած՝ բարբառում, ինչպես կենդանի բնության մեջ, իրողությունները զանազանությունների ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան լեզվի այլ գոյավիճակներում: Տարբերակայնությունը պայմանավորված է լեզվի էությանը, խոսքային յուրաքանչյուր դրսևորման դեպքում անհատական դրոշմ կրելու յուրահատկությամբ: Միաժամանակ, լեզվի կենդանի գործառության ընթացքում լեզվակիրների ֆիզիկական, մտավոր, հոգևոր, սեռատարիքային ու այլ հատկանիշների հետ տարբերակվածության ու բազմաձևու-

⁴ Երկու դեպքում էլ նկատի չունենք ոճական գուգաձևությունները:

թյունների առաջացմանը նպաստում են նաև լեզվական հանրության տարածական որոշակի անմիասնականությունը, լեզվի զարգացման տարաբնույթ գործընթացները, ժողովրդի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, ներքոին ու արտաքին լեզվական ազդեցությունները և այլն: Այսպիսով, որևէ լեզու, լինելով միասնական ու կայուն գործառող համակարգ, միաժամանակ իր դրսևորումներում տարբերակային միավորների ու հատկանիշների միամբողջություն է ներկայացնում:

Որևէ տարածքի լեզվական հանրության խոսքում տվյալ լեզվի մեջ եղած տարբերակային միավորների ու հատկանիշների ոչ գիտակցական, պատմականորեն ձևավորված յուրօրինակ համատեղումը առաջ է բերում համակարգի մասնավոր ու ինքնատիպ դրսևորում՝ բարբառ: Հայ լեզվաբանությունը անդրադարձել է բարբառային տարբերակվածությանը նպաստող միայն արտալեզվական հանգամանքներին (ցեղերի տրոհում ու միավորում, ֆեոդալական մասնատվածություն, գրագիտության պակաս և այլն)⁵, և անտեսվել է լեզվի բուն էությունից բխող տարբերակայնությունը՝ իբրև բարբառի առաջացման գլխավոր պայման: Պետք է նկատի ունենալ, որ տարբերակային են ոչ միայն լեզվական միավորները, այլ նաև հատկանիշները, և բարբառը ընդհանուր լեզվի մի դրսևորումն է դառնում նախ և առաջ նրանով, որ ունի այդ լեզվում գործառող տարբերակային հատկանիշների միայն իրեն հատուկ փունջ, երբեմն էլ՝ միայն իրեն հատուկ հատկանիշներ: Հատկանիշների յուրաքանչյուր նման փունջ, այսպիսով, բարբառային առանձին միավոր է, ընդհանուր լեզվի տարբերակային դրսևորում: Բարբառում հատկանիշները զուգորդվում են լեզվակիրների կամքից անկախ, ընդ որում՝ բարբառի ներսում յուրաքանչյուր իրողություն կամ հատկանիշ կարող է իր հերթին ունենալ տարբերակային դրսևորումներ: Սակայն այդ համընդհանուր տարբերակայնությունը չի նշանակում, թե բարբառներում քառս է, և ամեն կարգի

⁵ **Ա.Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 64-65. **Ա.Գրիգորյան**, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1957, էջ 49-57:

շեղում ու տարբերակ կարող է գործառել: Յուրաքանչյուր բարբառային միավորի շրջանակներում հստակ գիտակցվում են թույլատրելի տարբերակները, որոնք հասկանալի ու գործածական են լեզվական հանրության անդամների կողմից: Այլ կերպ ասած՝ բարբառային խոսքում տարբերակայնությունը չի խոչընդոտվում, բայց յուրաքանչյուր կոնկրետ պահի գործառում են հանրության կողմից ընդունված և հասկանալի տարբերակները: Ընդ որում՝ տարբերակային ձևերը անհաստական բնույթ չունեն և գործածական են շատերի կողմից, բայց, մյուս կողմից էլ, զուգաձևությունների գործածությունը պարտադիր չէ բոլոր լեզվակիրների համար:

Տարբերակայնությունը դրսևորվում է լեզվի թե՛ հնչյունական, թե՛ բառապաշարային և թե՛ քերականական մակարդակներում: Այստեղ մենք Բայազետի բարբառի ընձեռած նյութի միջոցով կանդրադառնանք հնչյունական զուգաձևություններին⁶:

Հնչյունական տարբերակայնություն դիտարկվում է, երբ զուգահեռ գործառում են՝

1) նույն բառային միավորի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը, ընդ որում՝ հնչյունափոխված եզրը կարող է ներկայացնել հնչյունափոխական զանազան իրողություններ, ինչպես՝

ա) հավելում. կրճեփ - կրոճեփ, դրրկել - հրդրրկել, լիքը - լինքը, քրսանխինգ - քրսանըխինգ, տըսնութ - սըսնութ, ճիրել - ճիրքել, բալա - բալամ և այլն.

բ) անկում. խիվընդնալ - խիվըննալ, հառավտընէ - հառավնէ, բըխկըռտալ - բըկըռտալ, հիմնալ - հիմնալ, ժողվել - ժողել և այլն.

գ) դրափոխություն. ծըզղալ - ծըղզալ, չըփլաղ - չըլփաղ, զըզվալ - զըվզալ, լըվասկ - վըլասկ, սովրել - սորվել, փըշրել - փըրշել, կէսարար - կէրսար և այլն.

⁶ Հասկանալի է, որ հնչյունները ինքնին իմաստակիր միավորներ չեն, ուստի հնչյունական տարբերակայնությունը նպատակահարմար է դիտարկել բառային մակարդակում, երբ բառային նույն միավորը նույն իմաստով դրսևորվում է հնչյունական այս կամ այն տարբերակներով: Իհարկե, յուրաքանչյուր հնչյուն ունի նաև արտաբերական ու ձայնաբանական տարբերակներ, սակայն դրանց մենք այստեղ չենք անդրադառնում:

դ) առնմանում. ըսպիշկա - ըշպիշկա, դ'ալար - դ'ալալ, հավել - հելվել, ըզգուշ - ըշկուշ և այլն.

ե) տարնմանում. գուլըլել - գուլըրել, լուկա - լուրկա, հերես - հիրես, հեդեվ - հիդեվ և այլն.

զ) դիրքային փոփոխություններ. կօղրել - կօյրել, պրոծընել - պըրզնել, հընցընել - հընսնել, ջըղիզ - ջըղինձ և այլն.

է) համաբանություն. շինել - շիքել, ուցուն - ութանասուն, յօթանասուն - յօցուն և այլն.

ը) կրճատում. բ'առցեք - բ'առց, հըլը - լը, մե փշուր - մեշու, մե փըշուր էլ - մեշօլ, քառսունմեկ - քամեկ, յեռսուներկու - յեռկու և այլն.

թ) մասնավոր փոփոխություններ. բ'արլուս - բ'այլուս, մեռլի - մեռնի, սըխալ - սըղալ, գ'ըթալ - գ'ըթել, գ'իշեր - գ'ըշեր, գիժ - գեժ, դ'ըրկից - դ'ըրկեց, դ'եմ - դ'եմ, քեռթել - քըռթել և այլն.

ժ) հաջորդական փոփոխություններ

Ժա) երբ հնչյունական մի փոփոխության հետևանքով բառի մեջ կատարվում է մեկ այլ փոփոխություն ևս. կըմըշտել - կըժմըթել, հընցըցընել - հընսցընել, ջըղիզ - ջըղինձ, պրոծընել - պըրզնել, թըզբելի - թըղբես, ըշպիշկա - իպիշկա և այլն.

Ժբ) երբ հնչյունական մի փոփոխության ուղղակի հաջորդում է մեկ այլ փոփոխություն. հեդեվանց - հիդեվանց - հիդվանց, հերեսանց - հիրեսանց - հիրսանց, հերեսօվ - հիրեսօվ - հիրսօվ, հերեսատեղ - հիրեսատեղ - հիրսատեղ և այլն.

2) նույն նախնական ձևին հանգող և տարբեր զարգացման ընթացք ներկայացնող տարբերակներ. հարիր - հարուր /հարելր/, դըրկել - հըղըրկել - հօղըրկել /յուղի արկանել/, հըդեղ - հըդօղ /ուղեղ/, շընխկ - շընորք /շնորհք/, տըսներկու - տըսվերկու /տասներկու/, յեռթում - հօռթում /երդումն/, գիղալ - գինալ /գիտենալ/ և այլն.

3) փոխառյալ բառի հնչյունափոխական տարբեր ձևեր. մմբելանցի - մմպերացյա, ջըհուղ - ջըվուղ, մըխտառ - մուխտառ, մուրագ - մուրադ, տելվիզըր - տելվիզօր և այլն.

4) գրական լեզվի ազդեցությամբ առաջացած և բուն բարբառային ձևեր. խառնիս – հառսանիք, խառնըսվոր – հառսանքավոր, խավսար – հավասար, շընոխկ – շընորք, օխտ – յօթ, լուս – լույս, խանգիստ – հանգիստ, խանէլուկ – հանէլուկ, խօքի – հօքի և այլն:

Ինչպես տարբեր են հնչյունական տարբերակայնության առաջացման ուղիները, այնպես էլ նույնական չեն այդ իրողությունը պայմանավորող մասնավոր գործոնները: Բերված օրինակներից երևում է, որ հաճախ տարբերակայնություն դրսևորվում է հնչյունափոխական գործընթացների հետևանքով, երբ նախնական ձևը շարունակում է գործառել հնչյունափոխված ձևին զուգահեռ: Դեպքերի մի մասում լեզվական հանրության մտապատկերում և խոսքում անհնչյունափոխ ձևի պահպանումը կարող է պայմանավորված լինել բառի բաղադրիչ ձևային՝ այլ պայմաններում անհնչյունափոխ գործածությամբ: Օրինակ, *խիվընդնալ - խիվըննալ, հառավտընէ - հառավնէ, սօվրէլ - սօրվէլ, մեռլի - մեռնի* և բառի աճմամբ պայմանավորված նման այլ դեպքերում անհնչյունափոխ ձևերի գործածությունը թերևս պայմանավորված է *խիվանդ, հառավոտ, սօվոր, մեռել* ձևերի գիտակցմամբ և հաճախակի գործածությամբ (նաև՝ այլ կազմություններում, ինչպես խիվընդների, հառավտուն, սօվորուտ, մեռլների): Ամբողջական և կրճատ ձևերի զուգահեռ գործածությունը թերևս պայմանավորված է առաջինների՝ անհրաժեշտության դեպքում իմաստը ավելի ամբողջական և տարբերակված արտահայտելու ունակությամբ (բ առցեք – բ առց, մէ փշուր – մէշու, մէ փըշուր էլ – մէշօլ, քառսունմէկ – քառմէկ, յեռսունէրկու – յեռկու): Խոսքի տեմպը, իմաստը ընդգծելու մղումը, շեշտադրությունը նույնպես կարող են հիմք դառնալ տարբերակների գոյության: Օրինակ, հընցըցընէլ – հընսցընէլ կարգի դեպքերում դեր է խաղում խոսքի տեմպը. առաջինը բնորոշ է դանդաղ տեմպին, երկրորդը՝ արագ տեմպին: Խոսքային իրադրությունը ևս կարող է պայմանավորել տարբերակներից մեկի ընտրությունը. օրինակ, խոսողի բուռն ցանկությունը և Աստծուն ներկայացվող ի սրտե խնդրանքը կարող են պայմանավորել *մաստըված* ձևի գործածությունը (մաստըված, էնենց միրա՝ մեզի փօռցանք ոռաստ չիգ՝ա),

մինչդեռ սովորական հիշատակման դեպքում գործածական է *մսված* ձևը (մսված յեղ ու յեռուն մնա): Նախնական ձևի գործառության շարունակումը կարող է պայմանավորված լինել նաև լեզվական հանրության մեջ արտասանական ավանդույթների պահպանմամբ, հնի և նորի միջև իմաստային տարբերության բացակայությամբ: Թերևս այդ պատճառով է, որ հանդիպում են այնպիսի գուգաձևություններ, ինչպիսիք են՝ հերես – հիրես, հեդեվ – հիդեվ, գ՛իջեր – գ՛ըջեր, դ՛եմ – դ՛եմ, քեթթել – քրոթել, լիքը – լինքը, գ՛ըթալ – գ՛ըթել և այլն: Երբեմն տարբերակայնության առկայությունը կարող է պայմանավորված լինել բառի հնչյունական ձևավորման ոչ հստակ պատկերացմամբ և այս կամ այն ձևի գործածությունը առանձնապես չկարևորելով, ինչպես՝ գուլըլել – գուլըրել, լուլկա – լուրկա, խալալ – խալար, չըփլաղ – չըփաղ, թըզբելի – թըղբես և այլն:

Նույն նախնական ձևին հանգող և տարբեր զարգացման ընթացք ներկայացնող տարբերակների առկայությունը թերևս կարող է պայմանավորված լինել բարբառի շրջանակներում խոսվածքային տարբերակների ընդհանրայնացմամբ և գուգահեռ գործածությամբ, նաև բարբառային այլ միավորներից կատարված ներթափանցումներով, ինչպես՝ կմր – կեր, հարիր – հարուր, գիդալ – գինալ, պմդրաստ – պմյրաստ, կոդրել – կոյրել, հիրար – հիրուր և այլն:

Բանավոր փոխառությունների պարագայում տարբերակայնության առաջացմանը նպաստում են օտար բառերի հնչապատկերների տարատեսակ յուրացումներն ու ընկալումները, ինչպես՝ կմստուրկա – կմստըրուկա – կմստըրուտկա, ջրհուղ – ջրվուղ, տէլէվիզըր – տէլէվիզոր, մուրազ – մուրադ, կմլբաս – կմլբաստ և այլն: Չուգաձևություններ առաջ են գալիս նաև այն դեպքում, երբ նույն բառը բարբառ է մուտք գործում և՛ խոսակցական, և՛ գրական աղբյուրներից (կմպեկ – կօպեկ, շմկալաթ – շօկօլաթ, պմմադօր – պմմիդօր): Տարբերակայնություն առկա է նաև այն դեպքում, երբ գրական լեզվից բարբառ մուտք գործած ձևը դեռևս լիովին չի փո-

խարինել համարժեք նախնական, բարբառային ձևին, ինչպես՝ հառսանիք - խառնիս, շընորք - շընոխկ, յօթ - օխտ, հավատալ - ավատալ, կմյծակ - կէծակ և այլն:

Շատ դեպքերում տարբերակայնությունը կարող է բացատրվել մեկից ավելի գործոններով: Օրինակ, *պմկասություն* – *պաքսություն* գույգի դեպքում առաջին ձևի գործառությունը կարող է պայմանավորված լինել *պմկաս* արմատի (նաև՝ *պմկասավոր* և նման այլ կազմությունների) առկայությամբ, խոսքի դանդաղ տեմպով, բառի արմատական իմաստը ընդգծելու մղումով, արմատի վրա երկրորդական շեշտ ընկնելու հանգամանքով և այլն:

Եռենք, որ խոսքը վերաբերում է գուգահեռ ձևերի գոյության հիմունքներին ընդհանրապես, բայց շատ դեպքերում բարբառային խոսքին հատուկ այս կամ այն ձևի ընտրությունը կարող է լինել ակամա, առանց որևէ նախադրյալի, այսինքն՝ եթե բարբառախոս միջավայրում տարբերակային ձևերը շրջանառում են, ապա դրանցից որևէ մեկի օգտագործումը կարող է և տեղի ունենալ առանց որևէ հիմունքի:

Պետք է նկատի ունենալ, որ տարբերակայնություն ներկայացնող ձևերը միշտ չէ, որ հավասարաչափ գործածական են: Հաճախ դրանցից մեկը պակաս գործածական է և, թվում է, դուրս է մղվում նոր սերնդի խոսքից: Օրինակ, հետևյալ տարբերակային ձևերում առաջին եզրը ներկայացնում են նման ձևեր. *խազար* – *հազար*, *շընոխկ* – *շընորք*, *օխտ* – *յօթ*, *կէծակ* – *կմյծակ*, *տըսվերկու* – *տըսներկու*, *հօղթում* – *յեղթում* և այլն: Սակայն այդ դուրսմղումը բավականին դանդաղ է ընթանում, որովհետև բարբառային խոսքը գիտակցական կանոնարկման չի ենթարկվում, և տարբերակային այս կամ այն ձևը շարունակում է գործառել լեզվական հանրության առանձին հատվածներում: Ի դեպ, այսօր Բայազետի բարբառում գործառում են տարբերակային ձևեր, որոնք դեռևս միջինհայերենյան շրջանից են գալիս: Օրինակ, միջին հայերենի *յորկել* – *յողրկել* գուգաձևությանը համապատասխանում են բարբառային *հըղրկել* – *հողրրկել* տարբերակները, այդպես նաև՝ միջ. հյ.

մուրադ/մուրաստ/մուրագ - Բ.բրբ. *մուրադ/ մուրագ*, միջ. հյ. *ջհուտ/ջֆուտ* - Բ.բրբ. *ջրհուդ/ջրվուդ*, միջ. հյ. *սֆաթ/սիֆաթ* - Բ.բրբ. *սըֆաթ/ սիֆաթ*, միջ. հյ. *սովրիլ/սորվել* - Բ.բրբ. *սովրել/սորվել*, միջ. հյ. *տափկիլ/տափկնալ* - Բ.բրբ. *տմփկել/ տմփկընալ* և այլն:

Ինչպես արդեն նշել ենք, բարբառում տարբերակային ձևերի գուգահեռ գործածությունը տարատեսակ դրսևորումներ ունի նաև բառապաշարում և քերականական համակարգում, ներհամակարգային տարբերակայնությունը զուգորդվում է տարածական և հասարակական տարբերակայնությամբ, ուստի բարբառի համար տարբերակայնությունը էական և բնութագրիչ հատկանիշ պետք է համարել:

Viktor Katvalyan - **Variability as an important feature of dialects.**- Each dialect is a variational expression of the whole language system, has its own bunch of variational features functioning in the language, and possesses features that are sometimes peculiar only to the dialect itself. Variability is an essential and descriptive feature of the dialect, and different phonetic, lexical and grammatical variations for one and the same word can be simultaneously used in a dialectical speech. The following report represents the phonetic differentiations in a dialectical speech, studies the phonetic parallels and causes of their existence based on the example of the dialect of Bayazet.

ՄՈՎՄԻ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՈՍՎԱԾՔԸ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ԴԻՏԱՐԿՄԱՄԲ¹

Ժաննա Միքայելյան

Հայազգի մեծանուն արևելագետ, հայագետ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին 1906 թ., դեռևս Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում սովորելու տարիներին, Նիկողայոս Մառի արշավախմբի կազմում մասնակցում է Անի քաղաքի պեղումներին: Այդ գործուղումը շրջադարձային է դառնում երիտասարդ ուսանողի նախասիրությունների համար: Ինչպես Կ. Յուզբաշյանն է վկայում, Հ. Օրբելին «իսկական բարձրագույն կրթություն ստացավ Անիի պեղումների ժամանակ»²:

Հ. Օրբելուն հատկապես հետաքրքրում էին Արևելքի՝ Հայաստանի, Վրաստանի, Իրանի պատմությունն ու մշակույթը: 1907 թ., պատմաբանասիրականի ուսումնառությանը զուգահեռ, Հ. Օրբելին ընդունվում է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը: 1909 թ. նա ավարտում է պատմաբանասիրական, իսկ 1911 թ.՝ արևելագիտության ֆակուլտետները: Երիտասարդին հատկապես գրավում էր հայագիտությունը: Դրան նպաստել էին Նիկողայոս Մառի հետ նրա շփումները, ով այն ժամանակ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսոր էր:

1910 թ. Ն. Մառը Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի նիստում առաջարկում է Արևմտյան Հայաստանի Վան քաղաք ուղարկել մի մասնագետի, որը կգրադվեր Վանի նահանգի ճարտարապետական հնությունների ուսումնասիրության և տեղաբնակների՝ լեզվի ու բանահյուսության հավաքչական աշխատանքներով: Այս պատասխանատու և ծանր գործը հանձնարարվում է Հովսեփ Օրբելուն:

¹ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 104-113:

² Կ.Յուզբաշյան, *Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի*, Ե., 1987, էջ 16:

Մինչ մեկնելը Հ. Օրբելին ուսումնասիրում է Մուշի և Մոկսի խոսակցական լեզուներին վերաբերող գրավոր աղբյուրները: Նրան հատկապես հետաքրքրում է մոկսեցիների լեզուն, որում, ըստ Հ. Օրբելու, դեռևս շատ չբացահայտված և արխաիկ երևույթներ կային³:

1911 թ. ամռանը Պետերբուրգի համալսարանը տակավին նոր ավարտած Հ. Օրբելին հասնում է Վան, այնուհետև ուղևորվում Մոկս: Մոկաց աշխարհը, շրջապատված լինելով բարձր, անառիկ լեռներով, կարծես մեկուսացած լիներ արտաքին աշխարհից: Հատկապես ձմռանը ճանապարհները անանցանելի էին դառնում: Այդ հանգամանքները, ըստ երիտասարդ հետազոտողի, իրենց ազդեցությունն են թողել տեղացիների խոսակցական լեզվի ու սովորույթների վրա: Օգոստոս ամսին հազիվ երկու օրում Հ. Օրբելին Վանից հասնում է Մոկս: Առաջին անգամ մեկ ամիս հյուրընկալվում է քուրդ Մուրթուլա բեկի՝ տեղական պրիստավի տանը, որը, քրդերենից բացի, անադարտ տիրապետում էր տեղի խոսակցական հայերենին և թուրքերենին: Հ. Օրբելին իր գրառումներում նկարագրում է Մուրթուլա բեկի կենցաղը, նիստուկացը, որով մեզ պարզ է դառնում պրիստավի ժողովրդավար էությունը: Նրա տունը չուներ տեղական քրդական սովորություններին հարիր տեսք: Այն նորակառույց էր, սենյակների դասավորությունը և կահավորանքը «ա լա ֆրանկա» էր՝ ինչպես ընդունված էր այդ թվերին Թուրքիայի բարձրաշխարհիկ մարդկանց կենցաղում⁴: Բեկի տանը ամեն երեկո հավաքվում էին քուրդ և հայ բնակչության ամենատարբեր խավերի մարդիկ. հասարակ արհեստավորներ, գյուղացիներ, աղաներ, քաղաքային բնակիչներ և ավելի քիչ՝ բեկեր: Նրանք գալիս էին՝ բեկից զանազան խորհուրդներ լսելու կամ էլ որևէ հարցում օգնություն խնդրելու: Ի դեպ, Մուրթուլա բեկը հայերի մեծ բարեկամն էր: Հ. Օրբելուն պատմել էին, որ 1895-1896 թթ. հայկական ջարդերի ժամանակ նա մեծ օգնություն է ցույց տվել արևմտահայերից շատերին՝ փրկելով թուրքի յաթաղանից:

³ Տե՛ս **И.А.Орбели**, *Фольклор и быт Мокса*, М., 1982, էջ 141:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

Երկրորդ անգամ Հ. Օրբելին Մոկս է գնում 1912 թ. գարնանը և որոշ օրերի դարձյալ հյուրընկալվում է Մուրթուկային:

Մոկսաց աշխարհի բնակիչների վերաբերյալ երիտասարդ արևելագետը հետաքրքիր ժողովրդագրական տվյալներ է արձանագրում: Այսպես. 1911-1912 թթ. Մոկս քաղաքի բնակչության մեծ մասը՝ 672 տուն, հայեր էին, քրդերը՝ մուսուլման սուննիները, 640 տուն և 4-5 տուն էլ գնչուներ էին: Մշտական բնակվող թուրքեր չկային, միայն գործի բերումով թուրք չինովնիկների 3-4 ընտանիք կար: Սրանց նկատմամբ տեղացիների վերաբերմունքը բարեհաճ չէր: Իսկ հեռավոր շրջաններում բնակվում էին քոչվոր քրդեր, որոնք խիստ տարբերվում էին նստակյաց կյանք վարող քրդերից և՛ իրենց լեզվով, և՛ սովորույթներով, և՛ տարազով ու նիստուկացով: Մոկսաց աշխարհը՝ Մոկս քաղաքով ու գյուղերով հանդերձ, մտնում էր Վանի նահանգի մեջ: Հայերն ու նստակյաց կյանք վարող քրդերը, բացի Մոկուսից (այսպես էին տեղացիները անվանում Մոկս քաղաքը), ապրում էին 75 գյուղում և 5 ազարակում: Գյուղեր կային, որոնցում հիմնականում հայեր էին ապրում, կամ, ընդհակառակը, միայն քրդեր: Այդ բնակավայրերը իրարից գրեթե չէին տարբերվում⁵: Երիտասարդ հետազոտողը իր գործուղման ընթացքում նաև ամենայն մանրամասնությամբ գրի է առնում Մոկսի մշակութային կյանքը: Այս բոլոր փաստերը առ այսօր խիստ կարևորվում են՝ որպես տեղաբնակ հայերի ոչնչացումից անմիջապես առաջ ականատես գիտնականի վկայություններ:

Հ.Օրբելին հնագիտական հետազոտություններին զուգահեռ սկսում է ուսումնասիրել հայ և քուրդ բնակչության կենդանի խոսքը: Մոկսաց աշխարհում երիտասարդն իրեն դրսևորում է որպես գիտակ բարբառագետ, թեպետ մինչ այդ նա բարբառագիտությամբ հատուկ չէր զբաղվել: Մոկսի՝ արևմտահայ բավականին խրթին բարբառային խոսքը ռուսական կրթությամբ, Թիֆլիսի բարբառի իմացությամբ երիտասարդի համար հեշտ չէր հասկանալն ու գրի առնելը: Նախ՝ նա ստիպված էր իր համար ստեղծել տառադարձման մի համակարգ, որով քիչ թե շատ դյուրին

⁵ См. И.А.Орбели, *Избранные труды*, т. 2, Е., 2002, էջ 9:

կղաճնար խոսվածքի գրանցումը: Հարկ է նշել, որ այդ տառադարձումը նրան հետագայում պետք է եկել նաև տեղի քրդերեն խոսվածքի նյութերի գրանցման ժամանակ:

Մոկսի բարբառային նյութի հավաքման ընթացքում Հ. Օրբելին աշխատում էր խոսեցնել այնպիսի բարբառախոսների, որոնք երբևէ դուրս չէին եկել իրենց բնօրրանից կամ, գոնե, Վանի նահանգից, այսինքն՝ նա ընտրում էր հնարավորինս լավ պահպանված, այլ ազդեցություններից զերծ խոսքը: Հ. Օրբելին կազմում է Մոկսի խոսվածքի բավականին հարուստ բարբառային բառարան, որում գրանցում է «առօրյա կենցաղի բոլոր այն բառերն ու արտահայտությունները, որոնք վերաբերում են դաշտային աշխատանքներին, արհեստներին, անասունների ու բույսերի անուններին...»⁶: Հետաքրքիր է նշել, որ Մոկսի հայ բանահյուսությունը և խոսվածքը Հովսեփ Օրբելու դիտարկմամբ 107 տեղացի երեխաներին դուր էր գալիս եկվոր երիտասարդի հավաքչական աշխատանքները, և իրենք էլ իրենց հերթին էին նրան օգնում՝ ամեն անգամ մոտր վազելով ու մի նոր բարբառային բառ հրամցնելով:

1911-1912 թթ. ձմռան ամիսներին Հ. Օրբելին, բնակվելով Վանում, մշակում է իր հավաքած բառային ու քերականական նյութերը: Երիտասարդ արևելագետը նաև որպես լեզվաբան էր մոտենում իր ուսումնասիրություններին: Եվ, ինչպես երևում է, ունենալով փայլուն լսողություն, որն ընդհանրապես անհրաժեշտ է բարբառային ցանկացած միավորի հնչյունական համակարգի ճիշտ ընկալման համար, կարողանում էր տարբերել Մուկս քաղաքի և շրջակա գյուղերի ենթախոսվածքների միջև գոյություն ունեցող նրբությունները: Հարկ է նշել, որ Մոկսի խոսվածքի՝ հատկապես հնչյունական համակարգը հայերեն բարբառների մեջ ամենաբարդերից մեկն է. այն ունի քմային ձայնավորներ ու քմային բաղաձայններ, հարուստ է երկբարբառներով ու եռաբարբառներով, որոնք նույն բառի սահմաններում հաճախ անկայուն դրսևորումներ են ի հայտ բերում: Հ. Օրբելին, 1912 թ. գարնանը վե-

⁶ **И.А.Орбели**, *Фольклор и быт Мокса*, էջ 46:

րադառնալով Մոկս, ուսումնասիրում է տեղի քրդերի լեզուն: Կազմում է նաև Մոկսաց աշխարհի քրդերեն խոսվածքի բառարան:

Ավելի ուշ մեծանուն հայագետը մի քանի անգամ Լենինգրադում անդրադարձել է Մոկսից բերած նյութերի մշակմանը՝ դրանք պատրաստելով տպագրության: Ցավոք, Մոկսի խոսվածքի բառարանի վերջնական մշակման աշխատանքները Հ. Օրբելին այդպես էլ չի ավարտում: Եվ նրա կենդանության օրոք այն լույս չի տեսնում: Հայերեն և քրդերեն բարբառագիտական նյութերը պահպանվել են մեծ գիտնականի արխիվում քարտային համակարգով՝ առանձին թղթերի վրա և տեսրեքում՝ մեքենագիր կամ ձեռագիր վիճակում:

1972 թ. լույս է տեսնում Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածությունը», որում, հեղինակի առաջարկած բազմահատկանիշ դասակարգման մեթոդով, Վանի բարբառի մեջ ներառվում են Մոկսի, Շատախի, Ոզմի, Բաստի, Վանի խոսվածքները⁷: Գոյություն ունեն նաև Հ. Աճառյանի կարծիքը, որը Մոկսի լեզուն դասում էր Վանի ենթաբարբառների շարքում: Հետևելով բարբառների դասակարգման ջահուկյանական մեթոդին՝ մենք նույնպես Մոկսաց աշխարհի խոսակցական լեզուն համարում ենք *խոսվածք*, իսկ առանձին բնակավայրերինը՝ *ենթախոսվածք*:

1975 թ. Հ. Օրբելու ձեռագիր աշխատանքները հրատարակելու կապակցությամբ Լենինգրադ է գործուղվում Հայաստանի ԳԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող Մ. Մուրադյանը: Մեծ հայագետի բարբառային անտիպ նյութերը նա պետք է պատրաստեր հրատարակման՝ նաև փոխելով դրանք՝ այն ժամանակվա համար ընդունված տառադարձումով: Այս գործի համար նման մասնագետի ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ Մ. Մուրադյանը տիրապետում էր Շատախի խոսվածքին, իսկ Մոկսի խոսվածքն էլ, հայտնի փաստ է, աղերսներ ունեն այդ խոսվածքի հետ:

Հետագայում Մ. Մուրադյանը նյութեր է քաղում Հայաստանում վերաբնակված նախկին մոկսեցի բարբառախոսներից և, հիմք

⁷ Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 134:

ընդունելով Հ. Օրբելու գրառած բանահյուսական նյութերն ու բառարանը, հրատարակում խոսվածքին նվիրված մի ամբողջական աշխատանք⁸: Հեղինակն իր աշխատության նախաբանում բարձր գնահատական է տալիս տաղանդավոր հայագետի կատարած աշխատանքին: Երիտասարդ գիտնականը, ըստ Մ. Մուրադյանի, ճշտորեն է ընկալել ու ներկայացրել Մոկսի խոսվածքի թե՛ հնչյունական, թե՛ ձևաբանական հատկանիշները, ինչպես նաև քաղաքի և շրջակա գյուղերի ենթախոսվածքների նմանություններն ու տարբերությունները: Մ. Մուրադյանը գրում է, որ Հ. Օրբելու «բառարանի արժեքն առանձնապես բարձր է քերականական նշումներով, բառակապակցությունների ու խոսքանմուշների առկայությամբ, որոնք հնարավոր են դարձնում քաղաքի խոսվածքի գլխավոր հատկանիշների ճանաչումը»⁹:

Հետաքրքիր ծածկալեզու է հայտնաբերում Հ. Օրբելին Մոկսաց աշխարհում իր գործուղման ընթացքում: Այն կոչվում էր կատանների «գողական» լեզու կամ «ծտի» լեզու: Բուրդ գողներին ու թաղիքագործներին տեղացիները, ինչպես նաև ոզմեցիները, կոչում էին կատաններ: Նրանք ամեն աշնան հեռանում էին արտագնա աշխատանքների և վերադառնում միայն ուշ գարնանը: Հասնում էին մինչև Բաքու, Թիֆլիս, Դոնի Ռոստով: Կատանները հոչակված էին որպես բրդի ճարպիկ գողեր: Հաճախակի գտնվելով օտար միջավայրերում՝ կատաններին անհրաժեշտ էր լինում ծածկալեզվով հաղորդակցվել միմյանց հետ: Նույնիսկ տեղի քրդերը և այլ մասնագիտությունների տեր հայերը չէին տիրապետում այդ լեզվին: Ոմանք դրա բառապաշարից մի քանի բառ գիտեին միայն:

Ի դեպ, ժամանակին Բաֆֆին Արևմտյան Հայաստան կատարած ուղևորության մասին իր հուշերում գրանցել է հայերի ծածկալեզու ունենալու փաստը: Արևմտահայ բարբառների հավաքչական աշխատանքներ կատարելիս մենք նույնպես որոշ բարբառախոսներից տեղեկացել ենք, որ մայրենի խոսվածքին զուգահեռ

⁸ Տե՛ս Մ. Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի. – *Հայերենի բարբառագիտական առլաս*, հ. 1, Ե., 1982:

⁹ Նույն տեղում, էջ 111:

«ծտի» լեզու էլ է եղել իրենց հայրենի բնակավայրում: Սակայն դրան մենք՝ բարբառագետներս, հատուկ չենք անդրադարձել:

Կատանները դժկամությամբ էին Հ. Օրբելուն ծանոթացնում իրենց բառապաշարին ու լեզվական գաղտնիքներին՝ որքան էլ երիտասարդը հավատացնում էր, որ դրանք ինքը չի հրապարակի: Մի անգամ մի կատան Հ. Օրբելուն այսպես է պատասխանում. «Ուզում ես՝ մատնիր, միննույն է, վաղը ես ուրիշ բառեր կհորինեմ»¹⁰: Այսինքն՝ նրանց ծածկալեզուն ենթակա էր անընդհատ փոփոխության: Այդուամենայնիվ, երիտասարդ գիտնականի կազմած Մոկսի խոսվածքի բառարանը, որը պարունակում է չորս ու կես հազար բառ, դրանից 200-ը կատանների ծածկալեզվի բառապաշարից է: Ի դեպ, այդ ծածկալեզուն հեղինակը գրի է առել հիմնականում Ուզմում, որտեղի կատանները նույնպես դրան տիրապետում էին:

Ծածկալեզուները սովորաբար հենվում են տվյալ լեզվական միավորի քերականական համակարգի վրա: Դրանք ստեղծողները հնչյունապես փոփոխում են բառերը, ոչ շատ թվով նոր բառեր են հորինում: Կան այլաբանություններ, օրինակ՝ կատանների լեզվով՝ առուծ նշանակում է «նախիր», կյաժօ և զըրօ «թուրքական դրամ՝ լիր», ծուրիլ «փախնել», ծէթիլ «ուտել», մատ «եղբայր», քյօջ «փախուստ» և այլն: Բսկ հիմնական իմաստներով այս բառերը խոսվածքում այլ իմաստներ ունեն:

Երիտասարդ հետազոտողի ուշադրությունը գրավում է տեղի բնակչության երկլեզվության փաստը: Արևմտյան Հայաստանում, հայտնի է, պետական լեզուն թուրքերենն էր, բայց Մոկաց աշխարհում գերիշխում էին խոսակցական հայերենն ու քրդերենը: Հ. Օրբելին նկատել էր, որ տեղաբնակ հայերը խոսքի մեջ հաճախ էին գործածում քրդերեն բառեր, երբեմն էլ ամբողջական նախադասություններ (թևավոր խոսքեր, ասույթներ): Տեղացի քրդերը, իրենց հերթին, Մոկսի խոսվածքից առանձին բառեր էին կիրառում իրենց խոսքում, բայց ոչ՝ ամբողջական նախադասություններ: Ուրեմն, պետք է եզրակացնել, որ հայերը ավելի լավ էին տիրապետում քրդերենին, քան քրդերը՝ հայերենին, քանի որ որևէ

¹⁰ *И.А.Орбели, Избранные труды, т. 2, էջ 21:*

լեզվից նախադասություններով կապակցություններ փոխառելը տվյալ լեզվի՝ ավելի խորը իմացության արդյունք է:

Հ. Օրբելուն համոզել էին, որ առանց տեղական քրդերենի գրանցման Մոկսի խոսվածքի ուսումնասիրությունը ամբողջական չի կարող լինել: Եվ 1912 թ. գարնանը, ինչպես վերը նշեցինք, վերադառնալով Մոկս՝ նա սկսում է քրդերեն - ռուսերեն բառարանի համար նյութեր հավաքել՝ կիրառելով Մոկսի հայերեն խոսվածքի համար իր ստեղծած տառադարձումը: Երիտասարդ ուսումնասիրողն արդեն նկատել էր, որ զարմանալիորեն իրար նման են տեղի քրդերենի և Մոկսի խոսվածքի հնչյունները: Ի դեպ, երկու տարբեր լեզուների խոսվածքների հնչյունական համակարգերի այս նմանության խնդիրը, կարծում ենք, կարոտ է լուրջ ուսումնասիրության:

Մինչ Հ. Օրբելին հավաքչական գործով զբաղվողների ուշադրության կենտրոնում եղել են զուտ բանահյուսական նյութերը: Նա, որպես իսկական լեզվաբան, հայտնաբերում էր որոշակի տարբերություններ, անճշտություններ իր հավաքած նյութերի և մինչ այդ Մոկսի խոսվածքին վերաբերող հրատարակված աշխատանքների միջև:

Հետագայում, վերադառնալով Պետերբուրգ, Հ. Օրբելին կազմում է Մոկսի խոսվածք - ռուսերեն բառարան, որը բաղկացած էր տարբեր ծավալների 3 մասից: Բառարանի հիմքը հենց Մոկս քաղաքի ենթախոսվածքն էր, ինչպես նաև շրջակա 10 գյուղերի ենթախոսվածքները: Տեղեկատու բարբառախոսները մոտ 20 հոգի էին: Որոշ դեպքերում հեղինակն իր գրառումներում տեղեկություններ է տալիս բանախոսների վերաբերյալ:

Երկու գործուղումների ընթացքը տևել է 3 ամիս՝ 1911 և 1912 թթ.: Տաղանդավոր արևելագետը այդ կարճ ժամանակահատվածում կատարել է մանրակրկիտ ու ծավալուն աշխատանքներ թե՛ հուշարձանների ուսումնասիրության, թե՛ բարբառագիտական, թե՛ ազգա-Մոկսի հայ բանահյուսությունը և խոսվածքը Հովսեփ Օրբելու դիտարկմամբ 111 գրական ու բանահյուսական նյութերի հավաքման ուղղությամբ: Հարկ է նշել, որ Հ. Օրբելին խուսափում էր

հեքիաթներ գրանցելուց, որովհետև նկատել էր, որ համարյա բոլոր հեքիաթասացները, որոնց հետ նա ծանոթացել էր, կա՛մ նոր էին վերադարձել օտարությունից, կամ էլ նախկինում երկար ժամանակով բացակայել էին իրենց երկրից և սկսել էին մայր խոսվածքին խառնել օտար բարբառային բառեր ու արտահայտություններ: Այսինքն՝ երիտասարդ հետազոտողը իր գործին մոտենում էր ամենայն պատասխանատվությամբ՝ որպես իսկական բարբառագետ ու բանահավաք: Նա նախընտրում էր փոքրածավալ, սրամիտ պատմություններ, առակներ գրի առնել, հազվադեպ էլ որևէ հեքիաթ էր գրանցում և հատկապես՝ գյուղերի բնակիչներից, որոնց լեզուն, բարբառային առումով, ավելի անաղարտ էր ու տարբերվում էր 5 թաղամաս ունեցող Մուկս քաղաքի ենթախոսվածքից:

Հ. Օրբելին Մոկսց աշխարհում, հնագիտական ուսումնասիրություններին զուգահեռ հասցնում է ձայնագրել բարբառային լեզվով 35 բանահյուսական երգ և ավանդազրույց: Հաճախ երիտասարդը նյութերը գրի էր առնում տեղի շուկայի օրերին՝ հենց շուկայում: Իսկ երգերը ձայնագրում էր հարսանիքներում: Դրանց մեջ կային աշխարհիկ երգեր, որոնք այն ժամանակ արդեն աստիճանաբար անհետանալու եզրին էին: Եվ երգերում, և՛ բանահյուսական գրույցներում, հատկապես առակներում ու անեկդոտներում, հստակ գծագրվում են տեղացիների սովորությունները, նիստուկացը, հումորը: Առակները Հ. Օրբելին մեկնաբանում էր՝ որպես մշակութային պատմաբան՝ դրանց մեջ տեսնելով դրանց պատմական աղբյուրները, սոցիալական տարբեր շերտերի հարաբերությունները և մարդկանց աշխարհայացքը: Բանահյուսության բաժնում մեծ գիտնականի հիմնական խնդիրն էր ցույց տալ, որ այդ նյութերի հիմնական մասը, հատկապես առակները, մտնում են միջագային «ռեպերտուարի» մեջ¹¹: Օրինակ՝ կային այնպիսիները, որոնց աղբյուրները միջնադարյան հայ հեղինակներ Վարդան Այգեկցու, Մխիթար Գոշի կամ Կոնիլովի առակներն էին: Գրանցված են սրամիտ պատմություններ Մոկսի խոսվածքով տերտերների

¹¹ См. у **Р.Р.Орбели**, *О научных материалах собранных И.А.Орбели в Моксе.* – **И.А.Орбели**, *Избранные труды*, т. 2, էջ 14:

կամ էլ մոլլաների մասին՝ քրդերենով: Հ. Օրբելու կարծիքով՝ դրանք իրեն հիշեցնում էին Բոկաչչոյի «Դեկամերոնի» նովելն: Սակայն, մյուս կողմից էլ, երիտասարդ հետազոտողը համոզված էր, որ մոկսեցիները չէին կարող ծանոթ լինել այդ ստեղծագործությանը¹²: Ուրեմն բերնբերան պատմվելով էին նման պատմությունները փոխանցվում նաև հայ ժողովրդի տարբեր հատվածներին:

Հ. Օրբելուն հասկապես դուր էր եկել 2 գողի մասին հեքիաթը, որը նրան պատմել էր մի երիտասարդ: Այն հիշեցնում էր Հերոդոտոսի «Պատմություն» գրքի 2 գողի մասին հեքիաթը, որը տպագրվել է ավելի քան 40 լեզուների բանահյուսական նյութերում: Հ. Օրբելին գրանցել է նաև «Մոկաց Միրզա» և «Ասլան-աղա» պատումները, որոնք, այլ վերտառությամբ և որպես բալլադներ, ժամանակին թարգմանել էին Վ. Բրյուսովն ու Ն. Տիխոնովը¹³:

Տաղանդավոր արևելագետը եղավ առաջին և վերջին ակադեմիկոսն ու հետազոտողը Մոկաց աշխարհի հին հուշարձանների, տեղաբնակ հայերի ու քրդերի լեզուների բանահյուսության ու ազգագրության: Ընդամենը երեք տարի անց՝ 1915 թ., եղավ հայոց Մեծ եղեռնը, և Մոկաց աշխարհը հայերից դատարկվեց: Կոտորածից մազապուրծ փախած մոկսեցիների չնչին բեկորները, իրենց բախտակից մյուս արևմտահայերի նման, սփռվեցին աշխարհով մեկ: Ավաղ, այսօր Մոկսի խոսվածքը մեռած բարբառային միավորների շարքին է դասվում:

Մոկսի բանահյուսական ամբողջական նյութերը՝ դրանց ռուսերեն թարգմանությամբ հանդերձ, Մոկսի խոսվածք - ռուսերեն բառարանը լույս տեսան Հ. Օրբելու “Избранные труды”, т. 2 աշխատության մեջ՝ 2002 թ., որում զետեղված էին նաև Մոկաց աշխարհի բնակչության ու նիստուկացի նկարագրությունները (մինչ այդ լույս էր տեսել նրա “Фольклор и быт Мокса” աշխատանքը): Հարկ է նշել, որ հեղինակի բարբառային նյութերը տպագրվել են Մ. Մուրադյանի կիրառած տառադարձմամբ:

¹² Տե՛ս **Ր.Ք.Օրբելի**, *Фольклор и быт Мокса*, էջ 46:

¹³ Նույն տեղում:

Микаелян Жанна - Армянский фольклор и говор Мокса в наблюдениях И. Орбели. - Летом 1911 г. И. Орбели параллельно с археологическим исследованием памятников Мокса изучает особенности говоров местных армян и курдов, обычаи двух народов и составляет словарь мокского говора. Он был последним армянином, который до Геноцида армянского народа 1915 г. посетил Мокский край и провел неоценимые научные исследования.

Mikayelyan Zhanna – The Armenian Folklore and Subdialect of Moks in Hovsep Orbeli’s Observations. – While examining the archaeological monuments of Moks in summer 1911, Hovsep Orbeli carried out a parallel and profound study of linguistic peculiarities of local Armenians and Kurds, described their traditions and compiled a dictionary of the dialect of Moks. Prior to the Armenian Genocide, H. Orbeli was the last Armenian who carried out a research in the territory of Moks.

ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ^{*1}

Գարիկ Մկրտչյան

Գեղարքունիքի մարզը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքով ամենամեծ և ամենախիտ բնակեցված մարզը: Մարզը գտնվում է ՀՀ տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը: Արևելքից սահմանակից է Ադրբեջանին, Արցախին, հյուսիսից և արևմուտքից՝ Տավուշի, Կոտայքի, Արարատի, հարավից՝ Վայոց Ձորի մարզերին: Մարզը ներառում է Գավառի, Ճամբարակի /նախկին Կրասնոսելսկ/, Մարտունու, Սևանի և Վարդենիսի շրջանների տարածքները: Բնակչության թվաքանակը, ըստ 2001թ. տվյալների, կազմում է 215.371 մարդ²: Մարզն ընդգրկում է 93 բնակավայր, որոնցից 87-ը գյուղական համայնքներ են: Քաղաքները հինգն են՝ Գավառ, Ճամբարակ, Սևան, Մարտունի, Վարդենիս:

Այս տարածշրջանը, պետք է կարևորել, անհիշելի ժամանակներից եղել է հայաբնակ, սակայն 1604 թվականին տարածքն ամայանում է տեղաբնիկներից, երբ Շահ Աբասը պատմական Հայաստանի ողջ տարածքում կազմակերպում է հայտնի արտագաղթը դեպի Պարսկաստան: Գաղթերին հավելվում է նաև 1679 թ. ամռանը տեղի ունեցած երկրաշարժը, որով տարածքը իսպառ հայազրկվում է: Սակայն, 17-րդ դարից սկսած՝ դատարկ ու ամայի այդ տարածքներում աստիճանաբար բնակություն են հաստատում թուրքական քոչվոր ցեղերը և զավթում հայկական բնակավայրերը: Մինչ 19-րդ դարի սկիզբը հայերը փոքրամասնություն էին կազմում

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ *N^o SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում*:

¹ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Ստողիկ» հրատ., 2014, էջ 134-143:

² **Մամվել Հակոբյան**, *Հայաստանի մարզեր, Գեղարքունիքի մարզ, պատմական հանրագիտարան*, Ե., Հեղինակ. հրատ., 2010, էջ 4:

այստեղ, իսկ եղածները հետագայում ձուլվում են եվոր հայերին: Իրավիճակը փոխվում է 18-րդ դարի վերջերում և հատկապես 19-րդ դարում, երբ 1828-30 թվականների ռուս-թուրքական պատերազմներով պայմանավորված՝ Գեղարքունիք են ներգաղթում Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերից մեծաթիվ հայեր՝ Ալաշկերտից, Մուշից, Հին Բայազետից, Դիադինից, Վանից, Կարսից, Մակուից: Ոչ մեծ քանակությամբ ներգաղթյալներ կան նաև 1914-22 թթ. տեղի ունեցած դառնաղետ իրադարձությունների ընթացքում: 1988-90-ական թվականներին հատկապես Ճամբարակի ու Վարդենիսի տարածաշրջան են հանգրվանում նաև Ադրբեջանից բռնագաղթված հայերը:

Նշված վիճակագրական տվյալները վկայում են, որ տարածքը հարուստ է բարբառներով և, կարելի է ասել, գործ ունենք լեզվական տարասեռ հատկանիշներով բնութագրվող բարբառախմբերի, միջբարբառների, բարբառների և առանձին խոսվածքների հետ:

Պետք է ասել, որ տարածքային այս գոտում Մշո բարբառը և նրա տարբեր խոսվածքները լավագույնս պահպանվել են մինչ օրս: Ըստ տարբեր տարածաշրջանների, ունենք հետևյալ պատկերը.

ա/ **Գավառի տարածաշրջան՝ Գանձակ** համայնք /ներգաղթյալներ են Մուշից, Ալաշկերտի Դիգա գյուղից, եղել են նաև որոշ բայազետցիներ/, **Գեղարքունիք** / ներգաղթյալներ են Մուշի, Ալաշկերտի գյուղերից և այլ բնակավայրերից/, **Լճափ** /բայազետցիներ են, բայց կան նաև Վարդաձորից, Վերին և Ներքին գետաշեն գյուղերից/, **Օաղկաշեն** /կան նաև եկվորներ Ալաշկերտի Դիգա գյուղից ու Մուշից/:

բ/ **Սևանի տարածաշրջան՝ Գեղամավան** /ներգաղթյալներ են Մակու գավառի Անձուկ, այդ թվում՝ Ալաշկերտի գյուղերից/:

գ/ **Մարտունիի տարածաշրջան՝ Մարտունի** քաղաք, **Արծվանիստ** /Ալաշկերտ, Մուշ, Մակու և այլն/, **Աստղաձոր** /Ալաշկերտ/, **Գեղհովիտ** /Ալաշկերտի Քոքփռան գյուղից, Մուշի և այլ շրջանի գյուղերից/, **Երանոս** /Ալաշկերտից, Մուշից, Խաստուր գյուղից/, **Զուլաքար** /Ալաշկերտի Զիրոյ/Զիրավ/ գյուղից/, **Լիճք** /Ալաշկերտի

Հողաբերդ և Մուշի գյուղերից/, **Ծակքար** /Ալաշկերտի Հասանշահ, Ֆերան, Քարաձոր, Մաշկերտ կամ Մազկերտ և Սիֆր գյուղերից/, **Ծովասար** /Ալաշկերտ, Մուշ/, **Ծովինար** /Ալաշկերտ, նաև Մուշից ու Վանից/, **Չորագյուղ** /Ալաշկերտի Չլկան գյուղ/, **Մադինա** /վերաբնակյալներ Ներքին Գետաշեն գյուղից/, **Ներքին Գետաշեն** /Ալաշկերտ, Մուշ/, **Վարդաձոր** /Ալաշկերտի գյուղեր/, **Վարդաշեն** /Ալաշկերտի, Մուշի գյուղերից/, **Վարդենիկ** /Ալաշկերտի, Մուշի գյուղերից, նաև Սասունից/, **Վերին Գետաշեն** /Ալաշկերտի Խաստուտ/Խացտուր/Հացտուր գյուղից, Մուշից/:

դ/**Վարդենիսի տարածաշրջան**` **Ախպրաձոր** /Մուշից, Սասունից և այլ բնակավայրերից/, **Լճավան** /հիմնականում Մուշից, նաև` Պարսկահայաստանի նահանգներից, Կարսի մարզից ու Բուլանըղից/, **Խաչաղբյուր** /Բասենի, Մուշի, Վանի գյուղերից, Երզնկայից, Ալաշկերտից և այլ բնակավայրերից/, **Ծովակ** /Մուշ, Ալաշկերտ/, **Կարճաղբյուր** /Մուշ, Ալաշկերտ/, **Մաքենիս** /Վանի, Մուշի, Կարսի գյուղերից/, **Մեծ Մասրիկ** /Մուշից, Բասենից, Կարսից, Վանից/, **Նորակերտ** /Վանի գավառի Սեղ գյուղից, Մուշից, Ալաշկերտից եկած գաղթականներ/:

Մշո բարբառը բացակայում է միայն Ճամբարակի տարածաշրջանում:

Մեր` այս արտալեզվական ուղիներով վերականգնումները փաստվում են նաև Հայաստանի պատմության ազգային արխիվի 1931, 1836 թվականներին կատարված մարդահամարի համապատասխան ֆոնդերի տվյալներով / ֆոնդ` 90, ցուցակ` 1, գործ` 88, 89, 318/: Մարտունու տարածաշրջանում հանգրվանած մշեցիների վերաբերյալ առաջին լեզվապատմական հիշատակումը կատարել է Հր. Աճառյանը «Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» /1911թ./ աշխատության մեջ: Հեղինակը գրում է. «Վերջին երկու ռուս-տաճկական պատերազմներու ժամանակ Մուշեն և Ալաշկերտեն երկու մեծ գաղթականություն դուրս գալով` հաստատվեցավ Երևանի նահանգը...»³:

³ Հր. Աճառյան, *Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների*, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 116:

Վերոբերյալ փաստերը թույլ են տալիս ասելու, որ Մշո բարբառը Գեղարքունիքի մարզում հիմնականում ներկայանում է Մարտունու տարածաշրջանում, իսկ Գավառի տարածաշրջանի **Գանձակ, Գեղարքունիք, Լճափ, Օաղկաշեն** ու Սևանի տարածաշրջանի **Գեղամավան** համայնքներում հանգրվանած մշեցիները, ինչպես մեր այցերն են վկայել, լեզվական հիմնական հատկանիշներով ձուլվել են Բայազետի բարբառին՝ մայր բարբառից պահպանելով որոշ լեզվական մնացուկներ: Այդ մնացուկներն արտացոլվում են լեզվական գրեթե բոլոր մակարդակներում, օրինակ՝ հնչյունական համակարգում շնչեղ ձայնեղների պահպանումը, ետնալեզվային ձայնավորների ոչ առաջնալեզվայնությամբ գործառելը, էտալոնային **h** հազագի պահպանումը, այն դեպքում, երբ Բայազետում դրանք ներկայանում են հետնալեզվային **խ**-ով, ձևաբանական համակարգում **կը եղանակիչ+գրաբարյան ներկա** կաղապարով սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևերի կազմումը, **հանդա/հրմա/կօ** մասնիկներով շարունակականի իմաստ արտահայտելը բայական ժամանակաձևերի հետ, ուղղական-հայցական հոլովներով ներգոյականի իմաստ արտահայտելը և այլն: Ընդհանուր առմամբ Մշո բարբառի ու նրա խոսվածքների Բայազետի բարբառին համաձուլմանը նպաստել է նաև այն, որ լեզվական առումով երկու բարբառներն էլ ներկայանում են միջակա գծերի առատությամբ ու ընդհանրությամբ, որն ավելի է դյուրինացրել այդ գործընթացը: Հատկապես խոսքս Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքին է վերաբերում, որը Մշո և Բայազետի բարբառների հետ ունի լեզվական ընդհանրությունների հավասարաթիվ համակարգեր:

Խնդիրն ավելի է դժվարանում Վարդենիսի տարածաշրջանի դեպքում, քանի որ, ինչպես ցույց են տալիս տվյալները, այստեղ խոսվածքները ի սկզբանե համասեռ չեն եղել. բնակավայրերը ներկայանում են տարբեր խոսվածքակիրների՝ դիադինցիների, մշեցիների, վանեցիների, բայազետցիների, սասունցիների, արցախցիների համատեղ գոյակցմամբ, հետևաբար երկու դարը բավական է, որ առաջանան միջբարբառային, խառը լեզվական հա-

մակարգեր՝ այս կամ այն բարբառի լեզվական տարրերի գերակշռությամբ: Առայժմ կխուսափենք այս շրջանում Մշո բարբառի լեզվական դրսևորումների գործառնման վերաբերյալ վերջնական տեսակետ հրապարակել, քանի որ այդ տարածաշրջանում ուսումնասիրությունները ընթացքի մեջ են:

Տարածաշրջանում Մշո բարբառը հայտաբերվում է նրա ոչ բոլոր խոսվածքներով: Ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, Մշո բարբառն ունի ինը խոսվածք⁴: Մարտունու համայնքներում գործում են միայն **Մշո, Ալաշկերտի, Բաղեշի** երբեմնի խոսվածքները: Պետք է ասել, որ Մարտունու տարածաշրջանում Մշո բարբառն ու նրա խոսվածքներն ավելի անաղարտ են պահպանվել: Մեր այս գնահատականին նպաստում է այն, որ առիթ ունեցել ենք Մշո բարբառն ուսումնասիրելու մեկ այլ տարածաշրջանի՝ Ապարանի շուրջ վեց խոսվածքների տվյալներով⁵: Կարծում ենք, այս հարցում վճռորոշ է տարածաշրջանի դիրքը և մեր լեզվի գրախոսակցական կենտրոնից՝ Երևանից համեմատաբար հեռու լինելը: Քննարկվող տարածաշրջանի խոսվածքների անաղարտության վերաբերյալ այս տարածքը հետազոտած Ռուբեն Բաղրամյանը ժամանակին գրել է. «Բնակավայրերում ու շրջկենտրոններում խոսվում են մի քանի բարբառներով, գրական երանգ ստացած խոսվածքներով ու լեզուներով: Նույնիսկ շրջկենտրոններից հեռու գտնվող գյուղերում մաքուր բարբառախոսներ այլևս անհնար է գտնել. մի տեղ, ուր դպրոցն ու գրականությունը, մամուլը, ռադիոն և էլեկտրականությունը կենցաղ են, ուր մուտք են գործել ավտոբուսն ու գյուղատնտեսական մեքենաները, քամու բերան են տվել գյուղերը կղզիացնող անջրպետները, բարբառները դատապարտվել են

⁴ **Գ. Զահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, ԳԱԱ հրատ., Ե., 1972, էջ 134:

⁵ **Գ. Մկրտչյան**, *Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների քննություն* [ատենախոսություն, ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ], Ե., 2011, էջ 66:

վերացման»⁶: Այս գնահատականը թյուր է և իրականությանը չի համապատասխանում: Հարցումները և մասնագիտական դիտողականությունը ցույց է տալիս, որ, անկախ 20-րդ դարի և մեր օրերի գիտատեխնիկական հաղթարշավից, բարբառների գործառույթը տարբեր տարածքներում, այդ թվում Գեղարքունիքում, բացարձակ իրողություն է, որը ներառում է տարբեր տարիքի բարբառախոսների ու թիրախային խմբերի: Բարբառախոսները հատկապես լավ են պահպանում հնչյունական և քերականական համակարգերի բուն տիպաբանությունն ու կայունությունը: Այս համակարգերը բարբառների պահպանման ու նրանց տարբերակման գործում ամենակարևոր հատկանիշներն են, իսկ բառապաշարային իրողությունների դեպքում բազմաթիվ բառ-հասկացությունների անգործածելի դառնալը, ակտիվությունից դեպի պասիվության մղվելը կամ լեզվական համակարգից իսպառ դուրս գալն օրինաչափ է, քանի որ լեզվի, այս դեպքում բարբառի բառապաշարը նույնպես փոփոխվում է՝ հասարակական կյանքում տեղի ունեցող իրադարձություններով պայմանավորված: Տարածքները նույնպես ենթակա են այն բառ-հասկացությունների կորստին, որոնք այլևս ենթակա չեն գործառույթի և հեշտությամբ ընդունում են այն բառամիավորները, որոնք կենսագործունեությունը կազմակերպելու համար գրավոր կամ բանավոր ճանապարհներով մուտք են գործում բարբառախոսների ակտիվ բառապաշարը: Մշո բարբառը Գեղարքունիքի մարզում հենց այսպիսի պատկեր ունի՝ հնչյունական համակարգի և քերականական կառուցվածքի կայունությամբ և բառապաշարի հարափոփոխությամբ ու կորստով:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Մշո բարբառը Մարտունու տարածաշրջանի խոսվածքներում սահմանազատվում են իրարից հատկապես հնչյունական համակարգերում: Զուգահեռամադրումների շնորհիվ պարզ է դառնում, որ գործող խոսվածքների համար որպես առաջին տարբերանշան հիմք կարող է դառնալ ետնալեզվային **խ** խուլը և կոկորդային **հ** հագագը:

⁶ **Ռուբեն Բաղրամյան**, *Հայերենի բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները*, Ե., 1972, էջ 3-4:

Երանուհի, Վարդաձորի, Ձորագյուղի, Լիճքի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Մաղինայի խոսվածքներում գործում է էտալոնային **հ** խուլը՝ *հարս, հազար, համ, հին, հինգ* և այլն, իսկ մյուս խոսվածքներում՝ **Մարտունի քաղաքում, Արծվանիստում, Աստղաձորում, Գեղիովիտում, Ջուլաքարում, Ծակքարում, Ծովինարում** էտալոնային **հ**-ն ներկայանում է **խ** խուլի տեսքով՝ *խարս, խազար, խամ, խին, խինգ* և այլն: Լեզվական այս տարբերանշումը, կարելի է ասել, հստակ սահմանազատում է Մշո բուն խոսվածքը Ալաշկերտի խոսվածքից: Նման դիրքերում **հ**-ը հնչյունի սահմանափակումը վկայում է, որ **Աստղաձորում, Գեղիովիտում, Ծովասարում, Ծովինարում, Վարդաշենում, Վարդենիկում** տեղի է ունեցել **հ**-ախոսների ասիմիլացում՝ ի նպաստ **խ**-ախոսության, քանի որ վիճակագրական տվյալների համաձայն՝ այդ բնակավայրերում ապրել են նաև մշեցիներ: Նմանօրինակ հատկանիշները ի նպաստ են ծառայում այն բանին, որ այս տարածքում բարբառայնությունն ավելի է խորացել: Իսկ **Վարդաձոր** համայնքում գործող **հ**-ախոսությունը ի չիք է դարձնում այն գիտական հիպոթեզը, որ պատմական Ալաշկերտը բացառապես **խ**-ախոս է եղել. վերականգնված փաստերը վկայում են, որ նշված գյուղում ապրում են ներգաղթյալներ բացառապես Ալաշկերտի գյուղերից: Չենք բացառում, որ այստեղ գործ ունենք նաև վիճակագրական անճշտության հետ:

Հնչյունական մյուս հատկանիշը, որով, կարծում ենք, հարկ է տարբերակել տարածքի Մշո բարբառի խոսվածքները, հետնալեզվային **ղ**, **խ** շփականների գործառական սահմանափակումներով ներկայանալն է ու նրանց տարբերակումը: Ձայնեղությամբ ու խլությամբ իրար հակադրվող **ղ** **խ** շփականների հակադրությունը պայմանավորված է բառի տարբեր դիրքերում գործածվելուց: Կենտրոնական Հայաստանի խոսվածքներում բառասկզբի դիրքում տիպաբանորեն բացառելի է **ղ**-ի առկայությունը: Եղած բարբառայնությւն և այսօր տարածաշրջանում ապրող բարբառախոսների կողմից գործածվող բառասկզբյան **ղ** հնչյունները չունեն ձայնաբանական այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են հա-

մահայերենյան և դիտարկվող խոսվածքների բառամիջում ու բառավերջում ի հայտ եկող **դ**-ին: Խոսվածքներում եղած բառասկզբի **դ**-ն, որը, ի դեպ, հիմնականում հանդիպում է արևելյան լեզուներից կատարված փոխառություններում՝ ներառելով հատուկ և հասարակ անունները, կոկորդային, ըմպանային արտաբերում ունեցող մի հնչյուն է՝ տառադարձվելով այս՝ **դ**-ի կերպ, արաբերենից փոխառյալ հնչյուն է: Այդ հնչյունը կա նաև թուրքական, պարսկական միջնորդավորված բազմաթիվ փոխառություններում, որոնց մայր լեզուն դարձյալ արաբերենն է՝ *դարբիզ, դարգալ, դամիշ, դրժալ, դրրադ, դուշ, դու, դոշադ* և այլն: Ընկալողական դրույթներով կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ Մարտունու տարածաշրջանի բուն Մշո տարածքը ներկայացնող խոսվածքներում այս օտարամուտ **դ**-ն աստիճանաբար միտում ունի վերանալու, բայց ոչ թե ի հաշիվ համահայերենյան ու խոսվածքների բառամիջում ու բառավերջում ի հայտ եկող **դ**-ի, այլ ետնալեզվային շփական **խ**-ի, որի հետ **դ**-ն լծորդական հակադրության մեջ է՝ *խազան, խաթրը, խալաթ, խալմախալ, խամագ, խայիմ, խասաբ, խրդիզ, խըրկեղ* և այլն: Սա օրինաչափ երևույթ է, քանի որ նշյալ բառամիավորներն արաբերենում չունեն **խ** հնչյունը, այլ հայերենում ներկայանում են **դ**-ով և **դ**-ով, իսկ Մշո բուն տարածքի խոսվածքներում գործում են **դ**-ով փոխառված տարբերակները, ուստի դրանք միջնորդավորված փոխառություններ են թուրքերենից ու պարսկերենից: Ինչ վերաբերում է **դ** > **խ** անցմանը, ապա, կարծում ենք, աստիճանաբար տեղի ունեցող երևույթ է: Քանի որ Մշո տարածքում կան **դ**-ով տարբերակներ, հետևաբար դրանք փոխառվել են հենց այդպես, իսկ **խ**-ի վերածվել կամաց-կամաց:

Իսկ Ալաշկերտի շերտը ներկայացնող խոսվածքներում նշյալ բառերը զուգահեռ ներկայանում են հետնալեզվային, ըմպանային **դ** խուլով՝ *դազան, դարթըր, դամագ, դայիմ, դասաբ, դրդիզ* և այլն՝ լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ մտնելով **խ**-ի և **դ**-ի հետ:

Այս երևույթը Հ. Մուրադյանը բացատրում է նրանով, որ **դ**-ի համար բառասկիզբը բացառված դիրք է հայերենում⁷, ուստի բառակազմության **դ**-ի արտասանությունը խորթ տարածքային միավորներում օտար այդ հնչյունի փոխարեն գործածում են ետնալեզվային **կ** կամ **խ**՝ չնայած **կ**-ն նույնպես օտար հնչյուն է: Նկատենք մի հատկանիշ ևս. փոխառյալ **կ** և **խ** հնչյունները Ալաշկերտի շերտի խոսվածքներում երբեմն շատ դժվար է տարբերել իրարից:

Գեղարքունիքի Մշո բարբառով հարուստ գյուղերում տարբերակիչ հատկանիշ կարող ենք համարել նաև պայթական բաղաձայնների ցուցաբերած դրսևորումները: Դիտարկենք բառամեջը և բառավերջը: Եթե Մշո բուն խոսվածքներում բառամիջում և բառավերջում կան շնչեղ խուլեր՝ **անհօք, պատարաք, շօք, բ՛արթ, անմարթ, վարթ, դ՛արփին, սըրփեղ** և այլն, ապա Ալաշկերտի շերտը ներկայացնող խոսվածքներում նշված դիրքերը ներկայանում են պարզ խուլերով՝ **անհօկ, պատարակ, շօկ, բ՛արտ, անմարտ, վարտ, դ՛արպին, սըրպեղ** և այլն:

Խոսելով ընդամենը երեք հնչյունական տարբերակիչ հատկանիշների մասին, որով Մշո բարբառը և նրա խոսվածքները սահմանագատվում են իրարից Գեղարքունիքի մարզում, կարևորենք, որ բազմաթիվ հնչյունական իրողություններով նույնական են նրանք: Որպես օրինակ՝ հիշատակենք շնչեղ ձայնեղներով համակարգի լիակատար պահպանումը համահայկական բառերում, երկբարբառների առկայությունը բառակազմում **ո** և **ե** ձայնավորակից բառերում և միավանկ բառերի փակ վանկերում, դիրքային, շեշտից կախված և պատմական տարաբնույթ հնչյունափոխությունները, փոխազդեցական հնչյունափոխության դրսևորումների առատ փաստերը և այլն:

Ինչ վերաբերում է ձևաբանական համակարգերին, տարբերությունները, ի հակադրություն ընդհանրությունների, մեծ չեն

⁷ Հ. Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, Հնչյունաբանություն, հատոր 1, ԳԱՍ հրատ., Ե., էջ 214-215:

տասնյոթ խոսվածքների տվյալների համադրմամբ, որն արտացոլվում է գրեթե բոլոր քերականական կարգերում ու դրսևորումներում: Անդրադառնանք մի քանի տարբերությունների: Բուն Մշո տարածքի խոսվածքներում գործառում է **-ստան** հոգնակերտը՝ *օսկէստան, տարէստան, էրէխէստան* և այլն, իսկ Ալաշկերտի շերտում բացակայում է, Մշո շերտում գործում է կցադիր **զ** նախդիրը, Ալաշկերտի շերտում՝ բացակայում: Մշո շերտի խոսվածքներում գործում է չորս խոնարհում, իսկ Ալաշկերտի շերտում՝ երեք: Մշո շերտն ունի նաև **ու** խոնարհումը՝ *վերում/վերուս/վերու/ վերունք/ վերուք/ վերուն*: Եթե Մշո շերտի խոսվածքներում պակասավոր եմ օժանդակ բայը խոնարհվում է ի խոնարհիչով՝ *իմ/իս/է/ ինք/իք/ին*, ապա Ալաշկերտի շերտի խոսվածքներում՝ **ե** խոնարհիչով՝ *եմ/ես/ ա/էնք/էք/էն*: Եթե Մշո շերտի խոսվածքներում սահմանական եղանակի վաղակատար ներկա ժամանակաձևում եզակի և հոգնակի թվերը հստակորեն տարբերակվում են դիմաթվանիշ վերջավորություններով՝ *մանցեր իմ/ մանցեր իս/մանցեր է/մանցեր ինք/ մանցեր իք/, մանցեր ին*, ապա Ալաշկերտի շերտի խոսվածքներում՝ հոգնակի թվի երրորդ դեմքը եզակիաձև է, ինչպես նաև՝ վաղակատարի իմաստն արտահայտվում է **-աձ** մասնիկով՝ *մանցեր էմ/ մանցեր էս/մանցեր ա/մանցեր էնք/ մանցեր էք/, մանցաձ ա*:

Այստեղ ցանկանում ենք անդրադառնալ մեկ կարևոր խնդրի ևս: Խոսքը վերաբերում է սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևերի կազմությանը: Հայտնի է, որ **Կը** ճյուղի բոլոր բարբառներում այս ժամանակաձևերը կազմվում են **կը եղանակիչ+ գրաբարյան ներկա** կաղապարով: Սակայն Մարտունու տարածաշրջանի հատկապես Մշո շերտը ներկայացնող խոսվածքներում համակարգային է նաև գրաբարաձև ներկայի և անցյալի արտահայտումը ներկա և անցյալ ժամանակաձևերի իմաստով՝ *կուդիմ, ինչ ա կըսիս, լըսա, կը վագիմ, քասնիմ դաշտըն, արի հեդսի* կառույցները բարբառախոսները ներկայացնում են այսկերպ՝ *ուդիմ, ինչ ա կըսիս, լըսա, վագիմ, հասնիմ դաշտըն, արի հեդսի /ներկա/, կամ՝ կերտէնք շըմնօվ դ՛աշտըն խօթ քաղէու,*

կսովրի, օր մատթ դհանի կառույցները կլինեն *էրտէնք շրմսօլ դհաշտըն խօթ քաղէլու, սովրի, օր մատթ դհանի /անցյալ/* և այլն:

Նշենք, որ ներկայի կազմության այսպիսի իրողություններ արձանագրել ենք նաև Ապարանի տարածաշրջանի Մշո շերտի խոսվածքներում, որն արտացոլված է նաև մեր ատենախոսության ու համապատասխան հրապարակման մեջ⁸: Կարծեք թե, Մշո շերտի խոսվածքներում այս իրողությունների առկայությունը վկայում է, որ միայն Խոտորջուրի բարբառին չէ հատուկ գրաբարաձև ներկա ունենալը: Ավելին, եթե Խոտորջուրում գրաբարաձև ներկան վերաբերում էր միայն ձայնավորով սկսվող բառերին, ապա Մշո շերտի խոսվածքներում այդ տարբերակումն ուղղակի չկա: Գրաբարաձև ներկայի այսօրինակ երևույթը չի կարելի լեզվական մնացուկ համարել, քանի որ այն համակարգային է. ընդամենը մինչ օրս պահպանվում են հինհայերենյան լեզվական օրինաչափությունները, որոնցով, ի դեպ, հարուստ է Մշո բարբառը:

Մշո շերտի խոսվածքները բարբառային այն տարագրված միավորներից են, որոնք մինչ օրս լավագույնս պահպանվել են ՀՀ-ի տարածքում: Այս հարցում Գեղարքունիքի մարզը կարևոր է, քանի որ, ըստ մեզ, Մշո բարբառի տիպաբանությունը կարելի է լիովին վերհանել հենց այս տարածաշրջանում. ամբարված ու հինավուրց լեզվական միավորների առատությունն այդ անելու հնարավորությունն ընձեռում են:

Mkrtchyan Garik - The current state of the dialect of Moush in Gegharquniq region. -In this article the current state of the dialect of Moush in Gegharquniq region is discussed. The author came to the conclusion that the emigrants from Western Armenia preserve their

⁸ *Ջահուկյանական ընթերցումներ-2009, Գ. Մկրտչյան, Սահմանական եղանակի ժամանակաձևերի դրսևորումները Ապարանի խոսվածքներում, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, ապրիլի 28-29, 2009 թ.), էջ 131:*

dialect quite well in the territory of the Republic of Armenia. The research has shown that nowadays people from Moush mainly live in the territory of Martuni. The typology of the dialect of Moush can fully be revealed in this region as the abundance of ancient linguistic units stored there give the opportunity to do so.

Гарик Мкртчян-Современное состояние мушского диалекта в области Гехаркуник. В статье рассматривали настоящее положение наречий мушского диалекта в области Гехаркуник. Автор пришел к выводу, что в Южной Армени, изгнанные мушцы, до сих пор, сохраняют свой родной диалект в территориях Армянской Республики. Исследования показывают, что мушцы, в основном живут в территории Мартуни, а в других территориях представлены меньше. В статье развивается та точка зрения, что типология мушского диалекта можно выявить именно в этой территории, потому что обилие накопленных и старинных лингвистических единиц предоставляет эту возможность.

ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ, ՏԱՐԱԾՍԿԱՆ ԲՈՒՆ ՀԻՄՔԵՐԻ
ԽԱԽՏՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴԻՐՔԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ^{*1}

/Հանրալեզվաբանական դիտարկումներ/

Գարիկ Մկրտչյան

Մշո բարբառը հայերենի ամենահին և ամենամեծ բարբառներից մեկն է: Այն իր մեջ ամբարում է հայ ժողովրդի պատմական, հոգևոր, նյութական, լեզվական հարուստ մշակույթը, և այն հետազոտական տարբեր ոլորտներում գրեթե միշտ գտնվել է հայագետների ուշադրության կենտրոնում: Մշո բարբառն անսպառ նյութ ունի, որ օգտագործվում է պատմագիտական, լեզվաբանական, ազգագրական, բանահյուսական ուսումնասիրություններում: Մշո բարբառի գոյությունը՝ բուն կենսատարածքով և լեզվական իրողությունների հնությամբ, հայ ժողովրդի՝ աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկը լինելու լավագույն վկայագիրն է:

Մշո բարբառով էին խոսում և մշեցիներ կոչվում ոչ միայն Մշո դաշտի կամ պատմական **Տարոն** գավառի հայերը, այլ նաև **Խնուսի**, **Ալաշկերտի**, **Բուլանղղի**, **Խնուսի**, **Մանազկերտի**, **Արծկեի**, **Խլաթի**, **Արձեշի** ու **Բաղեշի** բնակիչները: Մշեցիների հիմնական զբաղմունքը եղել է երկրագործությունը, այգեգործությունը, իսկ լեռնային շրջաններում՝ անասնապահությունը: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին զարգացած է եղել նաև առևտուրը և արհեստները²: Մշո բարբառը տարածվել է Վանա ծովի հյուսիսային, արևմտյան և հարավ-արևմտյան հատվածներում, այսինքն՝ տարածվել է Վանա լճի արևմտյան եզերքներից մինչև Տավրոս,

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

¹ Лингвистическая экология: Проблематика исчезающих языков и культур в истории и современности, Ставрополь-2014, стр. 174-193.

² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 1, Ա.-Դ, ԵՊՀ հրատ., Ե., 1986, էջ 687-689:

Բյուրակնյան լեռները և մինչև Տիգրիս գետը՝ բարբառի տարածման սահմաններում ընդգրկելով նաև Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ալաշկերտ շրջանը, որը հյուսիսից հարում է Հայկական պարին, հարավից՝ Ծաղկանց լեռներին, և սահմանակից է Իրանին: Մշո բարբառի կենտրոն է համարվել **Մուշ քաղաքը**, քանի որ 19-րդ դարում այն եղել է տարածաշրջանի առաջատար քաղաքը, որին նպաստել է թե՛ բնակչության թվաքանակը, թե՛ բնակչության կենսամակարդակն ու զարգացվածությունը: Մուշ կենտրոնը հյուսիսից սահմանակից է **Խնուսին** և **Ալաշկերտին**, հարավից՝ **Բաղեշին** և **Սասունի** լեռներին, արևելքից՝ **Դիաղինին** ու իր բարբառային արեալում չգտնվող **Մոկսին**, արևմուտքից՝ **Բուլանդին**:

Հայերենի բարբառների աշխարհագրական դասակարգմամբ Մշո բարբառը հայերենի բարբառների արևմտյան խմբակցության բարբառ է, սակայն լեզվական մի շարք դրսևորումներում միջակա գծեր է հայտաբերում արևելյան խմբակցության բարբառների հետ նույնպես, ձևաբանական դասակարգմամբ «**Կը**» ճյուղի բարբառ է³, հնչյունական դասակարգմամբ՝ երկրորդ տեղաշարժի երրորդ ենթախմբի բարբառ⁴, իսկ հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգմամբ Մշո բարբառը ներառվում է Մուշ-Տիգրանակերտի կամ հարավ-կենտրոնական բարբառախմբի մեջ՝ կոչվելով Տարոնի միջենթաբարբառ⁵:

Մշո բարբառի տարածման սահմանները, որոնք վերջնական ճշգրտված չեն լեզվաաշխարհագրական սպառիչ հաշվարկներով, մեծ տարածքներ են ընդգրկում: Հայկական երբեմնի պետությունների գոյության պայմաններում Մշո բարբառը և նրա խոսվածքները պատմականորեն տարածվել են Մեծ Հայքի

³ Էմինեան ազգագրական ժողովածու, Հատոր Ը, /Զ. Աճառյան, Հայ բարբառագիտություն. – Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների/, Մոսկվա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 116:

⁴ Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1949, էջ 30-31:

⁵ Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 185:

Տուրուբերան և Այրարատյան նահանգներում⁶: Այս նահանգները ժամանակի ընթացքում՝ հատկապես ուշ միջնադարում, ընկել են թուրքերի տիրապետության ներքո՝ 16-րդ դարում վերանվանվելով Բիթլիսի և Էրզրումի: Մշո բարբառի և նրա խոսվածքների **Բիթլիսի**, մասամբ՝ **Էրզրումի** նահանգների սահմաններում ներառելը պատմական և հետադարձ վերականգնողական փաստերի արձանագրում է, քանի որ Պատմական Հայաստանի այդ տարածքներն այսօր գտնվում են Թուրքիայի տարածքում:

Մշո բարբառն ունի ինը խոսվածք՝ **Բաղեշ**, **Խլաթ**, **Արծկե**, **Արճեշ**, **Մանազկերտ**, **Մուշ**, **Բուլանըղ**, **Խնուս**, **Ալաշկերտ**: Այս խոսվածքները տարածականորեն մերձ են Պատմական Հայաստանում և, ինչպես արդեն նշել ենք, գտնվում են Տուրուբերան, Այրարատյան նահանգների սահմանները միմյանց հատող ու միավորող տարածքներում և այդ պատմական նահանգների կենտրոնական հատվածներում: Տուրուբերանի մաս են կազմել **Մուշի**, **Բաղեշի**, **Խլաթի**, **Արծկեի**, **Արճեշի**, **Մանազկերտի**, **Բուլանըղի**, **Խնուսի** խոսվածքները, միայն **Ալաշկերտի** խոսվածքն է ընդգրկվում Այրարատ նահանգի մեջ: Թուրքական վարչատարածքային սահմանաբաժանմամբ **Խնուսը** նույնպես ներառվում է Էրզրումի նահանգի շրջանակներում:

Մշո տարածքը, նրանում եղած լեզվական շերտերի ու դրանց տարածման սահմանների քննությունը կարոտ է ամբողջական ուսումնասիրության, եղած բանասիրական ուսումնասիրությունները, որքան արժեքավոր ու նշանակալից են, ակնարկային բնույթ ունեն, նկարագրական ու գնահատողական են: Մշո բարբառի մասին առաջին լեզվապատմական վերլուծությունները ներկայացվել են այդ տարածքի ժողովրդական բանահյուսական հարուստ շերտերի՝ հեքիաթների, առած-ասացվածքների, զրույցների, երգերի, **«Մասնա ծոեր»** էպոսի հավաքագրմամբ ու տպագրությամբ, որոնց միջոցով Մշո տարածքի լեզվական համակարգերի ընդհանուր պատկերը գրեթե տեսանելի է դարձել: Մշո տարածքի մասին

⁶Բ. Հարությունյան, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Մաս Ա, Ե., ԵՊՀ հրատ., 2001, էջ 219-254:

ժողովրդական-բանահյուսական բնույթի ուսումնասիրություններն ավելի շատ են, քան տեսական-հետազոտական, ի մասնավորի՝ լեզվաբանական: Այս առումով անուրանալի են 19-րդ և 20-րդ դարերի հայագետներ **Քերովրե Պատկանյանի, Լևոն Մսերյանցի, Գարեգին Սրվանձտյանցի, Արիստակես վարդապետ Մեղրակեանի, Յ. Ամրիկյանցի, Մ. Դանիելեանի, Բենսէի, Ս. Հայկունու, Գ. քահանա Նժդեհեանց, Գարեգին Մարկավազի, Բ. Խալաթեանցի, Սէնէքերիմ Արծրունու, Զ. Կէնճեանի, Հրայր Աճառյանի, Քերովրե Կարապետյանի, Հ. Համազասպ Ոսկեանի, Ս. Հ. Բաղդասարյան Թափալցյանի, Սմբատ Շահնագարեանի, Կարօ Սասունու, Գեղամ Տեր-Կարապետյանի, Քերոբ Մաղաթյանի, Արուսյակ Սահակյանի** ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են Մշո տարածքի լեզվական-նյութական՝ լեզվաբանական և բանագիտական հարուստ ժառանգության այս կամ այն կողմին:

Նշված հայագետներից Մշո բարբառի լեզվական հարցերին անդրադարձել են ոչ բոլորը: Խնդրո առնչությամբ անուրանալի են **Քերովրե Պատկանյանի, Լևոն Մսերյանցի, Հրայր Աճառյանի, Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանի, Սմբատ Շահնագարեանի, Քերոբ Մաղաթյանի** հետազոտությունները: Նշյալ հետազոտողները Մշո տարածքը դիտարկել են լեզվական հարցերի կարևորմամբ: Նույնքան կարևոր արժեք ունեն բանագիտական բնույթի աշխատությունները. բանասիրական այդ հետազոտությունները, որպես լեզվական աղբյուր, կարևոր օժանդակ աղբյուր են Մշո տարածքի լեզվական համակարգի ամբողջական ուսումնասիրության ու նկարագրության համար, որոնց կարևորությունը հավասարազոր է կենդանի խոսքին: Այս առումով մեծ արժեք են ներկայացնում **Գարեգին Սրվանձտյանցի, Բենսէի, Ս. Հայկունու, Կարօ Սասունու** բանահավաքչական մեծարժեք ուսումնասիրությունները:

Մշո տարածքը, իրավամբ, եղել է բուն հայկական նկարագրի արտացոլման ամենացայտուն կենտրոնը դարեր շարունակ և հայտնի է իր հոգևոր-նյութական հարուստ մշակույթով: Բանասերները, հիմնվելով իրական փաստերի վրա, գրեթե միշտ փաստել են, որ Մշո /Տարնի/ աշխարհը մշակութային մի հնարդարեան օրբան

է եղել՝ հարուստ հեթանոսական մեհյաններով ու քրիստոնեական եկեղեցիներով, կրոնական ծեսերով ու աղոթքներով, հավատալիքներով ու ավանդույթներով, ծեսերով ու տոնակատարություններով, նավասարդյան հանդեսներով ու երգերով, ինչպես նաև դուցազնավեպերով, առասպելներով ու հեքիաթներով: Սրա վառ ապացույցն այն է, որ «Մասնա Ծռեր» էպոսի պատումների մեծ մասը գրավել են հենց այս տարածքում ապրած բանասացներից, որոնք էպոսն իրենց բուն հայրենիքից սերնդէ սերունդ տեղափոխել են նոր հայրենիք՝ ՀՀ-ի տարածք⁷: Մշեցիների ժողովրդական բանահյուսությունը պատկերավոր է և խորախորհուրդ: Բնական երևույթներով իրենց հույզերը, սերն ու զանազան զգացողություններն արտայատելու շնորհիվ մշեցիները, ըստ էության, վերածվել են բնութենապաշտների, իսկ մշեցիների կողմից գործածված հազարավոր առած-ասացվածքները ու պատկերավոր կատակներն ու առակները վկայում են նրանց սրամիտ, խորիմաստ ու իմաստուն լինելը: Տարոն-Տուրուբերանի հայկականության վառ վկայություններն են նաև նրա բազմաթիվ եկեղեցիները. նրանց ընդհանուր թվաքանակը, ըստ հետազոտող Հ. Համազասպ Ոսկեանի, 48-ն է եղել⁸, որոնցից ամենանշանավորներն են Առաքելոց կամ Ս. Ղազարի վանքը, Եղրդուտի Ս. Յովհաննէսի վանքը, Ս. Կարապետի վանքը և այլն:

20-րդ դարի սկզբից Մշո բարբառի զբաղեցրած տարածքը հայաթափվել է բազմաթիվ հայաբնակ այլ վայրերի նման: Մշեցիների տեղահանությունները սկսվել են 19-րդ դարի առաջին կեսերից, և այդ ամենը շարունակվել է շուրջ մեկ դար: Մշեցիների տարագրման ուղիները երկուսն են եղել՝ կա՛մ Արևելյան Հայաստան, կա՛մ Կոստանդնուպոլիս /Ստամբուլ/, որտեղից նաև եվրոպական այլ քաղաքներ: Արդեն 1860-ական թվականներին տասնյակ մշեցիներ ապաստանում էին Կոստանդնուպոլսում,

⁷ **Ս. Սահակյան**, «Մասնա ծռեր» պատումների քննական համեմատություն, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Ե., 1975, էջ 30-59:

⁸ Հ. Համազասպ Ոսկեան, Տարոն-Տուրուբերանի վանքերը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1953, 14, էջ 9-266:

կատարում հիմնականում բեռնակրի աշխատանք, և ժամանակի ընթացքում այդ թիվը մեծանում է և ընդգրկում մարդկային մեծ հոսքեր: 19-րդ դարի 80-ական թվականներից մշեցիներ են հաստատվում նաև Բուլղարիայի զանազան քաղաքներում, իսկ 20-րդ դարի դարասկզբից՝ նաև Ամերիկայում⁹: Եթե թուրքական մեծ քաղաքներ գնալը պատճառաբանվում է սոցիալ-տնտեսական աննախադեպ ծանր պայմաններով, ապա Արևելյան Հայաստան գաղթելը՝ միջոց էր սպանդից փրկվելու համար:

1915 թվականի ողբերգական իրադարձությունները դառը կնիքը են թողել նաև Մշո բարբառով խոսող հանրույթի վրա, որը հանգեցրել է հայերով բնակեցված լեզվատարածքից հայախոսների տարհանման ու ոչնչացման. տարհանմամբ տեղի է ունեցել լեզվատարածքի կորուստ, իսկ ոչնչացմամբ՝ լեզվակրության մահացում: Արևմտյան Հայաստանից Մշո բարբառի և նրա խոսվածքների տարհանման և ոչնչացման գործընթացը, պետք է ընդգծել, ոչ թե միանգամից է կատարվել, այլ որոշակի փուլերով՝ շուրջ հարյուր տարի.

ա/ Առաջին փուլը տեղի է ունեցել 19-րդ դարի սկզբներին տեղի ունեցած ռուս-թուրքական պատերազմի ընթացքում: 1829-30 թթ. Մուշից և Ալաշկերտից երկու մեծ գաղթականություն հանգրվանում են Արևելյան Հայաստանի Երևանի նահանգի երկու բնակավայրերում՝ Ապարանում և Սևանա լճի եզերքներին ու հանդիպակաց լեռների լանջերին: Խնուսցի գաղթականների մի խումբ էլ գաղթում է **Ջավախք**՝ հիմնականում ապաստանելով **Թորիա**, **Ուչմանա**, **Հ/Էշտիա** գյուղերում: Ըստ Հր. Աճառյանի, այդ բնակավայրերում վերաբնակված մշեցիները պահպանել են իրենց բարբառն ամբողջովին¹⁰: Հր. Աճառյանն այս գնահատականը հրնչեցրել է 20-րդ դարի սկզբի լեզվական տվյալների հաշվառմամբ, որը, կարող ենք հավաստել, գրեթե նույնությամբ պահպանվում է

⁹ **Մ. և Մ. Բդեևան**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Տպարան Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1962, էջ 26-30:

¹⁰ Էմինեան ազգագրական ժողովածու, նշվ. աշխ., էջ 116:

մինչ օրս, քանի որ մշեցիներն ամուր են կառչած իրենց լեզվական արմատներին:

բ / Երկրորդ փուլը տեղի է ունեցել 1877-79 թվականներին: Այս ժամանակահատվածում Էրզրումի նահանգի բնակչությունը մոտ 400 հազար էր, որոնցից 250 հազարը հայեր էին, իսկ 19-րդ դարի վերջերին նահանգն ուներ 382 հազար բնակիչ, որից հայեր՝ 180 հազար, թուրքեր՝ 40 հազար, չերքեզներ՝ 10 հազար, քրդեր՝ 77 հազար, ղզլբաշներ՝ 8 հազար, ասորիներ՝ 15 հազար, եզդիներ՝ 5 հազար: Մեր հավաքագրած տվյալները վկայում են, որ Մշո գավառը և նրա հինգ շրջանները՝ **Բուլանղըր, Մանազկերտըր, Մուշըր, Մասունըր, Վարդոն**, 20-րդ դարի սկզբներին ունեին 567 հայկական բնակավայր՝ քաղաք ու գյուղ, իսկ ըստ ռուսական աղբյուրների՝ 1878 թվականի տվյալները վկայում են, որ, օրինակ, Ալաշկերտի շրջանը ունեցել է 104 գյուղ:

գ/ Վերջին փուլը տեղի է ունեցել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ընդգրկել է բուն 1915 թվականը և շարունակվել մինչև 1918 թիվը: Մշո բարբառով հաղորդակցվող տարածքները եղել են ամենախիտ բնակեցված շրջանները Արևմտյան Հայաստանում և այդ լեզվատարածքի ամբողջական հայաթափումը ամբողջական է դարձել 1915 թվականին: Ըստ եղած պատմական տվյալների, Բիթլիսի նահանգը Եղեռնի նախօրեին ուներ մոտ 200 հազար հայ բարբառախոս, որից միայն 56 հազարն է փրկվել: Փրկվածները մասամբ մահմեդականացվում են, մասամբ՝ գաղթում տարբեր երկրներ: Ըստ հետազոտող Վ. Պետոյանի, Եղեռնի բուն շրջանում Մուշ քաղաքն ուներ 30000 բնակիչ, որից 15000-ը հազարը հայեր: 1915թ. հունիսի 28-ից մինչև հուլիսի 1-ը՝ նրանք, երեք օր դիմադրելով, կոտորվում են¹¹, իսկ Մշո ողջ գավառը, 1914 թ. եղած տվյալներով, 55.365 հայ բնակչություն¹²:

¹¹ Վ. Պետոյան, Մասունի և Տարոնի պատմաշխարհագրական տեղագրությունը, Ե., Լուսակն, 2005, էջ 89:

¹² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատոր 3, Կ-Ն, ԵՊՀ հրատ., Ե., 1991, էջ 896:

Այդ երկարատև պատերազմների ու եղեռնի ընթացքում չոչնչանալու ձգտմամբ իրենց ազգությունը թաքցրել, մահմեդականություն են ընդունել կամ մահմեդականացվել են հազարավոր մշեցիներ և այսօր էլ ապրում են իրենց հայրենի երկրում: Այս շերտի համար Մշո բարբառը մահացած է, քանի որ երբեմնի բարբառախոսները ձուլվել են թուրքերին: Այն, ինչ տեղի է ունեցել Արևմտյան Հայաստանում ապրող մշեցիների հետ, փոխներթափանցման դրսևորում է, որի համար հիմք կարող են հանդիսանալ հատկապես քաղաքական նվաճումը և ժողովուրդների մերձավոր հարևանությունը, որոնք պահանջում են խոսողներից անցում կատարելու մի լեզվից մյուսին...¹³: Մահմեդականացված հայերի հետ տեղի ունեցածը մակաշերտություն է, այսինքն՝ եկվորների, հատկապես նվաճողների լեզվի ազդեցությունը տեղացիների լեզվի վրա:

Մշո բարբառը կրող հանրույթն ապաստանել է ՀՀ-ի տարբեր տարածքներում՝ **Արարատյան դաշտավայրում, Ապարանի, Արագածի, Թալինի, Արթիկի, Էջմիածնի, Աշտարակի, Մարտունիի** տարբեր համայնքներում և **Շիրակի** մարզի **Ախուրյան, Աղին** գյուղական համայնքներում, ինչպես նաև աշխարհի տարբեր հատվածներում: Ուշագրավ է այն, որ ներգաղթյալ մշեցիները հիմնականում բնակություն են հաստատել ՀՀ-ի լեռնային շրջաններում, գրեթե առանձին գյուղերում՝ կազմելով բնակչության մեծամասնությունը: Այս հանգամանքը նպաստել է, որ Մշո բարբառը լավագույնս պահպանվի նոր բնակավայրերում, կրի մասնակի փոփոխություններ: Հիմնականում կորցրել է բառապաշարային բազմաթիվ իրողություններ՝ պայմանավորված հասարակական կյանքում տեղի ունեցած հարատև փոփոխություններով, իսկ հնչյունական և քերականական կառուցվածքը հնարավորինս պահպանվել է անաղարտորեն լեզվական տոկունության շնորհիվ:

¹³ **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Հայկական ԳԱ հրատ., Ե., 1987, 19, էջ 12:

Հայաստանից դուրս մշեցիների ամենամեծ գաղթավայրը Վրաստանն է: Մշեցիներն ապաստանել են հիմնականում Նինոծմինդայի շրջանում, որի կազմում գտնվող Հեշտիա, Դելիֆ, Թորիա, Ուշմանա, Ժդանովական, մասամբ նաև Կալինինո, Վլադիմիրովկա, Կաթնատու, Գորելովկա գյուղերում ապրել են շուրջ 7073 մշեցիներ¹⁴: Մշեցիներ են բնակվում նաև Թիֆլիս, Քութայիս, Բաթում, Փոթի, հայաբնակ Ջավախք, Նինոծմինդա քաղաքներում և այլն: Վրաստանում հանգրվանած մշեցիները լավագույնս պահպանել են իրենց բարբառը մինչ օրս: Սակայն Վրաստանում բնակվող մշեցիները վերջին տասնամյակներում արտագաղթում են այնտեղից նույնպես՝ դեպի Ռուսաստան և Եվրոպա: Ս. Արոյանն իր հետազոտություններում ցույց է տալիս, որ Ռուսաստանի տարբեր մեծ ու փոքր քաղաքներում անցյալ դարի ընթացքում վերաբնակված մշեցիները հենց Վրաստան ապաստանած հայերն են: Նրանց ընդհանուր քանակը կազմում է շուրջ երեք հազար մարդ¹⁵: Խիստ կասկածելի է, որ մշեցիների այս խումը մինչ օրս պահպանած լինի իր բարբառը: Կան տվյալներ, որ Վրաստանից մի քանի հազար մշեցիներ ներգաղթել են Հայաստանի տարբեր շրջաններ 20-րդ դարի երկրորդ կեսում:

Մշո բարբառի ուսումնասիրությունը սկսվել է 19-րդ դարի վերջերից, իսկ գիտական ուսումնասիրությունը՝ 20-րդ դարից, և այդ շարունակվում է մինչ օրս: Մշո բարբառի առաջին հետազոտողը Քերովբե Պատկանյանն է: 1875 թվականին է հրատարակվել նրա «Материалы для изучения армянских наречий» ուսումնասիրությունը: Ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց և բրոց» /1874թ./ հրատարակության մեջ տեղ գտած «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» պատումի հիման վրա Ք. Պատկանյանը կատարում է Մշո բարբառի լեզվական հարցերի քննության փորձ և տալիս բարբառի լեզվական հատկանիշների կարևորագույն բնութագրերը: Ուսումնասիրությունն ունի 500 բառացանկ պարունակող բառերի ընտրանի: Այս բառերի առնչությամբ հեղինակը

¹⁴ Ս. Արոյան, Բեկորներ Մշո ջոջ քարի, Ե., «Արամագր» հրատ., 1996, էջ 3:

¹⁵ նշվ. աշխ., էջ 4:

նկատել է, որ Մշո բարբառում հետաքրքրություն են ներկայացնում հատկապես քրդերեն բառերը, որոնցից մի քանիսը, ըստ հեղինակի, մնացել են անբացատրելի: Ք. Պատկանյանը եզրակացնում է, որ Մշո բարբառում պարսկական ու արաբական փոխառությունների ճնշող մեծամասնությունը միջնորդավորված փոխառություններ են թուրքերենից ու քրդերենից, որի պատճառով էլ դրանք Մշո բարբառում շատ հաճախ ներկայանում են մի քանի իմաստներով¹⁶: Այս երևույթը արդարացված է, քանի որ մեր լեզուն բազմիմաստ է և դրա դրսևորումները նախևառաջ տեսանելի են փոխառյալ բառերի դեպքում. փոխառյալ բառը հայերենում կարող է ունենալ մեկից ավելի իմաստներ:

Մշո բարբառի ուսումնասիրությունը գիտական հիմքերի վրա է դնում հայագետ Լևոն Մսերյանցը: 1897 և 1901 թթ. լույս են տեսնում նրա ուսումնասիրությունները, որոնցում կատարվում է Մշո բարբառի տարածամասնակյա քննությունը: Ուսումնասիրության առաջին հատորում հեղինակը ընկալողական մեթոդներով քննում է Մշո բարբառի հնչյունական համակարգը և այն համեմատում գրաբարի հետ, երկրորդ հատորում քննում է Մշո բարբառի ձևաբանական համակարգերը՝ գրաբարի և միջին հայերենի նույն համակարգերի հետ համեմատությամբ: Լ. Մսերյանցը նպատակ է հետապնդել որոշել Մշո բարբառի հնությունը և առանչությունները հնդեվրոպական հիմք լեզվի հետ¹⁷: Լ. Մսերյանցի երկհատորանի «Этюды по армянской диалектологии» /1897-1901 թթ./ աշխատությունը թարգմանված է նաև ֆրանսերեն և գերմաներեն:

Մյուս տեսաբանը Հր. Աճառյանն է, ով Մշո բարբառի առանձնահատկություններին անդրադարձել է «Հայ բարբառագիտություն. Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» /1911թ./ աշխատության մեջ:

¹⁶ **К. Патканин**, Материалы для изучения армянских наречий, Выпуск 2, Мушской диалект, Санкт-Петербург, типография императорской академии наук /Вас. Остр., 9 лин, н. 12/, 1875, էջ 12:

¹⁷ **Л. Мсерианц**, Этюды по армянской диалектологий, часть 1, Москва, Университетская типография, Страстной бульвар, 1897, часть 2, Москва, Университетская типография, Страстной бульвар, 1901:

տության մեջ: Հր. Աճառյանը ճշգրտում է Մշո բարբառի դիրքը հայ բարբառների շարքում: Թեև Հր. Աճառյանը հանգամանալից չի քննել Մշո բարբառը, սակայն տվել է բարբառի տարածման սահմանները՝ թե՛ բուն հայրենիքում, թե՛ նրանից դուրս, ինչպես նաև ավանդել Մշո բարբառի լեզվական կառուցվածքի վերաբերյալ բավականին արժեքավոր տեղեկություններ: Ըստ Հր. Աճառյանի, Մշո բարբառով խոսվող վայրերն են՝ **Մուշը, Մասունը, Բաղեշը, Խիզանը, Խլաթը, Արճեշը, Բուլանըղը, Մանազկերտը, Խնուսը** և **Ալաշկերտը**¹⁸: Հր. Աճառյանի այս տվյալները որոշակի ճշգրտման կարիք ունեն: **Մասունն** ու **Խիզանն** էլ է նա ներառում այս բարբառային արեալում, սակայն, ինչպես հետագայում է հստակեցվել, հայերենի բարբառների շարքում առանձնացվում է նաև **Մասունի** բարբառը, հետևաբար Մուշի բարբառի հետ այն ընդհանրանում է սոսկ լեզվական միջակա գծերի գոյությամբ, թեև չենք բացառում, որ Մասունի տարածքում լինեն նաև Մշո բարբառի առանձին ենթախոսվածքներ նույնպես, իսկ **Խիզանը**, որպես առանձին բարբառային միավոր, գտնվում է **Մուկսի** տարածքում, բարբառագիտական նորագույն ուսումնասիրություններում չի ներառվել Մշո տարածքում, այլ համարվում է **Վանի** կամ հարավային միջբարբառախմբի խոսվածք¹⁹: Հր. Աճառյանի այս բացթողումը գուցե պայմանավորված է նաև նրանով, որ 19-րդ դարում Խիզանի տարածքը ներառվել է Բիթլիսի նահանգում: Հր. Աճառյանը **Արծկեն** չի հիշատակում՝ հավանաբար այն չտարանջատելով **Խլաթից** ու **Արճեշից**, քանի որ Արծկեն տարածականորեն միջին դիրք է գրավում Խլաթի և Արճեշի միջև:

Հր. Աճառյանը Մասունի տարածքը նույնպես ներառում է Մշո բարբառի մեջ, սակայն 1954 թ. հրապարակ իջած Վ. Պետոյանի «Մասունի բարբառը» ուսումնասիրության մեջ մերժվում է Աճառյանի այս տեսակետը և հնչյունական փաստերի դիտարկմամբ հիմնավորվում, որ դրանք տարբեր բարբառներ են²⁰: Իրա-

¹⁸ Էմինեան ազգագրական ժողովածու, նշվ. աշխ., էջ 116:

¹⁹ **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., 1972, էջ 134:

²⁰ **Վ. Պետոյան**, Մասունի բարբառը, Հայկական ՄՍՌ ԳԱ հրատ., Ե., 1954, էջ 28-30:

կանում Մուշի և Սասունի տարածքներում տարբեր բարբառներ են գործում: Եթե երկու բարբառները միահատկանիշ դասակարգումներով միավորվում են, ապա հնչյունական կամ բազմահատկանիշ դասակարգմամբ տարբեր բարբառներ են: Բանն այն է, որ Մուշի բարբառը քառաստիճան բաղաձայնական համակարգ ունի՝ ունեալով շնչեղ ձայնեղների համակարգ, որտեղ ձայնեղները չեն իլանում, իսկ Սասունի բարբառի բաղաձայնական համակարգը եռաստիճան է, որտեղ ձայնեղները իլանում են, խուլերը ձայնեղանում, իսկ շնչեղ խուլերը մնում են անփոփոխ: Որքան էլ Մուշի ու Սասունի բարբառները պատկանում են հայ բարբառների «կը» ճյուղին, նրանք ունեն հնչյունական զգալի տարբերություններ, ուստի միևնույն բարբառի շրջանակներում քննվել չեն կարող: Ըստ երևույթին, երկու տարածքների մերձակից լինելն է նպաստել, որ Հր. Աճառյանն ունենա այդ թյուր տեսակետը կամ խնդրին քաջաձանոթ չի եղել: Մեկ նկատառում ևս. Սասունը Տուրուբերան նահանգի մաս չի եղել պատմականորեն, այլ համարվել է Մեծ Հայքի Աղձնիք նահանգի 10-րդ գավառակը²¹:

Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը Մշո բարբառին նվիրված իր ուսումնասիրության մեջ անդրադարձել է միայն բուն Մշո գավառում գործած բարբառին: Նրա հետազոտությունները, ինչպես հաստատում է հեղինակը, հիմնված են Մուշից գաղթած և Հայաստանի սահմաններում, ինչպես նաև նրա սահմաններից դուրս բնակվող բարբառախոս հայերի տրամադրած լեզվական փաստերի վրա²²: Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը նկարագրել է Մշո բարբառի լեզվական բոլոր համակարգերը, հնչյունական համակարգերը համեմատել է գրաբարի հնչյունական համակարգերի հետ, աշխատությունը հարստացրել բառացանկով և բանահյուսական հարուստ նյութերով: Իսկ Մշո բարբառի մյուս տարածքների լեզվական հատկանիշների ուսումնասիրությունը մնում է առկաի,

²¹ Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 219-254, Վարդան Պետոյան, Սասունի և Տարնի պատմաշխարհագրական տեղագրությունը, Ե, Լուսակն, 2005, էջ 85:

²² Ս.. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958, 4, էջ 9:

որոնք, վստահաբար կարող ենք ասել, բուն Մշո բարբառի հետ ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ:

Մեկ այլ հետազոտող, ծագմամբ մշեցի և եղեռնը վերապրած սփյուռքահայ հետազոտող Սմբատ Շահնազարյանը հեղինակել է «Մշո բարբառը եւ իր ժողովրդին դիմաստուները» ուսումնասիրությունը /1972, Բեյրութ/: Հեղինակը քննության է ենթարկել բուն Մուշի դաշտի բարբառը և նրա կարևոր նկատառումն այն է, որ Մշո բարբառը բառակազմության և հնչյունական համակարգերում շատ մոտ է գրաբարին ու գրական լեզվին: Ըստ Ս. Շահնազարյանի, Մշո բարբառը նույն Տարոն-Տուրուբերանի բարբառն է և նրա տարածման սահմանները ներառում են **Մուշի, Սասունի, Բիթլիսի, Բուլանըղի, Խնուսի, Վարդոյի, Կինճի** տարածքները²³: Հեղինակը բարեխղճորեն նկատել է, որ այս տարածքների մեջ բացառություն է կազմում Սասունը՝ իր հնչյունական և քերականական կառուցվածքով: Ս. Շահնազարյանի կատարած հետազոտությունները հանգում են նրան, որ իր համար ընկալելի Մշո բարբառն ավելի մոտ է գրաբարին ու գրական լեզվին, քան Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանի ուսումնասիրած Մշո բարբառի տվյալներին: Ըստ էության, Ս. Շահնազարյանը ցուցաբերել է սուբյեկտիվ մոտեցումներ, որը կարելի է բացատրել նրանով, որ հեղինակի մայրենի խոսվածքը Մշո բարբառի մի առանձին խոսվածքներից է, որին և հեղինակը նախապատվություն է տվել: Այս ուսումնասիրությունը կարևոր է նրանով, որ Ս. Շահնազարյանն ավանդել է Մշո բարբառով հավաքագրած բանահյուսական ժանրի հարուստ նյութեր, որոնցում, ըստ հեղինակի, տեսանելի է մշեցու «կենցաղը, մտորումները, ձգտումները, անոր անհուն համեստութիւնը, եւ նաև անոր արմատական մտածողութեան զգացական ու իմացական տարրերը»²⁴: Ինչ վերաբերում է Մշո բարբառի մյուս խոսվածքներին, որոնք ունեն տարբերություններ բուն Մշո բարբառի համեմատությամբ, Ս. Շահնազարյանը համարում է սոսկ հարևան բար-

²³ Ս. Շահնազարյան, Մշո բարբառը եւ իր ժողովրդին դիմաստուները» ուսումնասիրությունը, Պեյրութ, 1972թ., տպ. Սեւան, էջ 8-9:

²⁴ նշվ. աշխ., էջ 10:

բառների ազդեցության հետևանք՝ գրելով՝ «անոր սահմանագծին մօտերը ապրող Տարօնցին ենթարկուած է Վանի, Բիթլիսի, Ախլաթի հնչիւնային եղանակաւորումներուն, հացը՝ հնչելով խաց, հօրքուրը՝ խորքուր, կարմիրը՝ կեւրմիր, քոն՝ քեօն, գլուխը՝ գիւլօխ, և շատ թանձր հնչելով պ, բ, գ, ք, տ և դ տառերը»²⁵:

Մշո բարբառի գիտական ուսումնասիրության հարցում մեծ ավանդ ունի բարբառագետ Ք. Մաղաթյանը: Նա մանրակրկիտ քննության է ենթարկել Մշո բարբառի հյուսիսարևելյան խոսվածքներից մեկը՝ Ալաշկերտի խոսվածքը: Նրա ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ-ի Ապարանի և Արագածի շրջաններում բնակվող ալաշկերտցիների խոսվածքների հիման վրա՝ ընդգրկելով լեզվական բոլոր մակարդակները: Ք. Մաղաթյանը նույնպես փաստում է, որ Ալաշկերտի խոսվածքն ունի բուն Մուշից զգալի լեզվական տարբերություններ²⁶: Հիշատակենք ընդամենը հնչյունական մեկ իրողություն. Ալաշկերտի խոսվածքում շնչեղ խուլ բաղաձայնները բառամիջում և բառավերջում վերածվել են խուլերի, իսկ Մուշի խոսվածքում մնացել են նույնությամբ: Այս մեկ փաստն էլ բավական է ներկայացնելու համար, որ բուն Մշո բարբառը հարազատ է դասական հայերենին՝ զբաբարին: Գրաբարի հետ ունեցած նմանօրինակ լեզվական ընդհանրությունները բազմաթիվ են:

Լեզվական առումով Մշո բարբառի խոսվածքներն ունեն և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Այդ մեծ տարածքում տարածված բարբառն իր խոսվածքներով ներկայանում է լեզվական տարասեռ և համասեռ հատկանիշներով: Անմիատարբությունը պատմականորեն հիմնավորելի է: Այդ են վկայում ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական փաստերը: Դարերի ընթացքում Մշո տարածքում տեղի են ունեցել բարբառախոսների մի շարք ներհոսքեր և նրա սահմաններում տեղի ունեցած բնակչության տեղաշարժերը ստեղծել են այդ անհամասեռությունը: Այս

²⁵ նշվ. աշխ., էջ 10:

²⁶ Ք. Մաղաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1985, էջ 5-7:

առումով արտալեզվական փաստերի արժեքավոր տեղեկություններ են ազգագրագետ Բենսեի ուսումնասիրությունները: Հեղինակը, ուսումնասիրելով Մշո տարածքի մեկ առանձին հատվածի՝ Բուլանըղ /Հարք/ գավառի ազգագրությունը, փաստեր է տրամադրում, համաձայն որոնց՝ Բուլանըղի տարածքի հայ բնակիչների մի մասը Տուրուբերան նահանգի սահմանակից հարավային և հարավարևելյան կողմերից գաղթած եկվորներ են, իսկ մի մասը դարձյալ նույն ուղղությամբ եկած, բայց միևնույն նահանգի տարբեր գավառների նախկին բնակիչներ են²⁷: Այդ տեղաշարժերը, ըստ Բենսեի, տեղի են ունեցել 18-րդ դարի կեսերին, ժամանակահատված, երբ պարսկական և թուրքական բազմաթիվ խառնակությունների պատճառով հայկական գավառներում սպանդ էր կազմակերպվում: Բենսեն Բուլանըղը բաժանում է երկու տարածքների՝ վերին և ներքին: Վերին Բուլանըղի արևելյան որոշ գյուղերի բնակիչներ այդ տարածք են հայտնվել հարակից հայկական գավառներից՝ Խլաթից /Բզնունիք/, Խիզանից, Մոկսից և Արձեշից: Բենսեն եզրակացնում է, որ այդ գյուղերի բնակիչների բարբառային պատկանելությունն ավելի շատ Վանի բարբառին է հարում՝ «սակավ փոփոխութեամբ իրենց գործածած լեզուն Վանայ գավառաբարբառին կը պատկանի», իսկ Վերին Բուլանըղի արևմտյան գյուղերը և որոշ բացառությամբ ողջ Ներքին Բուլանըղի բնակիչները եղել են Բշերի, Մասունի, Խոյթի, Մօտկանի և Տարոնի գավառների նախկին բնակիչները, որոնց լեզուն «կը պատկանի Տարօնոյ կամ Մշոյ գաւառաբարբառին»²⁸, այսինքն՝ Մշո բարբառին:

Մշո տարածքի բնակչության տեղաշարժերի ու բնակչության բարբառային տարբերակվածության վերաբերյալ հիշատակման արժանի փաստեր է տրամադրում պատմաբան, ազգագրագետ Կարօ Սասունին: Իր ունեցած փաստերը Կ. Սասունին ներկայացնում է Տարոնի ժողովրդական բանահյուսությունը վերլուծելիս: Նա

²⁷ **Բենսե**, Բուլանըղի կամ Հարք գաւառ, Թիֆլիս, տպարան Կ. Մարտիրոսեանցի, 1901, էջ 33:

²⁸ նշվ. աշխ., էջ 33:

գրում է. «Տարօնի ամբողջ աշխարհը երբ միասին կառնենք՝ անոր քանահիւսութիւնը բարբառային երկու ճիւղի կը բաժնալի: Մշո դաշտը, Պուլանուխը, Խնուսը, Վարդօն և Սասուն արևմտյան Տարօնը կը կազմեն և գուտ Տարօնի բարբառով կը ստեղծագործեն, աւելի նուրբ և աւելի պատկերալից: Ծովաց աշխարհին սահմանակից ըլլալով և հին դարերէն սկսած յոյն-բիւզանդական կեսագունդին պատկանելով՝ հելլենական արուեստի հաւասարակշռութեամբ կը ստեղծագործէ: Իսկ Ախլաթ, Պիթլիս, Խիզան՝ Վանի բարբառի խառնուրդ ունին, մնալով անկախ և ինքնայատակ: Մոկաց և Ռշտունեաց աշխարհին 16 և 17-րդ դարերուն ժողովուրդը դէպի արևմուտք քշուած և խառնուած է Սալնոձորի և Ախլաթի ժողովուրդին: Մոկաց և Սպարկերտի երգերէն շատերը Տարօնի երգերն են, Մոկաց բարբառին վերածուած, շնորհիվ ժողովուրդի այս տեղափոխութիւններուն»²⁹:

Մշո տարածքի խոսվածքների տարբերակվածությանը համառոտակի անդրադարձել են նաև Սարգիս և Միսակ Բդէեանները: «Հարագատ պատմութիւն Տարօնոյ» արժեքավոր ուսումնասիրության մեջ /1962 թ./ հեղինակները Տարօնի /Մշո/ դաշտի ժողովրդին բնութագրում են որպէս «կրօնասեր, պարտաճանաչ, ցասկոտ, բռնությանը դիմագրավող, տոկուն, հին հայի տիպարն իրենց մեջ պարփակող», որոնք պարբերաբար ենթարկվել են թուրքերի հարձակումներին: Հետագոտողները գրում են. «դաշտի հին բնակիչները քանիցս փոփոխության ենթարկված են, կամ գաղթած, կամ ջարդուած, տեղ տալով հետզհետէ լեռնաբնակ ժողովուրդին»³⁰: Անդրդառնալով բուն լեզվական հարցերին՝ Բդէեանները, քանի որ եղել են Մշո դաշտի երբեմնի բնակիչներ, ուշագրավ տեղեկություններ են փոխանցում այդ տարածքի բարբառային վիճակի մասին. «Տարօնի գիւղերու բնակչութեան բարբառը գիւղէ գիւղ կը տարբերի՝ ցոյց տալով իրենց զանազան տեղերէ գաղթած ըլլալը: Դրժբախտաբար, լավ չուսումնասիրուեցաւ իւրաքանչիւր

²⁹ Կ. Սասունի, Պատմութիւն Տարօնի աշխարհի, 1956, տպ. Սևան, Պէյրուօ, էջ 431:

³⁰ Ս. և Մ. Բդէեան, Հարագատ պատմութիւն Տարօնոյ, Տպարան Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1962, էջ 6:

գիւղի բարբառը, բան մը որ անելի լոյս պիտի սփռէր այդ ժողովուրդի ծագման վրայ, և հիմա որ ամէնքն ալ կոտորուած են, և մնացյալ փոքր մէկ մասը գաղթած օտար երկիրներ և մոռցած են հին բարբառը և շէշտը, դժվար է գիտնալ անոնց ծագումը և որ գյուղերէն գաղթած ըլլալը: Ինչ որ հաստատ է, սակայն, սա է թէ անոնք մեծամասնութեամբ՝ Սասունէն, Խոյթէն, Մոտրկանէն գաղթած են սարատակի գիւղերը»³¹:

Մշո տարածքի խոսվածքային տարբերակվածությանը մասնակիորեն անդրադարձել է Ս. Բաղդասարյան-Թափալցյանը: Վերջինս իր ուսումնասիրության մեջ փաստում է, որ նկատել են խոսվածքային տարբերություններ **Բաղեշի, Ալաշկերտի, Խլաթի, Խնուսի** և բուն **Մշո** շրջանի բարբառի մեջ: Իր ասածը հիմնավորելու համար նա բերում է հնչյունական որոշ անհամասեռ օրինակներ ³² : Այսօր Մշո բարբառի ուսումնասիրությունը պետք է տեղայնացնել ըստ առանձին տարածքների, որը ապագայում իրագործվելիք խնդիր է:

Մշո բարբառն ունի յուրահատուկ լեզվական տիպաբանություն, որն արտացոլվում է լեզվական բոլոր մակարդակներում: Մշո բարբառի հնչյունական համակարգը գրեթե տարբերություններ չունի գրաբարի հնչյունական համակարգի համեմատությամբ: Այս բարբառն ունի քառաստիճան բաղաձայնական համակարգ և իր այս հատկանիշով համեմատվում է անգամ հնդեվրոպական նախալեզվի հետ, որը թույլ է տալիս ասելու, որ հայերենի հնագույն վիճակը պետք է գտնել Կենտրոնական Հայաստանի բարբառներում: Գիտության մեջ կա ընդունելի տեսակետ, որ Մեսրոպ Մաշտոցը հայոց գրերը ստեղծել է հենց Արարատյան և Տարոն-Տարուբերանի տարածքների հնչյունական համակարգերի հիման վրա, քանի որ Մ. Մաշտոցը ծագումով հենց Տարոնի Հացեկաց գյուղից էր: Մա խոսում է այն մասին, որ գրաբարը՝ հին հայերենը, որպես գրական լեզու, ձևավորվել է Արարատյան և Տարոնի բար-

³¹ նշվ. աշխ., էջ 6:

³² Ս. Բաղդասարյան-Թափալցյան, նշվ. աշխ., էջ 5-6:

բառների հիման վրա³³, որն էլ, մեծ հավանականությամբ, նույնպես ուներ շնչեղ ձայնեղներով հնչյունական համակարգ³⁴:

Մշո բարբառը հարուստ է երկբարբառներով, որոնք ի հայտ են գալիս ինչպես բառասկզբում, այնպես էլ բառամիջի փակ վանկում: Շնչեղ ձայնեղներով հարուստ բարբառը տարբերակում է երկու կարգի հազագ՝ ձայնեղ և խուլ հազագներ՝ **՝ Ե Բաղեշում, Խլաթում, Արճեշում, Արծկեում** խուլ **Խ** հազագը բացակայում է բառասկզբի դիրքում այնպես, ինչպես Վանի բարբառում է. այս տարածքներում Մշո բարբառին հատուկ խուլ հազագները ներկայանում են խուլ **խ**-ով, որը խեթաուրարտական ենթաշերտային դրսևորում է համարվում՝ **հաց-խաց, հարս-խարս, հինգ-խինգ** և այլն:

Մշո բարբառի քերականական կառուցվածքը նույնպես ինքնատիպ է: Այն իր մեջ պարփակում է հնագույն և նորահայտ լեզվական ձևեր ու տարրեր, որոնք ցույց են տալիս հայերենի զարգացման օրինաչափ միտումները: Մշո բարբառի քերականական կառուցվածքի քննությունը ցույց է տալիս, որ այն կցական տիպի լեզվամիավոր է, սակայն պահպանել է թեքական կառուցատիպի բազմաթիվ դրսևորումներ: Օրինակ, **-ք** հոգնակերտի գործածությունը՝ **այգիք, որդիք, օսկիք** և այլն, ինչպես նաև՝ կենդանի խոսքի մեր վերջին հետազոտությունները **Ապարանի** և **Մարտունու** տարածաշրջաններում ցույց են տալիս, որ Մշո բարբառում շարունակվում է պահպանվել գրաբարաձև ներկայի գործածությունները, որոնք թեքականության արտահայտման ինքնատիպ հետքեր ու դրսևորումներ են:

Հարուստ է նաև Մշո բարբառի բառապաշարը՝ բառային հիմնական ֆոնդն ու բառային կազմը: Մշո բարբառի բառապաշարի միջուկն են կազմում համահայկական բառերը՝ իմաստային

³³ **Ա. Այսրենյան**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, ԵՊՀ հրատ, Ե., 1987, էջ 46:

³⁴ **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 6, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Ե., 1971, էջ 845, **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 134:

գրեթե բոլոր խմբերով: Մշո բարբառի բառապաշարը ներկայանում է հին և հնագույն, նոր և նորագույն փոխառություններով, ինչպես նաև հայերենի բառակազմական ներքին օրենքներով ստեղծված բազմաթիվ ածանցումներով ու բառաբարդումներով: Բառբառում մեծ թիվ են կազմում արևելյան լեզուներից՝ պարսկերենից, արաբերենից, թուրքերենից, ավելի սակավ՝ քրդերենից կատարված փոխառությունները, իսկ 20-րդ դարում, այդ թվում՝ մեր ժամանակներում Մշո բարբառի վրա ինտենսիվորեն ազդում է ռուսերենը: Բարբառում մուտք են գործել բազմաթիվ ռուսերեն բառեր, որոնք հետևանք են հայ-ռուսական սոցիալ-տնտեսական, մշակութային սերտ հարաբերությունների:

Որպես ամփոփում՝ նշենք, որ, ինչպես ցույց են տալիս լեզվական ու արտալեզվական փաստերը, Մշո բարբառն այսօր գործում է Հայաստանի Հանրապետությունում, հիմնականում՝ **Մարտունու, Ապարանի, Կարմիրի, Արագածի** և այլ տարածաշրջաններում:

РЕЗЮМЕ

Диалект Муша является самым древним и крупным в армянском языке. По многокачественной и статистической классификации армянских диалектов, он занимает особое место среди диалектов Муша-Тигранакерта или южноцентральных диалектов. Диалект Муша имеет девять говоров: Бахеш, Хлат, Арцке, Арчеш, Маназкерт, Муш, Буланах, Хнус, Алашкерт. С точки зрения языка, говоры Муша имеют как общие качества, так и различия. Колыбелью Мшинского диалекта была центральная Армения, откуда изгнание населения Муша началось в первой половине 19-ого века, а полное освобождение территории от армян имело место в 1915. Носители данного диалекта нашли убежище в различных областях Армении: в Араратской долине, Апаране, Севане, Талине, а также в других уголках мира. Многочисленная

языковая и религиозная литература на Мшинском диалекте является для нас богатым наследием. Некоторые варианты эпоса “Сасна Црер” написаны именно на этом диалекте. Можно сказать, научное исследование Мшинского диалекта началось в конце 19-ого века. В данной статье будут представлены особенности происхождения, развития, нарушения территориальных основ, а также структурные особенности и историко-культурная ценность диалекта Муша.

ԳԼՈՒԽ Բ. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՐՑԱԽԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՔՄԱՅԻՆ ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԸ¹

Ժաննա Միքայելյան

Հնչյունների քմայնացման երևույթը հատուկ է հայերենի արևելյան և արևմտյան խմբակցությունների որոշ բարբառների, ինչպես՝ Ղարաբաղի, Մեղրու, Ագուլիսի, Վանի, Խոյ-Մարաղայի և այլն: Երկու տարածքների բարբառային այս միավորներում լայն գործառություն ունի Հ. Աճառյանի օրենքը, որը հեղինակը հայտնաբերել է ա ձայնավորի համար: Հիշեցնենք. *«Վանի բարբառում ա ձայնավորը գտնվելով գրաբարի թրթռուն պայթականից առաջացած խուլի մոտ, դառնում է ü, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է ա»²:*

Ժամանակին, ուսումնասիրելով Ղարաբաղի բարբառի և Վասպուրականի տարածքի քմային ձայնավորները, մենք, փոքր լրացում կատարելով, այսպես ենք վերասահմանել սույն օրենքը. *«Հայերեն որոշ բարբառներում գրաբարյան ձայնեղ (հպական, կիսաշփական, շփական) բաղաձայններին համապատասխանող հնչյուններից հետո ձայնավորները ձեռք են բերել առաջնալեզվային արտասանություն»³:* Այսինքն՝ դա վերաբերում է հետին շարքի ա, օ, ու ձայնավորների՝ առաջնալեզվայինի վերածվելուն: Ինչպես Հ. Աճառյանն է նկատել, նախ՝ սվյալ դիրքի ձայնավորներն են քմայնանում, ապա այդ բարբառային միավորների մեծ մասի հնչյունական համակարգերում խլանում են քմային ձայնավորներին նախորդող ձայնեղ հպականները: Հարկ է նշել, որ գ, կ, ք բա-

¹ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 114-119:

² Հ. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 20:

³ Ժ. Միքայելյան, *Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները*, Ե., 2009, էջ 69:

ղաձայնները և լ ձայնորդը նույնպես առաջնալեզվային արտասանություն են ձեռք բերում ոչ միայն քմային ձայնավորներից, այլ նաև առաջին շարքի փակ *է, ի, թույլ ի* հնչյուններից առաջ: Այսպես՝ *գիփրաղէն* «կույր աղիք» (Մեղրի), *քի՛նսի՛, կի՛նի, կի՛նրի, կի՛օղ, լէց* (Ղար.), *կի՛ մօղ, կի՛ք* «կայիք(դուք)» (Վան), *կի՛տ, կի՛րան* «գերան», *լի՛սլ* (Գորիս) և այլն:

Ի դեպ, Ն. Աճառյանն ընդհանրապես լեզուներում և հատկապես հայերեն բարբառներում առաջնալեզվային կամ քմային է համարում *է, ի, օ, նի, սի* ձայնավորները⁴: Բարբառներում քմայնացում կարող է լինել ձայնավորների ներդաշնակության օրենքով նույնպես՝ առաջընթաց, թե հետընթաց: Նման դեպքերում հաճախ առաջնային արտասանություն են ձեռք բերում քմայինների նախորդող կամ հաջորդող, այսինքն՝ կից վանկերի ձայնավորները, հետևաբար՝ առնամանությամբ կարող են քմայնանալ նաև դրանց հարևանությամբ գտնվող վերոհիշյալ բաղաձայնները: Օրինակ՝ *կի՛րօ՛լի սի* «գրել է», *լի՛վսիցսի՛լի սի, սի՛նրսի՛ք* և այլն:

Ն. Աճառյանի օրենքը լայն գործառություն ունի հատկապես Արցախի խոսվածքներում: Հնչյունական մի հետաքրքիր երևույթ է նկատվում այդ տարածքի բարբառային միավորներում, որը ցայսօր լուրջ ուշադրության չի արժանացել: Լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում առկա՝ ըստ ՀԲԱ ծրագրի լրացված՝ Ղարաբաղի բարբառային նյութերը ուսումնասիրելիս պարզվում է, որ զանազան հանգամանքներում և դիրքերում քմայնանում են Ղարաբաղի տարածքի խոսվածքների գրեթե բոլոր բաղաձայնները: Կարծում ենք՝ սա եզակի բնույթ է կրում հայերեն տարբերակների հնչյունական համակարգերում ընդհանրապես, քանի որ այլ բարբառային միավորներում նմանատիպ քմայնացում չի հանդիպում:

Կ. Դավթյանը «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությունում բաղաձայնների կրած փոփոխությունների մասին խոսելիս՝ գրում է. «*Բառի սկզբին համարյա բոլոր*

⁴ Ն.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, Ե., 1971, էջ 111, 119:

ձայնավորներից առաջ ունենք *գ>կ*, միայն չի պատահում ծանր ա-
 ից և է-ից առաջ... *Գ*-ն քմայնանալով դառնում է *կ*, *ք*, *զ*, բոլոր դիր-
 քերում... *զ*-ն ստացվում է բառամիջում և բառավերջում, մանա-
 վանդ ն ռնգայինից հետո»⁵: Գրքում հեղինակի բերած օրինակներից
 են՝ *քիթէլ* «գդալ», *հինգէր*, *պէնձիզ* «կոտրած կավամանի կտոր»,
ախճիզ, *ծննննզ*, *թննզ*, *կարնք*, *քրշէք*, *քէցէք* «զնացէք»: Խուլ
 հպական կ- ի քմայնացում կա մի քանի բառում, ինչպես՝ *կննրմուր*,
կննպիտ, *զնննկ*, *պնպծկ*, *կրծիկ*, *պնննկ* և այլն: Քմային լ ձայնորդի
 համար նույնպես Կ. Դավթյանը մի քանի օրինակ է բերում՝ *տալ*,
քրննլ, *կալ* (գոյականը)⁶: Այլ բաղաձայանների կրած նմանատիպ
 փոփոխության մասին ոչ մի խոսք չի ասվում:

Ա. Պողոսյանը Հաղորդի խոսվածքին նվիրված իր գրքում
 փաստել է *ն*, *նն*, *թ*, *ծ*, *ծ*, *ց*, *ծ*, *չ*, *ժ* քմային հնչյունների առկայությունը
 բարբառային այդ միավորում, որոնք, սակայն, ըստ հեղինակի,
 ունեն հազվադեպ գործածություն⁷:

«Ղարաբաղի բարբառի բառարան»-ի նախաբանում Ա. Սար-
 գսյանը բաղաձայնների քմայնացման խնդրի վերաբերյալ գրում է.
«Գրական լեզվի համեմատությամբ նորություններ են գ, կ, ք, լ
բաղաձայնները, որոնք ներկայացնում են համապատասխան գ, կ,
ք, լ հնչյունների քմային արտասանությունը»: Այնուհետև շարու-
 նակում է. *«Հազվադեպ գործածություն ունեն ն, նն, թ, ծ, ծ, ց, ծ, չ, ժ*
բաղաձայնները, որոնք առանձին որակ չեն կազմում և հնչությային
արժեք չեն ներկայացնում»⁸:

Նույն հեղինակն իր մեկ այլ գրքում՝ «Շաղախի ենթաբար-
 բառը Հաղորդի ենթաբարբառի միջավայրում», այսպիսի միտք է
 արտահայտում. «Ա. Պողոսյանը Հաղորդի ենթաբարբառին հա-

⁵ Կ. Դավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Ե., 1966, էջ 54:

⁶ Նույն տեղում:

⁷ Ա. Պողոսյան, *Հաղորդի բարբառը*, Ե., 1965, էջ 11:

⁸ Ա.Յ. Սարգսյան, *Ղարաբաղի բարբառի բառարան*, Ե., 2013, էջ 6:

տուկ է համարում *ի, ւն, թ, ձ, ծ, ց, ճ, չ, ժ* բաղաձայնները: Այդպիսի հնչյունները, սակայն, ունեն հազվադեպ գործածություն և հատուկ չեն Շաղախի խոսվածքներին»⁹ :

Հարկ է նշել, որ և՛ Ա. Պողոսյանը, և՛ Ա. Սարգսյանը Ղարաբաղի խոսվածքների ոչ բոլոր քմայնացած բաղաձայններն են իրենց աշխատություններում հիշատակում: Բացի այդ, մեր կարծիքով՝ պարտադիր չէ, որ քմային բաղաձայնները հնչության յին արժեք ունենան, որպեսզի արժանի լինեն հատուկ քննության:

Ըստ մեր ձեռքի տակ եղած բարբառային նյութերի՝ փորձենք պարզել, թե նախ՝ որ դիրքերում, ինչ հանգամանքներում են խնդրո Արցախի բարբառային միավորների քմային բաղաձայնները 117 առարկա տարածքի բաղաձայնները քմային արտասանություն ձեռք բերում՝ բացի առաջին շարքի ձայնավորների հարևանությամբ գործառելուց: Օրինակ՝ բաղաձայնահանգ բառավերջ՝ քմային *գ. շեգ, խըրեգ, կընեգ, ծաղեգ, լալեգ, կաղլեգ, տեգ* «տիկ», *կըլտեգ* «թլվատ», *մըհեգ, հեգ, ճանգ, թանգ, տըպտըպոտիգ* «պեպենոտ», *ախչիգ, փօջիգ, իլիգ, պօլիգ*: Քմային *ք. ախպերք, բաղարաք, հըրսանեք, կընանեք, ծեք, էք, յեկեք, խօխեք, փըսլենք, սըրփսնք* «ընկերք», *օտիք, նըստիք, քընիք, պեժինք, կե/ըռեք* «ատամ», *կե՛րեք, քըցիք, յերգինք, կըլօլօք* «կոլոլենք», բայց՝ *ըխչըկերք, մարթիք, քըվերք, խեղունք, աղօթք*: Քմային *լ* բառավերջում. *քսնդիլ, թուլ, կնի, ման կնի, շօռ կնի, կօնալ, հօլ* «ուլ», *կուտիլ* «կույտ անել», *հըռըճնիլ* «կարմրել», բայց՝ *քինալ, կուփե տալ* «հրել»: Եթե *ի*-ն, *փ*ակ *է*-ն առաջին շարքի ձայնավորներ են, և նրանցից հետո բաղաձայնի քմային արտասանությունը բացատրելի է առնմանության օրենքով (օր *լիգը, կընեգ*), ապա խոսվածքներում բաց *է*-ից, *օ*-ից հետո նկատվող բաղաձայնների քմայնացումը մնում է անբացատրելի:

⁹ **Ա.Յ. Սարգսյան**, *Շաղախի ենթաբարբառը Հայրութի ենթաբարբառի միջավայրում*, Ստեփանակերտ, 2009, էջ 6:

Արցախի բարբառային միավորներում քիչ չեն քմային գ, կ, ք, բաղաձայններով ու քմային լ ձայնորդով բառերը: Եվ սրանց առաջնալեզվային արտասանությունն է նկատվում նույնիսկ, երբ այդ հնչյունների հարևանությամբ չկա որևէ քմային ձայնավոր. *հինգըցնէլ* «հանգցնէլ», *քընից* «գնաց», *կնործես ա* «գործում է», *կինձու* «համեմի», *մար տալի* «կոճկել», *կոխ տալի*, *շաղ տալի*, *մոլի* «ծուխ» և այլն:

Կապանի տարածքի խոսվածքները, որոնք մտնում են Ղարաբաղի բարբառի մեջ, բառավերջում գ-ի առաջնալեզվային տարբերակներ են հայտաբերում, ինչպես՝ *հէնգ, կընէգ, ծաղէգ, խըրէգ*: Ընդհանրապես ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես գ, կ, ք բաղաձայնները միտում ունեն քմայնանալու: Ինչպես հնչյունաբան Ա. Ն. Խաչատրյանն է նկատում «... *հայերենի կ, գ, ք հնչույթները կազմավորվում են բերանի ոչ շատ խորը մասում, փափուկ քիմքի առաջամասում*», *այսինքն՝ դրանք «հետքմային պայթական բաղաձայններ են»*¹⁰: Ուշագրավ մեկ փաստ ենք նկատել այն բարբառակիրները, որոնց խոսվածքներում բացակայում են քմային ձայնավորները, ինչպես նաև որևէ բարբառի չտիրապետողները, արևելյան լեզուներից կատարված փոխառյալ բառերի հիշյալ ձայնավորները չեն կարողանում արտասանել, այնինչ հեշտությամբ են արտաբերում *գ, կ, ք*: հնչյունները: Օրինակ՝ *գաղա, գառ, ջիգար, կառ, քալամ, քարաբ, քարթու, քօռ, քօփակ, քաշալ* և այլն:

Խնդրո առարկա տարածքի խոսվածքներում բառավերջում այլ բաղաձայններ ևս առաջնալեզվային են դառնում. *պէնի, փաի, դնրթ, սամթ, կաթ* «կաթիլ», *քէթ, ճիթ, մէձ, խազ, խօզ, պօզ, վէզ* (բայց՝ կօզ, ոչ քմային գ), *ճւննջ, լիջ, պած* «կայծ», *քէմուրի, պուրիուրի* «կլոր», *պաչ, կիժ, թիժ* «թեժ» *կէչ, կօրէզ*, աղտիրած՝ *քօն* «քուն», *տափէն* «գետնից», *շէնքէն, սընձէն, սըզնէն* և այլն:

¹⁰ Ա.Ն.Խաչատրյան, *ժամանակակից հայերենի հնչույթաբանություն*, Ե., 1988, էջ 168-169:

Բառասկզբի և բառամիջի դիրքերում հանդիպող առաջնալեզվային բաղաձայններ. *կրոնասս* ա «դառնում է», *կյնրմոնր*, *կիվոդ* «եկող», *կեցավ* «հազավ», *ծրրանու* «ծիրանի», *սնր/էքըրսկէն*, *օխծը* «օձ», ծիծաղ, *կուծի* «փոքր», *ժսննգ*, *չսննջ/պեժինք*, *խեժնը*, *դիյնը* «եղունգ», *տիսնակէն*, *քիսնում* ա «գնում է», *իսնում* ա «լինում է», *իքնավեղ*, *խըզստակ* «ծոծրակ», *սիԱտսնկ*, *ճսնչ*, *ճոնր*, ճօրե «ջորի», քըչէ-ագ, *վերջակ*, *խածված*: Բարբառային նյութերի օրինակներում հաճախ է հանդիպում ռնգային քմայնացածն ձայնորդ հնչյունը: Ինչպես օսցիլոգրաֆիկ քննությունից է պարզվում, ընդհանրապես այն հակում ունի քմային արտասանության¹¹:

Սակայն վերը նկարագրված հնչյունական պատկերը ոչ բոլոր գյուղերում է հանդիպում: Օրինակ՝ *գ*, *կ*, *ք*, *լ* հնչյուններից բացի բաղաձայնների այլ քմայնացում չի գրանցվել Շահումյանի շրջանի Բուզլուղ, Հաղրութի Խըրմանջուղ, Տումի գյուղերի խոսվածքների նյութերում:

Այսպիսով՝ մի բերելով վերոշարադրյալը, կարելի է կատարել որոշ դիտարկումներ: Նախ՝ Ղարաբաղի տարածքի բարբառային միավորների այստեղ ներկայացված երևույթը՝ բաղաձայնների քմայնացումը, մասնագետների կողմից ուսումնասիրված չէ: Անգամ հարևան տարածքային միավորների (օրինակ՝ Ղարադաղի) հնչյունները նշված տեսանկյունով չեն քննվել:

Ինչ վերաբերում է մեր եզրակացությանը, կարող ենք ասել միայն, որ բաղաձայնների քմայնացումը ինդրո առարկա տարածքում մեկ միասնական հնչյունական օրենքի գործառությամբ հնարավոր չէ բացատրել: Այսպես. եթե առաջնային շարքի ձայնավորների հարևանությամբ գտնվելով բաղաձայնները կարող էին քմայնանալ, ապա ինչ բացատրություն կարող է ունենալ հետին շարքի՝ հետնալեզվային ձայնավորների մոտ բաղաձայնների քմայնացումը:

¹¹ Ա.Հ.Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 174-175:

Թերևս կարող ենք ենթադրել, որ հնարավոր է՝ սա որևէ այլ լեզվի ազդեցություն է: Հիշեցման կարգով ասենք, որ ոուսերենը երկար ժամանակ եղել է հաղորդակցման լեզու, և, հետո, Ղարաբաղի բնակչությունը միատարր չէ: Օրինակ՝ Հաղբութի շրջանի շատ գյուղերում վերաբնակվել են «...Ղարաղաղից տարբեր ժամանակներում գաղթած հայեր»¹²: Կան նաև Մարաղայից գաղթածներ: Սակայն չենք կարծում, թե խնդրո առարկա երևույթը այդ խոսվածքներից է ներթափանցել:

Микаелян Жанна – Палатальные согласные в говорах Арцаха.

– В говорах Арцаха встречается такое фонетическое явление, которое не характерно для других армянских диалектов: в разных позициях в словах палатализируются почти все согласные звуки говоров территории Арцаха. Этот факт не поясняется никакими фонетическими законами, которые функционируют в этих говорах. Быть может, это влияние других языков (например, русского языка).

Mikayelyan Zhanna – Palatal Consonants in the Dialectical Units of Artsakh. – A phonetic phenomenon, typical of no other Armenian dialect, exists in the speech variants of Artsakh. Almost all the consonants of the system become palatalized in various word positions. This is not explained in any of the phonetic laws. Supposedly, it is a result of influences.

¹² Ա. Պողոսյան, *նշվ.աշխ.*, էջ 5:

ԳԼՈՒԽ Գ. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ¹

Ջեմմա Բառնասայան

Հայերենի բարբառների ուսումնասիրության արդի փուլում արդեն հրապարակի վրա են բարբառների նկարագրությանը նվիրված բազմաթիվ մենագրություններ, հետազոտություններ, բարբառագիտական ապագա ատլասի կազմման համար հատուկ ծրագրի օգնությամբ հավաքչական աշխատանքներով կուտակված հարուստ նյութեր: Նկատելիորեն մեծանում է հետաքրքրությունը բառապաշարի թեմատիկ-իմաստային խմբերի հանդեպ: Ինչպես հայտնի է, ապագա բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում² հայերենի բարբառների բառապաշարի տարածքային տարբերություններին որոշակի տեղ է հատկացված, ինչը լուրջ համեմատություններ կատարելու հնարավորություն է ընձեռում: Բառակազմական խնդիրներն այդ ծրագրում հարցման առարկա չեն դարձել, սակայն բառանվանողական նյութերի գրանցումներում կարելի է գտնել արժեքավոր տեղեկություններ նաև բվառակազմության վեկաբեկյալ: Այդ ամենին եթե հավելենք նաև բարբառագիտական մենագրություններում, ազգագրական-բանահյուսական ուսումնասիրություններում, հայ ժողովրդական հեքիաթներում առկա նյութերը, կարելի է ասել, որ հայերենի բարբառների բառակազմական իրողություններն ուսումնասիրելու համար ունենք հուսալի շտեմարան:

Հայերենը պատկանում է հնդեվրոպական այն լեզուների թվին, որոնք ունեն զարգացած բառաբարդություն: Այդ մասին նշա-

¹ «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումներ, Եր., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 19-24 :

² Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977:

նավոր հայագետ Ա. Մեյեն կարծիք է հայտնում, որ «Բառաբարդման հայերեն տիպերը բազում տեսակետից շարունակում են հնդեվրոպական տիպերի այնքան հավատարմորեն, որքան թույլ է տվել լեզվի ընդհանուր կառուցվածքը»³: Բառաբարդություններն առաջանում են հիմնականում շարահյուսական կապակցություններից բառերի՝ երկարատև միասին գործածվելու, պարբերաբար կրկնվելու հետևանքով՝ նպաստելով սերտ ու միասնական իմաստ արտահայտելուն և մեկ բառային միավորի վերածվելուն⁴: Ներկայացնենք հայերենի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան խմբակցության բարբառներում բառակազմական մեծ հաճախականություն դրսևորող անվանական ու բայական հարադրական բարդություններին առնչվող որոշ իրողություններ: Բարդության այդ տեսակը հիմնականում կայուն բառակապակցություն է, որի բաղադրիչները միակցված չեն, շատ դեպքերում առանձին շեշտ ունեն և հարաբերականորեն պահում են իրենց բառային իմաստը: Իսկ բաղադրիչների փոխհարաբերության շարահյուսական դրվածքը պահպանվում է և գիտակցվում է: Անորոշությունը խորթ է ժողովրդի լեզվամտածողությանը, և բարբառներում կան բառակազմական ձևեր ու միջոցներ բառն առավել ճանաչելի, բառիմաստն ընկալելի դարձնելու, իմաստային նրբերանգներ արտահայտելու համար՝ ստեղծելով պատկերավոր լեզվամտածողության հիանալի նմուշներ: Քանի որ լեզուն առաջին հերթին լեզվամտածողություն է, զարմանալի չէ, որ տարբեր ժողովրդների բառամթերքում հաճախ հանդես են գալիս բառակազմական նույնատիպ կաղապարներ՝ հաճախ համընկնելով նաև իմաստային դաշտում:

Անվանական հարադրությունները հայերենի բարբառներում գործառական մեծ հաճախականություն են ցուցաբերում: Ասենք, հարադրվում են բառային հոմանիշներ առարկան կամ երևույթն առավել ընկալելի դարձնելու նպատակով, ինրպես՝ **կար-կարգր-դան, տեղ-սրթար, քար-քրոս, բուկ-բորան** և այլն: Մշո բարբառով բերված նմանատիպ հարադրությունների համար սովորական է

³Տե՛ս Ա.Մեյե, *Հայագիտական ուսումնասիրություններ*, Ե., 1978, էջ 85:

⁴Տե՛ս Հ.Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 138:

նան **ու** շաղկապով բառաբաղադրություն կազմելը՝ **տեխուսըթար, քօկուբուս, քարուքրոս, ք'նկուբօրան**: Այս իրողությունը համատարած է բարբառների գերակշիռ ասում: Անորոշ դերանվան իմաստով հայերենի գրեթե բոլոր բարբառներում լայնորեն գործառում է **մարթ** բառը, իսկ **մարթ-մաղաթ** հարադրությունը համարժեք է **ոչ ոք** ժխտական դերանվանը: Շատ դեպքերում բառիմաստն առավել ընկալելի դարձնելու, որոշակի նրբիմաստ հավելելու նպատակով հարադրության կազմում հայերեն բառաձևի հետ կիրառելի են նույնիմաստ փոխառյալ բառեր, ասենք, Կարնո բարբառում՝ **սեղ-սավղա, խօսկ-խօրաստա** և հայաբանության արժեք ունեցող նմանատիպ այլ ձևեր: իրանական լեզուներից փոխառյալ **ֆրլան** բառով, ասենք, Կարնո բարբառի խոսվածքներում անորոշ դերանվան արժեք են ձեռք բերել **Ֆրլան-ֆրստան, ֆրլան-ֆրլանքյաս** հարադրությունները՝ **ինչ-որ, ինչ-ինչ, ոսն** իմաստներով:

Հայերենի բարբառներում համատարած գործառույթ է դրսևորում հարադրավոր բարդությամբ երևույթն առավել ամբողջական ու համակողմանի ներկայացնելու իրողությունը՝ հիմքում ունենալով նույնիմաստ բաղադրիչներ: Ասենք՝ խստաշունչ ձմեռվա մասին խոսելիս գործածական է **ձյուն** և **ձմեռ** բաղադրիչներով հարադրված բարդությունը՝ բարբառներից յուրաքանչյուրի համար օրինաչափի հնչյունափոխությամբ: Այսպես՝ **ձ՞յուն-ձըմեռեն** (Քեսաբ), **ձ'ուն-ձըմրոնօց** (Մուշ), **ձին-ձըմեռ** (Լոռի), **ծյու-ծըմեռնը** (Ղարաբաղ): Կամ, ասենք, **ամառ-ձմեռ** հարադրությամբ՝ ամբողջ տարին, իսկ **գիշեր-ցերեկ** հարադրությամբ՝ ամբողջ օրը ժամանականիշ բառակապակցությունների իմաստն է արտահայտվում, ինչպես՝ **Իդա ճիժ գ'իշեր-ցերեկ հ'օրի՞ գ'իլա** (Մշո բարբ.): **Քըշեր-ցերեկ մի հանգի կօռքմ ա ցավից** (Երևանի Նորք գ. խոսվածք):

Տարոն-Տուրուբերանի ազգագրական գոտու՝ Մշո բարբառով գրառված հեքիաթներում զուգահեռաբար գործառում են **ժամ-**

ժամանագ, ժուլ-ժամանագ բաղադրությունները, ինչպես՝ *Ընցավ ժուլ-ժամանագ մը, թակավօր հիվընդամբ*։

Ժողովրդական հեքիաթներում և դրանց՝ հայ գրողների կողմից մշակված տարբերակներում հաճախադեպ է **ժուկօլ-ժամանակոլ** հարադրությունը։ Նկատելի է, որ այն հանդիպում է հատկապես հեքիաթի սկզբում՝ ժամանակային անորոշություն հաղորդելով պատումին և վկայակոչելով անհիշելի ժամանակներ. **ժուկօլ-ժամանակօլ մի թաքավօր ա էլէլ**։ Հ.Աճառյանն այդ հարադրության առաջին՝ **ժուկ** բաղադրիչի ծագումն անհայտ է համարում (ՀԱԲ, հ. 2, էջ 222)։ Որոշ վերապահումով կարելի է ենթադրել, որ **ժուկ**-ը **ժամանակ** բառի կրճատված և հնչյունափոխված ձևն է, որը **ժամանակ** իմաստով նաև ինքնուրույն գործառույթ է դրսևորում Իրանի հայախոս գավառների (Փերիա, Բուրվան) խոսվածքներում՝ **ժուգ** ձևով, ասենք՝ **էթալու ժուգը չի**։ Հնարավոր է նաև, որ այն իրանական լեզուների բարբառային որևէ տարբերակից է սերում⁶։ **ժուկօլ-ժամանակօլ, հուր-հրէղէն, հուրնիկ-հրրէղէն** և նմանատիպ բազում այլ հարադրությունների առատությունը հրաշապատում հեքիաթներում ժողովրդական բանարվեստի այդ ժանրին հատուկ՝ հանդիսավորության մթնոլորտ ստեղծելուն նպաստող ոճական արժեք ունի, հավանաբար։

Ինչպես հայտնի է, պատմական շփումների ընթացքում օտար բառերի փոխառությունը իմաստային և կիրառական նրբերանգներով է պայմանավորված։ Շատ դեպքերում փոխառյալ բառն ունի այլ իմաստ, քան ունեցել է փոխատու լեզվում։ Ասենք, թուրքերենից փոխառյալ **ալայ** բառը՝ **ամբողջ, բազմություն** իմաստով, հայ բարբառներից շատերում (Վան, Համզեն, Սվեդիա, Նոր Նախիջևան) գործառում է **բոլորը, ամենքը, ամենը** նշանակությամբ որոշյալ դերանունների արժեքով, իսկ **ալայ-մալայ** հարադրութ-

⁵Տե՛ս *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 13, Ե., 1985, էջ 48։

⁶Տե՛ս **Զ.Բառնասյան**, *Ժամանականիշ բառերը հայերենի բարբառում*, Ե., 2009, էջ 8։

յանը բնորոշ է *հազիվ* (լավագույն դեպքում, շատ-շատ) իմաստը, ինչպես՝ *Ալայ-մալայ հարուր տարի ապրիմ*⁷:

Հարադրավորից կազմված մի շարք ձևեր արագախոսության հետևանքով կարող են անճանաչելիորեն փոծված լինել, ինչպես, ասենք, Քեսաբի բարբառում առկա՝ *վրրձրվիէկ* (որձուէգ) բարդութունը, նույնը կարելի է ասել *լաճվախձիկ* (լաճուաղջիկ) անվանական հարադրության մասին՝ Վանա բարբառում գործառող: Այդ բարբառում առկա *նէտվանէղ* (նետուաղէղ) բառածը հանդիպում է նաև Մշո բարբառով գրառված հեքիաթներում:

Գործառական մեծ հաճախականությամբ են հանդես գալիս հատկապես զուգադրական բայերը, որոնց բաղադրիչները սովորաբար կազմվում են հոմանիշ, մերձիմաստ բայերի կապակցությամբ՝ արտահայտելով «միմյանց զուգորդվող գործողությունների միասնություն՝ իբրև միասնական պրոցես՝ ժամանակային նույն պլանում իրացվող»⁸: Հայերենի բոլոր բարբառներին հատուկ է երկու դերբայով անշաղկապ հարադրություն կազմելը, ինչպես Քեսաբի բարբառում՝ *ուրթիլ-ուզիլ, ուտիլ-խումիլ, հէգ^աօծ-կէպ^աօծ* և այլն:

Հարադիր բայերի բաղադրիչներից մեկը բայ է, իսկ մյուսը կարող է լինել գոյական, ածական, դերանուն, մակբայ: Լայնորեն գործառում են թե՛ արևելյան և թե՛ արևմտյան իմբակցության բարբառներում: Բերենք օրինակ՝ համեմատելով, ասենք, Մշո և Ղարաբաղի բարբառները: Այսպես՝ *լսել* հասկացության դիմաց Մշո բարբառում գործառում է *անգաջ էնէլ* հարադրությունը, թեև *լսել* իմաստով առկա է *հ իմանալ* բառը: Ի դեպ, իմաստագործառական այլ բաշխում ունի *հ իմնալ* բառը՝ *արթնանալ* իմաստով (Ճիժ քընուգ էր, հ իմծավ): Ղարաբաղի բարբառում նույնպես առկա է *անգուճ օնէլ* հարադրությունը: Բերենք օրինակ Արցախի բանա-

⁷ Տե՛ս Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, հ. Ա, Ե., 1987, էջ 6:

⁸ Տե՛ս Հ.Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 76:

հյուսույթյանը նվիրված ժողովածուից. *Մէծէն խօսքէն վէր անգուճ
օնիս, վէննդդ քարէն նի չիկյաջ*⁹:

Տարածական մեծ շառավղով գործառող (շատ հաճախ՝ անփոխարինելի բառիմաստով) *յօլա գրնալ* հարադրության առաջին բաղադրիչը թուրքերենից փոխառյալ *յօլ* (ճամփա) բառն է, իսկ բայը բարբառներից յուրաքանչյուրում համապատասխանում է տվյալ բարբառի հնչյունական օրինաչափություններին՝ *յօլա էրտալ* (Մշո, Կարնո բարբառներ), *յօլա էթալ* (Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներ), *յօլա քինալ* (Ղարաբաղի բարբ.), *յօլա նօլ* (Ագուլիսի բարբ.) և այլն: Այդ հարադրության արտահայտված իմաստն ուղղակի կորչում է այլ բառով փոխարինելիս: Ուստիև հայաբանության արժեք ունի ամենատարբեր բարբառներում: Կամ, ասենք, Մշո բարբառում *սպսպրեղ* բառը կարող է կիրառվել երբեմն՝ իբր բարձր ոճի բառ, սակայն սովորաբար գործածվում է *թամբի էնէլ* հարադրությունը: Նույնը կարելի է ասել նաև հայաբանության արժեք ունեցող *օյաթ էնէլ* հարադրության մասին, որին հատում է *վերջին պատվերը տալ կամ կտակել* իմաստը:

Պատկերավոր լեզվամտածողության արդյունքն է Մշո բարբառում առկա *հօկու հօկին հէնալ* հարադրությանը՝ *շատ տանջվել* նրբիմաստով:

Ինչպես արդեն նշել ենք, քարտեզագրման ենթակա հատկանիշների համար բարբառագիտական ապագա ատլասի նյութերի հավաքման ծրագրում բառակազմական խնդիրների մասին հարցում պարունակող կետեր չկան, սակայն կան, ասենք, քերականական հատկանիշներին նվիրված կետեր, որոնց միջոցով կարելի է տեղեկություններ քաղել մեզ հետաքրքրող հարցի մասին: Դիցուք՝ Ծրագրի 622 կետի միջոցով, որը հարցում է կատարում տվյալ խոսվածքում պարզ բայի դիմաց հարադիր բայի առկայության մասին (պարել-պարգալ, երդվել-երդում ուտել և այլն), կարելի է տեղեկություններ քաղել հայերենի բարբառներում շատ գործածա-

⁹ Տե՛ս Նշխարներ Արցախի բանահյուսության, Ե., 1991, էջ 201:

կան բայական հարադրությունների մասին¹⁰: Հայ նշանավոր լեզվաբան Հովհ. Մուրադյանը, ում անմիջական ղեկավարությամբ է ձեռնարկվել որոշակի հարցարանով հայ բարբառների գրանցման աշխատատար գործը, առաջինն էր, որ քարտեզագրման մի հետաքրքիր փորձ կատարեց՝ *նայել* հասկացության դիմաց հայերենի զբաղեցրած ողջ տարածքում առկա բառանվանումները խմբավորելով և քարտեզի վրա տեղադրելով: Ծագումնաբանորեն դրանք դասդասելով և ներկայացնելով ըստ տարածական շառավղի մեծության՝ լեզվաբանը համոզիչ փաստարկներով ապացուցում է, որ հին հայերենից ժառանգված *հայիլ* և *նայիլ* ձևերի կողքին գերակշռում են բնիկ հայերեն *այ*(ք) արմատից սերող բառանվանումները (այքել, աշել, իշել, յէշիլ): Իսկ երկրորդ տեղում *միտ* արմատական ձևից սերող բայական հարադրություններով ներկայացող խումբ է՝ բարբառներից յուրաքանչյուրի համար օրինաչափ հնչյունափոխական պատկերով՝ *մըտիկ տայ* (Տավուշի, Լոռու խոսվածքներ), *մըդիզ անել* (Երևանի, Աշտարակի, Վայոց ձորի խոսվածքներ), *մըդէ հանել* (Մեղրի), *մըտեզ տայ* (Իրանի մուժումբար), *մըտոզ տոլ* և *մըտակ նարիլ* (Ագուլիս) և այլն: Այդ իրողությունը հիմք է տվել ուսումնասիրողին եզրակացնելու, որ «Մեծ Հայքի տարածքում *նայել* հասկացության դիմաց այսօր հանդես եկող բառանվանումները ժամանակագրորեն պատմական գոյացություններ են, որոնք ինչ-ինչ ներլեզվական ու արտալեզվական գործոնների ազդեցությամբ աստիճանաբար գործածությունից դուրս են մղել հին ձևերը գրավելով նրանց տեղը»¹¹:

Բայական հարադրության երկրորդ բաղադրիչի՝ բայի շնորհիվ հայաբանության արժեք ունեն փոխառյալ բառերով կազմված բազմապիսի հարադրություններ, որոնք առատորեն վկայված են հայերենի բարբառների գրանցումներում: Բերենք օրինակներ մեր կողմից գրառված Քեսաբի բարբառով՝ թունավորել – *զիհիրլամիշ*

¹⁰ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր*, Ե., 1977, էջ 108:

¹¹ Տե՛ս *Հայերենի բարբառագիտական ատլաս*, պրակ 2, Ե., 1985, էջ 84:

ըննիլ, շփոթվել – *շաշմիշ ինիլ*, հանդիպել – *ռասս իգալ*, հայտնել – *խեբ^աօր դալ* և այլն:

Բարբառներում բայական հարադրություններին կարող է վերագրվել լրացուցիչ իմաստային-գործառական բաշխում: Ասենք, Արարատյան բարբառի տարբեր խոսվածքներում *հրնցրցնել* պատանական բային հատուկ է *ակամա վիժել* իմաստը, իսկ հարադիր բայը՝ *հրնցուսկ անել*, նշանակում է *կամովին հղիություն ընդհատել*¹²: Իսկ, ասենք, Շիրակի Ագատան գյուղի խոսվածքում նույն իմաստով *անծուծկ էնել* հարադրությունն է գործածական: Հարադրական բարդությունները հայերենի բարբառներում շարունակում են մնալ կենսունակ:

Barnasyan Jemma – Several word-formative Realities in Armenian Dialects.-As in the Armenian language in general, among the word-formative means affixation and stem-composition were constantly used in Armenian dialects as well. Armenian language belongs to the number of Indo-European languages that have advanced stem-composition with two and more language notional units (basic types, words, verb frames). Stem-compositions in the Armenian language are basically originated in three ways: syntactic combinations, word-formative patterns that exist in the language and word naturalization. The appearance of stem-compositions from syntactic combinations occurs as a result of long-term joint usage and recurrent word repetition that gives the expression more close and consistent meaning and helps in the formation into a single lexical unit.

Барнасян Джемма - некоторые словообразовательные факты в армянских диалектах. – Как в армянском языке вообще, в армянских диалектах из словообразовательных средств употребляются аффиксация и словосложение. Армянский принадлежит к числу тех индоевропейских языков, которые имеют развитое словосложение с сопоставлением двух и более языковых (основные виды, слова,

¹² Տե՛ս Ռ.Մարկոսյան, *Արարատյան բարբառ*, Ե., 1989, էջ 89:

основы глагола) значимых единиц. Словосложения в армянском образуются в основном тремя путями: синтаксических сочетаний, словообразовательных шаблонов, имеющих в языке и словозаимствований. Возникновение словосложений из синтаксических сочетаний происходит вследствие длительного употребления вместе и периодического повторения слов, что способствует выражению более тесного и единого смысла и превращению в одну лексическую единицу.

**ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ
ԲԱՌԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԸ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ¹**

Հասմիկ Խաչատրյան

Գեղարքունիքի մարզն ընդգրկում է Սևանա լճի ավազանի նախկին հինգ վարչական միավորները՝ Գավառի, Մարտունու, Սևանի, Վարդենիսի և Ճամբարակի: Մարզի բնակավայրերը հիմնվել են տարբեր ժամանակներում, և տարածաշրջանում գործառու էն բարբառային հետևյալ միավորները՝ Բայազետի, Սշո, Արարատյան (Մակու), Դիադինի, Վանի և Ղարաբաղի բարբառները՝ իրենց յուրահատուկ ենթաբարբառներով և խոսվածքներով:

Հիմք ընդունելով մեր «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» ուսումնասիրության դասակարգումը²՝ սույն հոդվածում ներկայացնում ենք Գեղարքունիքի մարզի բուն ազգակցական և միջնորդավորված արյունակցական-ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների քննությունը: Բուն ազգակցությունը՝ իբրև կենսաբանական և հասարակական երևույթ, պայմանավորված է ծնող, հարազատ, զավակ հարաբերություններով: Այստեղ առաջին շարքում են **մայր** և **հայր** բառերը:

Մայր հասկացության դիմաց հիշյալ մարզի խոսվածքներում առկա են հետևյալ բառանունները՝ **մեր**, **աղէ**, **մամա**, **ամայ**: Ինչպես գիտենք, **մայր**-ը բնիկ հայերեն բառ է, որ ծագում է հնիւ. *mateʿr նախաձևից, որը գործածական է հնդեվրոպական քույր լեզուներում: Գեղարքունիքում (հատկապես Գավառում, Մարտունիում և

^{*} Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N SCS «13-6B 382» գիտական թեմայի շրջանակներում:

¹ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Ստոդիկ» հրատ., 2014, էջ 37-48:

² **Հ.Խաչատրյան**, «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում», Ե., 2009, էջ 16-17:

Սևանում) **մայր** բառանունը գործառում է այ՛լ հնչյունափոխությամբ **մեր** հնչաձևով: Միայն փախստականներով վերաբնակեցված գյուղերում է, որ **մայր**-ը **մրեր** հնչյունական տարբերակով է գործածվում (օրինակ՝ Արտանիշ գ., որոնք հիմնականում գաղթել են Դաշքեսանի Շարուկքար գյուղից): Բարբառներում ընդհանրապես լայն կիրառություն ունի **մայր** հասկացության **մամա** բառանունը, որն առկա է նաև Գեղարքունիքում: Հ.Աճառյանը բառը փոխառված է համարում հունարեն *μάμα, μάμη* – «մեծ մայր, մամ» բառից: Մինչդեռ Գ. Ջահուկյանը կարծում է, որ բարբառներում պահպանված են հնդեվրոպական արմատական ձևեր, որոնք, սակայն, բացակայում են հայերենի գրավոր հուշարձաններում և մարդկություն. սեռ, տարիք, ազգակցություն արտահայտող բառերի թվում ներառում է **մա**, **մամ** բարբառային բառերը, որոնք գերազանցապես մանկական կամ փաղաքշական բնույթի են: Եվ մեկ այլ առիթով հեղինակը գրում է. «Եթե նկատի առնենք բառի տարածվածությունը բարբառներում՝ տարբեր ձևերով և իմաստներով (մամ, մամա, մամիկ՝ «տատ», մամ «մայր», մամո «մայրիկ») և մանավանդ մամա «ուտել» մանկական բառի գոյությունը, ապա կարելի է ավելի հավանական համարել հայերեն բառերի բնիկ լինելը, թեև, իհարկե, հնարավոր է որոշ տարածքներում խառնում (կոնստամինացիա) հուն. և պրսկ. ձևերի հետ»³:

Ղարաբաղյան խոսվածքներին բնորոշ բառանուն է **ամայ**-ը՝ որպես **մայր** (Արտանիշ, Փամբակ): Թերևս հնարավոր է ա՛յ **մա**-ն դարձած լինի **ամայ**, այսինքն՝ ձայնարկության հետադաս կիրառությամբ բառաձև: Չենք բացառում նաև, որ **ամայ** բառաձևի բառավերջում յ-ի առկայությունը գուցե ավելի հին երևույթ է. թերևս հին հայերենում առկա վերջնահանգ յ-ի արտացոլումն է, որ բարբառային այս բառում քարացած պահպանվել է, մանավանդ որ **ամայ**-ը բարբառներում փաստված է ոչ միայն իբրև կոչականի ձև:

³ Գ. Ջահուկյան, «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» (այսուհետև՝ ՀԼՊ. ՆԺ), Ե., 1987, էջ 275, 179:

Գեղարքունիքի մարզի որոշ խոսվածքներում (Ն.Գետաշեն, Վարդենիկ) փաստել ենք **ադէ** բառանունը՝ որպես **մայր** հասկացության բառաձև: Այս բառի շուրջ հայ լեզվաբանության մեջ տարբեր կարծիքներ կան: Հ.Ասմանգուլյանը այն համարում է քրդական փոխառություն. *ade (ate) atta<քրդ.- de- «մայր»*⁴: Գ.Ջահուկյանը կարծում է, որ գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատների մեջ կան զգալի թվով բնաձայն և մանկական բառեր, որոնք հնչյունապես շեղվում են հայերենի բուն օրինաչափություններից, և այս շարքում ընդգրկում է **ադէ** բառաձևը⁵:

Փամբակի խոսվածքում գործառում է նաև **աճի** բառաձևը, որով երեխան մորն է դիմում: Մա հավանաբար իգական սեռը մատնանշող **աղջիկ** ընդհանրական բառանվան մասնավորումն է՝ մայր իմաստով, որն առաջացել է **աղջի՛** կոչական ձևից: Այս բառաձևը բնորոշ է դարաբաղյան խոսվածքներին:

Հայր: Գեղարքունիքի մարզում **հայր** հասկացության զուգաբանություններ են դիտարկվել **հէր**, **խէր**, **հայրիկ**, **ապա**, **ափօ** բառաձևերը: **Հայր**-ը բնիկ հայերեն բառ է, որը ծագում է հնդեվրոպական **pater* նախաձևից և առկա է ցեղակից շատ լեզուներում: Հիշյալ տարածքում այն ներկայանում է **հէր** և **խէր** հնչաձևերով: Բայազետի բարբառում, որը ներառում է Գավառի շրջանը (Հացառատ, Մարուխան, Արծվաքար և այլն) գործառում է միայն **խ**-ով տարբերակը, իսկ Մարտունու շրջանը բաժանվում է երկու խմբի. Ջուլաքար, Վաղաշեն, Աստղածոր, Վարդենիկ, Գեղհովիտ գյուղերի խոսվածքներում առկա է **խ**-ով տարբերակը՝ **խէր**, իսկ Երանոս, Օռվասար, Մաղինա, Չորագյուղ, Վարդածոր գյուղերում՝ **հէր**:

Մարտունու Լիճք գ. վկայված է նաև **ապա**, Սևանի Գեղամավանում՝ **ափօ**, **ապէր** բառաձևերը՝ որպես **հայր** հասկացության նշանակելիներ: Լեզվաբանության մեջ այս բառերի շուրջ կարծիքները բաժանվում են երկու խմբի: Լեզվաբանների մի մասը՝

⁴ **А.Асмангулян**, «*Этимологический состав терминов родства армяхского языка*», Научные труды, N 3, Е., 1971, стр. 101:

⁵ **Գ.Ջահուկյան**, «*Հայ բարբառագիտության ներածություն*» (այսուհետև՝ ՀԲՆ), Ե., 1972, 283-300:

Հ.Աճառյան, Հ.Ասմանգուլյան, **ապի**-ն կապում են **եղբայր** բառի հետ⁶: Գ.Ջահուկյանը **ապի** (**ափու**՝ **հայր**) բառը հայերենի գրավոր հուշարձաններում բացակայող, սակայն հայ բարբառներում պահպանված հնդեվրոպական արմատական ձև է համարում⁷: Մեր կարծիքով՝ նշվածներից **ափի**, **ափօ**, **ափու**, **ապա**, **աբօ** բարբառային տարբերակները հանգում են հնդեվրոպական արմատական **ապա** ձևին, որը կապ չունի եղբայր բառի հետ, իսկ հայերենի բարբառներում հանդիպող **ափեր**, **ապեր**, **ապար** բառաձևերը առնչվում են եղբայր բառի հետ:

Բուն ազգակցական բառանվանումների երկրորդ իմաստային շղթան ընդգրկում է **երեխա**, **տղա**, **աղջիկ** հասկացությունները: Ըստ Հ. Աճառյանի՝ **երեխա**-ն անկունք, քրիստոնեական մկրտություն դեռ չստացածը, չմկրտվածն էր, և նա ենթադրում էր, որ կարաստրական *raxa ձևը, որից փոխառյալ են մի կողմից հայերեն **երախայ**, մյուս կողմից պահլ. raxik ձևերը⁸:

Գեղարքունիքի մարզում **երեխա** հասկացության բառանուններ են փաստվել **երեխա**, **ըրախա**, **խօխա**, **ճիժ** բարբառային բառաձևերը: Գավառի, Մարտունու, Վարդենիսի և Սևանի խոսվածքներում գործածական են **երեխա** և **ճիժ** բառերը: **Ճիժ** բառը միջին հայերենում արդեն առկա էր, սակայն բառի ծագումնանհայտ է: Ճամբարակի շրջանի խոսվածքներում (Արտանիշ և Ջիլ) Ղարաբաղի բարբառին բնորոշ **ըրախա**, **խօխա** բառաձևերն են գործառում: Ինչպես տեսնում ենք, **ըրախա** բառաձևում շեշտի հետ կապված հնչյունափոխություն է տեղի ունեցել՝ **ե>ը**: Իսկ բառամիջի **ա**-ի առկայությունը պայմանավորված է մեզ փաստված գրաբարյան **երախա** բառաձևով: Արտանիշում և Ջիլում գործածվում է նաև **խօխա**-ն: Աճառյանն այն համարում է թուրքերենից փոխառյալ բառ՝ բխեցնելով **խախա** (xaxa) տիմար, անմիտ բառից⁹:

⁶ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ2, Ե., 1973, էջ 16:

⁷ Գ.Ջահուկյան, ՀԼՊ. ՆԺ, էջ 275:

⁸ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ.2, էջ 35:

⁹ Հ.Աճառեան, «Թուրքերենի փոխառեալ բառեր հայերենի մէջ», Մոսկվա-Վաղարշապատ, 1902, էջ 159:

Ալ. Մարգարյանը այն համարում է **երեխա** բառի ավելի «բարդ և ավելի հեռուն գնացած հնչյունական ձևափոխություն, որն է՝ երախայ>երեխայ>ըրախա>ըրեխա>հրրեխա>հրոխա>հոխա>խօխա»¹⁰: Մակայն այս վարկածը դեռևս դիտարկման կարիք ունի:

Տղա: «Նոր բառգիրք հայկազեան լեզվի» աշխատության մեջ **տղա** բառը բացատրվում է «իբրև մանուկ, փոքր երեխա, իբր պատանի կամ երիտասարդ, անչափահաս տղա»¹¹: Ինչպես գիտենք, արևելյան գրական լեզվում բառը հատուկ է միայն արական սեռին, բայց արևմտյան գրական լեզվում, նաև գրաբարում և միջին հայերենում՝ թե՛ արական և թե՛ իգական սեռին: Հ.Աճառյանը բերում է հին մատենագրությունից հետևյալ օրինակը՝ «Տայր Աննա ստինս տղային և անուանեաց գնա Մարիամ»¹²: **Տղա** բառը համարվում է ասորական փոխառություն: Գեղարքունիքի մարզի խոսվածքներում **տղա** բառանունը ներկայանում է անհնչյունափոխ ձևով՝ նշանակելով միայն **արու զավակ**:

Երեխա հարաբերության իգական եզրը արտահայտվում է **աղջիկ** բառանվամբ: Գ.Զահուկյանը Հ.Աճառյանի չստուգաբանված բառերի ցանկից **աղջիկ** բառին վերագրում է ուրարտական ծագում¹³: Ա.Մեյեյն **աղջիկ** բառը կապում է **աղալ** բայի հետ¹⁴: Վ.Համբարձումյանը, անդրադառնալով **աղջիկ** բառի ստուգաբանությանը, պաշտպանում է Մեյեյի տեսակետը և ի մի բերելով պատմամշակութային և լեզվական փաստերը՝ նկատում է, որ հայերեն **աղջիկ** բառը, որի նախնականն է **աղիջ** (>աղիճ) ձևը, հանգում է հ.-ե. **al** արմատին, և հայերեն **աղջիկ** բառի **աղ(ալ)** արմատն ամենանախնական իմաստով նշանակել է «երկանքով աղացող, աշխատող տնտեսուհի»¹⁵:

¹⁰ Ալ. Մարգարյան, «Բարբառային բառերի մեկնություններ», Պատմա-բանասիրական հանդես, հ.3, Ե., 1971, էջ 212-213:

¹¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ.2, Վենետիկ, 1837, էջ 881:

¹² Հ.Աճառյան, ՀԱԲ, հ.4, Ե., 1979, էջ 412:

¹³ Գ.Զահուկյան, ՀԼՊ. ՆՇ, էջ 436:

¹⁴ Ա.Մեյեյն «Հայագիտական հետազոտություններ», Ե., 1987, էջ 436:

¹⁵ Վ.Համբարձումյան, «Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության», Ե., 1998, էջ 29-33:

Գեղարքունիքի մարզում ընդհանրական կիրառություն ունի **աղջիկ** բառանունը՝ տարբեր հնչաձևերով (Գավառ՝ շրթնային **անով**՝ **անխչիկ**, Մարտունի, Սևան, Վարդենիս՝ **ախչիկ**, **ախճիկ**):

Բուն ազգակցական բառանվանումների երրորդ շրջան կազմված է **քույր** և **եղբայր** բառանուններից: **Քույր**-ը բնիկ հայերեն բառ է: Ըստ Թ.Գամկրելիձեի և Վ.Իվանովի՝ **քույր** բառի ստուգաբանական իմաստը ավելի լայն է. կին՝ մեծ ընտանիքի անդամ, արյունակից ազգական¹⁶: Եվ հիշյալ տարածքում **քույր**-ը դրսևորվում է միայն **քույր**՝ գրաբարյան ոյ>ու (Սևան, Մարտունի, Գավառ, Վարդենիս) և **քիր**՝ ոյ>ի (Վերին Ճամբարակ, Վահան, Արտանիշ, Ջիլ և այլն) հնչատարբերակներով:

Եղբայր: Համարվում է բնիկ հայերեն բառ՝ հնդեվրոպական *brater նախաձևից առաջացած: Հիշյալ նախաձևի համար ենթադրվում է ավելի լայն իմաստ՝ «արական սեռի արյունակից ազգական»: **Եղբայր** հասկացությունը Գեղարքունիքի մարզում դրսևորվում է եզակի **եղբայր** բառանվանումով, որը, իհարկե, հիշյալ խոսվածքներում առկա է բառասկզբի դիրքում ե>ա, բառամիջում՝ այ>է հնչաձևով՝ **ախպեր**: Հ.Աճառյանը, Է.Աղայանը **ա**-ով տարբերակը համարում են ավելի հին երևույթ՝ առաջացած դեռևս նախապատմական շրջանում¹⁷: Գավառի շրջանի խոսվածքներում **ախպեր** բառանունը դրսևորվում է Բայազետի բարբառին բնորոշ **ա** ձայնավորի շրթնայնացմամբ՝ **անխպեր**, իսկ դարաբաղյան խոսվածքներում (Արտանիշ, Ջիլ, Փամբակ) հանդիպում է **ախպեր** հնչատարբերակը:

Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունների երկրորդ ենթաշերտում **երկրորդաբար միջնորդավորված արյունակցական հարաբերությունների ազգակցական** անուններն են՝ **տատ**, **պապ**, **քեռի**, **մորաքույր**, **հորեղբայր**, **հորաքույր**:

¹⁶ Гамкредидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, Тбилиси, 1984.

¹⁷ Հ.Աճառյան, «Հայոց լեզվի պատմություն», մաս Բ, Ե., 1951, էջ 414-415, Է.Աղայան, «Բարբառային հնարանությունները հայերենում», ԳԱ Տեղեկագիր, Ե., 1958, հ.5, էջ 65-72:

Գեղարքունիքի մարզում **տաստ** հասկացության բառանուններ ենք դիտարկել **տաստ** (կոչական՝ **տաղի**'), **մամե** (**մամիկ**), **մեձ մամե**, **նան** (**նանն**), **բաբո** գուգաբանությունները: Ըստ Հ.Աճառյանի՝ **տաստ** բառը բնաձայնական է, որը հատուկ է մանկական լեզվին և առկա է թե՛ հնդեվրոպական և թե՛ այլ լեզվախմբերի մեջ, օրինակ՝ սանս. tata, վրաց. դեղա՝ մայր, թուրք՝ dede՝ պապ և այլն¹⁸:

Տաստ բառանունը գործառույթ է Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի խոսվածքներում: Գավառի Ծովագարդ և Գեղարքունիք գյուղերում առկա են նաև **մամե**, **մեձ մամե** բառաձևերը: Զահուկյանը **մամ**-ը մանկական կամ փաղաքշական բնույթի հնդեվրոպական արմատ է համարում¹⁹: Ինչպես հայտնի է, այլ վայրերում **մամ**-ը նաև **մայր** իմաստով է գործածվում: Փաստենք նաև, որ **աղե** բառաձևը հիշյալ տարածքում ոչ միայն **մայր** հասկացության բառանուն է դիտվել, այլև **տաստ** հասկացության (Գավառի Կարմիր գյուղ, Արծվաքար):

Հայերենի բարբառներում որպես **տաստ** հասկացության նշանակելիներ շատ հաճախ **մեծ** ածականով որոշիչ-որոշյալ կապակցային ձևեր են փաստված, ինչպես, օրինակ, **մինձ մար**, **մինձ աբա**, **մինձ անա** և այլն²⁰: Իսկ Կոզենի խոսվածքում **տաստ** հասկացության բառանուն է դիտվել **մեծըիկ**-ը:

Հայտնի է, որ հայերենի բարբառներում **մեծ** բառի հոմանիշ է համարվում **ջոջ**: Այստեղից էլ՝ **ջոջ մամ**, **ջոջ աղե**, որոնք էլ ընդամենը մեկ աստիճանով առաջ են մղվել և, ինչպես **մեծըիկ** բառի դեպքում, բառիմաստային բևեռացումով առաջացել է **ջոջո** բառաձևը **տաստի** դիմաց: Բառը փաստել ենք Մշո խոսվածքներում (Մարտունու Լիճք, Ծակքար և այլն) **ջժոջո** շնչեղ ձայնեղ տարբերակով: Դաշտային Ղարաբաղից բռնագաղթվածներով վերաբնակեցված

¹⁸ Հ. Աճառյան, *ՀԱԲ*, հ.4, էջ 379:

¹⁹ Գ. Զահուկյան, *ՀԼՊ*. ՆԺ, էջ 276:

²⁰ Հ. Խաչատրյան, «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում», Ե., 2009, էջ 92:

գյուղերում գործառուում են **տատ** հասկացության **նան** (*նանն*), **բաբո** բառանունները (Արտանիշ, Ջիլ, Փամբակ և այլն):

Գ.Ջահուկյանը բարբառային հնաբանությունների շարքում ներառել է նաև **նան** բառանունը, չնայած հնարավոր է համարում նրա իրանական ծագումը կամ էլ բնիկ և իրանական փոխառյալ ձևերի խառնուրդ (բաղարկություն)²¹: Փամբակում **նանը** հոր մայրն է, **տատ-ը**՝ մոր մայրը, Վահան գ.-ում հոր մայրը **տատունց ամայ** բառակապակցությամբ է դրսևորված, մոր մայրը՝ **տատունց ազի**: Նշված օրինակներից երևում է, որ հայերենի բարբառներում երբեմն հստակորեն տարբերակվում են հոր և մոր մայրերը: Նույնիսկ այլ բարբառներում արձանագրված են **քեռամա** (Վանի Խեք գ.), **քարմար** (Մարաշ) բառաձևերը, որոնցում մայրական տատը օտարվում է որպես քեռու մայր:

Բաբո բառը՝ որպես **տատ** հասկացության նշանակելի, հայերենի բարբառներում մեկուսացած գործածվում է Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբում: Մեր կարծիքով՝ **բաբո**-ն աղերսներ ունի **պապ** բառի հետ: Ազգակցական բառերի՝ ծնող իմաստով բառաշերտում հեշտությամբ իմաստային անցումներ են տեղի ունենում: Չնայած չենք բացառում նաև ռուսերենի ազդեցությունը, այսինքն՝ **бабушка** > **բաբո**:

Պապ: Ծնող հարաբերության միջնորդավորումը ծնող հարաբերությամբ արական եզրով դրսևորվում է **պապ** բառանվամբ: Հ.Աճառյանը **պապ** բառի մեծ հայր իմաստը պիլ. *pap ձևից է փոխառյալ համարում, իսկ ՆՀԲ-ում **պապը** դիտված է որպես հունական փոխառություն²²:

Գեղարքունիքի մարզում **պապ** բառը փաստված է **պարե**, **պապե** բառագուգաբանություններով, որոնք, կարծում ենք, կոչականից առաջացած բառաձևեր են:

Երկրորդաբար միջնորդավորված արյունակցական հարաբերությունների երկրորդ իմաստային շղթայի բառանուններն են

²¹ Գ.Ջահուկյան, ՀԼՊ. ՆԺ, էջ 182:

²² Հ.Աճառյան, հ.4, էջ 25, ՆՀԲ, հ.2, էջ 599:

մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը և քեռին: Ինչպես նկատելի է, **քեռի** բառը հին հայերենից ավանդված միակ արմատական ձևն է, իսկ **հորաքույրը, մորաքույրը, հորեղբայրը** նկարագրական ձևով առաջացած բառաձևեր են, որոնք, ըստ Ջահուկյանի, մասամբ գալիս են հնից և գուգահեռներ ունեն այլ լեզուներում:

Հ. Աճառյանը կարծում է, որ **քեռին** ծագումնաբանորեն կապված է **քույր** բառի սեռական հոլովածնի հետ²³: Հ. Ասմանգուլյանը ևս սկզբում փորձում էր աղերսներ գտնել **քեռի** և **քույր** բառերի միջև, այնուհետև գալիս է այն եզրակացության, որ հետագա հնչյունական զարգացման հետևանքով այս երկու բառերը ձևաբանական տարբեր կառույցների համանուններ են դարձել²⁴: Գ. Ջահուկյանը ևս **քեռին** համարում է **քույրից** անկախ կազմություն՝ այն բխեցնելով հ.ե. *su-esor- «սեփական արյունից ձևից». *suesriio-s՝ **քեռի**²⁵:

Քեռի հասկացությունը Գեղարքունիքի մարզի խոսվածքներում հիմնականում դրսևորված է **քեռի** բառանվան տարբեր հնչաձևերով: **Ք** հնչյունի քմայնացմամբ, ինչպես նաև **ա**-ի առաջնալեզվային արտասանությամբ՝ **քմռի** հնչատարբերակն է առկա Բայազետի և Ալաշկերտի խոսվածքներում (Սարուխան, Գեղարքունիք, Գեղհովիտ, Վաղաշեն, Ծակքար և այլն): Որոշ խոսվածքներում (Նորադուս, Գեղամավան) **ք**-ի քմայնացումն այնքան է ուժեղացել, որ **ք**- քմայինը վերածվել է **չ**-ի՝ **չմռի**:

Ճամբարակում և Վարդենիսի փախստականներով վերաբնակեցված բնակավայրերում (Արտանիշ, Ջիլ, Վահան և այլն) գործառում է **դայի** բառանունը (**դայի** հնչաձևով)՝ որպես **քեռի**:

Մորաքույր, հորաքույր: Այս բառաձևերում բացակայում են հասկացության ընդհանրացված բառիմաստը և պահպանվել է միջնորդավորված եզրերի (հոր կամ մոր) սեռի իմաստույթը: Գե-

²³ Հ. Աճառյան, հ.4, էջ 666-667:

²⁴ А. Асмангулян, *Этимологический состав терминов родства армянского языка*, Научные труды, N3, стр. 57:

²⁵ Գ. Ջահուկյան, *ՀԼՊ. ՆՇ*, էջ 189:

դարձունիքի մարզի Բայազետի և Մշո խոսվածքներում, ինչպես նաև Սևանի շրջանի խոսվածքներում (Մակու, Արծափ) ունենք անհոդակապ **մօրքուր, հօրքուր** բառաձևերը, որը երբեմն հանդիպում է **ք**-հնչյունի խլացմամբ՝ **մօրկուր, հօրկուր** (Մշո խոսվածքներում): Իսկ Ալաշկերտի որոշ խոսվածքներում **հորքուրն** առկա է **հ>խ** տարբերակով՝ **խօրկուր, խօրքուր** (Չուլաքար, Վարդենիկ, Գեղհովիտ և այլն):

Վերին Ճամբարակում և այս ենթաշրջանի խոսվածքներում գործառում է **ա** հոդակապով բառաձևերը՝ **հըրաքիր, մըրաքիր** և կամ էլ **հօքիր, մօքիր** գուգաբանությունները: Բարբառներում առկա **աքիր** բառաձևը այս ենթաշրջանում դիտարկվել է որպես և՛ **մորաքույր, և՛ հորաքույր** հասկացությունների բառանվանում (օրինակ՝ Փամբակ գյուղի խոսվածքում, որոնք հիմնականում վերաբնակեցվել են Դաշքեսանի Չազլիկ գյուղից):

Ճամբարակի Վահան գ. մորաքույրը **աքիրն** է, հորաքույրը՝ **հըրաքիրը**: **Աքիրը**, կարծում ենք, **մորաքույր** բառի մաշված տարբերակն է: Չազլիկցիների խոսվածքում (Փամբակ գ.) փաստված է նաև մորաքույր հասկացության նշանակելի **աքա**-ն, **հորաքույր**-ինը՝ **բիրի**-ն: **Աքա** բառաձևը, ենթադրում ենք, կամ **մորաքույր** բառի շատ մաշված տարբերակն է, կամ էլ աղերսներունի **քա (քալա)** իգական կոչական ձայնարկության հետ²⁶: Իսկ **բիրի**-ն թուրքական փոխառություն է: Հարկ է նշել, որ այն հայերենի որոշ բարբառներում գործառում է **հորաքույր**, իսկ մի մասում էլ՝ **մորաքույր** իմաստով: Այսինքն՝ ինչպես **բիրի**-ն, այնպես էլ **աքիր**-ը ունեն ընդհարացված բառիմաստ, ինչպես օրինակ ռուսերենում **тетя** բառաձևը:

Հորեղբայր: Նկարագրական կադապարով առաջացած բառաձևը ինքնին մատնանշում է ծնող հարաբերության (այստեղ՝ հայր) միջնորդավորումը համաձին հարաբերության արական եզրով, որն է՝ **հորեղբայր**: Գեղարքունիքի մարզում այն ներկայանում է **հորեղբայր, կակօ, ամի, ապօ** բառանուններով: **Հորեղբայր** բառանունը հիշյալ տարածքում դրսևորվում է հնչյունական

²⁶ Հ. Աճառյան, ՀՄԲ, հ. 4, էջ 537:

յուրօրինակ տարբերակներով: **Հօրօխալեր** բառը **խօրօխալեր** հնչաձևով առկա է Գավառի շրջանի խոսվածքներում, ինչպես նաև Մարտունու և Վարդենիսի որոշ խոսվածքներում (Զուլաբար, Գեղիովիտ, Վարդենիկ և այլն): Մարտունու **հ**-ախոս գյուղերում (Զորագյուղ, Երանոս, Վարդաձոր և այլն) գործառում է **հօխալեր** բառաձևը, որը **հորեղբայր** բառի արագախոսության ընթացքում առաջացած բառաձև է, իսկ **խ**-ախոս վայրերում՝ **խօխալեր** (Վաղաշեն, Ծակքար):

Մարտունու շրջանի խոսվածքներում **հորեղբայր** հասկացության բառային դրսևորում է դիտարկվել **կալօ** բառաձևը, որը հավանաբար քրդերենից է փոխառված և հիշյալ տարածքում հանդես է գալիս տարբեր հնչաձևերով: Օրինակ՝ Զորագյուղում՝ **կյնկօ**, Մաղինա գ.-ում՝ **կյնկէ**, Ծակքարում՝ **կալօ** և այլն:

Հայտնի է, որ **ապօ**, **ափի** բառաձևերը հայերենի բարբառներում գործածվում են մի քանի իմաստներով. **ապա**, **աբա** հնչաձևերով գործածվում է **մայր** իմաստով, **ապի ափի**, **աբա ապօ**, **ափօ**՝ **հայր** իմաստով, իսկ Մարտունու Լիճք, Ներքին Գետաշեն գյուղերում **ապօ**-ն փաստված է **հորեղբայր** իմաստով: Այստեղ ևս, կարծում ենք, իմաստային տեղաշարժ է տեղի ունեցել **հայր** իմաստից **հորեղբայր** իմաստին:

Գեղարքունիքի մարզի որոշ խոսվածքներում (Գեղամավան, Լիճք, Փամբակ և այլն) **հորեղբայր** հասկացության բառանուն է վկայված թուրքերենից փոխառյալ **ամի** բառանունը, որը հիմնականում դրսևորվում է առաջնալեզվային **սն**-ով՝ **սմի** :

Հորեղբոր կին: Այս հասկացությունը հայ բարբառներում բացի հորեղբոր կին բարդ կաղապարի հնչյունական բազմապիսի տարբերակներից գործառում է նաև տարարմատ անվանումներով, որոնցից հիշյալ մարզում վկայված են **գալօ**, **տադօ**, **տադէ**, **սնգի**, **ազի** բառաձևերը:

Գավառի խոսվածքներում գործառում են վրացերենից փոխառյալ **ձալօ** բառանունը **ձ>զ** հնչյունափոխությամբ՝ **զալօ** տարբերակով: Մարտունու որոշ խոսվածքներում (Մաղինա, Զորագյուղ,

Ծակքար, Ծովասար և այլն) առկա է **տառո** բառանունը, իսկ Վաղաշեն գ.-ում արձանագրված է **տառէ**-ն որպես **հորեղբոր կին** հասկացության նշանակելի: Մենք կարծում ենք, որ **տառո** և **տառէ** բառաձևերը սերտորեն առնչվում են **տուրու**, **դուրու**, **տառա** բառերի հետ, որոնք, ըստ մեր դիտարկումների, համարվում են հնդեվրոպական բնաձայնական բառեր: Փախստականներով վերաբնակեցված գյուղերում գործառում է **ազի**-ն՝ որպես հորեղբոր կին (Արտանիշ, Փամբակ): Մեր կարծիքով՝ Հ.Ասմանգուլյանը ճիշտ եզրահանգման է գալիս՝ **ազի** բառը համարելով արիսիկ ազգակցական տերմին, որը չի արտացոլվել հին հայերեն գրական լեզվում, սակայն ավանդված է հայերենի բարբառներում նախ՝ **մայր** իմաստով, ապա արդեն բառիմաստի տեղաշարժով առաջացած **հորաքույր** (Ղարաբաղ), **հորեղբոր կին** իմաստներով²⁷:

Այսպիսով՝ ազգակցական հարաբերություններ արտահայտող բառանունները դարերի ընթացքում պահպանել են իրենց կենսունակությունը, ինչպես նաև համարվել ու հարստացել են ուրիշ լեզուներից փոխառված միջոցներով: Եվ քանի որ ազգակցական բառերը մտնում են լեզվի հիմնական բառազանձի մեջ և օժտված են բավական մեծ կայունությամբ ժամանակի և արտաքին այլ ազդակների նկատմամբ, այդ պատճառով էլ Գեղարքունիքի մարզի տարբեր խոսվածքներում նրանք ևս դրսևորվում են աշխարհընկալման և լեզվամտածողությունից բխող կաղապարային ձևերով, որոնց կողքին բարբառային հարուստ ներկայանակը մեզ է հրամցում հնդեվրոպական արմատներով յուրօրինակ տարբերակներ, հնավանդ արմատներից իմաստային տեղաշարժումներով առաջացած բառանվանումներ: Առկա են նաև նկարագրական բառաձևեր, որոնք գալիս են հնից և զուգահեռներ ունեն հնդեվրոպական այլ լեզուներում, ինչպես նաև բառաձևեր, որոնց մի մասը ավանդված չէ հին գրավոր հուշարձաններում:

²⁷ **А.Асмангулян**, *Этимологический состав терминов родства армяхского языка*, Научные труды, N 3, Е., 1971, стр. 42-47:

Асмик Хачатрян – Диалектная карта понятий, выражающих родственные связи, в Гегаркуникской области.- В статье исследуются лексемы, выражающие прямые родственные связи: մայր, հայր, տղա, աղջիկ, երեխա, քույր, եղբայր и их эквиваленты в диалектах Гегаркуника: մեր, ադէ, մամա, ամայ, հէր, խէր, ապօ, երէխա, ըրախա, խօխա, ճիժ, քիր, քուր, ախպէր, տըղա, ախջիկ. Вторая группа включает понятия, выражающие опосредованно-родственные связи: տատ, պապ, քեռի, մորաքույր, հորեղբայր, հորաքույր. Их диалектные варианты: տատ, մամէ, ջօջօ, բաբօ, նան, պաբէ, հօրկուր, խօրկուր, մօրկուր, հըրաքիր, մըրաքիր, աքիր, աքա, բիբի, խօրոխպէր, հօխպէր, խօխպէր, կակօ, ամի.

Hasmik Khachatryan - Dialectal characteristic of the concepts expressing kindred relations in the province of Gegharkunik.- This article presents an examination of the words expressing sibling connection and indirect kinship relations in the province of Gegharkunik. The Armenian dialectal variations of the concepts of **mother, father, son, daughter, child, sister, brother** used in the province of Gegharkunik have been included among the words expressing sibling connection; these are: մեր, ադէ, մամա, ամայ, հէր, խէր, ապօ, երէխա, ըրախա, խօխա, ճիժ, քիր, քուր, ախպէր, տըղա, ախջիկ. The second level includes the names for the concepts expressing secondary indirect kinship relations: **grandmother, grandfather, uncle (mother's brother), aunt (mother's sister), uncle (father's brother), aunt (father's sister)**. The dialectal variations of these concepts in the province of Gegharkunik are as follows: տատ, մամէ, ջօջօ, բաբօ, նան, պաբէ, հօրկուր, խօրկուր, մօրկուր, հըրաքիր, մըրաքիր, աքիր, աքա, բիբի, խօրոխպէր, հօխպէր, խօխպէր, կակօ, ամի.

**«ՃԱՆԱՊԱՐՀ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ-ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ¹**

Հասմիկ Խաչատրյան

Հայերենում լայնորեն ներկայացված են շարժման և տեղափոխության տարբեր տեսակների նշանակումներ, և ժամանակի ընթացքում վաղնջահայերենի և հին հայերենի միջև զգալի տարբերություններ են ի հայտ եկել բառերի գործածությունների և իմաստային ծավալների հարցում:

Վաղնջահայերն ունեցել են ճանապարհի, ճանապարհաշինության և անիվավոր փոխադրամիջոցների հետ կապված զգալի թվով բառանվանումներ, որոնցից սույն հոդվածի շրջանակներում մեր քննության առարկան «ճանապարհ» հասկացության բարբառային դրսևորումներն են:

«Ճանապարհ» հասկացությունը հայերենի բարբառներում ներկայացված է բնիկ հայերեն՝ հնդեվրոպական ծագման բառանուններով, փոխառյալ բառերով, անհայտ ծագման բառերով, ինչպես նաև իմաստափոխված բառանուններով:

Այս հասկացության *ճանապարհ* բառանունը վաղնջահայերենում չի եղել: Հ. Աճառյանը բառը համարում է իրանական փոխառություն: Բառը վկայված դեռևս 5-րդ դարում Սուրբ գրքում: Իրան. *čarana-parg ձևից արագաբանությամբ (իբր *ճարանապարհ) կազմված է čarana-«երթալ»+ parg «անցք»² բառերից:

Դեռևս միջին հայերենում բառը գործածվել է *ճանպահ* բառաձևով: Հայերենի բարբառներում «ճանապարհ» հասկացության *ճանապարհ* բառանունը տարածական մեծ ընդգրկում ունի. այն գրեթե համահայերենյան կիրառություն ունի և գործածվում է թե՛ արևելյան, թե՛ արևմտյան բարբառախմբերի խոսվածքներում:

¹ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 270-273:

² Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, Ե., 1977, էջ 182-183:

Ճանապարհ բառանունը հայերենի բարբառներում հանդես է գալիս բարբառային հնչյունական հետաքրքիր և բազմապիսի տարբերակներով:

1. Վերոհիշյալ հասկացության *ճանապարհ* բառանունը բարբառների մի ստվար հատվածում՝ Արարատյան (Աշտարակ ք., Լոռի, Իգդիր, Պարսկահայք, Նախիջևան), Փոքր Ասիայի (Եվդոկիա, Երզնկա, Խոտրջուր, Ջավախք) բարբառախմբերի խոսվածքներում, վկայված է *ճանփա*, *ճանպա* բառաձևերով, Բայազետի Կարմիր գյուղում արձանագրված է շրթնային *u*-ով տարբերակը՝ ճմմփա:

Ինչպես տեսնում ենք, բարբառային այս տարբերակներում տեղի է ունեցել հնչյունների բարդացում: Ըստ Հ. Մուրադյանի՝ այստեղ նախ ընկել է միջնավանկի ա ձայնավորը, իսկ *փ-ն պ* և *h* հնչյունների միասնական, մի հնչյունի տևողությամբ արտաբերվելու հետևանք է: Նաև *p* հնչյունի անկում է տեղի ունեցել, ինչպես նաև ն ռնգային ձայնորդը որոշ բարբառներում դարձել է *u^β*:

2. Բառակցքի խուլերի ձայնեղացմամբ՝ *ջամպա*, մասամբ բառամիջի շնչեղ խուլերի խլացմամբ՝ *ջամփա*, և որոշ դեպքերում նաև *ա>ը*՝ *ջամպը*, *ա>օ*՝ *ջօմփա*, հնչյունական տարբերակներն են վկայված Փոքր Ասիայի, Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբերի, Կիլիկիայի միջբարբառախմբի խոսվածքներում (Չմշկածագում, Խարբերդում, Մասունում) առկա են *ջամփը*, *ջամպը*, Սվեդիայում, Խտրբեկում՝ *ջամպըկ*, *ջամպըգ*, Սեբաստիայում՝ *ջամբա*, Եդեսիայում՝ *ջամփագ*, Մալաթիայում՝ *ջամփա*, Խարբերդի Բազմաշեն գ.-ում վկայված է առաջնալեզվային *ü*-ով տարբերակը՝ *ջյննփյն*, Ջեյթունում՝ *ջամփօնք*, *ջամփօ*, Հաջընում՝ *ջամպ/փօզ/ք*: Համընկ բարբառի խոսվածքներում վկայված են ճանապարհի հասկացության *ջօմփա*, *ջօմպա* բարբառային գուգարանությունները:

3. Հայերենի բարբառների արևելյան խմբակցության Խոյ-Մարադայի (Նախիջևանի Ագա, Միսիանի Ուզ, Արտաշատի Մասիս, Խոյի Սեյրավար գ.-երում), ինչպես նաև հարավկենտրոնական

³ Հ.Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, Ե., 1982, էջ 335:

բարբառախմբի խոսվածքներում (Մուշի Դուգնուզ գ., Արծկե, Վան, Մոկս, Շատախ և այլն) «ճանապարհ» հասկացությունը վկայված է *ճամբախ* կամ *ճամբսի* բարբառային տարբերակներով: Վանի և Խոյի բարբառներին բնորոշ հնչյունափոխություն է *h>խ* անցումը, որը տեղի է ունենում թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում, թե՛ բառավերջում: Ինչպես նշում է Հ. Աճառյանը «Քննութիւն Վանի բարբառի» աշխատության մեջ, «րհ-ով վերջացած բառերը երկու ձևի փոփոխություն են ներկայացնում.- ջնջված է աշխարհ>աշխար և խոնարհ>խոնար բառերի վերջում, իսկ ճանապարհ>ճամբախ և շնորհք>շնոխք. հիշյալ բառերի մեջ ր-ն սղված է, և հ-ն փոխվել է խ-ի»⁴: Ըստ Մ. Մուրադյանի՝ Շատախի բարբառում ոնգայինների հաջորդելիս *պ*-ն ձայնեղանում է և դառնում *բ*, օրինակ՝ *ճամբախ*⁵ :

Վանի, Մոկսի որոշ խոսվածքներում ճանապարհ հասկացությունը փաստված է նաև առաջնալեզվային *սի* հնչյունով, ինչպես, օրինակ, Վանի Խոշաբի շրջ-ի Հուրթուկ գ., Մոկսի Կճավ գ. (ճամբսի), Շատախում նաև՝ շրթնային *սի*-ով տարբերակը՝ *ճսմբախ*:

4. Բարբառների արևելյան խմբակցության ծայր հյուսիս-արևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի Գորիսի մի շարք խոսվածքներում և արևելյան բարբառախմբի Ագուլիսի, Ցղնայի խոսվածքներում «ճանապարհ» հասկացության բառանուններ են դիտարկվել *ճանապարհ* բառանվան *ճրնապար* (Օրդուբաղի Ցղնա գ.), *ճրնապա* (Գորիս, Նախիջևանի Փառակա), *ճրնհապա* (Գորիսի Վերինշեն, Բռուն), *ճրհապա* (Գորիսի Վաղատուր) հնչյունական զուգաբանությունները, որոնք, մեր կարծիքով, ավելի ուշ շրջանի բառաձևեր են և հավանաբար պայմանավորված են գրական լեզվի ազդեցությամբ: Ասվածի վկայությունն են նույն խոսվածքներում հանդիպող *հրդէ ինճիլ (իմիլ)* (ճանապարհ ընկնել), *հրդէ տինիլ* (ճանապարհ դնել) դարձվածքները, Գորիսի Խնածախ գ.-ում զուգահեռաբար գործածվող *հրդի//հրդէց//ճրնապա*,

⁴ Հ.Աճառյան, *Քննութիւն Վանի բարբառի*, Ե., 1953, էջ 67-68:

⁵ Մ.Մուրադյան, *Շատախի բարբառը*, Ե., 1962, էջ 55:

Գործիսի Տաթևում և Սևարանցում՝ *ճրնհապա//հրղը/է* տարբերակները, իսկ Դաշքեսանի Բանանց գ. թեև առկա է ճամպա բառանունը, սակայն *ճանապարհվել* բայական իմաստը արտահայտվում է *հրղի իլիլ* դարձվածքով: Հիշատակության է արժանի *ճամփա* բառով ձևավորված *վօտաց ճամփա* բառանունը, որը բարբառներում գործածվում է «գուգարան» նշանակությամբ (Վան, Մուշ և այլն):

Հայերենի բարբառներում «ճանապարհ» հասկացության բառանուն է դիտարկվել *ուղի* բառանունը: Վաղնջահայերենում լայնորեն գործածվել է *ուղի* բառի սկզբնաձևը:

Հ. Աճառյանը բառը համարում է բնիկ հայկական բառ. հնդեվրոպական նախալեզվի *ul* արմատից, հին սլ. *ulica*, ռուս. *улица*: «*Ուղի* «ճամբայ, ճանապարհ» Սուրբ գիրք. Ագաթ.»: Ըստ լեզվաբանի՝ հետին հեղինակների մոտ առկա է *ուղ* «անցք, ճանապարհ» ձևը, որը նրան խորհելու տեղիք է տալիս. արդյոք *ուղի* բառի հնագույն տարբերակը չէ՞, որից էլ *ուղարկել*, *ուղանցական* բառերն ունենք: Հ. Աճառյանը վկայակոչում է նաև Պեդերսոնին, որը հայերեն *ուղի* բառից է բխեցնում օսմ. *yol*-ը, որից և թուրքերեն *yollamag* «ուղարկել»⁶:

Ուղի բառին անդրադարձել է նաև Գ. Ղափանցյանը: Հանգամանորեն ներկայացնելով հայ-ուրարտական լեզվական առնչությունները՝ գիտնականը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ բերում է ուրարտերենի և հայերենի համար ընդհանուր 20 բառ, որոնցում ընդգրկված է նաև *ուղի* բառը: «սլ-adi «ուղևորվեցի»: Այս չեզոք սեռի սևա ձևի կողքին կա և սև «ուղարկել, գնացուցանել ձևը»: Ըստ Ղափանցյանի՝ այս արմատը առկա է հայոց *ուղի*- «направление, путь», *ուղիղ* (որից՝ *ուղղորդ*) «правильный» և նման բառերի մեջ⁷:

Ուրարտացիների դարավոր համակեցությունը հայերի հետ, ապա նրանց ձուլվելը պետք է հիմք տար նախ փոխառությունների, ապա ենթաշերտային ազդեցության համար: Գ. Զահուկյանը գտնում է, որ կան հայ-ուրարտական մի շարք գուգադիպումներ,

⁶ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. 3, էջ 595-596:

⁷ Գր. Ղափանցյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ե., 1961, էջ 136-137:

որոնց դեպքում դժվար է որոշակի ընտրություն կատարել հայերեն բառերի բնիկ, թե փոխառյալ լինելու հնարավոր ենթադրությունների միջև: Ըստ նրա՝ *ուղի* բառը մի կողմից համեմատվում է հուն. սրինգ, խողովակ *αυλός*, ռուս. *улица* փողոց, մյուս կողմից՝ ուրարտական *սլ(a)* «գնալ» *սլ(ս)* - «տանել», թերևս նաև *սլսի* - «առաջորդել» բառերի հետ: Գ. Ջահուկյանը նմանությունը պատահական է համարում՝ մանավանդ նկատի ունենալով հայերենի սկզբնական ոչ բայական (անվանողական) արժեքը և նշում, որ *ուղարկել ու յղել* բայերն ակնհայտորեն երկրորդական բնույթի են: Իհարկե, կարելի է ենթադրել, որ իմաստային մերձեցումով տեղի է ունեցել հայերեն *ուղի*-ի բաղարկում ուրարտերեն բառերի հետ⁸:

Ուղի բառը՝ որպես «ճանապարհ» հասկացության բառանուն, առկա է հայերենի բարբառներում: Այն կղզիացած գործածվում է Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի խոսվածքներում հնչյունական որոշակի տարբերակներով: Այսպես՝ *հըղի* (Կարճևան, Շամախիի Սաղյան, Ասկերանի շրջ. Մեհտիշեն), ավելի հաճախադեպ գործածվում է *հըղէ* (Կապանի Վերին և Ներքին Խոտանան, Մարտակերտի Ղազանչի, Հաթերք, Առաջածոր, Ղարադաղի Խանազահ գ.), Գորիսի Կորնիձոր գ.՝ *հըղըէ*: *Հըղէց* հնչյունական զուգաբանությունն է վկայված Խանլարի Գետաշեն, Արցախի Խանաբաղ, Շահումյանի Բուզլուխ գ.-երում, *հըղէցէ*-ն՝ Հաղրութի Խծաբերդ գ.: Հարկ է նշել, որ *հըղէ*-ին զուգահեռ Արցախի որոշ խոսվածքներում (Նոր Շեն) առկա է նաև *հըղէցկ* (*հըղէսկ*) բառաձևը, որը հնարավոր է՝ ավելի հին բարբառային բառաձև լինի: Հ. Սուրադյանը «Կարճևանի բարբառ» աշխատությունում արձանագրել է նաև *ջըրհըղի* բառաձևը՝ որպես ջրի ճանապարհ⁹:

Աղագ: Գ. Ջահուկյանը հնագույն հայերենի բարբառային տարբերակները ներկայացնելիս *ուղի* բառի հոմանիշ է դիտարկել *աղագ* բառանունը (ուղի-աղագ-ճանապարհ-ճապաղ (հմմտ. արահետ): Հ. Աճառյանը *աղագ*՝ ճանապարհ իմաստով մեկ օրի-

⁸ Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 432-433:

⁹ Հ.Սուրադյան, *Կարճևանի բարբառը*, Ե., 1960, էջ 228:

նակ է բերում՝ վկայակոչելով Ոսկեբերանին «Արատիցի որմ, խրամատիցի և ամենեցուն աղագ լինի (այգու պատի համար է ասում, որ քանդվելով՝ ամենքի ազատ անցուդարձի ճանապարհ է դառնում), գործածված են նաև հոլովված ձևերը՝ գործիականը՝ *աղագալ* «պատճառով», հայցական կամ ներգոյական՝ *յաղագս* «համար, վասն»: Դիտարկված է նաև *աղագ* բառի մեկ ուրիշ տարբերակ՝ *եղագ* «ճամբայ»: Ըստ Աճառյանի՝ բոլոր ձևերի նախնական նշանակությունը ճանապարհն է¹⁰:

Գ. Ջահուկյանը, բառի ծագումն անհայտ համարելով, գտնում է, որ այն հազիվ թե կապ ունենա ակկադ. *alaku(m)*, *alaktu*, «ընթացք, ճանապարհ, ուղի» բառերի հետ¹¹:

Հայ բարբառների մեծ մասում *աղագ* բառը հանդես է գալիս *աղաք* բարբառային տարբերակով և ունի առջև, առաջ իմաստը: Օրինակ՝ Աղագս մի՛ կանգնիր, Նրա աղագիցը փախչում է: Մակայն ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում եզակի նմուշներ ունենք, որտեղ *աղագ* բառանունը անաղարտորեն պահպանել է իր նախնական ճանապարհ իմաստը: Օրինակ՝ Հավարիկում՝ *հըղըք*, Կրզենում՝ *հըղէք* (*Հըղէրըմը ման գյօր*՝ ման էր գալիս), Կարձևանում՝ *հըղաք*, (*հըղաքնի՛*՝ ճանապարհին): Ըստ Հայոց լեզվի բարբառային բառարանի՝ *աղագ* բառանունը առկա է Արարատյան, Թիֆլիսի, Ղարաբաղի, Կրզենի բարբառներում՝ առաջ, առջև, նախ, նախապես նշանակություններով: Իսկ Մեղրու բարբառի համար արձանագրված է *աղաք* բառի «ճանապարհ» իմաստը: Բարբառներում «ճանապարհը կտրել» իմաստով առկա են նաև *աղաք*-ով դարձվածային կառույցներ, ինչպես՝ *աղաքը կտրել*, *աղաքը առնել*¹²:

Աղագ բառանունը Տավուշի մարզի որոշ գյուղերի և Հաղպատի խոսվածքներում այսօր էլ գործածական է *կըրճաղաք* ձևով, այսինքն՝ *կարճ աղաք(ք)*՝ որպես նեղ և կարճ ճանապարհ, արահետ: ՀԼԲԲ-ում ևս արձանագրված է *կարճաղաք* բառաձևը:

¹⁰ **Հ.Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հ.1, Ե., 1971, էջ 117:

¹¹ **Հ.Աճառյան**, *Հայերենի ստուգաբանական բառարան*, հ.1, Ե., 2010, էջ 33:

¹² *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Ա, Ե., 2001, էջ 37:

«Կարճադաք-Արարատյան, Կարճադազ, Ղազախ/ կարճ կտրող, կարճ տանող, կարճակտրուկ (ճանապարհի մասին): Կարճադազ ճամփով գնանք, շուտ կհասնենք»¹³: Բառարանում առկա է նաև դարձվածային հետևյալ արտահայտությունը՝ *կարճադաք անել*, այսինքն՝ կարճ ճանապարհով գնալ:

Հարկ ենք համարում հիշատակել նաև Սասունի բարբառում վկայված *ադազ* բառանունը, որը, սակայն, խոսվածքում ծառի ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ նշանակությամբ է փաստված¹⁴:

Հայերենի բարբառներում *ճամփա* բառաձևի հետ գործածվում են նաև որոշ փոխառյալ բառանուններ.

1. Ռոդոսություն և Ջավախքի Օլավերդ գ.-ում գործածվել է *յոլ*-ը (Ռոդոսություն *յոլ չի քիդեր* արտահայտությունը նշանակում է «ճամփա չգիտի», նաև՝ «պատշաճությունը չի հարգում»), իսկ որպես արահետ՝ *յայան յոլի ճամփա* բառակապակցությամբ է վկայված Ախալքալաքի Օլավերդ գ.-ում:

Ինչպես գիտենք, հայերեն խոսակցական լեզվում հաճախադեպ կիրառություն ունի *յոլա գնալ* դարձվածքը, որի հիմքում ընկած է թուրքերեն *յոլ* և հայերեն *գնալ* բառերը, որի իմաստն է «հարմարվել, համակերպվել, նաև մի կերպ գլուխը պահել»:

2. *յոխշը* բառանունն է վկայված Նախիջևանի Կյադ գ.-ի խոսվածքում, որը, կարծում ենք, դարձյալ փոխառություն է թուրքերենից:

3. Եղեգնաձորի Ենգիշա գ.-ում (խոյեցիներ) փաստված են *ճամբախ/յոլադ* և *ուդուր* բառաձևերը, ինչպես նաև փոխաբերացմամբ ճանապարհ նշանակությամբ գործածվող *իզ* բառանունը, որը տաճկերենից փոխառյալ բառ է, և նրա նախնական իմաստն է «հետք»:

Իմաստային ճյուղավորումով *ճար* բառանունը, բացի հնար, ելք իմաստից, բարբառներում գործածվում է նաև որպես ճանապարհ: Գավառի Սարուխան գ.-ում *դռան ճար* նշանակում է դռան

¹³ Նույն տեղում, հ. Գ, Ե., 2004, էջ 63:

¹⁴ Վ. Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 101:

դեմի ճանապարհ: *Ճար* «հնար» առաջնային իմաստով ավանդել է դեռևս Խորենացին հինգերորդ դարում. «Ձի այսպես իմ գելս իրացն հնարէր յարդարել, զի ապրելոյ ճար լիցի Տիգրանուհեայ»: Լ. Հովհաննիսյանը բառը համարում է իրանական փոխառություն¹⁵:

Ջաղղա: Մուշի, Վանի տարածաշրջանի մի քանի խոսվածքներում «ճանապարհ» հասկացության դիմաց վկայված է *ջաղղա* բառանունը, որի ծագումը մեզ հայտնի չէ: Ընդ որում որոշ խոսվածքներում բարբառը գրանցողները արձանագրել են, որ, օրինակ, Վան ք. և Վանի Թիմարի շրջ.-ի Մարմետ և Պողանց գ.-երում ճանապարհը *ճսմբսիս* է, իսկ *ջսնղսն*՝ «մայրուղի» (Վեր *ջսնղսն* կայնուկ ին): Ծնչեղ ձայնեղ ջ՛-ով՝ *ջ՛սղղա* բառաձևն առկա է Մուշի Բուլանուխի Ծերվանշեխ, Ալաշկերտի Ուշքիլիսա գ.-երի խոսվածքներում: Բացառված չէ, որ մեր բարբառներում գործածված *ջաղղա*-ն առնչություն ունի պարսկերեն *ջաղա* բառի հետ, որ հենց մայրուղի է նշանակում:

Այսպիսով՝ «ճանապարհ» հասկացության բառանվանումների քննությունից ակնհայտ է դառնում, որ հայ բարբառներում պահպանվել է հնդեվրոպական ծագման բնիկ հայերեն *ուղի* բառանունը, թեև բարբառների գերիշխող հատվածում կիրառվում է իրանական *ճանապարհ* բառանունը՝ բազմաշերտ հնչյունական տարբերակներով: Ուշագրավ է հայերենի բարբառներում *աղազ* բառանվան՝ որպես «ճանապարհ» հասկացության նշանակելիի վկայությունը, ինչպես նաև նրանից կազմված *կրրճաղաք* բարբառային յուրահատուկ դրսևորումը: Իրանական *ճար* բառանունը փոխաբերացմամբ գործածվում է որպես ճանապարհ: Իսկ բարբառների մի որոշակի հատվածում առկա են փոխառոյալ *յոլ*, *յոջ*, *յոլաղ*, *ջաղղա* փոխառոյալ բառերը:

¹⁵ Լ. Հովհաննիսյան, *Հայերենի իրանական փոխառությունները*, Ե., 1990, էջ 194:

Hasmik Khachatryan- Functional-genealogical study of the words representing the concept of “Road” in the dialects of the Armenian language.- The subject matter of the study conducted within the framework of this article is the dialectal manifestations of the concept of “Road”. In the dialects of the Armenian language, the concept of “Road” is represented with native Armenian, i.e. Indo-European words ([ughi]/ուղի, [arahet]/արահետ, [katsan]/կաճան), borrowed words ([chanaparh]/ճանապարհ, [shavigh]/շավիղ, [jaghda]/ջաղդա, [yol]/յօլ, [yolagh]/յօլաղ), words of unknown origin ([aghag]/աղաղ), as well as words that have undergone a semantic change ([char]/ճար). The article will represent the word-formative and phonetic versions of the abovementioned words observed in the dialects of the Armenian language, the idioms formed with them, as well as their territorial characteristics.

Асмик Хачатрян.- Функционально - этимологическое исследование слов, представляющих понятие «дорога» в диалектах армянского языка. - Предметом исследования, проведенного в рамках данной статьи, являются диалектные проявления понятия «дорога». В диалектах армянского языка понятие «дорога» представлено исконно армянскими, т.е. индоевропейскими словами (ուղի [уги], արահետ [арахет], կաճան [кацан]), заимствованными словами (ճանապարհ [чанапарх], շավիղ [шавиг], ջաղդա [джагда], յօլ [йол], յօլաղ [йолаг]), слова неизвестного происхождения (աղաղ [ахаг]), а также слова, подвергшиеся семантическому изменению (ճար [char]). В статье представлены словообразовательные и фонетические варианты названных выше слов, наблюдаемые в диалектах армянского языка, образованные с ними идиомы, а также их территориальные характеристики.

**ՓՈՂՈՑ ԵՎ ԱՐԱՀԵՏ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ
ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ¹**

Հասմիկ Խաչատրյան

Գրական հայերենում որպես «ոտքով բացած նեղ ճանապարհ» գործածվում են *արահետ*, *շավիղ*, *կածան* բառերը:

Բնիկ հայկական ծագում ունեցող *արահետ* և ասորական փոխառություն համարվող *շավիղ* բառաձևերը հայերենի բարբառներում մեզ չեն հանդիպել:

Միայն Հ. Աճառյանն է Մուշի բարբառի համար արձանագրում *շավիղ* բառի *շավի* գավառական բառաձևը²:

«Նեղ անցք, նեղ ճանապարհ, արահետ» իմաստով հայերենի բարբառներում գործածական է *կածան* հնդեվրոպական ծագումով բնիկ հայերեն բառը, որ հնիս. *g^uāg- «գնալ, գալ» արմատից է սերում³:

Կածան բառանունը՝ որպես նեղ ճանապարհ, *կրէճան* հնչյունական տարբերակով գործածական է Տավուշի մարզի որոշ խոսվածքներում, Կրզենում: Հ. Աճառյանը բառը փաստում է նաև Ղարաբաղի (*կածան*, *կյծան*), Գորիսի (*կէճան*) խոսվածքներում:

Կածան-ը բառարաններում ներկայացված է մի քանի իմաստով. «1. Նեղ անցք, կիրճ լեռների կամ անտառների մեջ, 2. ձյունի մեջ բացված արահետ, 3. փխբ. թուրքերի գլխին ածիված նեղ շերտ, որ ճակատից մինչև ծոծրակն է գնում, 4. Ղարաբաղում, Ղարադաղում,

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԳԿՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ N SCS <<13-6B382>> գիտական թեմայի շրջանակներում:

¹ «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումներ, Եր., «Ատդիկ» հրատ., 2014, էջ 61-68:

² Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 3, Ե. 1977, էջ 506:

³ ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 487, Գ.Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՆԱԲ), Ե., 2010, էջ 374:

Թավրիզում, Շամախիում կաճանը «համառօտեալ է» նաև ծա՛նի «թուրք» միայն իբրև ծածկալեզու»⁴:

Հ. Աճառյանը «Հայերէն գաւառական բառարանում» *կաճան* բառանվան դիմաց Ղազախում, Ղարաբաղում «կիրճ» իմաստն է արձանագրում, ինչպէս նաև «աղվեսի շատ նեղ ճամփա», իսկ Ղարաբաղում՝ «փախցնովի ապրանքների բեռնակրի հետք»⁵:

Որպէս «ձյան վրա բացված արահետ» հայերէնի բարբառներում առկա է *թառ* բառանունը: «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում նախ բերված է *թառ* բառի ընդհանուր իմաստը, որն է՝ «հավերի թառը», այնուհետև նշված են թառի այլ իմաստները՝ «1. Ար., Ղրբ., Կր., Սայլի թափքի վերին երկու հորիզոնական ձողերից յուրաքանչյուրը, ինչպէս նաև ամբողջ թափքը, 2. Երզնկա. Ախոռատանը մեծ թախտի նման հարմարանք ծառաների համար, 3. Ղրբ. (Ղազախ) Սայլի առջևի եռանկյունաձև մասը, որի տակ կախված է շարժական սնարքը (մորուքը), 4. Արարատյան. Ձառիվեր, վերելք, դիք, 5. Կր. Ձյան վրա բացված արահետ, որ երբեմն երթևեկության հետևանքով շատ է պնդացած լինում. օր.՝ Հանգստացած ձիերը թառը գտած... ճամբան են կտրում (Ձավախեցի), 6. Ղրբ. (Ջնգ.) Ժայռափոր կառույց (Օղտ նան էշը... ք՛ընում են, քը՛նում, հըսնում մի մեծ թառի, նի մըտնում մէշը)»⁶:

Բարբառների բառային հնարանությունները ներկայացնելիս Գ. Ջահուկյանը փաստել է *թառ* բառանունը՝ որպէս «ձյան արահետ, ոտնահետքերով առաջացած ձյան ճամփա». բառն առկա է Ալաշկերտի բարբառում: Ըստ գիտնականի՝ այն «հ.-ե. *ter* -«անցնել, հաղթահարել, անցկացնել, փրկել» արմատից առաջացած բառանուն է»⁷:

⁴ Հ. Աճառյան, *նույն տեղում*:

⁵ Հ. Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան* (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 540:

⁶ *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Բ, Ե. 2002, էջ 80:

⁷ Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն* (այսուհետև՝ ՀԲՆ), Ե., 1972, էջ 305:

Թառ բառի ծագման մեկ այլ վարկած է առաջարկում բարբառագետ Ալ. Խաչատրյանը: Նրա կարծիքով՝ **թառ** բառը՝ «թռչունների հանգրվանելու ձող» իմաստով, **թառամել** բառի հետ կապելը իմաստաբանորեն չի արդարացվում: Իհարկե, նա վկայակոչում է նաև Գ.Ջահուկյանի ստուգաբանությունը, սակայն կարծում է, որ բառարանագիրները չեն նշում **թառ**-ի՝ որպես «ձյան վրայի ճանապարհի, բարձրադիր (գետնից բարձր) լինելը», որը, ըստ նրա, շատ կարևոր է և ընկած է բառի առաջացման հիմքում: Բերում է նաև **թառ**՝ «գառիթափ, բարձունք» իմաստով բառը, որը Հ. Աճառյանը համարում է պրակ. փոխառություն tar, tarak «գագաթ, ծայր» բառից, և համարում, որ իմաստային առումով դրանք դարձյալ իրար չեն համապատասխանում: Փաստում է նաև **թառ**՝ «դարակ, թարեք», **թառ**՝ Չահարմահալի խոսվածքում՝ «բարձրից կախված քսակ» իմաստով բառանունները: Ալ.Խաչատրյանը, ներկայացնելով հիշյալ բոլոր բառերը, որոնք բառարաններում մասնակի բացառություններով տեղ են գտել միևնույն բառահոլովածի տակ, այսինքն՝ դիտվել են միևնույն բառի տարբեր դրսևորումներ և ոչ թե համանուններ, կարծում է, որ դրանք ունեն մեկ ընդհանուր բաղադրիչ, որն է՝ «բարձրում գտնվող, վեր բարձրացած»: Այստեղից էլ եզրակացնում է, որ դա էլ հենց այն նախնական իմաստն է, որ հիմք է դարձել բոլոր բառերի առաջացման, և այդ բառերի համար կանխադրում է *ptr նախածնը⁸:

Ս.Ամատունու բառարանում ևս արձանագրված է **թառը**, որը Աշտարակում «գառիվեր, բարձր տեղ» իմաստով է գործածվել. «Ժողովուրդն էլ տերտերների քամակիցը Մուղնու թառովը (գառիվեր) վիրն գնացին: Կրնկեց դեպի Մուղնու թառը»⁹:

Ա.Մուքիաչյանի բառարանում **կածան** բառանվան բառագուգաբանություն է դիտարկված նաև բարբառային **կօպար** -ը¹⁰: **Կօպար** բառը առկա է «Նոր հայկազյան բառգրքում»¹¹ առանց

⁸ Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Ե. 2010, էջ 33:

⁹ Ս.Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 204:

¹⁰ Ա.Մուքիաչյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե. 1967, էջ 297:

¹¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836:

վկայության, գրաբարյան նշանակությունն է «սահման», և այն ծագումնաբանորեն, ըստ ՆՀԲ-ի, կապվում է **կոպ** բառի հետ (ՆՀԲ, հ.1, Վենետիկ, 1836, էջ 1117): Միջին հայերենում ևս վկայված է այս բառը՝ «որոշված սահման, եզրագիծ» իմաստով: Հայ մատենագրության մեջ փաստված են հետևյալ օրինակները. «Գառնոյ մին կոպարն այս է», «Չորեք անկիւնի քարիւ նըշան է զկոպարսն» և այլն¹²:

Հ.Աճառյանը վկայակոչում է, որ Ղարաբաղում և Ղարաքիլիսայում առկա է **կոպար** բառանունը՝ **կօպառ**, **կօպար** հնչաձևերով, որոնք ունեն հետևյալ նշանակությունները՝ «1. ցեխի կամ ձյան վրա բացված նեղ ճամփա, որը շատ գնալ-գալուց ամրացված է լինում, 2. անտառի մեջ նույնպիսի նեղլիկ ճամփա, որը առաջացել է շատ երթևեկելուց (ՀԳԲ, էջ 593-594): Առկա է նաև **կոպար անել** դարձվածային արտահայտությունը, որն ունի շատ հաճախել, միշտ մի տեղ գնալ-գալ իմաստը: Ձեր տունը կօպար է արել»¹³:

Գ.Ջահուկյանը **կոպար** բառի ծագումն անհայտ է համարում, փաստում է նաև նրա բարբառային հնչաձևերը՝ **կօպառ**, **կուպար**, **կօփար** և բերում է նրա «սահման» և բարբառային «արահետ, կածան» իմաստները (ՀՄԲ, էջ 420):

Ս.Ամատունին ևս հիշատակել է **կոպար** բառանվան **կուպար** հնչատարբերակը, որն առկա է Գանձակում և Բանանցում, ունի «ձյան և ջրալի ցեխի մեջ ոտքով բացված ճանապարհ» իմաստը¹⁴: Բանանց գյուղի բարբառախոս մի բնակչից մենք գրառել ենք հետևյալ օրինակը. «Օոնի վրն **կուպար** արավ, վրբ թախեքը շլօլ թընան»:

Կածան, արահետ հասկացության մեկ այլ բառանուն է դիտարկվել **ճըղղա**-ն, որը Հ.Աճառյանի բառարանում վկայված է **ճըղղա** դրափոխությամբ (Մաշկերտ). բառի բուն իմաստն է «մեծ պողոտայից բաժանվող նեղ ճանապարհ» (ՀԳԲ, էջ 722):

¹² Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, հ. Ա, Ե. 1987, էջ 406:

¹³ Սո. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), հ. 2, Ե, 1944, էջ 471:

¹⁴ Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, էջ 358:

Ա.Սուքիասյանը «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ում որպես բարբառային բառ՝ **արահետ** բառանվան բառագուգարանություն է հիշատակել նաև **թիլիլ**-ը: Հիշյալ բառանունը թերևս կապ ունի **թիլ** բառի հետ, որը, ըստ Մո. Մալխասյանցի և «Միջին հայերենի բառարան»-ի (ՀԲԲ, հ.2, էջ106), արաբական փոխառություն է. tall, հոգն.. tilal, որի նշանակությունն է «բլուր, հողակույտ»: Հ.Աճառյանը համարում է հետին ժամանակի բառ, որ մի քանի անգամ գործածել են Մ.Աստրին, Ս.Անեցին և Մ.Այրիվանեցին. այսպես. «Սա (Շամիրամ) արար գհողակոյտ բլուրսդ, գոր կոչեն թիլս», «Շամիրամ շինեաց թլեր բլուր ի հողոյ կուտեալ ամրոց, բայց մեք գտաք պատճառ թլացացդ» (պատմում է, թե Աստոծոյ հրամանով մեհեանները կործանուեցան, կուռքերը գետնի տակ անցան և նրանց վրայ բլուրներ ձևացան)» (ՀԱԲ, հ.2, էջ 183):

Մեր կարծիքով՝ **թիլ** բառը հազիվ թե արաբական փոխառություն լինի, որովհետև դեռևս Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ հիշատակ վում է Թիլ անվանումով ավանի մասին. «Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին և քանդէին զՆանէական մեհեանն դստերն Արամագոյս ի Թիլ յավանի»¹⁵: Մանավանդ որ ՆՀԲ-ում և Ջախջախյանի բառարանում **թիլ** «ավան, գյուղ» բառը կապվում է տեղական **Թիլ** հատուկ անվան հետ:

Արտուղի, խոտոր, այսինքն՝ «կարճ ճանապարհ» իմաստով Սեբաստիայում Կ.Գաբիկյանը փաստել է **գեղվըրա** բառաձևը (Շիտակեն էկաք, թե՞ **գեղվըրա**)¹⁶: Այսօր էլ Կարնո բարբառի որոշ խոսվածքներում գուրծունակ է **գեղվըրա** բառանունը՝ «ծուռ, խոտոր, չմտածված» իմաստով, իբրև մարդուն բնորոշող հատկանիշ, օրինակ՝ «Գեղվըրա մարդ է, գեղվըրա կիսօսի», այսինքրն՝ առանց մտածելու քայլեր անող մարդ է, չմտածված է խոսում:

Հ.Սուրադյանը Կարճևանի բարբառում փաստում է **չնքլիմ** «արահետ» իմաստով բարբառային բառանունը¹⁷:

¹⁵ Ագաթանգեղոս, *Հայոց պատմություն*, Ե., 1983, էջ 442-443:

¹⁶ ՀԼԲԲ, հ. Ա, Ե., 2001, էջ 236: Կ.Գաբիկյան, *Բառգիրք Սեբաստիայ գաւառալեզուի*, Երուսաղեմ, 1952, էջ 136:

¹⁷ Հ.Սուրադյան, *Կարճևանի բարբառը*, Ե., 1960, էջ 227:

Բառիմաստային յուրօրինակ նրբերանգներ է դրսևորում *վոտաց ճանպա* բառանունը: Բարբառների գերակշռող հատվածում հիշյալ բառաձևը ունի *արտաքնոց* նշանակությունը, իսկ Գեղարքունիքի Վերին Գետաշեն, Լիճք և այլ գյուղերում այն գործածվում է «կածան, նեղ ճանապարհ» իմաստով:

«Շավիղ, սարի լանջի ճանապարհ» նշանակությամբ Սասունի բարբառում առկա է նաև *բարուար* բառանունը, իսկ «լայն ճանապարհ» իմաստով՝ *ղըրբ*-ը¹⁸: «Հայ ժողովրդական հեքիաթներում» Մուշում վկայված է *քամանդ* բառանունը՝ «լեռան վրայով արահետ» իմաստով¹⁹:

Եզնիկ Կողբացու հայտնի վկայությունից երևում է, որ դեռևս 5-րդ դ. սկսած՝ միևնույն իմաստները բարբառային զանազան տարածքներում արտահայտվել են տարբեր բառերով: Սրան հակառակ՝ եղել են նաև միևնույն բառի իմաստային տարբեր գործածություններ:

Մույն հոդվածի շրջանակներում փորձել ենք անդրադառնալ նաև *փողոց, աղագ* բառանվանումների՝ հայերենի բարբառներում առկա բառիմաստային տարբեր դրսևորումներին:

Բնակավայրի տների երկու շարքի միջև թողնված ազատ տարածությունը կամ ճանապարհը երթևեկության համար *փողոցն* է: Հ.Աճառյանը *փող* արմատը՝ «նեղ անցք» իմաստով, «ճոխ ածանցներով աճած» մի արմատ է համարում, որի նախնական «նեղ անցք» նշանակությունից փոխաբերաբար առաջացել են «կոկորդ, տան մեջ սրահի առջևի անցք, միջանցք, այգիների միջև նեղ ճամփա, խողովակ, ջրի փողրակ, շեփոր» և այլ իմաստները: Այս նշանակություններից էլ կազմվել է *փողոց*-ը՝ «քուչա»-ն, որի սկզբնական նշանակությունն է եղել «սենյակների առջևի «միջանցքը» կամ երկու շարք կանգնած մարդկանց միջև բաց թողնված տարածությունը», որով շքադիր անձը պիտի անցնի: Կա նաև *փողոց տալ* արտահայտությունը՝ «ճամփա բանալով երթալ» նշանակությամբ (ՀԱԲ, հ.4, Ե.,1979, էջ 512-513):

¹⁸ Վ.Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 115:

¹⁹ *Հայ ժողովրդական հեքիաթներ*, հ. 8, Ե., 1977, էջ 880:

Ըստ Գ.Ջահուկյանի՝ հին հայերենում չկա «փողոց» նշանակող հատուկ բառ, նա *փողոց*-ը անհայտ ծագման բառ է համարում²⁰:

Հայերենի բարբառներում ևս առկա է *փողոց* բառանունը, որը, սակայն, ավելի հաճախադեպ կիրառվում է «աղբանոց» իմաստով: Այս բառանունը հիշյալ իմաստով կիրառվել է Վանի, Մուշի, Շատախի, Սասունի, Նոր Բայազետի, Խոյի տարածքի խոսվածքներում *փուղոց*, *փողոց* հնչածներով, Երզնկայում՝ *փողան* բառակազմական տարբերակով, իսկ Սասունի Մոտկանում՝ *փողանն*՝ նաև առաջնալեզվային *ան*-ով տարբերակով: *Փող* արմատական բառաձևով հանդես է գալիս Ղարադաղի Ուրգույթուն, Վինան, Ղասմաշեն, Մարդու, Խանազահ գյուղերում՝ դարձյալ «աղբանոց» իմաստով: *Փողոց* բառանունը բարբառներում գործածական է եղել նաև «արտաքնոց» իմաստով, և բառի տարածական շառավիղը նույն սահմաններում է, ինչ *աղբանոց*-ինը: Այսինքն՝ հիշյալ տարածքներում հիմնականում *աղբանոցն* ու *արտաքնոցը* նույն կերպ են անվանվել: Բերկրիի Աբադայի շրջանի Խաչան, Վանի Ոստանի Քարադաշտ գ.-երում *փողոց*-ը և՛ *աղբանոց*, և՛ *զուգարան* իմաստն է ունեցել:

Մեր ձեռքի տակ եղած նյութերում տարածքային սահմանափակ կիրառություն ունի *փողան* բարբառային տարբերակը՝ որպես «փողոց»: միայն Վանի բարբառում է գործածվել *փողան* բառաձևը, ինչպես նաև *խաչփողան* բարբառային բառանունը՝ որպես «երկու փողոցների խաչվելու տեղ», այսինքն՝ խաչմերուկ:

Սասունի բարբառում ևս փաստված է *փողան* բառը, սակայն այստեղ սրա գործառույթն այլ է՝ «նեղ սրահ, միջանցք»²¹, որը, ինչպես վերևում նշել ենք, Հ. Աճառյանը դիտարկում է որպես հիշյալ բառանվան հնագույն իմաստներից մեկը:

²⁰ Գ.Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊ ՆԺ)* Ե., 1987, էջ 266:

²¹ Վ.Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 164:

Հարկ ենք համարում ներկայացնել նաև Հ.Աճառյանի ՀԱԲ-ում վկայված *փողոց* կամ *փողան* բառանունների բառիմաստային գուգաբանությունները. «Ագուլխում՝ *փուղ* «մի փողոցի հատուկ անունը», Վանում՝ *փողան*, Ալաշկերտում, Մուշում՝ *փողան* «փողոց», Վանում՝ *փուղոց*՝ արտաքնոց, Սալմաստում՝ *փողոց, փողոց*՝ աղբանոց, Տփղիսում՝ *փողոց*՝ շուկա, Կարինում *փողոց*՝ փողոց, Մուշում՝ *փողրագ*, Մոկսում՝ *փուղրակ*, Ալաշկերտում՝ *փողրանգ*, Ախալցխայում՝ *փեղորսնգ*, Խոտրջուրում, Սեբաստիայում՝ *փորղանք*, Խարբերդում՝ *փորղենք*, Ակնում՝ *փողրագ*» (ՀԱԲ, հ.4, էջ 512-513):

Ըստ Գաբիկյանի բառարանի՝ «*փողոսք* (փողոցք)-ը գիւղերու տուներու առջև յատուկ աղբանոց, ուր կը թափեն օրական վառուած աթարի մոխիրը և աղբիւս, զոր յետոյ իբր բուսահող արտերը կը քաշեն» և բերում է հետևյալ առածը «Շունը կուլա, թե *փողոսքը* վրաս է, *փողոսքը* կուլա, թե շունը վըրաս է», այսինքն՝ գանգատող, զիրար ամբաստանողներ, որ զիրար կարժեն, մեկը մեկէն գանգատելու իրաւունք չունի»²²:

Գ.Ջահուկյանը հնագույն հայերենի բարբառային տարբերակները ներկայացնելիս այս ցանկում *փողոց* բառի համանիշ է դիտարկել *գոնեհ* բառանունը (ՀԼՊ ՆԺ, էջ 408):

Գոնեհ բառը, ըստ ՆՀԲ-ի, կապվում է *գայռ* «ցեխ» բառի հետ. «Գոնեհ - Քաղաքամեջ, որպես գայռոտ, այսինքն՝ տղմուտ ռահ՝ վասն բազմութենէ անցաւորաց. հրապարակ, պողոտա, փողոց, շուկա» (ՆՀԲ, հ.1, էջ 582):

Գոնեհ բառանունը, ըստ Հ. Աճառյանի, «փողոց, հասարակաց ճամփա» նշանակությունն է ունեցել, որից էլ *գոնեհիկ*-ը՝ «ռամիկ, հասարակ դասակարգի մարդ, գեղջուկ»: Բառը արձանագրված է Թովմա Արծրունու (9-րդ դ.)՝ *գոնեհ* - փողոց, և Ներսես Լամբրոնացու (12-րդ դ.)՝ *գոնեհ* - «աղբ, ցեխ» աշխատություններում (ՀԱԲ, հ.1, Ե., 1971, էջ 600):

²² Գ. Գաբիկյան, նշվ. աշխ., էջ 553:

Գռեհ բառաձևը հայերենի բարբառներում «փողոց, ճանապարհ» նշանակությունները չի պահպանել: Ըստ ՀԼԲԲ-ի՝ **գռեհ** բառը Մուշում ունի «աղբյուս, աղբանոց» իմաստը:

Հայերենի բարբառներում **գռեհ** բառանունն ավելի գործածական է մեկ այլ տարբերակով՝ հ->խ հերթագայությամբ՝ **գռեխ** բառաձևով: Այսպես՝ Մուշում, Ալաշկերտում **գ՞րռեխ**, Վանում **գրռեխ**, Մոկսում **գրռեխ**, Սալմաստում **կիրեխ**, Մարաղայում **կիրեխ** հնչյունական զուգաբանություններն են առկա, սակայն ոչ թե «փողոց, այլ վերքի թարախ, շարավ» նշանակությամբ: Նույն՝ «թարախ» իմաստով բառը գործածական է նաև Ագայում, Ոգմում, Նոր Բայազետում, Ապարանում, Շիրակում, իսկ Սալմաստում փաստված է նույնիսկ **կիրեխ - թարախ** բաղադրությամբ բառաձևը: ՀԼԲԲ-ում Գ.Սրվանձոյանցից բերված է հետևյալ ուշագրավ օրինակը՝ «սնու ձիկ արեցիր աղու գրռեխ, էնի արաց անմախութնի ճար, թօղ էրթա, Աստված ուր իւէտ էլնի» (ՀԼԲԲ, հ.Ա, էջ 285):

Ինչպես արդեն արձանագրել ենք, հավանաբար **գռեհի**՝ «ցեխ, աղբ» նշանակությունից էլնելով էլ հետագայում նույն բառաձևից առաջացել է նրանից միջնորդավորված փոխաբերացմամբ մեկ այլ բառիմաստ՝ **գրռեխ**՝ «թարախ, վահր»: **Գռեհ** - «աղբ, ցեխ, փողոց, ինչպես նաև աղբանոց ու աղբիւս», այնուհետև **գրռեխ**՝ «վերքի թարախ»:

Փողոց հասկացության դիմաց որոշ բարբառներում առկա է **ջօջ** բառանունը, որի աղերսը ռուսերեն **шоссе** բառի հետ քիչ հավանական ենք համարում՝ Արցախում Շոշ անունով հին բնակավայր ունենալու հանգամանքով պայմանավորված: Բառը փաստված է Եղեգնաձորի Եղեգիս, Տավուշի Վերին Կարմիրաղբյուր, Մարտունու Մաղինա, Արարատի շրջանի Արարատ գյուղերում և այլն:

Փողոց հասկացության բառագուգաբանություն է դիտարկվել արևելյան փոխառություն համարվող **քյուչա** բառանունը (Կարձևան, Արարատ և այլն):

«Նեղ փողոց» իմաստով «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ում փաստված է **սոխախ** բառանունը Լոռիում²³:

Գ.Զահուկյանը, ներկայացնելով հնագույն հայերենի բարբառային տարբերակները, **ուղի** բառի հոմանիշ է դիտարկել **աղագ** բառանունը: Նա բառի ծագումն անհայտ է համարում՝ գտնելով, որ այն հազիվ թե կապ ունենա ակկադ. alāku(m), alaktu, «ընթացք, ճանապարհ, ուղի» բառերի հետ (ՀՄԲ, էջ 33):

Հ. Աճառյանը, վկայակոչելով Ոսկեբերանին, **աղագ**՝ «ճանապարհ իմաստով», մեկ օրինակ է բերում՝ «Արատիցի որմ, խրամատիցի և ամենեցուն աղագ լինի (այգու պատի համար է ասում, որ քանդվելով ամենքի ազատ անցուդարձի ճանապարհ է դառնում): Երկրորդական նշանակությունն է «հնարք, կերպ, միջոց», գործածված են նաև հոլովված ձևերը՝ գործիականը **աղագաւ**՝ պատճառով, հայցական կամ ներգոյական՝ **յաղագքս**՝ «համար, վասն»: Ըստ Աճառյանի՝ բոլոր ձևերի նախնական նշանակությունը «ճանապարհն» է (ՀՄԲ, հ.1, էջ 117):

Հայ բարբառների մեծ մասում (Երևան, Մուրմալու, Ղազախ, Ղարաբաղ, Ղարադաղ, Լոռի, Թիֆլիս) **աղագ** բառը հանդես է գալիս **աղաք** բարբառային տարբերակով և ունի «առջև, առաջ» իմաստը: Օրինակ՝ «Գազանի աղաքը կտրեցին: Խոփն ասավ՝ քամակս դուզ, աղաքս կեռ ա, / Գետինը շալակելը շատ ծանր բեռ ա»: 2-րդ իմաստով բարբառներում (Լոռի, Երևան) «նախ, առաջ, նախապես» է նշանակում: Օրինակ՝ «Աղագվա ժամանակը ո՞ւր, հիմի ո՞ւր: Աղագ էստեղ քաղաք էր»: Առաջ, առջև իմաստով կան նաև դարձվածային արտահայտություններ. 1. **Աղաք անել՝ առաջը գցել**: 2. Լոռու բարբառում **աղաքկտրուկ անել**՝ մեկից առաջ անցնել: 3. **Աղաքը կանգնել**՝ դիմադրել: Արարատյան բարբառում առկա է նաև **աղաքանալ**՝ առաջանալ բայաձևը (ՀԼԲԲ, հ.Ա, էջ 37):

Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերում եզակի նմուշներ ունենք, որոնցում **աղագ** բառանունը անաղարտորեն պահպանել է իր նախնական «ճանապարհ» իմաստը, օրինակ՝ Հավարիկում՝ **հըղըք**, Կրգենում՝ **հըղեք** (Հըղքերընը

²³ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 12, Ե., 1984, էջ 641:

ման գյօր՝ ման էր գալիս), Կարճևանում՝ *հրդաք* (*հրդաքնի*՝ ճանապարհին): Ըստ ՀԼԲԲ-ի՝ *աղագ* բառանունը առկա է Արարատյան, Թիֆլիսի, Ղարաբաղի, Կրզնի բարբառներում՝ «առաջ, առջև, նախ, նախապես» նշանակություններով: Մեղրու բարբառի համար արձանագրված է *աղաք* բառի «ճանապարհ» իմաստը²⁴:

Աղագ բառանունը Տավուշի մարզի որոշ գյուղերի և Հաղպատի խոսվածքներում այսօր էլ գործածական է *կըրճաղաք* ձևով, այսինքն՝ *կարճ աղագ(ք)*՝ որ-պես «նեղ և կարճ ճանապարհ, արահետ»: ՀԼԲԲ-ում ևս արձանագրված է *կարճաղագ* բառաձևը՝ որպես կտրուկ, կարճ ճանապարհ որը, ըստ բառա-րանի, վկայված է *կարճաղաք* հնչաձևով Արարատյան բարբառում, *կարճաղագ*՝ Ղազախի, *կըրճաղաք*՝ Լոռու և Գանձակի խոսվածքներում (ՀԼԲԲ, հ. Գ, Ե., 2004, էջ 62, 194):

Հարկ ենք համարում հիշատակել նաև Սասունի բարբառում վկայված *աղագ* բառանունը, որը, սակայն, խոսվածքում «ծառի ճյուղերից գործված դուռ կամ ցանկապատ» նշանակությամբ է փաստված²⁵:

Այսպիսով՝ քննվող նյութի ուսումնասիրությունից գալիս ենք հետևյալ եզրակացության. հայ բարբառներում առկա են «ոտքով բացված նեղ ճանապարհ» իմաստով բառանուններ, որոնք բառակազմական և բառիմաստային հետաքրքիր զուգորդումների արդյունք են: Ուշագրավ է նաև հայ բարբառներում *աղագ*, *փողոց*, *գոեհ* բառանունների բառիմաստային բազմազանությունը. մի կողմից *փողոց*-ը և *աղագ*-ը բարբառներում պահպանել են նախնական «ճանապարհ» իմաստը, մյուս կողմից ունենք *աղագ*, *փողոց* բառանունների բառիմաստային այլ դրսևորումների վկայություններ, ինչպես՝ *առաջ*, *առջև*, *նախ*, *աղբանոց*, *շուկա*, *արտաքնոց* և այլն: *Աղագ* բառանունը որոշ բարբառներում վկայված է նաև բառակազմական յուրօրինակ բառաձևով՝ *կըրճաղաք*՝ որպես «կարճ ճանապարհի» նշանակելի: *Գոեհ* բառի դեպքում բարբառները չեն

²⁴ Տե՛ս նույն տեղում:

²⁵ Վ.Պետոյան, նշվ. աշխ., էջ 101:

պահպանել նրա «փողոց» նշանակությունը, այն բարբառներում գործածվել է «թարախ, աղբիւս, աղբանց» իմաստով:

Hasmik Khachatryan- Dialectal characteristics of the concepts of “street” and “path” and their semantic developments in the dialects of Armenian.- This article studies the dialectal forms of the concepts of “path” (narrow road) and “street”. The following variations of the word “path” have been found in the dialects of Armenian - կաճան, թառ, կուլաք, թիլիկ, կրրճաղաք etc, which are a result of curious formative and semantic associations. The words աղազ, փողոց and գռեհ have manifested semantic variety in the Armenian dialects. On the one hand, փողոց and աղազ have preserved their original meaning of “road, way”, but on the other hand we have other semantic manifestations of those words, such as “before, in front of, firstly, dump, market, lavatory” etc. In case of the word գռեհ, the dialects have not preserved the meaning of “street”; this word is used in the dialects to mean “puss” or “dump”.

Асмик Хачатрян - Характеристика и семантическое развитие понятий «փողոց» и «աղաղետ» в диалектах армянского языка.- В данной статье исследуются диалектные словоформы понятий «աղաղետ» (araget – узкая дорога, тропа) и «փողոց» (улица). В армянских диалектах в качестве словоформ понятия «աղաղետ» отмечены: կաճան, թառ, կուլաք, թիլիկ, կրրճաղաք и другие формы, которые стали результатом интересных словообразовательных и семантических параллелей. Лексемы աղազ, փողոց, գռեհ в армянском языке образовали полемическую группу слов. С одной стороны, աղազ, փողոց сохранили в диалектах начальное значение - путь, дорога, с другой стороны, имеются свидетельства иных семантических проявлений лексем աղազ и փողոց, как например: առաջ (вперед), առջև (впереди), նախ (во-первых), աղբանց (мусорная свалка), շուկա (базар), արտաղետ (туалет) и др. В случае со словом գռեհ диалекты не сохранили его значение «улица», оно употребляется в значении «гниль», «мусорная свалка».

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ¹

Հայկանուշ Մեսրոպյան

Ավագ շաբաթվա միաշաբթին նշանավորվում է Հիսուսի՝ Երուսաղեմ կատարած հանդիսավոր մուտքով²։ «Եւ բազում ժողովորդք տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճանապարհին, եւ այլք հատանեին ոստս ի ծառոց եւ տարածեին ի ճանապարհին: Եւ ժողովորդն, որ առաջին եւ զկնի երթային, աղաղակեին եւ ասեին՝ Արհնութիւն որդւոյ Դաւթի, արհնեալ որ գայ յանուն Տեառն. արհնութիւն ի բարձունս»³: Այս մուտքը Երուսաղեմ հայ ժողովորդը հիշատակում է *Ծաղկազարդ* կամ *Ծառզարդար* տոներով: Հեթանոս հայերի համար Ծաղկազարդը խորհրդանշել է գարնան գալուստը և բնության զարթոնքը: Այն կոչվել է նաև *Արմավենյաց տուն*⁴:

Եկեղեցու հայրերը Հիսուսի առջև ովսանաններով հանդերձներ փռելը մեկնում են որպէս մեղքերից ազատվելու նշան, ձիթենու և արմավենու ճյուղերը՝ հարգանքի, նաև հարության հաղթանակի խորհրդանիշ⁵: Ծաղկազարդի սուրբ պատարագից հետո օրհնված ձիթենու կամ ուռենու ոստեր են բաժանում ժողովրդին:

Տոնի վաղնջականությունը և համաժողովրդականությունը հիմք են հանդիսացել բառապաշարային մի շարք միավորների ստեղծման: Բուն տոնի անունը հիմնականում կերտվում է կամ *ծաղիկ*, կամ *ծառ* առաջնային բաղադրիչներից, որոնց ավելանում է *զարդ* գոյականը կամ *զարդար* բայական հիմքը:

¹ «Ձահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումներ, Եր., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 105-112:

² Տե՛ս **Խրիմեան Հայրիկ**, Գալուստն Քրիստոսի ի քաղաքն Երուսաղեմ, «Եկեղեցի Հայաստանեայց», Կ. Պոլիս, 1888, N 7, էջ 98-99:

³ **Մատթ.** 21. 8-9, **Մարկ.** 11. 1-11, **Դուկ.** 19. 28-40, **Յովհ.** 12. 12-19:

⁴ Հմմտ. **Բ. Ստեփանեանց**, Քարոզ ի վերայ Արմավենեաց տօնի, այն է՝ Ծաղկազարդի, «Ճոռքաղ», Մոսքուա, 1861, հ. Բ, տետրակ ԺԸ, էջ 285-288:

⁵ Տե՛ս **Վ.**, Ծաղկազարդ, «Խօսնակ Հայաստանեայց եկեղեցւոյ», Կ. Պոլիս, 1888, N 2, էջ 17-21:

1) **Օտաղիկ առաջնային բաղադրիչով կազմություններ:** Ավագ շաբաթ երեկոյան՝ նախատոնակին, բացվում է խորանի վարագույրը, որը Արարատյան դաշտի բարբառախոսները, ինչպես և գրական հայերենում է, անվանում են *դրոշնբացէք*, և ավանդույթի համաձայն բացողը նվեր է տալիս եկեղեցուն, որը կոչվում է *ժամոց*: Եկեղեցու խորանը զարդարվում է ծաղիկներով, որով և պայմանավորված է տոնի *ծաղկազարդ* անվանումը:

Ունենք *ծաղկազարդ* բառի հետևյալ բարբառային տարբերակները:

Օտաղիկ + ա + զարդ կազմությամբ հնչազուգաբանություններ. *ծաղկազարթ* (Ախալքալաք), *ծախկազարտ* (Սուրմալուի Բլուր)⁶, *ձաղգազարդ* (Սուչավա), *ձանդանկազարթ* (Տիգրանակերտ), *զաղգազարդ* (Առտիալ), *ձաղգազարթ* (Միկումեղիայի Խասկալ և Արմաշ, Ֆուռնուս-Ուլնիա, Ասլանբեկ), *ձաղգէզարդ* (Մասունի Արծվիկ), *ձրղկազարթ* (Հաղրութի Հին Թաղլար) և այլն: Ինչպես նկատում ենք, ընդհանուր բարբառային օրինաչափություն ներկայացնող հնչունափոխություններից տարբերվում է Առտիալի *զաղգազարդ* բարբառային հնչազուգաբանությունը, որում առնմանության կամ բաղաձայնների հերթազայության հետևանքով բառասկզբի ծ խուլ պայթականը վերածվել է *զ* սուլականի:

Համշենի տարածքում *զարդ* գոյականի փոխարեն գործածվում է *խաղ* երկրորդային բաղադրիչը՝ կազմելով ծաղիկների առատությունը շեշտող *ծաղգախաղ* հոմանիշը:

Արաբկիրի բարբառում և Մասունի Մառնիկի խոսվածքում Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ համապատասխանաբար կոչում են *ծաղգազարթի կիրազի* և *ձ'աղգէզարտի դ'օն* բառակապակցություններով՝ ընդգծելով «կիրակի» և «տոն» լինելու հանգամանքները:

⁶ Հոդվածի բարբառային օրինակները ըստ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Հայերենի բարբառագիտական ասլասի նյութերի հավաքման ծրագրի», բարբառագիտական մենագրությունների, ինչպես նաև բարբառախոս վայրերում մեր կողմից կատարված գրառումների:

Բարբառախոս մի շարք վայրերում Ծաղկագարդը հիշատակվում է որպես *ծաղկի տուն* (Մառնեուլի Դամիա) // *ծաղկի տուն* (Ախալքալաքի Մեծ Սամսար, Մարտունի) // *ծախկի տուն* (Նախիջևանի Շուռուտ) և այլն: Դարաբաղի բարբառի Գանձակի խոսվածքում նշված բառակապակցության փոխարեն գործառվում է *ծաղկատուն* իսկական բարդությունը: *Ծաղիկ* բաղադրիչի փոխարեն բարբառախոսները երբեմն կիրառում են պարսկերեն گُل համարժեքը՝ թուրքերեն can բառի հետ կազմելով *ջանգյուլում* հոմանիշը. *ջանգուլում* (Սալմաստ, Եդեգնաձորի Վերնաջեն, Նախիջևանի Ազնաբերդ) // *ջանգյուլու* (Մասունի Արփի) և այլն: Տվյալ դեպքում ակնհայտ է Ծաղկագարդի շփոթությունը Համբարձման տոնի հետ, քանի որ վերջինիս ընթացքում է «Ջան գյուլում» երգի ուղեկցությամբ կատարվում ծաղիկ գովելու ծեսը:

Ջան գյուլում բառարանային միավորի դիմաց Սահակ վարդապետ Ամատունին գրում է. «Պարսկերեն կյուլ և ճան բառերից. ժողովրդական ծաղիկ գովելու երգերի անուն և ծաղիկ գովելու գործողություն է»⁷:

Նոր Ջուղայի բարբառի *ջան գյուլում* արտահայտությունը Ն. Միրզայանցը բացատրում է որպես «ջան, իմ վարդ (ծաղիկ)», որում *գյուլ* «ծաղիկ» փոխառությանը համարժեք են պահլավերեն *gul*, պարսկերեն՝ *gol* և թուրքերեն *գյուլ* լեզվական տարբերակները, իսկ *գյուլը բացվեց* հարադիր բայն ունի «ծաղկեց» ուղիղ և փոխաբերական «ուրախացավ» իմաստները⁸: «Ջան գիլում կանեմ, կշարեմ, տօպրակին կածեմ, կկարդեմ»⁹:

Ծաղիկ բաղադրիչով այս հոմանիշների առկայությունը ևս խոսում է տոնի՝ բնության զարթոնքը խորհրդանշող հեթանոսական բովանդակության մնացորդների մասին:

2) **Ծառ առաջնային բաղադրիչով կազմություններ:** Ծառի պաշտամունքը հատուկ է աշխարհի բազմաթիվ ժողովուրդների,

⁷ Մ.Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 574:

⁸ Ն. Միրզայանց, Տաղեր Նոր Ջուղայի աշուղներից, Նոր Ջուղա, 2016, էջ 106:

⁹ Յանելուած խաղք աշղից Ջուղայոց, մասն Բ, Կանոն Ամիրխանի, աշխատասիրեց Նիկիտ Միրզայանցը, ի Ջուղա, 1876, էջ 75:

այդ թվում նաև հայերիս: Կ. Ավետիսյանն այդ մասին գրում է. «Ծաղկազարդի տոնը, որը գալիս է հեթանոսական շրջանից, և մեր ժողովրդի մոտ հայտնի է *ծառագարդ* անունով, կապված է ծառի պաշտամունքի հետ»¹⁰:

Ծառի պաշտամունքի մնացորդները ձգվում են մինչև մեր օրերը. «Պատանեկան տարիներից հիշողությանս մեջ մնացել են մենավոր ծառերը (Բագրևանդի գավառ), որոնց մոտ ճամփորդները կանգ էին առնում, կտրում երեխաների կամ իրենց հագուստի մի կտոր, թեկուզ մի թել և կապում այդ ծառերին», - հավելում է Կ. Ավետիսյանը¹¹: Ըստ այսմ՝ կարող ենք ասել, որ Ալաշկերտի դաշտում կատարվում էր ծառեր օրհնելու ծես: Հմտ. «*Ծառգառտրքին ծառներ կօրջնին*» (Ալաշկերտի Խաստուր):

Ծառի պաշտամունքի մասին են վկայում նաև բարբառային հետևյալ օրինակները. «*Ծառգարտարին ծառեր կը գարտըրեն*» (Ալաշկերտի Մագրա): «*Ծառգարթարին էրեխեքը պըտկած ծառ ին տանում ժամը*» (Պարսկաստանի Քյազազի Գուլիգարդ): Հնարավոր է՝ *ծառ* ասելով տեղեկատու բարբառախոսը նկատի է ունեցել ծառի ճյուղերը, չնայած հայտնի է, որ արմատախիլ արված կամ բնից կտրած մեկ կամ երկու ծառ էին տանում եկեղեցի¹²:

Ծառի պաշտամունքի հիման վրա է կերտվել *Ծառգարդար* տոնանունը, որն աչքի է ընկնում լայն տարածագործառականությամբ: Բարբառախոս սևերեկցին այդ մասին այսպես է վկայում. «*Ձառգարտարին ժամ կացինք, օշնրվաձ ջեղ պերեձ ինկ՝ հավաղկօվ դունը տըրեձ ինկ*»:

Ունենք ծառգարդար (ծառ + գարդար) անհոդակապ կազմությամբ բառի բարբառային հետևյալ հնչազուգաբանությունները. *ծառգարդար ը* (Մուշ), *ծառգանթաձար* (Մակու, Գառնի), *ծառգառթար*

¹⁰ Կ. Ավետիսյան, Ա. Ավետիսյան, Հայերենագիտական էտյուդներ (Պատմական Հայաստանի սրբագործված անտառները), «Մովեստական գրող» հրատ., Երևան, 1979, էջ 218 [http://armenianhouse.org/avetisyan/sacred-forests.html]:

¹¹ Նույն տեղում, էջ 220 [http://armenianhouse.org/avetisyan/sacred-forests.html]:

¹² Տե՛ս Ժ. Խաչատրյան, Ծաղկազարդ տոնը ժողովրդական ու եկեղեցական ծիսակարգում, «Պատմություն» հանդես, Երևան, 2002, N 1, էջ 87:

(Արարատյան, Բյուրականի Երևանի մայլա), *ծառզանդուր* (Ուրմիա), *ծանգարթար* (Նոր Բայազետի Կարմիր գյուղ), *ծանգարթար* (Արտաշատ և Մասիս, Իգդիրի Հախվերիս, Խոյ), *ծարգարտար* (Մուշի Վարդենիս, Կարսի Քյուրագդարա), *ծարգարթար* (Հայոց ձորի Նոր գեղ), *ծառզանդուր* (Արծափի Կոզովիտ, Նաիրիի Քասաղ, Մարտունու Մաղինա), *ծառզանդուր* (Ապարանի Վարդենիս), *ծառզարթար* (Ախալքալաքի Օլավերդ, Կարինի Երկար մասուր գյուղ), *ծարգարթար* (Սեբաստիայի Մանջալիկ), *ծառզարտո՞ր // ձառզարտուր* (Սվեդիայի ՎագրՖ, Հաջի-Հաբիբլի, Խտրբեկ), *ծառզարթոր* (Տավոռիկի Իրցանք), *ծառզարթար* (Մոկսի Կրճավ, Արտամետ), *ծառզարտար* (Վան), *ծանգարտար* (Շատախի Արմշատ, Մոկս), *ծարգարթար* (Ազա), *ծրոզարթար* (Լոռի), *ծրոզարթար* (Գորիս, Բոլնիս-Խաչեն), *ծրոզարթար* (Շահումյանի Բուզուլի), *ծրոզարթար* (Մեղրի), *ծանգարթար* (Վանի Կողպանց, Դիաղին), *ծանգարթար* (Խոջաբի Ջենիս, Խոյի Կարակրդի և Բաղիլոյ), *ծանգարտար* (Մոկս, Շատախ, Վան), *ծառզարթար // ձառզարթար* (Ոզմ), *ծառզանդուր* (Ապարանի Նիգավան), *ծարգարտուր* (Սվեդիա), *ծառզարտար* (Զմշկաձագ, Փսանքի Սրճեղ, Մոտկանի Սրցանք), *ծառզարթար* (Կեսարիա) և այլն: Ըստ Կարսի Փալոքվան գյուղի բարբառախոսների վկայության՝ իրենց տարածքում կա *Շառզարթար* անունով վանք:

Նշված օրինակները արտացոլում են հայերենի տարածքային տարբերակների ձայնավորական և բաղաձայնական գրեթե բոլոր հնչյունափոխական օրինաչափ իրողությունները: Մի շարք տարածքներում հընթացս վերոնշյալ օրինաչափ հնչյունափոխությունների՝ առկա է առնմանական կամ հերթագայական ծ>զ բաղաձայնական անցումը: Այսպես՝ *զանգարթար* (Միսիանի Ուզ), *զառզարտար* (Մասունի Հազգո), *զարզանդուր* (Մասուն, Շատախի Գյարմավ), *զարզարթար* (Ասլանբեկ, Երզնկա, Խարբերդի Սվժոդ և Հուսեյնիկ, Եդեսիայի Գարմունջ, Ռոդոսթո, Սեբաստիայի Դենդիլ), *զարգարթար* (Հավարիկ), *զարգարտուր* (Սվեդիայի Խտրբեկ), *զայզայթար // զայզայտար* (Համշեն, Ճանիկ, Մամսոն, Օրմոնքոյ),

զրրզարթար (Շամխորի Նյուզգեր), *զայզայտնէ* (Հաջըն), *զրրզւորթար* (Նախիջևանի Փառակա և Կյաղ), *զրրզւորթւոր* (Կարմիրի Վահան, Ղարաբաղի Մարդու) և այլն: Օրինակ՝ «*Ձայզայտոյէին իժըմնին չիչագել գու զայտայեն*» (Հաջըն):

Վերջին երեք օրինակների *ծառ* առաջնային բաղադրիչում, **ծ>զ** բաղաձայնական անցումից բացի, տեղի է ունեցել **ա > ը** փոխարկում:

Ը ձայնավորի հավելման ենք հանդիպում հատկապես Լեոնային և Դաշտային Ղարաբաղի տարածքում (*զրրըզւորթւոր*), Սյունիքում, Նախիջևանում: Չնայած տարածքային ամբողջականությանը՝ այստեղ գործածվում են իրարից տարբեր, ոչ նույնական հնչափոփոխակներ: Այսպես՝ *զրրըզարթար* (Բերդ), *զրրըզւորթւոր* (Վարդաշեն, ԼՂ Մարտունու Ճարտար, Մարտակերտի Պողոսագոմեր, Առաջածոր, Ասկերանի Ավետարանոց), *զրրըզւորթար* (Շամխորի Լղարակ), *զրրըզւորթւոր* (ԼՂ Հաղրուփի Խծաբերդ, Ջանյաթաղ), *զրրըզւորթւոր* (Գորիսի Քարահունջ, Խանլարի Գետաշեն) և այլն:

Մ >զ բաղաձայնական անցումով մի շարք տարբերակներում ընթացակցական *ը*-ի փոխարեն կամ գուզահեռ ի հայտ է գալիս նաև *ի* ձայնավորը՝ որպես հետևանք առաջին վանկի *ա* ձայնավորի կամ երկրորդ վանկի հավելական *ը*-ի հնչափոփոխակ. *զիրըզւորթւոր* (Շուշիի Եղծահող, Լիսագոր, Բերդածոր), *զրրիզւորթառ* (ԼՂ Վաղուհաս, Ասկերանի Դաշուշեն, Խաչեն) *զիրզւորթւոր* (ԼՂ Հաթերք, Օրդուբաղի Մեսրոպավան, Կիրովաբաղ), *զի ըզւորթւոր* (Գորիսի Վերիշեն, Բռուն, Կոռնիծոր, Խոտ և Վաղատուր, Նուխի), *զիրիզւորթւոր* (Մարտակերտի Ջարդախաչ, Թալիշ, Ղազանչի) և այլն:

Վերը բերված բազմաթիվ օրինակներից բացի, մի շարք բարբառային կոդյակներում գործածական են այնպիսի գուզաբանություններ, որոնք ներառում են արդեն իսկ նշված ձայնավորական և բաղաձայնական օրինաչափ և այլ կարգի հնչյունական փոփոխությունները, և դրանք բարբառների հնչյունաբանության տեսակետից յուրօրինակ տարբերակներ են:

Ներկայացնում ենք դրանք հնարավոր որոշակի խմբավորումով:

ա) *Օտո* հիմնական բաղադրիչի վերջնահնչյունի անկում. *զըզսնթսնթ* (Գորիսի Խնձորեսկ), *զսնթսնթ* (Գեղիեգուզան, Աշտարակի Լեռնարոտ), *զսնթսնթ* (Խարբերդ), *զսնթսնթ*¹³ (Քեսաբ), *զսնթսնթ* (Հին Ջուղա), *զսնթսնթ* (Մուժումբար), *զըզսնթսնթ* (Ստեփանավանի Վարդաբլուր և Կուրթան), *զըզսնթսնթ* (Տավուշի Շավարշավան, Սանահին, Հադրաստ) և այլն:

բ) *Ս* հոդակապով իսկական բարդություն. *ժառագարդ՝ար* (Ջուղա, Նոր Ջուղա), *ժառագարդ* (Նոր Նախիջևան): Շամախու Սադյան բնակավայրի խոսվածքում առկա է *ժառագարդսնթ* (ծառ + ա + գարդ + սնթ) *ա* հոդակապով բարդ ածանցավորը: Օրինակ՝ «*ժառագարդսնթին մօմ վառեցինք*»:

գ) *Ք* հոգնակերտով կազմություն (*ժառագարդարք*), որը, կարծում ենք, ընդգծում է տոնի հավաքականության, եկեղեցու ներսում և եկեղեցուց դուրս ծառեր զարդարելու իմաստը. *զըզսնթսնթ* (Դաշքեսանի Չովդար), *ժառագարդսնթ* (Շամախի) և այլն:

դ) *Իգ* (<իկ) փաղաքշական վերջածանցով կազմություն. *զառզարտըրիգ* (Սասուն), *զայզայտըրիգ* (Օրդու), *ձառզարտըրիգ* (Տավորիկ, Աշտարակի Լեռնարոտ) և այլն:

ե) Հնչյունների հավելում. Ղարաղաղի Ղասմաշենում և Քելվանում առկա է հնչյունաբանորեն չպատճառաբանված *վ* շրթնային բաղաձայնի հավելում (*զըզսնթսնթ*): Չի բացառվում *զվարթ* բառի համաբանությամբ պայմանավորված լինելը:

«Բիրակն» հանդեսը վկայում է Ադանայի թրքախոս հայերին բնորոշ *զարզարթար* հնչատարբերակը, որում տեղի է ունեցել երկրորդ վանկի *ր* ձայնորդի անկում և *դ* ձայնեղ պայթականի հնչյունափոխություն կրկնակ *թթ* շնչեղ խուլերի¹³: 2013թ. Ադանայի թրքախոս հայերի շրջանում հարցումներ կատարելիս նման տարբերակի չհանդիպեցինք:

¹³ Տե՛ս «Բիրակն», 1900, էջ 454

[[http://tert.nla.am/archive/2013"NLA%20AMSAGIR/byurakn/1900/1900.pdf](http://tert.nla.am/archive/2013)]:

զ) *Ծան* բաղադրիչի *ծ* խուլի և *զարդ* բառի *զ* սուլականի դիմաց ոչ համակարգային *ջ* ձայնեղ կամ *ճ* խուլ պայթական. *ջօրջարթօր* (Մարաշ), *ճօրճադօր* (Համշեն): «*Ջօրջարթօրը իժօսէն գէշթունա դօլդաք* («ճյուղեր») *գօ բիրին*» (Մարաշ):

է) *Ջարդար* բառի *զ* սուլականի դիմաց *ծ* // *ձ* ն համակարգային բաղաձայնական անցում՝ *ծան* բառի *ծ* խուլի փոխազդեցությամբ. *ձառձարթար* (Ախալքալաքի Ալաստան, Ազավրեթ, Բուզավրեթ), *ձօռձադօր* (Մարաշ):

Կարինցիներով բնակեցված Ախալցխայի *ժարժաթար*, Ախալքալաքի Բուդաշենի, Աբուլի և Բեժանոյի, Նինոծմինդայի Գանձայի *ժառժաթար*, Մամգարայի, Վաչխանի, Տրկնայի, Գոմանի *ժառժաթան*, Ծավկայի, Բալխոյի, Լոմատուրցխի *ժառձաթար* հնչյունական զուգաբանություններում վերը նշված փոփոխությունն ուղեկցվում է *զարդար* բաղադրիչի *ր* ձայնորդի անկումով:

ը) *Ջարդ* գոյական վերջնաբաղադրիչ կամ միայն *զարդար* բայական հիմք է գրանցված մի քանի վայրերում. *ծւնդւնրթ* (Ուրմիայից, Բարանդուզից, Սալմաստից եկածներով բնակեցված Արտաշատ), *զւնրթւն* (ԼՂՀ Մարտունու Բերդաշեն, Գիշի, Մարտակերտի Վարնկաթաղ, Հոռաթաղ), *զւնրթւնր* (Հաղրուրթի Մարիամաձոր, Հարթաշեն, Քարագլուխ): Պարսկահայերով բնակեցված Եղեգնաձորի Ենգիջայում արտասանվում է առանձին շեշտադրությամբ՝ *ժան զւնրթւնր*:

Լոռու խոսվածքի Ստեփանավանի Կուրթան գյուղի ենթախոսվածքում հանդիպում է իր բնույթով եզակի *տրզառթար* հնչագուգաբանությունը: Ենթադրում ենք, որ կազմությունն առաջացել է *տրրրնդեզ* և *զառթար* բառերի ձևափոխության հետևանքով¹⁴:

թ) Բառավերջում *ն* ձայնորդի առկայություն, որը, կարծում ենք, ընդգծում է տոնի ընթացքում *ծան* զարդարելու գործողությունը, *ձառզւնրտւն* (Մասունի Գոմք), *ժառժատան* (Ախալցխայի Ծինուբան, Զիֆլիկ, Խակ, Ջուլդա և Ծղալթբիլա):

¹⁴ Բաղարկության մասին տե՛ս Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազուլյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 47:

ժ) Բառակապակցություն. Չարմահալի Սինագանում ընդգծվում է *օր* (ծառգարթարի օր), Խուրի Թաղվում՝ *կիրագի* («*Օտոգարտ ըրրի կիրագին ուռի ծառ գարտարեն, տըրեն կարմիր, կանանճ, տեղին հավգըտով, մովերով*»), Բաղեշում և Մոտկանի Կոռում՝ *գիշեր* բաղադրիչները («*Չառթարի կիշեր կերթան էղգեցի, գաղօթին*»): Համշենից, Սամսոնից եկածներով բնակեցված Աբխազիայի Ալախաձեում գործածվում է *գայ-գայտար* կրկնավոր բարդությունը:

Նորնախիջևանցիները Քրիստոսի՝ Երուսաղեմ փառավոր մուտքի տոնն անվանում են *ծառկոտրունք*: Ակնհայտ է, որ բառի հիմքում ընկած է գործողությամբ պայմանավորված իմաստափոխությունը, քանի որ տոնակատարության նպատակով պոկոտվում են ծառերի բազմաթիվ ճյուղեր:

3) **Հումանիշներ**: Բավականին հարուստ է Ծաղկազարդի տոնն անվանող հումանշային շարքը, որը կարելի է դասակարգել իմաստային մի քանի խմբերով:

ա) **Ուռենի բաղադրիչով կազմություններ**: Հայտնի է, որ հայ ժողովրդի համար սրբագործված ծառեր են համարվում տուին և բարդին, նաև ուռենին: Ծաղկազարդի տոնին, հրեական սովորույթի համաձայն, ուռենու կամ արմավենու ոստեր են օրհնվում և բաժանվում: Ծիսական այդ արարողության հիման վրա մի շարք խոսվածքներում իմաստափոխության է ենթարկվում *ուռօրհներ* (ուռ+ենի+ օրհն+եք) բարդությունը՝ արտահայտելով տոնի բուն իմաստը: Նման գուգաբանություններ են գործածվում Նախիջևանի Մեծփում (*ուռօրհնօց*), Ագուլիսում (*ուռօխնիք*), Կաքավաբերդում (*հըռօխնիք*), Յղնայում (*ուռօտնիկ*), Կարձևանում (*հըռօխնիք*), Մեղրիում (*հըռօխնեք*) և այլուր: Ինչպես նկատում ենք, նշված վայրերը ներկայացնում են Հայաստանի հարավում տեղակայված Նախիջևան-Մեղրի բարբառային կղզյակը:

Քրիստոսի՝ Երուսաղեմ մուտքի իրադարձությունը օրհնված ուռենու հետ առնչելը կարող է պայմանավորված լինել Արևիքում (Նախիջևան, Մեղրի) ուռենի ծառատեսակի տարածված լինելով կամ հատկապես դրա ոստերից հյուսված պսակը կարևորելով:

Ինչպես հայտնի է, այդ օրը եկեղեցի գնացողներից յուրաքանչյուրի նպատակն է անպայման օրհնված պսակ ձեռք բերելը և տան պատից մինչև հաջորդ տարի՝ Ծաղկագարդի օրը, կախելը:

բ) **Տոնանունների շփոթությամբ պայմանավորված անվանումներ:** Տոնանունների շփոթությունը տարածված իրողություն է բարբառախոս միջավայրում, որի պատճառ կարող են հանդիսանալ ոչ միայն պարզ չիմացությունը, այլև տոնական հանդիսությունների որոշ ընդհանուր տարրերը: Ծաղկագարդը Վարդավառի հետ շփոթելը, կարծում ենք, ոչ թե տոների բուն բովանդակության արդյունքում է առաջացել, այլ *ծաղիկ* և ժողովրդական ընկալմամբ *վարդ* ընդհանուր և տեսակային միավորների համադրման հետևանքով: Ինչ-ինչ, անհերքելի է, որ ամեն մի հայ Վարդավառը ընկալում է որպես ջուր ցնցղելու օր:

ԼՂՀ Մարտակերտի Հասանդայա - Մարալյան Սարովում Ծաղկագարդն անվանում են *վրրթեվոր*, Մարտունու Ճարտարում, Մուշկապատում, Հերհերում, Հաղրութի Ծաղկավանքում, Ջրակուսում՝ *վրթեվոր*, արևմտյան բարբառատարածքից Սասունի Քոփում՝ *վարտեվար*: Եթե նշված վայրերի շփոթությունը պայմանականորեն անվանենք մասնակի, ապա Լոռու Շամուտ գյուղում տեղի է ունեցել ամբողջական շփոթություն: Տեղեկատու բարբառախոսը *վարթեվոր* տոնանունը նշելուց հետո, որպես ճշգրտում, ավելացրել է տոնակատարության օրը, որ է՝ հուլիսի վերջին կիրակին: Ծանուցումը միանշանակ հավաստում է, որ գործ ունենք ոչ թե Երուսաղեմ մուսքի, այլ Քրիստոսի այլակերպությանը նվիրված տոնի հետ: Կարելի է ենթադրել, որ այս տարածքում ավագ շաբաթվա միաշաբթին որպես տոնական օր չի հիշատակվում, որի հետևանքով էլ *վարդավառ* ու *ծաղկագարդ* հասկացությունները նույնականացվել են:

Բարձր Հայքում տոնանունը *հատիկի կիրակի* է, որը պայմանավորված է տվյալ օրվա ծիսական կերակուրով և հակադրված է ավագ շաբաթվա մյուս՝ *խեծախի* կիրակիներին: Գեղարքունիքի մարզի Վերին Ճամբարակում Ծաղկագարդի տոնն անվանում են *վիճակ*: Տվյալ դեպքում ևս ունենք ակնհայտ շփոթություն Համ-

բարձրագույն տոնի հետ, քանի որ վիճակ հանելու, «Ջանգլուում» երգելու ծեսերը միանշանակ տեղի են ունենում Քրիստոսի համբարձման տոնին: Վան – Վասպուրական տարածքում ևս եղել է նման շփոթություն, և դա հաստատվում է «*Խինգշըպնթ ծառզարթար ի*» (Վանի Լեզք) և «*Խիեշնյաթի ծառզարթար ի*» (Վանի Կյուսենեց) օրինակներով, քանի որ Ծաղկագարդի տոնը տեղի է ունենում ոչ թե հինգշաբթի, այլ ավագ միաշաբթի, իսկ Համբարձման տոնը՝ անպայման հինգշաբթի:

Այդ երկու տոների շփոթություն կա նաև Դիադիմի բարբառում: «*Հէսա հրմա ծնոզնթսնր էկավ, խառս- ախճիկ գրլնեն կէթան չօլ, վոր հուրանց խամար ծաղիկ քաղեն*»: Նշենք, որ ընդհանուր առմամբ տաղավար տոներին եկեղեցին զարդարում են ծաղիկներով. ծաղիկ քաղելու և ծաղիկ գովելու արարողությունը բնորոշ է Համբարձման տոնին: Օրինակ՝ «*Ծառզարթարը զատկից առաջ ա, ծաղկաքաղը համբարցման օրն ա*» (Կոտայքի Պտղնի):

Նախիջևանի Ագա բնակավայրում տոնը շփոթված է անգամ Քրիստոսի Հարության տոնի հետ. «*Ծնրզարթսնրի վնխստ տրդենր ծնու ին խաղայր*»: Հայտնի է, որ ձու ներկելն ու ձվախաղը բնորոշ են Քրիստոսի Հարության տոնին: Նման երևույթի հանդիպում ենք նաև Շատախի Գյարմավ բնակավայրում. «*Ձարզատրրին հօլ էր գը խաղենք, հավգիտ կը լօրծենք*»: Չի բացառվում նաև, որ այս բնակավայրերում ձու ներկելու սովորույթ եղել է մեկ շաբաթ առաջ, այսինքն՝ Ծաղկագարդին: Ըստ քրիստոնեական հավատալիքի՝ Քրիստոսի՝ մարդկության փրկության համար թափած արյունը խորհրդանշող ձու ներկելու ծեսը տեղի է ունենում ավագ ուրբաթ երեկոյան:

Համբարձման տոնին հաջորդող առաջին կիրակին կոչվում է *երկրորդ ծաղկագարդ* և խորհրդանշում է հրեշտակների ուղեկցությամբ Քրիստոսի մուտքը Վերին Երուսաղեմ: Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսն այս տոնը սահմանել է Գրիգոր Լուսավորչի՝ Խոր վիրապում գտնվելու հետ կապված ավանդագրույցի հիման վրա: Տոնը ժողովրդի մեջ հայտնի է *Կանաչ - կարմիր կիրակի* անունով,

իսկ եկեղեցական գրականության մեջ՝ բուն ծաղկագարդից տարբերակելու համար կոչում են *երկրորդ ծաղկագարդ*¹⁵:

Խարբերդի տարածքի բարբառախոսներն այդ տոնը շփոթում են բուն ծաղկագարդի հետ՝ միավորելով այն ընդհանուր՝ *գանանչ գիրագի* բառակապակցությամբ: Ձեյթունցիները, դարձյալ շփոթության հետևանքով, անվանում են *գենաչը-գայմոյ գէյագի*, չնայած ունեն նաև *տուռըն պացը գէյագի* նկարագրական հոմանիշը, որի հիմքում ընկած է նախատոնակին կատարվող դոնբացեքի ծեսը:

Ընդհանրապես ողջույն տալու և ողջույն առնելու եկեղեցական ծեսը կատարվում է բոլոր պատարագների ընթացքում: Հայաստանյայց եկեղեցու պատարագի տեքստում կարդում ենք. «Ողջո՛յն տուք միմեանց ի համբոյր սրբութեան, եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրո՛ւնս ելէք եւ աղօթեցէք»¹⁶: Կոտայքի մարզի Կապուտան գյուղի մուշ-բուլանուխցի բարբառախոսների մոտ ծաղկագարդին է տպավորվել հատկապես այդ սրբագան արարողությունը. «*Օտոգսիթըրին կէրթինք ծւն, վօխչուն կանիւնք*»: Կարելի է ենթադրել, որ բարբառախոսները պարբերաբար ներկա չեն գտնվում պատարագների, այդ իսկ պատճառով կարծում են, թե *ողջույն առնելու* կարգը բնորոշ է միայն Օտոկագարդի տոնին: Չի բացառվում նաև բարբառախոսների կողմից ողջույն առնելու ծեսն առանձնակի կարևորելը:

զ) **Այլ կազմություններ, օտարաբանություններ**: Նոր Նախիջևանի բարբառում Քրիստոսի՝ Երուսաղեմ մուտքի տոնը կոչվում է *ծանկոտրունք*, Կեսարայի բարբառում՝ *գսնչսի - գսնչսի*, որը, կարծում ենք, թուրքերեն *gelen geçen* («եկող անցնող») արտահայտությունն է, որը կերտվել է Քրիստոսի՝ այս աշխարհ գալու և գնալու աստվածաշնչական պատումի հիման վրա:

¹⁵ Յ Տե՛ս Վ., Նոր, կանաչ եւ կարմիր կիւրակէք Հայոց, «Խօսնակ Հայաստանեայց եկեղեցոյ», Կ.Պոլիս, 1888, N 6, էջ 91-95:

¹⁶ Խորհուրդ Սուրբ պատարագի, Ս. Էջմիածին, 2001, էջ 26 [http: // www.stnersess.edu /media/ DivineLiturgy ArmUnicode.pdf]:

Պարսկահայերով բնակեցված Եղեգնաձորի Վերնաշենի ենթախոսվածքի *խեթոխնիք* փոփոխակի առաջին բաղադրիչը *հայր* բառն է, այսինքն՝ տիրոջը՝ «հորը», ուղղված օրհնության տոն:

Արտաշատի Բուրաստանում գործառվում է *գյաշթ* (گشت «պտույտ, շրջագայություն») պարսկաբանությունը, որով նշվում է աստվածորդու՝ մարդկանց շրջանում շրջագայելը. «*Նանաս թագր խառս վախտը տարիր էն գյաշթ*»: Այս *գյաշթ* օտարաբանությունը կարելի է առնչել Նեմրուծի ստորոտում՝ դիցարան-արձանախմբին ամենամոտը գտնվող, ներկայումս մեծ մասամբ հայերով բնակեցված Kahta [Կյախթ (Կյախթհա)] բնակավայրի անվանմանը կամ պարսկերեն *յաշտ* «գոհարան» բառին:

Խարբերդի Հարուսի և Հուսեյնիկ բնակավայրերի խոսվածքին բնորոշ է *դագգանագ*, Անտիոք - Բեյլանի խոսվածքին՝ *ջանախթ-տոր* կամ *ջանախտորին գիրագին* (հմմտ. «*Ջանախթարին օրը բըլըզդէքը հաքցըցինք, ժուլ քացինք*»): Հնարավոր է, որ սրանք ծանանուն կամ ծաղկանուն նշող օտարաբանություններ են:

Ջանախտոր-ը կարելի է մեկնաբանել երկու կերպ՝ 1) թուրքերեն *can + aktarım* («նախիջևանել, անցնել»), այսինքն՝ տվյալ դեպքում բառի հիմքում ընկած է Քրիստոսի՝ Երուսաղեմով անցնելը: 2) Հնարավոր է նաև հայերեն *ջան+յաղթ + օր* կազմությունը, այսինքն՝ Քրիստոսի հաղթական մուտքի օրը ովսանաններով ու *ջա ն* բացականչականով դիմավորելը:

Ինչպես տոնական բոլոր օրերը, այնպես էլ Ծաղկազարդն առանձնանում է տոնին համապատասխան զանազան ավանդույթներով, կերակրատեսակներով՝ հիմք դառնալով թեմատիկ բառերի ու հասկացությունների առաջացման, որոնք առանձին քննություն են պահանջում:

դ) **Ծաղկազարդի տոնին առնչվող հասկացությունների անվանումներ:** Ծաղկազարդի տոնն ուղեկցվում է զանազան ավանդույթներով, որոնք էլ հիմք են դարձել հարակից հասկացությունների և համապատասխան բառերի առաջացման: Մակուից եկած Գառնիի բնակիչներին հայտնի է *կարկաչա* («ուռենու օրհնված ճյուղ») բառը. «*Օտոզանթրրին էրէխէքը ժամից կարկաչա են*

տանըս, պըտըտըս են տըները, ձ' ու են ուզըս»: Ալաշկերտի դաշտի գաղթականներով բնակեցված Աբովյանի Ակունք գյուղում այդ ճյուղերն անվանվում են *կարկաճա*. «*Ծառզարթարին կարկաճա ին քաղըս*»: Պարսկահայերը գործածում են *ճոկոնագ*՝ «տոնի ժամանակ հնչող եկեղեցական երգեցողություն (կամ շարական)» իմաստով. «*Ծառզարթարին ճոկոնակ կասեն*» (Փերիայի Չիգյան). «*Ծառզարթարին էթում ին ժամը, ճոկոնագ ին ասում*» (Փերիայի Ղարղուն). «*Ծառզարթարին ճոկոնակ կանին*» (Փերիայի Հադան): Վանի Խավենց գյուղում *ճոկոնակ ասել* հարադրությանը հոմանիշ է *խաղ ասել*-ը («*Ծառզարթարին կէթի(նք) ժամ, կէլնի(նք) խաղ կասինք*»), Կարինից և Բասենի դաշտից եկածներով հիմնված Ապարանի Նիզավանում՝ *բար խաղալ*-ը («պարել») («*Ծառզառտարին բար զը խաղանկ*»):

Քանի որ Կարնո բարբառին առանձնահատուկ չէ խուլերի ձայնեղացումը, ուստի չի բացառվում, որ *բար խաղալ* հարադրության մեջ առկա է ոչ թե *պար*, այլ *բար* գոյականը: *Բար խաղալու* ավանդույթը պայմանավորված է տոնահանդեսի ընթացքում նոով, չամիչով, ընկույզով, սիսեռով և բնության այլ բարիքներով զարդարված ճյուղեր պտտեցնելով:

Բերդի խոսվածքում կա *ճըռռան ասել*. «*Ձրրզարթարին ճըռռան էն ասըս*»: *Ճըռռան* բնաձայնությանը հոմանիշ է Ագուլխի բարբառի *ճըճանակ* գոյականը՝ «պարզունակ, ինքնաշեն երաժշտական գործիք, որը գործածում են միայն Ծաղկազարդի տոնին»: Այդ մասին Ս. Սարգսյանցը գրում է. «Այդ խաղալիքը բանացնում են երեխայքը միմիայն Ծաղկազարդի օրը և գլխաւորապէս եկեղեցու փարախին»¹⁷: Ծաղկազարդի տոնով պայմանավորված բառաշերտին է առնչվում Արաբկիրի, Բաբերդի, Վանի տարածքներին բնորոշ *առջընդարձ* կազմությունը («հարսի առաջին այցելությունը հայրական տուն Ծաղկազարդին կամ Ղազարոսի հարության շաբաթ օրը»):

Ծաղկազարդի տոնի կերակրատեսակներն անվանող բարբառաբանություններից են՝ *մախուխ // մախուխ արուր* (Եվդոկիա,

¹⁷ Ս. Սարգսեանց, Ագուլեցոց բարբառը (գոկերի լեզուն), Մոսկվա, 1883, էջ 24:

«թթվաշ ճաշատեսակ»), *գ'աննահատիգ* (Ախալցխա, «խաշած ցորեն, որ Օաղկազարդին նվիրում են հարևաններին և հարազատներին»¹⁸) և այլն:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որքան համաժողովրդական և տարածված է տոնակատարությունը, այդքան բազմազան ու հետաքրքիր են դրանց խոսքային արտահայտչամիջոցները:

Օաղկազարդ և *ծառզարդար* կազմությունների համեմատությունից պարզվում է, որ *ծառզարդար* կցական բարդությունն օժտված է առավել լայն տարածագործառականությամբ: Դա էլ իր հերթին խոսում է տոնի համակարգում *ծառ* հասկացության կարևորության և առաջնային դերի մասին:

Haykanush Mesropyan- The Dialect Equivalents of Tsakkazard.-

The article is about the dialect words referring to the glorious entrance of Jesus to Jerusalem. The name Tsakkazard is composed with the main components of “tsakhik” (Arm. flower) or “tsar” (Arm. Tree) added with the second component “zard” or “zardar” (Arm. decoration). The existence of the synonyms of the word “tsakhik” explains the heathern influence of the celebration of the start of spring. As a result of the tree worship the new celebration of “tsarzardar”(decorating tree) was created which is rather common. The comparison of the words Tsakkazard and “tsarzardar”(decorating tree) shows that the word “tsarzardar” (decorating tree) is more common. This fact make us conclude that in the idea of the celebration the concept of “tsar” (Arm. Tree) has more significant role.

Айкануш Месропян-Диалектные эквиваленты Вербного воскресенья.- В статье говорится о диалектных эквивалентах, которые описывают торжественное вступление Иисуса в Иерусалим. Название этого праздника в основном состоит из двух исходных компонентов - цветок или дерево, к которым прибавляются

¹⁸ Տե՛ս նաև Ն. Մկրտչյան, Կարևոր բարբառք, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1952, էջ 129:

существительное *qwrq* (зард) или глагольная основная часть *qwrqrwr* (зардар). Синонимы со словом *δwrhrq* (цветок) символизируют языческие контенты праздника. Название *δwrqrqrwr* отличается наиболее широким распространением. Сравнение названий *δwrhrqrwr* (захказард) и *δwrqrqrwr* (тсарзардар) показывает, что *δwrqrqrwr* (тсарзардар) имеет широкое распространение. Это утверждает, что в концепции системы празднования дерево имеет главную роль.

ՏՈՆԱԿԱՆ ՕՐԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ¹

Հայկանուշ Մեսրոպյան

Տոնակատարություններն ու տոնական հանդիսությունները, ազգային ու ընծայաբերության ծիսական կարգը վաղնջական բնույթ ունեն և հայ ժողովրդի կենցաղի անկապտելի մասն ու ուղեկիցն են: Հեթանոսական հարուստ դիցարանով պայմանավորված բազմաթիվ տոներ՝ հավատալիքների ամբողջությամբ ու ծիսական արարողություններով, ապա նաև համապատասխան բառապաշարով, նախաքրիստոնեական ժամանակներից պահպանվել և հասել են մեր օրերը: Հայտնի է, որ նորակառույց եկեղեցիները հիմնվում էին հեթանոսական մեհյանների և կուռքերի արձանների տեղում, քանի որ դրանք ժողովրդի մեջ ընկալվում էին որպես սրբավայրեր: Այդ մասին Վ. Բդոյանը գրում է. «Մեհյանները հնուց ի վեր եղել են մոնումենտալ կառույցներ, որոնց մեծ մասի հիմքերի վրա քրիստոնեական շրջանում կառուցվեցին եկեղեցիներ ու վանքեր»²: Հին և նոր կրոնների, հեթանոսական և քրիստոնեական մշակույթների, կրթության ու դաստիարակության միաձուլումը չէր կարող չարտացոլվել լեզվի մեջ: Ազաթանգեղոսը և Փավստոս Բուզանդը ևս, վկայելով այս մասին, հավելում են, որ Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեական դաստիարակություն է տալիս հիմնականում քրմերի զավակներին³: Չնայած քրիստոնյաների՝ հին կրոնի հանդեպ ունեցած անհանդուրժողական վերաբերմունքին՝ հեթանոսության տարրերը՝ որպես քրիստոնեական կենսակերպի ու տոների ծիսակարգային բաղադրիչներ, համալրել են քրիստոնյա հայերի եկեղեցական տոնացույցը: Այդպես նորացվել

¹ Տե՛ս Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2014, էջ 97-103:

² Վ. Բդոյան, Հայ ազգագրություն, Ե., 1974, էջ 215:

³ Տե՛ս Ազաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Ե., 1983, էջ 436, Փավստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Ե., 1987, էջ 14:

են Տրնդեզը, մատաղի⁴, ագապիի և այլ արարողություններ: Հայ եկեղեցու տաղավար տոներից Քրիստոսի պայծառակերպության տոնը համընկնում է հեթանոսական Վարդավառ տոնին: Նավասարդի 1-ը, Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի սահմանած կարգի համաձայն, տոնվել է նաև որպես Հովհաննես Կարապետի տոն⁵:

XVIII դ. Միմեոն Ա Երևանցի կաթողիկոսի կողմից հաստատված և Քրիստոսի ծնունդով պայմանավորված տոմարի համաձայն՝ շաբաթվա օրերից առաջինը՝ *միաշաբ(ա)թին* կամ *կիրակին*, նվիրվում է Բարձրյալի հիշատակությանն ու երկրպագությանը⁶: «Քրիստոնեայք, եկեղեցոյ օրինագրութեան հետեւելով, նոյն օրէնքն ընդունեցին եւ ի պատիւ յարութեան Փրկչին՝ միաբանեցան շաբաթը կիրակէի փոխել»⁷: Միաշաբաթն կամ կիրակիի մասին վկայված է. «Միով ատուրբ զկնի շաբաթ ատուր, որ և առաջին օր շաբաթուն, այսինքն՝ եօթնեկի. կիրակէ, այսինքն՝ տէրունական՝ օր յարութեան Քրիստոսի»⁸: Հ. Աճառյանը *կիրակէ* գլխաբառի տակ գրում է, որ այն կազմված է հունարէն «տէր» բառից, նշանակում է «տէրունական» և քրիստոնէության միջոցով տարածվել է մի շարք լեզուներում⁹:

«Կիրակէ անուանեցին հարքն սուրբ, որ լսի օր տէրունի»¹⁰: Հեթանոս հայերը կիրակի օրն անվանում էին արեգական օր¹¹: Հայերենի տարածքային տարբերակներում *միաշաբաթ(ի)* բառին

⁴ Կռապաշտ հայերը զոհաբերության նպատակով որևէ կենդանի էին նետում կրակի մեջ:

⁵ Տե՛ս **Ղ. Ալիշան**, Համապատում, Վենետիկ, 1901, էջ 89-91:

⁶ Տե՛ս Տօնացոյց, հատոր 2, Բ տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1887-ՌՅԼԶ:

⁷ *Միաշաբաթ* կամ *կիրակէ*, «Յոյս», օրագիր բանասիրական, ի տպարանի Արմաշ, 1869, N 36, էջ 149:

⁸ **Գ. Աւետիքեան, Խ. Միրովեան, Մ. Աւգերեան**, ՆՀԲ, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 271:

⁹ Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՆԱԲ), հ. Բ, Ե., 1973, էջ 598:

¹⁰ ՆՀԲ, հ.1, էջ 1100:

¹¹ Տե՛ս *Միաշաբաթ* կամ *կիրակէ*, «Յոյս», օրագիր բանասիրական, ի տպարանի Արմաշ, 1869, N 36, էջ 150:

չենք հանդիպում: Բարբառների մեծ մասում վկայված է *կիրակի* բառը՝ համապատասխան հնչատարբերակներով:

Արարատյան բարբառում *կիրակի* կամ *ջա՛ն-ջա՛ն կիրակի* է կոչվում Քրիստոսի հարության օրը, որը հաջորդում է դժոխքի ավերումը և Հիսուսի թաղումը խորհրդանշող կիսամեռ շաբաթին:

Պոլսի բարբառում *կիրակի* բառը հանդես է գալիս իմաստի ընդլայնումով և նշանակում է նաև «համընդհանուր, համաժողովրդական բնույթ ունեցող տոնական օր»։ համեմատել՝ «*Օր կիրակիին խախկ ըլլա*»¹² (հանդիմանական արտահայտություն):

Որպես «տերունական» բառի հումանիշ՝ արցախցի բարբառախոսները գործառում են *գիրգիրակյան* բաղադրությունը, որը, կարծում ենք, *կիրակի* և *իրիկուն* բառերի ձևաիմաստային ձուլման՝ բաղարկության արդյունք է¹³: Կարելի է ենթադրել, որ այս բաղադրությամբ հատկանշվում է սուրբ համարվող կիրակնամուտը և կիրակնամուտի երեկոյան ժամերգությունը: Արարատյան բարբառում *կիրագմուտ* նշանակում է «շաբաթ երեկոն, որ սուրբ է համարվում»: Ըստ ՆՀԲ-ի՝ «կիրակմուտ. մուտք կիրակէի. երեկոյն և գիշերն շաբաթու, որում լուսանայ միաշաբթին»¹⁴:

Անդրադառնալով կրոնակեղեցական մի շարք բառերի քննությանը՝ Վ. Առաքելյանը հիշատակում է նաև *կիրակի* բառը. «Առաջին անգամ Աստվածաշնչում են գրական քաղաքացիություն ստացել գայիսոն, ...եկեղեցի, եպիսկոպոս, ...կիրակե, ... հեթանոս, սաղմոս, քրիստոնեայ...» բառերը¹⁵:

Հ. Աճառյանն իր ստուգաբանական բառարանում ներկայացնում է *կիրակի* բառի բարբառային պատկերը, որին հավելել ենք բարբառագիտական մենագրություններում, լեզվի ինստիտուտի

¹² Հ. Աճառյան, Պոլսահայ անգիր բանահյուսություն, Երևան, 2009, էջ 158:

¹³ Բաղարկության մասին տե՛ս Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազուլյան, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 47:

¹⁴ ՆՀԲ, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1100:

¹⁵ Վ. Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Ե., 1983, էջ 214:

ձեռագիր նյութերում առկա, ինչպես նաև մեր հարցումների ընթացքում գրանցված հնչատարբերակները.

ա) **արևելյան բարբառախումբ.** *կիրակի*, Կարճևան // *կիրէկի*, Բուրդուր // *կըրակի*, Ագուլիս // *կըրէկի* // *գըրէգի*, Ղարաբաղ // *գէրակէ* // *գիրակէ*, Մեղրի // *գիրաճի*, Կաքավաբերդ, Շամախի // *գըրաճի*, Բերդ // *գըրաճի* // *գիրակի* // *գիրագի*, Գորիս // *գիրագի*, Լոռի.

ա-1) **պարսկահայ բարբառներ.** *կիրակի*, Մարաղա // *կիրակի*, Ուրմիս // *կիրակի*, Սալմաստ // *կըրակէ*, Մուծումբար և այլն:

բ) **արևմտյան բարբառախումբ.** *գիրաճէ*, Տիգրանակերտ // *կիրակը*, Մոկս // *կըրակէ*, Ոզմ // *կիրակի*, Կարին, Ախալցխա // *գիրագէ*, Խարբերդ, Սվեդիս // *գիրէգի*, Ակն // *գիրէգի*, Սեբաստիա // *գիագի*, Խոփա և Բորչկա // *գիյագի*, Ջեյթուն, Համշենի Առդու // *գիյաճի*, Հաջըն // *գիրայի*, Կեսարիա և այլն: Անկարայի թրքախոս հայերը գործածում են *կիրակի* հունարանության *գիրէյի* հնչատարբերակը:

Կիրակի (Վան, Ջուղա, Նոր Ջուղա), *կիրագի* (Մուշ, Ալաշկերտ, Թիֆլիս), *գիրագի* (Երևան, Սվեդիս, Ջեյթուն, Մուչավա, Առտիալ, Ասլանբեկ, Մալաթիա, Նոր Նախիջևան, Պոլիս, Ռոդոսթո, Համշեն, Աշնակ) տարբերակները միաժամանակ բնորոշ են ն՛ արևելյան, և՛ արևմտյան բարբառատարածքներին:

Կեսարացիների կրոնական տոնակարգում կա *գառնէրը գէնուք գիրագի*, որը նշվում է գոհաբերության և ազգային հատուկ ծիսակարգերով: Արարատյան բարբառի *գիրագմուտ* // *կիրագմուտ*-ը հատկանշում է սուրբ համարվող շաբաթ երեկոն: Ընդհանրապես պարսավելի էր սուրբ համարված շաբաթ օրերը աշխատելը, որը պայմանավորված է հրեական սովորույթով: Արաբկիրում այդ օրը բնորոշում են *անեծքնոր*, Պոլսում՝ *մայրը տղան անիծած օր*: Ըստ այդ նախապաշարմունքի՝ բարեկենդանի շաբաթ օրն աշխատողը ենթարկվում է մոր անեծքին և զրկվում աշխարհի բարիքներից:

Կիրակի տերունական օրվանից բացի, բարբառախոս հանրությունը տարվա մեջ առանձնացնում է քրիստոնեական բովանդակություն ունեցող բազմաթիվ տոնական օրեր, որոնք բարբառախոս հայերի բառապաշարում ունեն զանազան հատկանշումներ: Օրինակ՝ Խիանում կոչում էին *նըշով օր*, Ադանայում՝ *հրաշալի օր*, Պոլսում՝ *հրամայված օր* և այսպես շարունակ: *Նըշով* կամ *հրաշալի* օրերի առթիվ կազմակերպվող հանդիսությունները ևս ունեն տարբեր անվանումներ: Օրինակ՝ Արաբկիրի բարբառում որևէ տոնի առթիվ կատարվող խնջույքը կոչվում է *կըթտուք*: Ակնհայտ է, որ կազմված է *կութ* // *կիթ* + *տալ* բառերից, այսինքն՝ «բերքից, այգեկութից հյուրասիրելը, տասանորդ տալը»: Այդ բառով ակնցիներն անվանում են հատկապես անդրանիկ որդու մկրտությունից հետո տանը կատարվող տոնահանդեսը:

Կրոնական տոնակատարության օր են նշում Երզնկայի *մախ օխտը*, Սվեդիայի բարբառի *կըճատ օր*¹⁶ լեզվական միավորները, որոնք հոմանիշ են *կիրակի* բառին: Կարելի է ենթադրել, որ *կըճատ*՝ «կիսատ» են անվանել՝ նկատի առնելով օրվա ոչ ամբողջական աշխատանքային լինելը: Կարինում գյուղական տոնախմբությունն անվանում էին *դ էրի*¹⁷. կարծում ենք՝ տեր > դեր բառի *տիրոջ -դերի* սեռական հոլովածն է, այսինքն՝ «տիրոջ համար կատարվող, տիրոջը նվիրված»: Արարատյան բարբառում գործավում են *ազատ օր* և *կարմիր օր* հոմանիշները, որոնք նորագույն կազմություններ են՝ պատճառաբանված ժամանակակից տոնացույցներով, և միշտ չէ, որ ունեն կրոնակեղեցական բովանդակություն:

Ն. Աճառյանը «Ակումբ» գլխաբառի տակ նշում է *ազում օր* (Մանիսա, Նոր Նախիջևան, Պոլիս, Սեբաստիա), *ազամ օր* (Ադանա, Սվեդիա), *ազան օր* (Զեյթուն) բարբառային կապակցությունները՝ «եկեղեցական մեծ տոնի հանդիսաւոր օր» բացատրությամբ¹⁸:

¹⁶ Տե՛ս **Ս.Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ 2, Ե., 1944, էջ 448:

¹⁷ Տե՛ս **Զ. Մկրտչյան**, Կարնո բարբառը, Երևան, 1952, էջ 134:

¹⁸ ՀԱԲ, հ.Ա, Ե., 1971, էջ 110:

Կեսարացիները գործառուս են պարզապէս *ագուս* կամ *ագուսօր* կցականը («*Այսօր ագուսօր է, ժամը շատ մարդ կըլլա*»):

Կարնո բարբառի Բարբերդի խոսվածքի *հավկուր* անհոդակապ բարդությամբ նշվում է տերունական տոների նախատոնակ երեկոն, որի հիմքում ընկած է այն սնահավատությունը, ըստ որի՝ այդ երեկոները աշխատողներն իրենց ենթարկում են հավկուր դառնալու վտանգի¹⁹: Հավկուր դառնալու անհանգստությամբ պայմանավորված այս նախապաշարմունքով է բացատրվում նաև ադանացի և պոլսեցի կանանց՝ այս ընթացքում երեկոները չաշխատելու պատճառաբանությունը: Կարծում ենք՝ *հավկուր* հասկացության բովանդակությունն առնչվում է հրեաների շաբաթապահության ավանդույթին, որի մասին վկայված է Հին կտակարանի «Մննդոց» գրքում. «Եւ հանգեաւ յաւուրն եւթներորդի յամենայն գործոց իւրոց՝ զոր արար» [Մննդոց, 2. 2] և «Ելից» գրքի տասնաբանյայի չորրորդ պատվիրանում [Ելից, 20. 8]:

Ադանայի և Պոլսի բարբառներում *հավկուր* բառն իմաստային կոնկրետացմամբ է ընկալվում և նշում է միայն Քրիստոսի հարության տոնից մինչև Համբարձում ընկած ժամանակահատվածը:

Հայաստանյայց եկեղեցու կանոնակարգով տարվա բոլոր օրերը հանդիսավոր են և բաժանվում են երկու մասի՝ *տոնական* և *պահոց*, այսինքն՝ տոների նախապատրաստության համար նախատեսված: «Եկեղեցական կանոնների համաձայն՝ յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի և ուրբաթ օրերը պահոց են», – նշվում է «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում²⁰:

Չորեքշաբթի օրը պահք է՝ ի պատիվ Աստվածամոր ավետման, ուրբաթ օրը՝ ի նշանավորումն Հիսուսի խաչելության: Ղարաբաղի բարբառի *պասատոն* իսկական բարդությամբ հատկանշվում են բոլոր պահքատեսակները՝ առանց կոնկրետ օրերի և կերակրատեսակների տարբերակման: Պահոց հանդիսավոր օրերը հայտնի

¹⁹ Նախապաշարմունքի և համապատասխան բառաշերտի մասին տե՛ս «Բանասեր», Վեցհազարեակ յայտնեալ կամ տեսութիւն ռամկական սնապաշտութեան վրայ, Կ. Պոլիս, 1851:

²⁰ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Ե., 2002, էջ 843:

են *աթոռք* || *թալալուսի կիրակի* || *յօթշապաթներաց* (Վան), *վարդավառի* || *եղյակ* || *եղիական* (Վասպուրական), *հոգուպահք* (Մարաշ), *թրթուրի*²¹ (Ակն), *նըվասարդի*²² (Ագուլիս), *կենտապաս* (Երևան), *խեղդ աշուն* || *հորթաթողի*²³ || *հիսնակաց* (Մուշ) և այլ հոմանիշներով:

Կրոնական բովանդակություն ունեցող տոնական օրերն առանձնանում են ոչ միայն իրենց բնորոշ ծիսակարգով, այլև տարբեր տարածքների բնորոշ ավանդույթներով, որոնք էլ պատճառ են դառնում կրոնաեկեղեցական բառերի ու արտահայտությունների ստեղծման:

Բուն բարեկենդանի կիրակի երեկոյան կատարվող առտնին հանդեսը, երբ գերդաստանի բոլոր անդամները հավաքվում են գերդաստանի մեծի օրհնությունն ստանալու և բերանները փակելով Մեծ պահքը դիմավորելու՝ Երևանում կոչում են *բերանփակեք*, Ախալցխայում՝ *պասնուտ*: Պահքի առաջին օրը միմյանց շնորհավորելը Արարատյան բարբառում կոչվում է *պասշնորհավորեք*, Բուլանուխի խոսվածքում՝ *պասքարև*: Մուշում *պասքարև* բառի մաստի մասնավորեցում կա, և նշանակում է ծխական քահանայի տուն գնալով՝ պահքը շնորհավորելը, ինչպես նաև նորափեսաների՝ այդ նպատակով աներանց տուն գնալը: Ակնում և Պրուսայի Ենիձե գյուղում աջը համբուրելու արարողությունը կոչվում էր *ձեռքպագ*: Ըստ ձեռքպագի ավանդույթի՝ Չատկին, կաղանդին, Քրիստոսի ծնունդին, ինչպես նաև Տյառնընդառաջին երիտասարդ-

²¹ *Թրթուրի պահք* արտահայտության շուրջ մասնավոր մի գրույցի ժամանակ Լայդենի համալսարանի հայագետ Հ. Մարտիրոսյանի հետ եկանք այն եզրակացության, որ այս պահքը նվիրված է եղել շերամապահությանն ու շերամի թրթուրներիին: Չօգուտ այս համոզման է խոսում նաև Ակնի՝ մետաքսի ճանապարհի վրա գտնվելը: Չի բացառվում նաև, որ *թրթուրի* կոչվի, որովհետև տարվա այդ օրերին են ծառերը սրսկելով պայքարում թրթուրների դեմ:

²² «... նոյեմբերի 13-ը, երբ նախարաթող է, և երբ վարձված ծառաները արձակվում են»: Սալմաստի թուրքերը ևս գործածում են այս բառը «նախարաթող» իմաստով (տե՛ս ՀԱԲ, հ. Բ, էջ 493):

²³ Նոյեմբերի վերջին կատարվող ծիսական արարողություն, երբ վարձկան հոտաղներն աշխատանքի ավարտից հետո ազատ են արձակվում:

ները կամ նորապսակները գնում են մերձավոր ազգականների տները՝ մեծահասակների ձեռքը համբուրելու՝ ի նշան հարգանքի: Պոլսի բարբառում *ձեռքսագ* բառը իմաստի նեղացման է ենթարկվել: Ըստ այդմ՝ հարսանիքից ութ օր հետո, նաև տոնական օրերին հարսն ու փեսան գնում են հարսի հոր տուն՝ նրա ծնողների ձեռքերը համբուրելու: Մարաշցիներն ունեն *հարբաժատոն*։ Մեծ պահոց առաջին երկուշաբթի օրը կանայք չեն մանում, որպեսզի տարվա ընթացքում գինովցածների չհանդիպեն, քանի որ, ըստ հավատալիքի, նրանք կոտորում են ճախարակը կամ ծռում են ճաղերը:

Տոնական օրերը, ինչ խոսք, առանձնանում են նաև հատուկ կերակրատեսակներով և դրանց համապատասխան բազմաթիվ խոսքային միավորներով, որոնցից հիշատակենք մի քանիսը. *քեշկեզ*²⁴ (Մալաթիա, Ադաբազար), *անուշապուր*²⁵ (Պոլիս, Գյումրի), *ասիլ-բասիլ*²⁶ (Լոռի), *վասիլ* (Ախալցխա), *կուլուլ գաթա* || *զամբոսա* (Երզնկա), *դրրմուզ* || *դարու*²⁷ (Մասուն), *շոշմայոյլ քյոնֆտա* (Սևերեկ, «*Գաղանդին շոշմայոյլ* («քնջուր») *քյոնֆտա գէնինք, գր պածնէնկ*») և այլն:

²⁴ Հավանաբար դա պետք է պատրաստված լինի հատկապես զազարով, քանի որ *քեշիլ* Ադաբազարի բարբառում նշանակում է «ստեպոլին, զազար» (տե՛ս Ն. Ա-ճառեան, Հայերեն գաղափարական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 1109):

²⁵ Նոր տարվա անուշապուր պատրաստելու համար խաշած ցորենով կաթսան մի ամբողջ գիշեր պահում են վերմակների մեջ, որպեսզի հատիկները հնարավորինս խոշորանան: Հաջորդ օրը նորից եփում են՝ խառնելով մի քիչ ալյուր, շաքար, չամիչ, կառին, ընկույզ, նուշ և վարդաջուր: Ամանների մեջ լցնելուց հետո վրան ցանում են դարչին: «Լաւասարդի մէկը, որ մինչև հիմայ տօնում են. տարւայ մէջ այսօր միայն եփում են հերիսան, ինչպէս որ Պօլսում յունուարի 1-ին եփում են անուշապուրը» (ՀԱԲ, հ. Գ, Ե., 1977, էջ 436):

²⁶ Նոր տարուն թխվող մարդակերպ փոքրիկ հաց: Իմաստափոխության հիմուն հույն եկեղեցու Ամանորի առաջին օրվա սրբի՝ *այի վասիլի*՝ սուրբ Բարսեղի անունն է, որին էլ նվիրված են կաղանդի հունարեն երգերը:

²⁷ Նոր տարվա կեսգիշերին թխվող բավականին մեծ հաց, որի մեջ դնում են բարեբախտություն և անհաջողություն խորհրդանշող փոքրիկ իրեր, որոնց պատահական բաշխումով էլ որոշում են տարվա երջանիկին կամ անհաջողակին:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարբառախոս քրիստոնյա հանրության համար տարվա բոլոր օրերը տոնական են կամ տոնի նախապատրաստական, ունեն համաժողովրդական բնույթ և բնորոշվում են բառակազմական ու բառիմաստային առումով հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ բառաձևերով ու արտահայտություններով:

Месропян Айкануш – О диалектных названиях праздничных дней. – В статье рассматриваются диалектные варианты названия праздничных дней. Исследование показывает, что для диалектоговорящей христианской общины все дни года праздничные, которые в диалектах армянского языка выражаются разными интересными словами, фразами и словосочетаниями.

Mesropyan Haykanush – On the Dialectal Names of Holidays. – The article examines the holidays' dialectal names. The exploration shows that for Christians speaking with dialect all days in a year are holidays or have holiday preparation meaning or popular character. Also, all the days are characterized by many word forms and expressions having interesting form of word combinations and meaning.

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ¹

Հայկանուշ Մեսրոպյան

Հիսուս Քրիստոսի վարդապետության հետևորդները կոչվում են քրիստոնյա և դավանում են նրան որպես գերագույն և միակ աստծու: Բարբառախոս հայերի մեծամասնությունը Քրիստոսի վարդապետության հետևորդ է և ունի տվյալ դավանանքով պայմանավորված կրոնական բառաշերտ: Քրիստոնեական դավանանքի հիմքում ընկած են որոշակի համոզմունքներով ու նյութական պարագաներով պայմանավորված մի շարք իրություններ:

Չանց առնելով դարերի ընթացքում բազմազան հարանունությունների կողմից հաստատված ծիսադավանական մի շարք տարբերություններ²՝ կարելի է ասել, որ աշխարհի բոլոր քրիստոնյաների համար հիմնական և ելակետային է խաչի պաշտամունքը³: Չնայած Հռոմեական կայսրությունում այն պատժամիջոց էր, սակայն Քրիստոսի խաչելությունից հետո վերածվում է փրկության և հավիտենական կյանքի խորհրդանիշի: Այս մասին Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև խաչի խոսքը կորածների համար հիմարություն է, բայց մեզ՝ փրկվածներիս համար Աստծո զորություն է»⁴: Աստվածաշնչական հիմք ունեցող խաչի պաշտամունքով և քարոզ-

¹Տե՛ս Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», հրատարակչություն, 2014, էջ 290-293:

²Օրինակ, նվիրապետական կարգ չունեցող բողոքականությունը, որը սուրբ հոգու առաջնորդությամբ է մեկնում Ավետարանը, խաչը չի ընդունում և չի խաչակնքվում՝ դա համարելով հեթանոսական սովորույթ:

³Այս մասին տե՛ս Կ. եպոս. Տեր Մկրտչեան, Քրիստոնեության իսկությունը, Անթիլիաս, 1993: Բ. Եղիայեան, Հայ յարանուանութեանց բաժանումը, Անթիլիաս, 1971 և այլն: Նաև՝ «Զի ճառ յ խաչին՝ կորուսելոցն յիմարութիւն, այլ փրկելոցս մեզ՝ զարութիւն Աստուծոյ» [Ա. Կորնթ. 1.18]: «Եւ հաշտեցուցէ՛ զերկոսին միով մարմնով ընդ Աստուծոյ խաչին և՛ իւրով: Քանզի սպան զթշնամութիւն յանձին իւրում» [Եփես. 2.16]:

⁴Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1997:

չությունը են պայմանավորված ոչ միայն քրիստոնյա հայերի համոզմունքները, այլև ըստ այդմ բարբառային բառապաշար ներթափանցած կրոնական բազմաթիվ բառերն ու բառակապակցությունները, դարձվածքներն ու նկարագրական արտահայտությունները, համեմատություններն ու փոխաբերությունները, առակներն ու ասացվածքները, անեծքներն ու բարեմաղթանքի խոսքերը: Հայրաբանական գրականության մեջ խաչը բնորոշվում է որպես «քրիստոնէից լոյս», «կուրաց առաջնորդ», «մտլորելոց դարձուցիչ», «մանկանց դաստիարակ», «նաւավարաց նաւապետ», «եկեղեցուց հիմն» և այլն⁵:

Խաչ բնիկ հայերեն բառը՝ բազմաթիվ բառաբարդումներով, բարբառային հնչափոփոխակներով ու զուգադրություններով բավականին ընդարձակ տեղ է գրավում Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»՝ 1. «մահապարտներին վրան կախելու փայտ, որ եղաւ յետոյ նշան քրիստոնէութեան», 2. փխբ. «վիշտ, չարչարանք» իմաստներով⁶:

Բարբառային տարածագործառական լայն ընդգրկում ունի գրական հայերենին բնորոշ *խաչ*⁷ անհնչյունափոխ ձևաիմաստային միավորը (Արարատյան, Ջուղա, Փերիա, Ղարաբաղ, Բուրդուր, Թիֆլիս, Կարին, Հաջըն, Համշեն, Մալաթիա, Մոկս, Մուշ, Նոր Նախիջևան, Շատախ, Ոզն, Պոլիս, Ռոդոսթո, Սեբաստիա, Սվեդիա, Սուչավա, Վան, Ասլանբեկ և այլն):

Բարբառախոս մի շարք վայրերում արձանագրված են հնչյունական զուգաբանություններ, որոնք արտահայտված են հիմնականում *ա* ձայնավորի և բառավերջին *չ* շնչեղ խուլի տարբերակչանությամբ: Նկատելի է, որ բառասկզբի *խ* խուլ կոկորդայինը բարբառներում հիմնականում հանդես է բերում կայունություն: Միայն

⁵ «Քրիստոնյա Հայաստան» (հանրագիտարան), Երևան, 2002, էջ 423:

⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, ԵՊՀ, Երևան, 1971-1979, Ե-Կ – 687 էջ, էջ 333-335:

⁷ Հոդվածի բարբառային օրինակները ըստ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» ձեռագիր նյութերի, բարբառագիտական մենագրությունների, ինչպես նաև բարբառախոս վայրերում մեր կողմից կատարված գրառումների:

թրքախոս հայերը *խ* – ի դիմաց ունեն *հ* հազագ, որը բացատրվում է գրական թուրքերենում *խ* բաղաձայնի բացակայությամբ: Բառը հազ (հաչ) ձևով գործածական է ժամանակակից թուրքերենում:

U > ա՛ քմային // *ա՞* // *էյ* // *այ* // *օ* ձայնավորական, *չ > շ* // *ճ* // *ճ՛* շնչեղ բաղաձայնական հնչյունափոփոխակներով, *կ* խուլ բաղաձայնի, նաև *ն* ձայնորդի հավելումով հնչազուգաբանություններ են արձանագրված բարբառախոս մի շարք վայրերում: Սվեդիայի Խտրբեկ գյուղի խոսվածքի *խաշկ* և Քեսաբի բարբառի *խաշկ* հնչազուգաբանությունների բառավերջում ավելացող *կ* խուլը կարելի է բացատրել շնչեղ խուլ *ք* հոգնակերտի խլացմամբ: Մեբաստիայի բարբառի *խանճ* հնչատարբերակում *ն* ձայնորդի առկայությունը հնչյունի հավելման հետևանք է (ինչպես՝ *կանանչ, ճանանչ*): Մյուս տարածքներում ունենք՝ *խա՞չ* (Շատախ), *խաշ* (Ասլանբեկ), *խաճ* (Մուշ, Մարտունու Մադինա, Բուլանուխի Գյաբուլներ, Համշեն, Սասուն, Աշտարակի Լեռնարոտ), *խաճ* (Սասունի Ընգուզնակ և Սադդուն, Խուրթի Շեն և Թադավանք), *խէչ* // *աս խայչ* (Քաբուսիե) և այլն: *U* ձայնավորի քմայնացման ենք հանդիպում (*խաւ՛*) Առտիալում, Տիգրանակերտում, Քեսաբում, Բեյլանում, Չեյթունում, Պարսկահայքում և այլուր: Չեյթունի բարբառում տեղի է ունենում *ա՛* քմայինի անցում *է* պարզ ձայնավորի՝ սեռական հոլովում հանգեցնելով *խէչի* ձևին: Կեսարիայի բարբառի *խաւ՛* քմայինով հնչատարբերակը թրքախոս հայերից անցել է նաև թուրքերին և թրքախոս հույներին: Այնթապում և Բեյլանում *խէչ* հնչատարբերակը բազմիմաստ է և *խաչ* մատնանշելուց բացի, ունի «մոտ» իմաստը՝ *իգօ՛ խէչիս*, այսինքն՝ «արի՛ մոտս»: Արամոյում *խէչ* հնչատարբերակը «ինձ մոտ» նշանակելիս դառնում է *խաւ՛ իս*, իսկ «նրա մոտ եմ գնում» (*<հերթօ՞ւմ ի խաչա>*) նախադասության մեջ՝ *խաչա*: Կարելի է ենթադրել, որ այս արտահայտության իմաստը պայմանավորված է *խաչվել*՝ «հանդիպել», *խաչվերուկ*՝ «երկու ուղիների հանդիպում» բառիմաստներով: Լոռու խոսվածքում *խաչվել* բայն ունի «անակնկալ հանդիպել», «անցանկալի հանդիպել» իմաստները: Տվյալ դեպքում առկա են *խաչ* արմատով նույնանուններ, որոնց իմաստային հիմքում ընդհանուր է *խաչ* առարկայի ֆիզիկական

պատկերը և ամեննին կապ չունի *խաչ* հասկացության քրիստոնեական ընկալման հետ:

Խչ հնչազուգաբանությունն է գրանցված նաև Լոռու Հաղպատ բնակավայրում, իսկ Թիֆլիսի բարբառում այն դարձյալ հանդես է գալիս բազմիմաստությամբ՝ նշանակելով նաև «սրբապատկեր»: Ինչպես նկատելի է, *խաչ* բառի բազմիմաստության առաջացման պատճառը *խաչ* և *սրբապատկեր* հասկացությունների քրիստոնեական ընդհանուր բովանդակությունն է:

Խօջ հնչատարբերակը մենիմաստ է Համշենում, Համշենից, Սամսոնից արտագաղթածներով բնակեցված Աբխազիայի Ալախաձեում, սակայն և բազմիմաստություն է հանդես բերում որոշ բարբառատարածքներում: Այսպես, Ագուլիսում այն միաժամանակ նշանակում է ն՝ «խաչ», ն՝ «եկեղեցի», Ձեյթունում և Ակնում այն երկնային մարմիններից մեկի անունն է, իսկ Ախալցխայում և Երևանում մատնանշում է խաչի նշանով խաղաթուղթը, որին վանեցիներն անվանում են *սպաթի* (կարծում ենք՝ *q* + փարթի // *պարտիա* «հերթական խաղ»): Հմմտ. «*Խաչին գորությունը տերն ի գիղէլըն*» (Արեշ)⁸: Վանում *խօջ* են անվանում խաղողի տեսակներից մեկը: Կարելի է ենթադրել, որ հաղորդության գինին այս խաղողից են պատրաստել, և կիրառության հետևանքով էլ առաջացել է բառի բազմիմաստությունը: Ղարաբաղի և Վանի բարբառներում գործառական են *-իկ*, նաև *-լ-* հավելականով՝ *-լուկ* փոքրացուցիչներով կազմությունները, համապատասխանաբար՝ *խաչիկ* և *խաչլուկ* «խաչ» իմաստով: Վանեցիներն ու նորբայազետցիները *խաչ* բառին հավելում են *ցասման* և *օթյաց* որոշիչները՝ կազմելով *Ցասման խաչ* և *Օթյաց խաչ* մանրատեղանունները, որոնց վերագրում են առանձնահատուկ գորություն: *Օթյաց խաչը* Թադևոս ու Բարդուղիմեոս առաքյալների հանդիպման վայրն է: Ցասման խաչերը այն խաչքարերն են, որոնք տեղակայվում են բնակավայրերից հեռու գտնվող վանքերի մոտ, արտերին հարակա բլուրների վրա և հավատալիքի համաձայն՝ պատվար են դառնում աստծո բարկության առջև՝ պաշտպանելով ցանքսը տեղումներից, ցրտահարությունից

⁸ Ա. Լուսենց, Արեշի բարբառը, էջ 248:

և այլն: «Գրոց բրոցը» այդ մասին գրում է. «Թէ ինչո՞ւ համար ըսուած է ցասման խաչ. վասն զի երբ տարածամ ձին կամ կարկուտ տեղայ..., այն մարդոց ըրածը չէ, Աստուծոյ ցատումն կը համարին. և այդ ցասման դէմն առնելու համար Քրիստոսի խաչին պատկերը կը բարձրացնեն... երկնից առջև»⁹:

Քրիստոնեական ելակետային կամ հիմնական *խաչ* նյութական և առարկայական խորհրդանիշի մեծարման և արժևորման հիմքով է առաջացել հայերի մեջ լայնորեն տարածում ստացած *Խաչատուր* անձնանունը, որից ազուլեցիները կերտել են *Խաչի* և *Խաչատրը*, Արարատյան բարբառախոսները՝ *Խաչիկ*, *Խաչ*, *Խաչօ*, *Խըչօ*, *Խէչան* հատկանունները: Գիրեսունի Գյումուշխանե բնակավայրի հայերի խոսվածքում *խաչատուր*-ը հասարակ գոյական է՝ «աշնանային քաղցրահամ տանձ» իմաստով: Կարելի է ենթադրել, որ տանձի այս տեսակը հասունանում է Խաչվերացի տոնի օրերին: Արևմտյան խմբակցության բարբառներից Տիգրանակերտի և արևելյան տարածքից Շամախիում առկա է *ա՛* ձայնավորի երկարացումով *խաչ* տարբերակը: Նույնահունչ տարբերակը Մուշի և Կարնո բարբառներում այլ բովանդակություն ունի և գործածվում է որպես ասելիքը հաստատելու երդման ձև: Խաչը վկայաբերելու երդման ձևերի հանդիպում ենք նաև բարբառախոս այլ վայրերում: Նոր Նախիջևանում առկա է *խաչը // ախաչը*՝ «խաչը վկա» (=այն խաչը վկա) երդման բանաձևը: Մշեցիները երդվելիս պարզապես ասում են *խաչ*, Սթանոզի հայերը՝ *խաչն-որ*, Կեսարիայի, Պոլսի և Շապին Գարահիսարի հայությունը՝ *խաչ-որ* («-Մի՛ ըսեր, - ըսի թերահաւատութեամբ: - Խաչ որ»)՝¹⁰: Պոլսեցու ասածը հաստատվում է նաև *խաչվոր-մասվոր* հարադրությամբ: Ինչպես նկատելի է, տվյալ դեպքում վկայաբերվում է ոչ միայն խաչը, այլև հաղորդության մասը, այսինքն՝ Քրիստոսի մարմնի խորհրդանիշը, որը ևս, որպես քրիստոնեական խորհրդանշան, առարկայական-նյութական է: Հավարիկում հանդիպում է *խաչը* որոշյալ և շեշտակիր

⁹ Գ. Սրուանձտեանց, «Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մեղի դուռ», Կ. Պոլիս, 1874, էջ 117-118:

¹⁰ **Արամ Հայկազ**, «Ապրող ծառ մը», Երևան, 2012, էջ 128:

բառը, այսինքն՝ «խաչը վկա թող լինի» (օրինակ՝ «*Խաչը, Շամա՛ւ, ախրի* (=ի վերջո) *քու քար սրբոտը տանիլա յի ինձ կիրեզման*»)¹¹: Երզնկացիները երդման համար մի քանի տարբերակ ունեն՝ *խաչո* հարադրությամբ, *խաչօր* կցականով և *խաչօ* արտակարգ հնչյունափոխության ենթարկված տարբերակով: Վանեցիները խոսակցին երդվել են տալիս *իրեստ խաչ խան* նախադասությամբ, պոլսեցիները՝ *երեստ խաչ հանե* հորդորա-հրամայականով, մանավանդ երբ ասված խոսքը համարում են անհեթեթություն:

Խաչ բառով է կազմված Սուրբ խաչին նվիրված տաղավար տոնը՝ *Խաչվերացը*: *Սուրբ խաչ* որոշիչ-որոշյալ բառակապակցությունը խոսակցական հայերենում ձայնավորական և բաղաձայնական հնչյունափոխությունների, *ր* ձայնորդի կորստի հետևանքով դարձել է *սբխէչ // սպխէճ // սպխէջ // սփխէչ* (սուրբ> սբբ + խէչ) և այլն («*Հարսնիքն իմն ընի, սրբխէչը՝ պապինս*», Աշտարակ)¹²: Սուշ-Տիգրանակերտի բարբառախմբի Ալաշկերտի խոսվածքում տոնի անվանմանը համապատասխանում է *ուլնոց* հոմանիշը (թերևս՝ *ուլ* զոհաբերելու սովորույթով պայմանավորված): Մալաթիայի, Եվդոկիայի, Կեսարիայի, Այնթապի հայ և հույն թրքախոսների, նաև թուրքերի շրջանում տարածված է «*Geldi Supheç, yorğani al, içeri geç*» («Եկավ Սփխէչը, վերմակը վերցրո՛ւ, նե՛րս գնա») ասացվածքը¹³, այսինքն՝ «ցրտերն ընկել են, և ավարտվել են բացօթյա գիշերելու օրերը. պետք է ներս գնալ»: Սուրբ խաչին հաջորդող Վարագա խաչի տոնը մարաշցիների շրջանում ունի *Խաչին թևը* անունը: Արևելյան խմբակցության Նախիջևանի բարբառում, ինչպես նաև Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում *խաչ* փոխանվանաբար նշանակում է «սեպտեմբեր» կամ «աշուն»: Բառիմաստի ծագումը առնչվում է Սուրբ խաչ տաղավար տոնի հետ («*Մարտի արևը՝ հարսիս, խաչի արևը՝ աղջրկանս*»)¹⁴:

¹¹ Գ.Տեր-Պողոսյան, Հավարիկի բարբառը, Վաղարշապատ, 1921-1922, գիրք Ա-Բ, էջ 174:

¹² Ա. Ղանալանյան, Հայկական առածանի, Երևան, 1951, էջ 94:

¹³ Ըստ իրանագետ, բ. գ. թ. Վարդան Ոսկանյանի (բանավոր հաղորդում):

¹⁴ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ, էջ 32:

Խաչ բառով են կազմված նաև *անխաչ* (Ախալցխա, Վան)¹ 1) «առավոտյան չխաչակնքված», 2) «չխաչակնքված խմոր» (Ախալցխա, Ջուլամերիկ), *խաչաթոռ* (Արարատյան, Ղարաբաղ)² «խաչի քարե կամ փայտե խնձորաձև պատվանդան», *հազախաչ* (Ղարաբաղ)³ «հազը բժշկող խաչքար», 2) *Հազախաչ*⁴ «սրբատեղիի անուն», *խաչմայր* (Մարաշ)⁵ «աստվածահայտնության տաղավար տոնի խաչալվայի ջուրը», *խաչփաթաթուկ* (Լոռի)⁶ «խաչից նզովված և անդամալույծ դարձած», *խաչհամփուր* (Արարատյան, Մուշ)⁷ «նվիրատվություն» և այլն: Օրինակ՝ «Մըրփիի դուռն էլ առանց *խաչհամփուրի չեն գնում*» (Աշտարակ)¹⁵: Բայագետի բարբառում *խաչհամփուր* հնչատարբերակը կորցրել է կրոնական իմաստը և նշանակում է ընդհանրապես «գթություն, ողորմություն»: *Խաչքավոր* (Բուլանուխ)⁸ «փոխադարձ կնքահայրեր», բարդության որոշչահատկացուցչային բառակապակցական *խաչի քավոր* փոփոխակը Արարատյան, Ղարաբաղի, Մուշի և այլ բարբառներում, Շիրակի խոսվածքում այլ իմաստ ունի և նշում է այն անձը, որը Ջրօրհներին բռնում է օրհնված ջրից հանված խաչը՝ ի տրիտուր եկեղեցու գանձանակին նվիրված գումարի, որը Գորիսում անվանում են *խրչհանէք*:

Այնթապի բարբառի *խաշխար* (<խաչքար) բառով նշվում են «քարե խաչ տնկուած տեղերը, որ կամ գերեզմաններ կրլլան և կամ ուխատեղի»¹⁶: Տվյալ դեպքում *խաչքար* բառը օժտվում է բազմիմաստությամբ:

Վանում, Մուշի բարբառի Ալաշկերտի խոսվածքում *խաչօրհնէք* // *խաչօխնի* բաղադրյալ բառը, որը գրական հայերենում նշանակում է «նորակառույց եկեղեցու խաչերի օրհնություն», բառիմաստի նեղացման և մասնավորեցման հետևանքով հատկանշում է մի ծիսակարգ, որի ընթացքում օրհնվում է հանգուցյալի խաչքար– շիրիմը, որից հետո հոգեհաց է տրվում: Օրինակ՝

¹⁵ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ, էջ 25:

¹⁶ Տե՛ս Այնթապի գաւառաբարբառը, «Բիւրակն» (պարբերական), Կ. Պօլիս, 1900, N 42, էջ 671:

[[http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/byurakn/1900/1900\(42\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/byurakn/1900/1900(42).pdf)]:

«Խարսնիս ձի պիտի, խաչօհնեն՝ իմ խոր ու մոր» (Վան, Ջուլամերիկ)¹⁷:

Բարբառագետ Ա. Հանեյանը նշում է, որ Դիարբեքիր քաղաքի թաղամասերից մեկը տիգրանակերտցի հայերն անվանել են *Խանչափաճ*, ապա և տարակուսում է տեղանվան բացատրության շուրջ՝ ենթադրելով, որ այն հավանաբար *խաչաբակ* բառն է, այսինքն՝ «եկեղեցու բակ»: Դիարբեքիրցիների շրջանում հարցումներ կատարելիս ճշտեցինք այս ենթադրությունը: Այո՛, նախկին *Խանչափաճ*, ըստ ներկայիս դիարբեքիրցիների՝ *Հանչեփեկ* թաղամասն այսօր կոչվում է *Գյավուր մահալլեսի*, որտեղ ապրում են սակավ թվով հայեր¹⁸: Այդ տարածքում է գտնվում վերաբացված Սբ. Աստվածածին եկեղեցին: Ակնհայտ է, որ մասնավոր իմաստից ընդհանուրին անցնելու համաբանությամբ էլ թաղամասն ստացել է այդպիսի անվանում¹⁹:

Խաչվառ գրական փոխառությունը Դողկուզի և Ռշտունիքի խոսվածքներում մնում է անփոփոխ, իսկ Այրարատ, Ուտիք, Կոթի տարածքներում դառնում է *խաչփառ*, Ագուլիսում՝ *խաչվօռ*: Ինչպես հայտնի է, խաչվառը եկեղեցական կամ աշխարհիկ թափորի առջևից տարվող խաչաձև ձողով քառանկյուն խաչադրոշ է՝ վրան տերունական արծաթյա պատկեր, որը կիրառում են եկեղեցական հանդիսությունների ժամանակ: Բարբառախոսներն այն կոչում են *խաչալամ* (Խոյ, Մալմաստ, Քյոռփալու), *խաչալեմ* (Գյումուշխանե, Պոլիս), *խաչալամ* (Կեսարիա): Ա՛ ձայնավորի քմայնացումով

¹⁷ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ, էջ 94:

¹⁸ Ներկայիս դիարբեքիրցիները հիշում են, որ Խաչաբակը եղել է հայ արհեստավորների, հատկապես ոսկերիչների հարուստ թաղամաս: Այսօր նրանք ճանաչում են շատ քիչ թվով հայերի: Դիարբեքիրի հայերը գիտեն պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, մասամբ՝ քրդերեն: Միմյանց հետ հաղորդակցվում են հայերենով, հասարակական վայրերում՝ թուրքերենով: Քիչ չէ նաև ծպտյալ հայերի թիվը: Իրենց ազգային ինքնությունը բացահայտում են հիմնականում տարեց հայերը:

¹⁹ Տե՛ս նաև <http://www.suryaniler.com/suryani-tarihi.asp?id=406> (Հանչեփեկ) <http://www.arasyayincilik.com/tr/kitaplar/gavurmahallesli/85> («Գյավուր մահալլեսի») <http://hurasiv.hurriyet.com.tr/goster/printnews.aspx> (Մկրտիչ Մարկոսյան):

խաչայլամ տարբերակը Կեսարիայի թրքախոս հայերից անցել է նաև թուրքերին և թրքախոս հույներին: *Խաչկալ* կցականը Արարատյան, Ղազախ, Լոռի, Կոթի, Շիրակ, Խոյ, Վան բարբառատարածքներում ունի «եկեղեցու վեմ քարի վրա շինված կառույց», Պոլսի բարբառում՝ «եկեղեցու խորան» իմաստները, իսկ ահա Ղարաբաղի բարբառում *խաչկալ* և *խաչամեղիք*²⁰ բառերը գործածվում են աշխարհիկ՝ «դռան վրայի խաչաձև փայտ» իմաստով: Պետք է հավելել, որ Ղարաբաղի բարբառում *խաչամեղիք* բառը բազմիմաստ է և միաժամանակ նշանակում է «Քրիստոսի խաչելության փայտ», ինչպես նաև «խաչաձև, խաչահանգի»²¹: Այս նույն իմաստն է արտահայտում նաև Սթանոզի *խաչափայտ* բազմիմաստ բառը, որը նախ՝ նշանակում է «ոստայնանկի սանրը շարժող տախտակ», ապա և՛ «դռան վրայի խաչաձև փայտ»²²: Պետք է նշել, որ բարբառային բառարանները նման բացատրություն տալիս չեն հստակեցնում՝ դա փայտյա դռան վրա ամրացված խաչ է, թե փականն է հանդիպակաց փայտի կտորի հետ խաչ կազմում: Առաջինի դեպքում, իհարկե, կունենայինք ծիսաավանդույթային խորը բովանդակություն, որը կարելի է պայմանավորել հինկտակարանյան իրողությամբ: Հայտնի է, որ Եգիպտոսից դուրս գալու նախորդ երեկոյան, երբ եբրայեցիները մորթում են զոհաբերվելիք կենդանին, աստված հրեաներին պատվիրում է. «Եւ առնուցուք մշտիկ զոպայի թաթաւեալ յարեան որ առ դրաւքն իցէ, եւ սրսկեսջիք զբարաւորան եւ զերկոքումքք սեմովք յարենէ անտի որ առ դրաւքն» («Վերցրէ՛ք մի խուրձ ծոթրին. այն թաթախէ՛ք դռան մօտ եղած արեան մէջ եւ դռանով նշան արէ՛ք դռան սեմին երկու տեղ եւ դռան շրջանակի վերելը»²³): «Ելից» գրքից նաև իմանում ենք, որ դռների վրա նշան չունեցող եգիպտացիների տները պատուհասվում են աստծու կողմից: Կարելի է ենթադրել, որ *խաչկալը* կամ *խաչափայտը* դռների վրա դրվել է աստվածային հաճությանն արժանա-

²⁰ Ղարաբաղում նշանակում է նաև «խաչաձև, խաչահանգի»:

²¹ Տե՛ս **Հ. Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան, էջ 453:

²² **Հ. Աճառեան**, Հայերէն գաւառական բառարան, էջ 453:

²³ Ելից, 12. 22:

նալու հավատալիքի հիման վրա և ունի կրոնատեղեցական բովանդակություն:

«Բիւրակն» հանդեսը այս կազմություններին ավելացնում է Համշենի *խաչնիշ*՝ «նիգ», Սվեդիայի *խաչնեւ*՝ «խաչանիշ նշանով առանձնացնել» (*դուռը խաչնեցի*²⁴) և Համշենի, Տրապիզոնի բարբառների *խաչնեւ* բայերը: Համշենի խոսվածքային տարբերակներին բնորոշ *խաչնեւ* բայը «Բիւրակն» հանդեսում տրված է հետևյալ հավելյալ բացատրությամբ. «Գիւղական դռներու նիգերը փայտէ են. երբ հորիզոնական կերպով նիգուի, ուղղահայեաց դրուած փայտի մեջէն խաչ մը կը ձեւանայ. ասկէ առնուած է *խաչնիչ*, *խաչնեւ* բառերու շինուածքը»²⁴: Չի բացառվում, որ Սվեդիայի բարբառի *խաչնեւ* բայն ունենա նաև «փակել» բացատրությունը: Կարելի է ենթադրել, որ Կիլիկիայի հայերը տների դռները խաչանշելու սովորույթ են ունեցել, որն էլ հիմնավորվում է հրեաների հինկտակարանյան փորձով: Հայտնի է, որ խաչակիրների ճանապարհին անցնում էր նաև Կիլիկիայով: Խաչակիրները հալածում էին այլադավաններին, հարձակման ենթարկում մահմեդականների բնակավայրերն ու տները, որոնցից առանձնանալու, իրենց քրիստոնյա լինելը հայտնելու համար էլ տեղի հայերը խաչանշել են իրենց տների դռները: Կրոնական բառապաշարում *խաչ*-ը ենթարկվել է բառիմաստի փոխհաջորդման, այսինքն՝ տեղի է ունեցել «...բառի հին (աշխարհիկ – ՀՄ) իմաստի կորուստ, «մահացում» և նոր իմաստի ձեռքբերում, այլ կերպ ասած՝ բառի նախնական իմաստի փոխարինում նոր ուղղակի իմաստով»²⁵: Մի շարք կազմություններում *խաչ* բառն ի հայտ է գալիս իր նախնական՝ աշխարհիկ բովանդակությամբ: Նշենք, որ Ղրիմի, Նոր Նախիջևանի հայերը *խաչ* բառը աշխարհիկ բառաբարդումներում չգործածելու սովորույթ են ունեցել: Օրինակ, «խաչաձև, խաչահանգի» բառին որպես հոմանիշ գործածում էին *խաչմերերկինք*, այսինքն՝ «խաչ մեր

²⁴ **Բարզէն Վարդապետ**, Ճանիկի վիճակին մէջ գտնուող համշենցիներու գաւառաբարբառը, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1899, N 41, էջ 655

[[http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/byurakn/1899/1899\(41\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/byurakn/1899/1899(41).pdf)]:

²⁵ **Է. Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ, 1987:

երկինք» արտահայտությունը: «Մասսեաց աղանին» այդ մասին գրում է. «Բարեպաշտական երկիւղածութենէ մը առաջ եկած է ռամկաց մէջ այս սովորութիւնը, և սուրբ խաչին անունը հասարակ բաներու վրայ գործածել չուզելով, բայց և նշանակութիւնը պահպանելով՝ ըսեր են՝ խաչ մեր յերկինք»²⁶: Խարբերդի բարբառի *խաչկպել* բայը ևս ունի աշխարհիկ բովանդակություն՝ «ձեռքերը խաչաձևել»: Աշխարհիկ բովանդակություն ունեն նաև՝ *խաչք* (Կարին, «երդիկ»), *խաչմերգուք* (Կեսարիա)//*խաչահանգի* (Արարատ-յան)//*խաչուբարք*//*խաչմաչիկ*//*խաչմերուկ* (Երևան) //*խաչկրմաչիկ* // *խաչափառք* (Ղարաբաղ, «խաչաձև»), *խաչկապ* (Բուլանուխ, «բանջարի խաչաձև կապոց»), *խաչկու* (Բաբերդ, «տանիք կապելու ձև»), *խաչերկաթ* (Չարսանջակ, Խնուս, Սթանոզ)// *խաչըրկակ* (Վան)// *խառճավաթ* (Շատախ)// *խըճերկաթ* (Լոռի)// *խաչերգաթ* (Կարին)// *խարջըրկաթ* (Բուլանուխ)՝ «թոնրի վրա դրվող խաչաձև երկաթ» և այլն:

Ստ. Մալխասյանցի բառարանն ընդգրկում է *խաչ* բառով կազմված 146 գլխաբառ (աշխարհիկ բովանդակությամբ՝ ընդամենը 32-ը), որոնց մեծ մասը բնորոշ է նաև բարբառային հայերենին²⁷: Արդվինի բարբառի *խաչօրթի*-ն հոմանիշ է *հոզեզավակ* բառին («Քու խաչօրթին էլ գալիս է»)՝²⁸:

XIX դարի 20-ական թթ. Սալմաստից, Խոյից, Մարաղայից գաղթած Եղեգնաձորի Գանձակ գյուղի բնակիչները *խաչերկաթ* բառի *խաչըրկաթ* ձևն ունեն ավելի լայն իմաստով՝ հասկանալով ընդհանրապես «կասկարա», իսկ Բուլանուխի խոսվածքում այն վերածվել է *խաչկաթ* (= խաչ + (եր)կաթ) ձևի: Իմաստային նույն դաշտին են պատկանում աշխարհիկ բովանդակությամբ *խաչ գալ* (Ագուլիս, «կոճակի չորս անցքերը խաչաձև կարել») և *խաչմերուկ*

²⁶ Տե՛ս Աշխարհաբառ լեզուին քանի մը բառերը, «Մասեաց աղանի», Թեոդոսիա, 1863, N 13-14, էջ 202

[[http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Masyac%20axavni/1863/1863\(13-14\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Masyac%20axavni/1863/1863(13-14).pdf)]:

²⁷ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, էջ 241-244:

²⁸ Ս.Ալավերդյան, Արդվինի բարբառը (թեկն. ատենախոսություն), Երևան, 1970, էջ 193:

գգել (Երևան, «կեռ մայր կոճակները իրար անցկացնել») հարադրությունները: Բառիմաստային անհամապատասխանություն կարելի է նկատել Բուլանուխի *խաչգաթա* բառի «եռանկյունաձև գաթա» բացատրության մեջ. խաչ, խաչվող «քառանկյուն» ենթադրող հասկացությունը բացատրված է «եռանկյուն» բաղադրիչով, թեև չի բացատրում, որ եղած լինի եռանկյունաձև գաթայի վրա խաչ պատկերելու սովորույթ: Պոլսի բարբառի *խաչկաթա* գուգաբանությունը հատկանշում է *խաչաձև* գաթան: *Խաչ* ձևաիմաստային միավորին հարակից աշխարհիկ բովանդակություն ունցող բազմաթիվ բառերում ու արտահայտություններում երբեմն առկա է աշխարհիկ և կրոնական բովանդակության փոխկապակցվածություն և ներքին իմաստային կապ: Հետաքրքիր բացատրություն ունի Արարատյան բարբառի Երևանի և Աշտարակի խոսվածքներին բնորոշ *խաչափունջ*՝ «փնջած հասկ» բառը, որի աշխարհիկ իմաստով է պայմանավորված *խաչփունջ* բառի կրոնական իմաստը: Պ. Պռոշյանի «Սոս և Վարդիթեր»-ի ծանոթագրություններից մեկում գրված է. «Երբ արտը քաղում են, վերջացնում, ցորենը խաչաձև կապում են և բերում տիրոջը նվիրում, նրանից միրգ առնում որպես ընծա, այս սովորությունը մտել է և այգիների աշխատանքների ժամանակը. երբ մի այգին մշակելուց ավարտում են, այն երեկոյին միրգ են բերում և ուրախություն անում. այս ուրախության անունն էլ մնացել է *խեչփունջ*, այսինքն՝ *խաչփունջ*»²⁹: Ըստ այսմ՝ խաչփունջն ինչ-որ առումով պարունակում է և՛ ագապիի, և՛ ժամոցի կրոնական իմաստ: *Խաչափունջ* բառին հոմանիշ կարելի է համարել Բուլանուխի խոսվածքի *խաչբուս* («ցորենի ձողուններից խաչաձև հյուսվածք»), Արցախի *խաչբուռ* կազմությունները: Հմմտ. «*Խաչբուռ* շինի, սոճին տրնի» (Արցախ)³⁰: Ինչպես նկատում ենք, տվյալ դեպքում ևս կրոնական իմաստ ունեցող *խաչբուռ* բառի մեջ չի գործել Աճառյանի օրենքը:

Բազմիմաստություն է հանդես բերում հիմնականում արևելյան խմբակցության բարբառներին բնորոշ *խաչագող* բարդ

²⁹ Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, «Հայաստան» հրատ., 1974, էջ 90:

³⁰ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991, էջ 4:

բառը՝ 1) «առերևույթ բարեպաշտ, իրականում խաբեբա» (Երևան), 2) «սալմաստցիներին տրվող մականուն» (Թիֆլիս), 3) «խաբեուրջամբ փող կորգող» (Արարատյան, Ղազախ, Կոթի):

Խաչ բառի իմաստային դաշտին են հարում *փուշփուշանք*, Պոլսի միջբարբառ («խաչի վրա գետեղված զարդարանքներ, ճառագայթներ»), *սփիռն*, Ղարաբաղ («պատարագիչ քահանայի ձեռքի խաչ») և *փուփալա*, Թիֆլիս (1. «խաչ», 2. «սուրբ») բառերը:

Ինչպես նշեցինք, բարբառային բառապաշարը հարուստ է *խաչ* բառով կազմված դարձվածքներով, նկարագրական բառակապակցություններով, համեմատություններով ու փոխաբերություններով և այլ կազմություններով:

Կարևոր բարբառի Շիրակի խոսվածքում *խաչը կոթով կուլ կուտա* փոխաբերությանը հոմանիշ է Պոլսի բարբառի *խաչը ծոցեն // գրպանեն կը հանէ* դարձվածքը՝ «առաքինի և բարեպաշտ է ձևանում, սակայն վարպետորդի է» իմաստով: Գրական հայերենի *իր խաչը կրել* դարձվածքին հոմանիշ է *խաչը քաշել* հարադրությունը՝ «իրեն պատուհասած տառապանքը կրել» իմաստով, որը լայն տարածագործառականություն է հանդես բերում ոչ միայն բարբառներում, այլև ժողովրդախոսակցական լեզվում: *Խաչով խաչվել*-ն ունի «մի բան մեկի ձեռքով անհայտանալու» իմաստ: Թիֆլիսի բարբառում հոգեկան հավասարակշռությունը կորցնելուն ասում են *խաչեն բռնվիլ*, այսինքն՝ «դիվահարվել», Ղարաբաղի բարբառի *մի խաչով թաղվիլ* արտահայտությունը միևնույն իրավիճակի մեջ գտնվելու նշանակ է: «Ո՞ր խաչիցն է»,- հարցնում են երևանցիներն ու արցախցիները՝ ի զարմանս անսպասելի արարքի:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենի տարածքային տարբերակներում «խաչ» բառը կիրառվում է միայն հնչունական տարատեսակներով: Բարբառային բառապաշարը հարուստ է *խաչ* բառով կազմված բառակապակցություններով, դարձվածքներով, նկարագրական արտահայտություններով, փոխաբերություններով և լեզվական այլ միավորներով:

Айкануш Месропян- Лексические выражения христианского основного символа в армянских диалектах.-В статье сделаны наблюдения над диалектными выражениями основных символов, относящихся к христианству, таких как Иисус, христианин, верующий, крест, а также над языковыми единицами, относящимися к религиозным понятиям и их эквивалентам. Исследования показывают, что в региональных версиях армянского языка слово “хач” (крест) употребляется только фонетическими разновидностями. Лексика армянских диалектов богата идиоматическими словосочетаниями, интересными фразами, метафорами, сравнениями и другими языковыми структурами со словом “хач”.

Haykanush Mesropyan- Lexical expressions of the christian basic symbol in armenian dialects.- The article makes observations on the dialect expressions of the main symbols referring to the Christianity such as Jesus, Christian, believer, cross, as well as the linguistic units relating to the religious concepts and their equivalents. The studies show that the word "khach" (Cross) is used with its phonetic variations. The dialectal in the article vocabulary is rich with linguistic compound units with the word "khach" such as metaphors, descriptive devices, word combinations, comparisons and others.

ԱՆՏԻՈՔՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌԱՄԻՄԻ ԱՐԱԲԱԿԱՆ
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Սոնա Միքայելյան

Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառություններն առանձին ու համակողմանի չեն ուսումնասիրվել, քանի որ հայ բարբառագիտության հիմնական նպատակը եղել է հայերենի տարածքային միավորների հայտնաբերումն ու գիտական գրանցումը, որը, ի դեպ, այսօր էլ օրակարգային է: Հետազոտողները հաճախ բավարարվել են տարածքային այդ տարբերակներում առկա օտար փոխառությունների բառացանկեր ներկայացնելով: Մինչդեռ հավաքվել է բավական նյութ, որի բազմակողմանի քննության արդյունքներն անհրաժեշտ են ոչ միայն հայ բարբառագիտությանը:

Նյութի ոչ բավարար ուսումնասիրված լինելու պատճառով, կարծում ենք, հայերեն բարբառների օտար փոխառությունների վերաբերող հարցերում հեղինակավոր ուսումնասիրողներն անգամ երբեմն կատարում են համապատասխան փաստերով չհիմնավորված եզրակացություններ: Ա.Ղարիբյանը, օրինակ, Անտիոքի բարբառախմբի Արամոյի խոսվածքի² վերաբերյալ գրում է. «Արամոյի բարբառում արաբերեն բառերը կարելի է հաշվել հազարներով, իսկ հայերեն բառերը՝ շուրջ հազարի սահմաններում: Սակայն այդ բառերը կազմում են կենսական անհրաժեշտություն ներկայացնող բառապաշարը, այսպես կոչված բառային հիմնական ֆոնդը»³:

¹ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Ատոլիկ» հրատ., 2014, էջ 120-126 :

² Հայերենի բարբառային միավորների անվանումները ներկայացնում ենք ըստ բազմահատկանիշ վիճագրական դասակարգման սկզբունքի. տե՛ս Գ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 132-136:

³ Ա.Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Ե., 1958, էջ 10:

Հեղինակի կողմից, իհարկե, թվերը չափազանցված են: Անտիոքի բարբառային միավորների գիտական հետազոտություններում արաբական փոխառությունների ամենաձավալուն բառացանկեր ներառում են Քեսաբի (մոտավորապես 600 բառային միավոր)⁴ և Սվեդիայի (մոտավորապես 300)⁵ խոսվածքներին նվիրված մենագրությունները: Թեպետ նշված աշխատանքների հեղինակները գրում են, որ արաբական փոխառությունների թիվն այդ բառացանկերում կարելի էր ավելի մեծացնել, բայց, իհարկե, ոչ հազարներով: Բացի այդ՝ Անտիոքի հայերեն բարբառախմբի բառապաշարում քիչ չեն նաև բառային հիմնական ֆոնդին վերաբերող արաբերեն բառաձևեր, ինչպես՝ *սսմս* «1. հորեղբայր, 2. աներ» – արաբ. ‘amm, *սսմս* + ունք «հորեղբայրենք» – ‘amm + -ունք, *խան* «մարդ» – insān, *սսլսս* «մարդկություն» – ‘ālam «1.աշխարհ, 2. ժողովուրդ, հանրություն», *սսլուտ (սսիլաթ)* «շատվոր, տոհմ» – ‘ā’ila, հզն. ‘ā’ilāt «ընտանիք, տոհմ, ազգանուն», *համար* «լուսին» – qamar, *մահդու* «ստամոքս» – ma’ida, *հարբ* «գերեզման» – qabr, *հալ* «ասաց» – qāla «1.ասել, խոսել, 2. ասաց» և այլն:

Ա. Ղարիբյանի դիտարկումը, կարծում ենք, հենվում է Արամոյի բնակիչ երկլեզվյա անհատի մատուցած նյութի վրա (ավելի մանրամասն՝ ստորև):

Ա. Ղարիբյանը Արամոյի խոսվածքի 70, 80, 90 բացարձակ, ինչպես նաև դասական թվականներ նշանակող բառերը համարում է արաբերեն, սակայն դրանք որևէ ձևով (հայերեն տառադարձմամբ կամ արաբական գրությամբ) իր հիշյալ աշխատանքում արտահայտված չեն⁶: Մինչդեռ Անտիոքի բարբառային միավորների մյուս հետազոտողները, իրենց աշխատանքներում բերելով այդ ձևերը՝ *յրթմրշ*, *սսբզսն*, *դոհզան* և –ինչա մասնիկով կազմված

⁴ Տե՛ս **Յ.Չոլաքեան**, *Քեսապի բարբառը*, Ե., 2009, էջ 310-341:

⁵ Տե՛ս **Տ.Անդրեասյան**, Սվեդիայի բարբառը, Ե., 1967, էջ 168-187:

⁶ Տե՛ս **Ա. Ղարիբյան**, նշվ. աշխ., էջ 10, 34:

դասական թվականները՝ իքինջա, ուշունջա և այլն, նշում են դրանց թուրքական ծագումը:

Որոշ վերապահությամբ, կարծում ենք՝ կարելի է ընդունել Ա. Ղարիբյանի այն տեսակետը, ըստ որի՝ Արամոյի (նաև բարբառախմբի մյուս խոսվածքների) «քերականական կառուցվածքի մեջ արաբերենի հետք չկա»⁷:

Ինչպես հայտնի է, արաբերենը թեքական լեզու է, իսկ հայերենը՝ կցական: Երկու լեզուներին (նաև բարբառներին) էլ, սակայն, բնորոշ է նախահար և վերջահար ածանցումը, այսինքն՝ մասնիկների կցումով նոր բառաձևերի ստեղծումը: Անտիոքի բարբառախմբում արաբերենի այդպիսի մասնիկների գործառություն չենք գտնում:

Բառարմատների կառուցվածքային յուրահատկությունների առումով ևս հայերենը և արաբերենը խիստ տարբեր են: Հայերենը վանկային կամ բաղաձայնաձայնավորային, իսկ արաբերենը բաղաձայնական տիպի լեզու է⁸: Այս առումով իրենց մայրենի լեզուներից չեն տարբերվում նաև Անտիոքի հայերեն բարբառները և արաբերենի սիրիական բարբառը: Այդ է պատճառը, որ Անտիոքի հայերեն տարածքային տարբերակներն արաբերենից բառարմատներ՝ որպես այդպիսիք, չեն կարող վերցնել, քանի որ արաբերենի արմատի իմաստի հիմնական կրողը եռաբաղաձայն հաջորդակա-նությունն է, որ ձևաիմաստային կոնկրետություն է ստանում այս կամ այն ձայնավորի (ձայնավորների) ներառմամբ, այսինքն՝ վանկի (վանկերի) ձևավորմամբ (օր.՝ *ğis* արմատից՝ *ğalis* «նստող», *ğalis* «հարևան», *mağlis* «խորհուրդ» և այլն): Այդ իսկ պատճառով թեև արաբերեն բառը հաճախ Անտիոքի հայերեն բարբառային միավորներ է թափանցում խոսքի շղթայում ձեռք բերած իր ձևաբանական դրսևորմամբ, բայց փոխառու լեզվում (բարբառում) ընկալվում է որպես ուղիղ բառաձև՝ արմատ: Այսպես՝ Քեսաբի, Սվեդիայի բառապաշարում առանձին դեպքերում արաբերենի հոգնակի թվով բառաձևերը, ընկալվում են որպես եզակի թվով

⁷ Նույն տեղում, էջ 10:

⁸ Տե՛ս **Г. Джаукян**, *Универсальная теория языка*, Е., 1999, էջ 106:

բառեր՝ *ուսուլ* «կանոն, կարգ» – ծագում է արաբ. *ʿuṣūl*, «կանոններ, դրույթներ» ձևից, որը *ʿaṣl* բառի հոգնակին է, *հուտըտ* «սահման» – *hudūd* «սահմաններ», եզ. թ. *ḥadd*, *կըրոշ* «դրուշ, դրամի տեսակ» – «դրամներ», *զուրս*, եզ. թ. *qirṣ*, *հալադիլ* (հալալկա) «շրջապատել» – *halaq*, եզ. թ. *halqa* «1. մատանի, օղ, 2. օղակ» և այլն:

Արաբական փոխառությունների մի մասը ժամանակի ընթացքում հիմնական բառապաշարի անդամներ են դարձել և նույնպիսի բառակազմական կառույցների մեջ են մտնում, ինչ և բնիկ բառերը, ինչպես՝ *հասլ-իլ* «պարանով կապկպել» – *ḥabl* (պարան), *սապունուտ/-տո* «օձառոտ» – *sābūn* (օձառ), *սնմ-ունք* «հորեղբայրենք» – *ʿamm* (հորեղբայր), *կուպ-իկ* «փոքր գմբեթ» – *qubba*, *խալէս* «ազատ» – «1. մաքուր, անկեղծ, 2. ազատ», *խսլիսիլ* «ազատել» – *xalaṣa* «1. մաքուր, անկեղծ լինել, 2. ազատ լինել» և այլն:

Հատկապես բայական ձևերում համապատասխան իմաստներն արտահայտվում են ոչ թե մասնիկների կցումով, այլ՝ նկարագրական եղանակով: Կազմվում են հիմնականում հարադիր բարդություններ, ինչպես՝ *հսվմ ինիլ* (ինիլ < անել) «մարսել» – արաբ. *ḥadṣm* «մարսողություն», *սջսլսիլ ինիլ* «արագ անել, արագացնել» – *ʿaḡala* «արագություն, աճապարանք», *կսպըլ ինիլ, ընել* (ինիլ, ընել < լինել) «ընդունել» – *qābil* «ընդունող, դիմավորող (լինել)», *իֆթարի ինիլ* «նախաճաշել» – *ifṭar* «նախաճաշ» և այլն:

Հ. Չոլաքյանն առաջին տիպի կազմությունները համարում է արաբերենից անմիջական փոխառություններ, իսկ վերջինները՝ թուրքերենի ազդեցությամբ կազմված ձևեր⁹: Սակայն, ինչպես հայտնի է, հայերենին նույնպես բնորոշ է բայիմաստի նկարագրական ձևերով արտահայտվելը, և դրանք ոչ միշտ են նորաբանություններ:

Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները աշխատել ենք դասակարգել ըստ իմաստային-թեմատիկ խմբերի, որի համար հիմք են ծառայել Գ. Ջահուկյանի կազ-

⁹ Տե՛ս ԅ. Չոլաքյան, նշվ. աշխ., էջ 183:

մած քսաներեք համապատասխան խմբերը¹⁰: Հեղինակն առաջնորդվել է ընդհանուր լեզվաբանության մեջ ընդունված սկզբունքներով, որոնք արտացոլված են Դ. Բաքի բառարանում¹¹. այդ պատճառով է, որ բաժանումները (22 խումբ) միմյանցից գրեթե չեն տարբերվում: Գ. Ջահուկյանը նույնպես բառապաշարը դասակարգում է ըստ բառիմաստային մերձավորության, բացառությամբ իր կողմից ավելացրած 23-րդ խմբի (դերանուններ և մասնիկներ), որտեղ բառերն ընդգրկվում են խոսքիմասային ընդհանրության սկզբունքով¹²: Այս խմբերում աշխատել ենք ներառել Անտիոքի հայերեն բարբառախմբում առկա արաբական փոխառությունների՝ մեր ձեռքի տակ եղած ողջ նյութը, որի հետազոտությունը թույլ է տալիս կատարել որոշ եզրակացություններ:

Խնդրո առարկա բարբառախմբի միավորների արաբական փոխառություններն ընդգրկվում են հիշյալ բոլոր խմբերում: Խոսվածքների բառապաշարում արաբական փոխառություններից, ինչպես և պետք էր սպասել, առավել մեծ թիվ են կազմում կենցաղային իրերի և հասկացությունների անվանումները՝ ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում, ամանեղեն, հագուստ, անձնական զարդարանք, ինչպես նաև երկրագործական, բուսական աշխարհին վերաբերող բառերը, ինչպես *ըրրոզ* «բրինձ» – արաբ. *urz*, *մըշմէշ* «ծիրան» – *mišmiša*, *պէտիէխ* «սեխ» – *battix*, *թէնճերու* «կաթսա» – *tangara*, *շւրպսիթ* «օշարակ» – *šarbāt*, դարպուշ «գլխարկ» *կումաշ* «կերպաս» – *qumāš* «1.կտոր 2.կտավ», *ճուրպպ* «գուլպա» – *ğaurab*, *շրրըտ* «ժապավեն» – *šarīt*, *բահուն* «ռեհան» – *rihān*, *զընպօր* «իշամեղու» – *zunbūr*, *հւյլըզուն* «խխունջ» – *halazūn* և այլն:

Քանի որ նշված վայրերի հայ բարբառախոսները բնակվում են օտար պետության մեջ, հասարակական հարաբերություններ,

¹⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 204-222:

¹¹ 10 Տե՛ս C.D.Buck, *A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages*, Chicago-London, 1965:

¹² Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն...*, էջ 206:

պետական, սոցիալ-տնտեսական կառույցներ, օրենսդրական-իրավական հասկացություններ և այլն նշանակող բառերը նրանք հիմնականում փոխառել են արաբերենից. *միտրր* «կառավարիչ» - արաբ.՝ *mudīr*, *մէջլրս* «ժողով» - *mğlis*, *կատա* «դատավոր» - *qāḍin* և այլն: Հնարավոր է նաև, որ այս խմբերում տեղ գտած արաբերեն ծագումով որոշ բառեր ժամանակին փոխառվել են օսմանյան թուրքերենից:

Ուշագրավ է, որ խոսվածքում, թեկուզ երկու բառաձևով, ներկայացված են լեզուներում ամենադժվար փոխառվող քերականական-բառային միավորները՝ դերանունները՝ դէր «ուրիշ» - *ğayr* «1. ուրիշ, 2. բացի», *ֆըլուն* - *fulān* «այսինչ, ոմն» (Քեսաբ), *դսյր* (դէրու) «ուրիշ, այլ» - *ğayr* «1. ուրիշ, 2. բացի» (Սվեդիա): Բարբառախմբի արաբերեն փոխառյալ բառապաշարում առկա չեն միավորներ ու տասնյակներ արտահայտող քանակական թվականները: Կրոնական ոլորտի փոխառությունները վերաբերում են իսլամին, իսկ քրիստոնեական հասկացություններ նշանակող արաբական տերմինները բարբառախմբում, բնականաբար, գրեթե բացակայում են: Թեպետ հայերեն հիշյալ տարածքային միավորներում առկա են արաբական այնպիսի փոխառյալ բառեր, որոնց արտահայտած կրոնական հասկացությունները (աստված, չարք, անեծք, հրեշտակ և այլն) ընդհանուր են երկու ժողովուրդների ըմբռնմամբ, սակայն հայ բարբառախոսները արաբական տերմինները, գործածում են իսլամի համատեքստում, իսկ քրիստոնեության ավանդական հասկացությունների բարբառային անվանումները՝ քրիստոնեական. *սսգսմ*, *նահլուօթ* «անեծք» - հայ. *էնիէսգ*, *նահլաղիլ* «անիծել» - հայ. *էնիծիլ*, *պէրէքի* «օրհնություն» - *ուրթնութէն* և այլն:

Անտիոքի, հատկապես Սիրիայի հայերեն բարբառային միավորներում, ինչպես, օրինակ, Քեսաբի խոսվածքում, դիտվում է հետևյալ երևույթը: Որոշ փոխառություններ, անգամ առօրյա կենցաղին վերաբերող, գրական արաբերեն ձևեր են, մինչդեռ սպասելի էր, որ դրանք հայերը պետք է վերցնեին իրենց անմիջական հարևանների բարբառից՝ սիրիական արաբերենից: Այսպես՝

նիկդի «կետ, վերջակետ» – գրակ. արաբ.՝ *nuqta*, Սիր.բրբ.՝ *ni'ta*: Մի շարք հայ հեղինակներ (Հ. Թովուզյան, Հ. Չոլաքյան, Տ. Անդրեասյան, Ա. Փաշայան և ուրիշներ) գրում են, որ մինչև օսմանյան լծից ազատագրվելը (XX դ. 20- ական թթ.) Քեսաբը, օրինակ, իր շրջակա փոքր գյուղերով հայախոս էր: Նույնիսկ 1920-ական թթ. հետո շրջան թափանցած ալևիները հայերի հետ հաղորդակցվում էին նրանցից սովորած Քեսաբի խոսվածքով¹³:

Կարծում ենք՝ նշված երևույթի պատճառը հետևյալն է: Թուրքական լծից ազատագրվելուց հետո Սիրիայում բացվող պետական ուսումնական հաստատությունների լեզուն դարձավ արաբերենը (մինչ այդ թուրքերենն էր), և դպրոցներում հայերենին հատկացվող մի քանի ժամերը չեն օգնում հայերենի և Անտիոքում նրա տարածքային տարբերակների աստիճանական նահանջի կասեցմանը: Այսօր արդեն հայ երկլեզվյա անհատները տեղի մայրենի խոսվածքով խոսելիս ոչ միայն արաբերեն նոր բառեր են օգտագործում, այլև հին փոխառություններն արտասանում են կա՛մ զուտ գրական, կա՛մ գրական խոսակցական տարբերակներով: Ահա թե ինչու Ա. Ղարիբյանը Արամոյի խոսվածքում արաբերեն փոխառությունները հաշվում էր հազարներով: Անտիոքում երկլեզվության աճը նպաստում է տեղի հայերեն խոսվածքների վերացմանը և, իհարկե, սպառնալիք է նաև գրական արևմտահայերենի համար:

Микаелян Сона – Формально-смысловое исследование арабских заимствований в армянской диалектной группе Антиохии. – Армянские диалекты Антиохии не являются заимствованиями из арабского языка корневыми словами, так как они обычно переходят в другой язык со своим морфологическим проявлением. Но в данном языке они воспринимаются как корневые слова. Некоторые такие формы проникли в основной лексикон диалектов Антиохии и также проявляют себя как коренные слова.

¹³ Տե՛ս Հ. Թովուզյան, *Սիրիայի և Լիբանանի գաղթօջախների պատմություն*, Ե., 1986, էջ 214-232:

Mikayelyan Sona – A Morphological and Semantic Overview of the Arabic Borrowings in the Group of Armenian Dialects in Antioch.

– Arabic roots, as such, have not been borrowed by the Armenian dialects of Antioch as they usually penetrate into another language as a morphologically inflected word-forms used in speech. But in the new language, they are perceived as non-inflected word-forms or roots. A number of similar wordforms have penetrated into the main vocabulary of Antiochian dialects, and they are used as native words in relevant structures.

**ԳՈՒՆԱՆՈՒՆԵՐԸ ՊԱՐՄԿԱՀԱՅ ՏԱՐԱԾՔԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ
ՕՐՀՆԱՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՆԵԾՔՆԵՐՈՒՄ¹**

Լիլիթ Տեր-Գրիգորյան
(Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ)
Անահիտ Մկրտումյան
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի գունային իր խորհրդանիշները, որոնք ձևավորվել են վաղնջական ժամանակներից: Անցնելով տարբեր մշակույթների ու կրոնական պատկերացումների բովով՝ գույների նշանակությունները, անշուշտ, փոփոխությունների ենթարկվել են, սակայն ժողովրդի գունամտածողությունը պահպանել է նախնական շերտը՝ հարազատ մնալով գունային խորհրդանիշների վաղնջական ընկալմանը [տե՛ս *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, էջ 28]: Այդ պատկերացումներն իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի կյանքի ամենատարբեր ոլորտներում՝ տարազներում, զարդանախշերում, կենցաղային արարողություններում, նաև լեզվում: Բնական է, որ լեզուն, որպես ժողովրդի կյանքի հայելի, չէր կարող չարտացոլել ժողովրդական ընկալումների ու պատկերացումների այս շերտը: Խորհրդանիշը, տվյալ դեպքում՝ գունային խորհրդանիշը, որպես պատկերային վերացական և այլաբանական մտածողության բաղադրիչ, իր ազդեցությունն է ունեցել ժողովրդի բառուբանի վրա, այսինքն՝ բանահյուսական մանրապատում ստեղծագործությունների, լեզվական կայուն, վերաիմաստավորված միավորների վրա, ինչպիսիք են դարձվածքները, առածներն ու ասացվածքները, օրհնանքներն ու անեծքները, խաղիկները և այլն: Հայերենի տարբերակներում, ինչպես հայտնի է, առավել խորն են արտացոլված տվյալ տարածաշրջանի հանրության մեջ ընդունված հավատալիքներն ու դրանց առնչվող ավանդույթները, աշխարհընկալումն ու պատկե-

¹ «Ձառուկյանական ընթերցումներ. Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ»: Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2013, էջ 208-215:

րացումները. այդ բոլորը սերտ միասնություն են կազմում: Եվ պատահական չէ, որ շատ հաճախ հենց տվյալ բարբառային միավորի միջոցով է հնարավոր լինում վերականգնել, հիմնավորել չպահպանված կամ արդեն գոյություն չունեցող սովորությունների և պատկերացումների ընդհանուր նկարագիրը: Մույն աշխատանքում փորձ է արվել դիտարկելու գունանունների ընդգրկումն ու նշանակությունները պարսկահայ տարածքի խոսվածքների օրինանքներում և անեծքներում՝ նկատի առնելով նաև դրանց փոխկապվածությունը ծիսակարգերին: Պարսկահայ խոսվածքները գրեթե ուսումնասիրված չեն: Այդուհանդերձ, այն փշրանքները, որոնք հնարավոր է եղել հավաքել, թույլ են տալիս ազգագրական և բանահյուսական-լեզվական շատ սակավ տվյալների համադրության ու վերլուծության ճանապարհով, թեկուզ առանձին պատանիկներով, վերականգնելու մեր ժողովրդի՝ իր արմատից կտրված այդ հատվածի ունեցած և երկար ժամանակ պահպանել կարողացած յուրահատուկ լեզվամտածողությունը: Այս տեսանկյունից նույնիսկ ամենափոքր ուսումնասիրությունը ոչ միայն նորություն է այդ բնագավառում, այլև որոշակի երանգ կարող է հաղորդել պարսկահայության ազգային նկարագրի վերականգնման խճանկարում՝ հնարավորություն տալով անգամ ենթադրություններ կատարելու Արարատյան դաշտավայրում ապրողների լեզվամտածողության մասին: Ի դեպ, պարսկահայ տարածքին վերաբերող ցանկացած ուսումնասիրություն արժևորվում է նաև այնքանով, որ այս խոսվածքները, ցավոք, անհետացման եզրին են:

Հարկ ենք համարում նշել, որ «Հայերենի բարբառագիտական ատլասի» ծրագիրը սույն ուսումնասիրության վերաբերյալ նյութեր չի ընդգրկում: Այդ բացը ինչ-որ չափով լրացվել է սեփական նախաձեռնությամբ. ուսումնասիրվող տարածքի մի շարք խոսվածքներ այդ ծրագրով լրացնելու ընթացքում գրառել ենք բավականաչափ հավելյալ նյութ, որն էլ օգտագործվել է սույն ուսումնասիրության մեջ:

Ի՞նչ նկատի ունենք պարսկահայ տարածք ասելով: Պատմությունից հայտնի է, որ Պարսկաստանում հայկական գաղթավայրեր

ստեղծվել են դեռևս 10-11-րդ դարերում: Այդ գաղթավայրերը մեծացել ու համալրվել են Շահ-Աբասի կողմից բռնագաղթի ճանապարհով: Նա Արևելյան ու Արևմտյան Հայաստանից մեծ թվով գերիներ է տարել և վերաբնակեցրել Սպահանում ու նրա շրջակայքում:

Հ. Աճառյանը իր «Քննություն Նոր Ջուղայի բարբառի» մենագրության մեջ գրում է. «Ամբողջ այս շրջանի հայությունը հայախոս է և իր բարբառի կողմից բաժանվում է երկուսի. «Ամբողջ հյուսիսային մասը՝ Էնգելիից մինչև Նոր Ջուղա, խոսում է մեկ բարբառ, որ շատ նման է Արարատեան (Երևանի) բարբառին: Այս միևնույն բարբառին են ենթարկվում նաև Թավրիզի բնիկները (Ղալա թաղ) և յետոյ Հյուսիսային Կովկասի մեջ՝ Աստրախանի, Ղզլարի, Մոզդուկի և Մաճառի հայերը: Այս բարբառը կարելի է կոչել պարսկահայ անունով:

Սկսած Նոր Ջուղա քաղաքից մինչև Ջավա՝ խոսում է մի ուրիշ բարբառ, որ կոչվում է Նոր Ջուղայի բարբառ և տեղացոց մեջ յայտնի է ջուղացվար անունով» [Հ. Աճառյան, էջ 17]:

Մեր ուսումնասիրությունը վերաբերում է Էնգելիից մինչև Նոր Ջուղա ընկած տարածքի խոսվածքների լեզվական իրակություններին: Գ. Ջահուկյանն իր «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ քննում է այս տարածքի խոսվածքները՝ կոնկրետ Չհալմահալ գավառի Լիվասյան գյուղի օրինակով՝ բազմահատկանիշ դասակարգմամբ այն ընդգրկելով Ջուղայի բարբառի մեջ, իսկ ձևաբանական դասակարգմամբ դրանք պատկանում են ում ճյուղին [Գ. Ջահուկյան, էջ 135]:

Ժողովրդական գունամտածողության մեջ տարբերակվում են հետևյալ հիմնագույները՝ *կանաչ, կարմիր, կապույտ, դեղին, սև, սպիտակ* [Հայ ազգագրություն և բանահյուսություն, էջ 30]: Գույների խորհրդանշային իմաստները նոր երևույթ չեն. դրանք որպես փոխաբերական իմաստներ տեղ են գտել նաև բառարաններում. այսպես՝ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ուղիղ իմաստից բացի՝ **սև** գույնն ունի «մռայլ, չարագուշակ, չարագույժ, դժնի, հոգսերով լի (սև օր), բացասական, դժբախտ, անգութ, կեղտոտ, սգի խորհրդանշան» իմաստները, **կարմիրը**

<ատողջ, երջանիկ, բախտավոր>, բայց նաև՝ <արյուն>, **կանաչը**՝ <թարմ, դալար, չչորացած, մատղաշ>, **սպիտակը**՝ <մաքուր, ջինջ, պարզերես, մաքուր խղճով>, **դեղինը**՝ <գունատ, դժգոյն, դալուկ>, բայց նաև՝ <մաղձոտ, թունոտ> իմաստները և այլն [Մղայան Է., էջ 1292, 709, 683, 1323, 287]: Հոդվածում կդիտարկենք դրանցից միայն երեքը՝ *կարմիր*, *կանաչ* և *սև* գունանունները, որոնք իրենց խորհրդիմաստներով հակադիր են և հաճախ կազմում են <հականիշներ>՝ օրինանք-անեծք հակադրագույզեր:

Գունամտածողության համակարգում հետաքրքրական է նաև հայերի վերաբերմունքը *պայծառ* և *մուգ* գույների հանդեպ, պայծառ գույները դիտվում են որպես դրական, իսկ մուգերը բացասական: Պայծառ և մուգ գույների հակադրությունը հայերի մտածողության մեջ արտահայտել է նաև տարիքային տարբերությունը, ինչը դրսևորվել է հատկապես հագուստների գույների ընտրության պարագայում. այսպես՝ կարմիրը և կանաչը բնորոշ էին երիտասարդ տարիքին՝ հատկապես նորապսակներին, իսկ սևը և կապույտը՝ հասակն առած մարդկանց կամ ծերերին [Հայ ազգագրություն և բանահյուսություն, էջ 31]: *Կարմիրը* արյան գույնն է, խորհրդանշում է կյանքը, ուստի ժողովուրդը կարմիր գույնի հետ էր կապում լավագույն սպասումները. **կարմիր** հայերենում նշանակել է <լավ> և դրսևորվել է մի շարք դարձվածային արտահայտություններում՝ **կարմիր հաց** <լավ թխած հաց>, **կարմիր օր** <լավ օր>, **կարմիր հարս** <նշանված աղջիկ>, **կարմիր գոգնոց** <կին>, **կարմիր թել /նոխտա/ կապել** <նշան դնել>, **կարմիր կանչել** <հարսանիքում փեսայի համար դրամ հավաքել> և այլն: Համանման իմաստով այդ գույնը դրսևորվել է նաև օրինանքներում, տվյալ դեպքում՝ պարսկահայ խոսվածքներում՝ **բճարով կապիէն կարմիրըդ, բճարով դճու էլ դաքվօր ըլնէնաս, կապիէնք կարմիրըտ** և այլն, որոնք ասվում են չպսակվածներին (թեն կա նաև այդ գույնի՝ անեծքի մեջ արտահայտություն՝ **կարմիր գուլուռ ուտիէս**. այստեղ դրսևորվել է *կարմիրի*, որ նույնն է՝ *արյան*, որպես մահվան, այլ ոչ թե կյանքի խորհրդանշան իմաստը):

Կարմիր գունանվանը շատ բնութագրական է պսակադրության խորհրդրդիմաստը. այն հարսանեկան ծիսակատարության անբաժան մասն է կազմել նաև Պարսկահայքում: Այդ խորհրդիմաստի վրա են խարսխված այն օրհնանքները կամ անեծքները, որոնք վերաբերում են մարդու կյանքի կարևորագույն իրադարձություններից մեկին՝ պսակին: Այսպես՝ արարողությանը մասնակից կանայք հարսին համամից (բաղնիքից) դուրս բերելուց հետո գլխին *կարմիր քող* էին գցում, հարսի տուն գալուց և հարսի շորերը հագցնելուց հետո գլխին գցում էին սպիտակ քող, իսկ վրայից *կարմիր թաշկինակ՝ <պամբիրի>*: Փեսային տնից հանելուց և աներոջ տուն գնալուց առաջ մայրը *կարմիր ժայպվեն* էր կապում նրա պարանոցին, փեսայի կրծքին ոսկեգույն սաղափներով ծածկված *կարմիր թաշկինակ* էին ամրացնում, որն էլ հենց իրականացումն էր *բ՛արով կարմիրըտ կապ՛են* օրհնանքը. օրինակ՝ *բ՛արով կապ՛եք Արթունի կարմիրը, բ՛արով Վարթուշին էլ հարս շին՛եք*:

Կանաչը խորհրդանիշ է թարմության, հավերժ երիտասարդության, կյանքի շարունակականության, հետևաբար այն ևս ընդգրկված է օրհնանքների մեջ՝ *ճ՞եղըտ կանանչի, ճ՞եղըտ դ՛ալարի, մ՛եճկըտ կանանչ* (որ ասվում էր ջահել հարսին՝ շատ զավակներ ունենալու մաղթանքով): Համանման խորհրդիմաստով կանաչ գունանունը դրսևորվել է նաև պարսկահայ խոսվածքների օրհնանքներում՝ *պատարաքի օշնությունը կանանչ արեվի կանանչ արեվիտ ըլնենա, ճ՞եղըտ դալար մընա* և այլն, թեև կարող է դրսևորված լինել նաև անեծքներում, այսպես՝ չիր կանընչի «չիր կանընչի երանի չկանաչեիր»: Ինչպես նկատում ենք, ժխտական ձևի գործածությանը օրհնանքը վերածվել է անեծքի:

Ժողովրդական պատկերացումներում, համապատասխանաբար՝ դարձվածքներում և օրհնանքներում, հաճախ է հանդիպում *կարմիր* ու *կանաչ* գույների համադրությունը, ինչպես օրինակ՝ *բ՛արով կապ՛են խիզնիտ կանանչ-կարմիրը, բ՛արով դաքվօր շին՛եք, կապ՛եք կանանչ ու կարմիրը, բ՛արով դու՛ էլ կապ՛են քու խիզնանց*

կանանչ-կարմիրը օրհնանքները, որոնք դարձյալ իմաստի խորքում առնչվում են մի կողմից՝ գույների ունեցած խորհուրդին, մյուս կողմից՝ ծիսակատարության ժամանակ գործածվող իրերին. կանաչ-կարմիր էին ամուսնության՝ միության խորհրդանիշ համարվող «մետաքսե թաշկինակները, որոնք խաչաձև կապվում էին փեսացուի ուսով»։ հաճախ դրանք հենց կանանչ-կարմիր էլ կոչվում էին: Խնամախոս գնալիս կանաչ-կարմիր թելերով պարսկահայերը շաքարի կտորի վրա կապում էին հարսի մատանին, որը, ի դեպ, կանաչ քարով պետք է լիներ: Կանաչն ու կարմիրը միասին խորհրդանշում էին կյանքի շարունակականությունը՝ սերնդափոխությունը՝ ծլելը, ծաղկելը, բազմանալը. համեմատենք՝ ծրլ իէս ծախկ էս ծախկ իէս, բ'արօվ հայս շինիէք, ծըլի ու ծախկի էք, ծըլի ու ծախկի ք, ծըլի ու ծախկի, զօրանաս, ծըլ իէս ու ծախկիէս, համիշա տունը էս, համիշա տունըտ ս, համիշա տունըտ լիքըն ըլնենա..., լիքըն ըլնենա..., կամ՝ ծախկած ծառ ըլնենաս, օրհնանք, որ ասվում էր տղային, ծախկած տուն ըլնենաս, որ ասվում էր աղջկան²: Պատահական չէ, որ հարսանեկան խաղիկներում էլ այդ գունանունները գործածվել են համանման խորհրդիմաստով. **Օտարտ ծախկեցավ, ճուղկը բազմացավ կանանչ ու կարմիր:**

Գունանունների այդ գույգը գործածվել է նաև **կանանչ ու կարմիր գեղինը դայիմ սօտա**՝ օրհնանքի մեջ, որն ասվում է նոր քայլել սովորող երեխային՝ հավանաբար «*կանաչ ու կարմիր աշխարհով ամու՛ր քայլիր (գուցե՛ ն ծլի՛ր ու ծաղկի՛ր)*» իմաստով:

Հակառակ **կանաչ ու կարմիր** գույների՝ **սևը**, իր խորհրդիմաստով պայմանավորված, ձևավորել է գերազանցապես անեծքներ՝ **ս՛էվ ու կապուտ ըլնենաս** (սա մեզ հանդիպած միակ անեծքն է, որի մեջ տեղ է գտել *կապույտ* գունանունը), **ս՛էվ սելալը ք՛էզ տանի, օր ու ար՛էվըտ ս՛էվ ըլնենա, ս՛էվ քուն մրտն՛էս, ս՛էվը**

² Ի դեպ, օրհնանքներն ու անեծքները որոշակի մասնավորումներ են ունեցել ոչ միայն այն առումով, թե ու՛մ են հասցեագրված՝ երիտասարդ տղային, աղջկան, երեխային, այլև այն տեսանկյունից, թե ու՛մ կողմից է ասվում. անեծքներ, որոնք աղջիկներն են ասել միմյանց, տղամարդիկ են ասել միմյանց և այլն:

տանի քեզ, սեւ նու սաստիգ վեր գա գըլլիստ (ի դեպ, տարիների ընթացքում մեր /իմ՝ Անահիտ Մկրտումյանի/ կողմից իրականացրած հավաքչական աշխատանքների ժամանակ *սաստիգ* բառը գոյականական արժեքով՝ «*արհավիրք, փորձանք*», հանդիպել է միայն պարսկահայ խոսվածքներում), *անունըտ սեւ վարին գըրվի, սեւվաթաթախ ըլնէնաս, օրըտ սեւ ըլնէնա* և այլն: Սեր գույներից ամենամութն ու մոայլն է և ընկալվել է միայն բացասական իմաստով՝ մարդու համար վնասաբեր. *սև գիր, սև օր, սև քար* և նման այլ արտահայտությունները ևս ակնարկում են *սև* գույնի կապը մի դեպքում՝ «չար բախտի», մյուս դեպքում՝ «մահվան, հողի, անդրաշխարհի հետ»: Հր. Աճառյանը գտնում է, որ *սև* բառի իրանական փոխառություն լինելը մեկնվում է արգելքով թաքուով. «Արդի բերբերական լեզուների մեջ, - գրում է նա,- ընդհանրապես խուսափում էին արտասանել «սև» բառը, և ամեն մի գավառ ունի այս բառն արտահայտելու մի առանձին ձև: Դրա համար է, որ հնդեվրոպական լեզուների մեջ չկա «սև» իմաստով ընդհանուր բառ» [Աճառյան Հ., էջ 186]: Լ. Մարաջևան հայտնում է այն տեսակետը, որ *սև* անվանումը նախապես կարող էր ունենալ «մութ», «կեղտոտ», «բծերով ծածկված» նշանակությունը և փոխաբերական իմաստով նշանակել «մահ», «դժբախտություն» [Сараджева Л., с. 93]: *Սև* գունանունը պարունակող ստորև բերվող անեծքները ձևավորված են *կանաչ ու կարմիր* գույների խորհրդիմաստներով պայմանավորված համապատասխան ավանդույթների հիման վրա և օրհնանք-անեծք հակադրագույգեր են կազմում *կանաչ ու կարմիր* գունանուններ պարունակող օրհնանքների հետ: Ըստ Հր. Աճառյանի՝ օրհնանք նշանակում է «բարեմաղթանք», իսկ անեծքն ունի դրա հակադիր իմաստն ու նպատակը. այն նշանակում է «նզովք, բանադրանք, հանդիմանություն, նախատինք, ատելություն և այլն» [Աճառյան Հ., 1979, էջ 619, 1971, էջ 193]: Այս առումով գրական հայերենում, ինչպես նաև պարսկահայ խոսվածքներում, հանդիպում է այսպիսի հակադրության երկու ձև. մի դեպքում ծիսակարգում կան երևույթներ, առարկաներ, որոնք ուղղված են անձին օրհնելու և բարեմաղթանքի նյութական խորհրդանիշ են, սակայն

լեզվում դրանք օրհնանքի ձևով արտացոլված չեն, այսինքն՝ լեզվական մարմնավորում չունեն, մյուս դեպքում՝ լեզվում դրսևորված կա և՛ օրհնանքը, և՛ նրա հակադիր միավորը՝ անեծքը. օրհնանքով մաղթում ես, որ մարդն ինչ-որ հաջողություն ունենա, իսկ անեծքով նգովում ես, որ չունենա, կամ ունենա անհաջողություն: **Համեմատենք՝ սե՛վ լաջիգ գ՛ըց՛ես/գ՛ըլիսիտ, քողըտ սե՛վ կարվի, պըսակըտ սե՛վ ըլնենա, պամբրիտ սե՛վ ըլնենա** (կա նաև՝ **պամբրիտ քամուն տանի**) անեծքները, որ աղջիկներն են միմյանց ասում, հիմքում ունեն վերը բերված ավանդույթները, ըստ որոնց երջանկության, հաջող ամուսնության և հետագա ամուսնական կյանքի խորհրդանիշներ էին *կարմիր քողը, կարմիր պամբրին, կարմիր պսակը...* Հարկ ենք համարում նշել, որ կարմիր գույնը թե՛ հայ և թե՛ ուրիշ ժողովուրդների մեջ համարվել է նաև չարահաված պահպանակ (երեխաների և կանանց կարմիր ներքնազգեստը դիտվում էր իբրև միջոց՝ չար աչքի դեմ): Ուստի *կարմիր* կամ *կանաչ* գույնը *սևով* փոխարինելով՝ փոխվում է խորհրդիմաստը, և օրհնանքի՝ առարկայական աշխարհում գոյություն ունեցող խորհրդանիշ դենտաստի դիմաց ունենում ենք դրա հակադիր խորհուրդն ունեցող «լեզվական միավոր» անեծք:

Երբեմն էլ լեզվական մակարդակում արտացոլված են լինում բարեմաղթանքն ու անեծքը, այսինքն՝ ունենք համապատասխան օրհնանք - անեծք հականիշությունը: Ընդ որում՝ հակադրության հիմքում մի դեպքում կարող է ընկած լինել բայի ժխտականությունը, մեկ այլ դեպքում՝ գունանունների խորհրդիմաստների հակադրությունը: Համեմատենք. եթե **ծըլ՛ես, ծախկես** օրհնանքի դիմաց ունենք **չիր կանընչի** անեծքը՝ բայի ժխտականության դրսևորմամբ, ապա՝ **բ՛արով կապ՛են կարմիր կարմիրըտ, բ՛արով կապ՛ես խիզնիտ կանանչ-կարմիրը** օրհնանքների դիմաց կա **սե՛վ կապ՛ես** անեծքը, որի հիմքում ընկած է գույների խորհրդիմաստների հակադրությունը:

«Հայոց լեզվի բարբառային բառարանում» *կարմիր, կանաչ, սև* գունանունների՝ վերևում ներկայացված խորհրդիմաստները դիտարկված են միայն հետևյալ տարածքներում՝ Արարատ, Թբիլիսի,

Նոր Բայազետ, Շիրակ, Ուրմիա, Մուշ, Գորիս, Ղարաբաղ, Բուլանուխ. այսպես օրինակ՝ *կարմիր թե՛լ կապե՛լ, կանանչ-կարմիր կապե՛լ, կանանչ պրսակը հյուսե՛լ (մէկի հե՛տ), կանանչ-կարմիրը թարս կապե՛մ* «պսակի չարժանանաս», *սե՛լ թագ ու պրսակ կապ կապե՛ս* «դեռ չամուսնացած՝ նշանածին կորցնել, նշանածը մեռնի», *սե՛լ կոսպանդ կապե՛ս* «հարսանիքի օրը մեռնես», *սե՛լ պրսակի արժանանաս* «1. պսակի չարժանանաս, 2. պսակի դուռը չհասած՝ մեռնես», *սե՛վլալչակ ըլնե՛ս* «ամուսինդ մեռնի» [Հայոց լեզվի բարբառային բառարան, էջ 302-309]:

Պարսկահայ տարածքի խոսվածքները և Արարատյան բարբառը երկար ժամանակահատված գտնվել են միմյանցից անկախ զարգացման պայմաններում. եթե պարսկահայ խոսվածքները չորս դար եղել են կղզիացած՝ չունենալով շփումների հնարավորություն, ավելի անխառն են պահպանել իրենց բարբառային հատկանիշներն ու լեզվամտածողությունը, ապա նույնը չի կարելի ասել Արարատյան բարբառի մասին, որը, շարունակ ազդվելով շրջակա բարբառներից, շատ հատկանիշներ կորցրել է:

Այսպիսով՝ երեք գունանունների դիտարկումը պարսկահայ խոսվածքի օրինանքներում և անեծքներում թույլ է տալիս ասելու, որ գունամտածողությունը տվյալ ժողովրդի, երբեմն գավառի բնակչության կրոնահավատալիքային պատկերացումների վարտահայտություններից մեկն է, իսկ տվյալ տարածքում գործավող օրինանքներում և անեծքներում գունանունների ընդգրկումը արտացոլումն է հանրության մեջ այդ պատկերացումների հիման վրա ձևավորված մարդկային փոխհարաբերությունների և արժեքների:

Օգտագործված գրականություն

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հհ. 1,2, Ե., 1976:
2. Աճառյան Հ., Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Ե., 1940:

3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հհ.1-4, Ե., 1971-1979:
4. Անդրեասեան Վ., Չհարմահալ գաւառը, Նոր Ջուղա, 1977:
5. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
6. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվային նյութեր, անտիպ:
7. Հայ ազգագրություն և բանահյուսություն, Ե., 2007, հ. 22:
8. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ.Ա-Զ, Ե., 2001-2010:
9. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
10. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
11. Сараджева Л., Армяно-славянские лексико-семантические памятники, Е., 1986, с. 93.

Тер-Григорян Лилит, Мкртумян Анаит – Наименования цвета в благословениях и в проклятиях говоров армян проживающих на территории Ирана.—У каждого наименования цвета, на ряду с основным значением, есть также символично-метафорические значения, в основе которых легли национальные представления, верования и традиции конкретного народа или жителей соответствующего региона. В цветовом мышлении армян, проживающих на территории Ирана, красный и зеленый представляют символику брака и начала семейной жизни, которые нашли свое отражение как в обрядах, так и в благословениях соответствующей тематики. Между тем заменой этих цветов черным, изменяется не только значение, но благословения превращаются в проклятия, что обусловлено противоположной символикой черного цвета.

**ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՈՎ ԲԱՂԱԴՐՎԱԾ
ՂԱՐԶՎԱԾՆԵՐԸ ՊԱՐՄԿԱՆԱՅ ՏԱՐԱԾՔԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ¹**

Լիլիթ Տեր-Գրիգորյան
(Խ.Արքովյանի անվ. ՀՊՄՀ)
Անահիտ Մկրտումյան
(ԳԱԱ լեզվի ինստիտուտ)

Հայոց լեզվի դարձվածային կազմում նշանակալի տեղ են զբաղեցնում այն դարձվածները, որոնք որպես հիմնական կամ երկրորդական բաղադրիչ ունեն մարմնի որևէ մասի անվանում: Սա բացատրվում է նրանով, որ մարմնի մասերի անունները ոչ միայն բառապաշարի ակտիվ շերտի բաղադրիչներ են, այլև լայն գործածություն ունեն խոսքում, ինչի շնորհիվ էլ դրանք, որպես կանոն, բազմիմաստ բառեր են: Բազմազան նշանակություններն ու փոխաբերական իմաստները լայն հնարավորություն են ստեղծում բազմաբնույթ դարձվածների առաջացման համար: Մարմնի մասերի անունների փոխաբերացման գործընթացում կարևոր դեր ունեն նաև դրանց վերաբերյալ հասարակության մեջ ձևավորված պատկերացումներն ու գուգորդումները, որոնք հաճախ տարաբնույթ են լինում, հետևաբար տարբեր ուղղություններով էլ ընթանում է փոխաբերացման ու դարձվածացման գործընթացը:

Պարսկահայ տարածքի խոսվածքները ևս հարուստ են բաղադրիչային նման կազմ ունեցող դարձվածներով, որոնց զգալի մասը ընդհանուր է գրական հայերենի և այլ բարբառների դարձվածների հետ, իսկ մի մասն էլ ձևով, պատկերային հիմքով կամ իմաստով յուրահատուկ է և հանդիպում է միայն այս խոսվածքներում:

Դարձվածային միավորների մեջ զգայարանների անունները կարող են դրսևորվել որպես հենց զգայարանի կամ մարմնի մասի անվանում, ինչպես օրինակ՝ *Վաչք բճանալ* «ապրել, հասկանալ»,

¹ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 169-179 :

Կազմակերպվել է «1.քնել, 2.ինչ-որ բան չուզենալ տեսնել», Կանգրջին
 ամի էլ «շնջալ», լիզուն շրլընքովը դուս գալ «շատ հոգնել», Բերնիցը
 ջավահիր թափվի էլ «շատ խելոք և հաճելի խոսել», Բերնին *ուսպ*
 չըղըռըվի էլ «անգաղտնապահ լինել», քինթը քարին դիպի էլ «ան-
 հաջողության հանդիպել», քինթը տըրորի էլ գեղինին «հանդիմանել,
 նվաստացնել» և այլն: Մակայն ավելի հաճախ դարձվածներում
 դրանք գործածվում են զգայությունների փոխարեն, այսինքն՝
 կատարվում է փոխանունություն՝ Կազմակերպվել էլ «անթարթ,
 սևեռված նայել», Կազմըն ընգնի էլ «անսպասելի տեսնել», Կազմը
 վըրեն պահի էլ «հետևել», Կանգրջնի էրը խըլըշի էլ «լսողությունը
 լարել», Կանգաձովն ընգնի էլ «անորոշ կերպով լսել», Կանգաջը
 ծանդրանալ «խլանալ», Կանգաջ անել/դընի էլ «լսել», լիզուն վըրա
 ածի էլ «շատախոսել», չար լիզու «չարախոս», լիզուն յիտ տալ
 «պատասխանել» և այլն, և դրանք իմաստային առումով շատ
 դեպքերում հնարավոր է փոխարինել զգայությունն անվանող
 այնպիսի բառերով, ինչպիսիք են տրված օրինակների համար՝
հայացք, լսողություն, խոսք բառերը (լեզու բառին տվյալ դեպքում
 համապատասխանում է ոչ թե զգայությանը համապատասխանող
համ բառը, այլ *լեզու* բառի՝ «մարդու խոսելու կարևորագույն գոր-
 ծարան» իմաստին համապատասխանող *խոսք* բառը)²: Հասկա-
 նալի է, որ բերված օրինակներում (և դա ընդհանրապես հատուկ է
 դարձվածներին) կատարված իմաստային փոփոխությունը մեկը չէ,

² Պարսկահայ տարածքի խոսվածքներից բերված դարձվածները քաղված են
 ստորև ներկայացված աղբյուրներից և մեր (Ս.Մկրտումյան) հավաքչական
 աշխատանքների ընթացքում ձեռք բերված անտիպ նյութերից. այստեղ և
 այսուհետև տե ս **Վ.Անդրեասեան, Չհալմահալ գաւառը**, Նոր Ջուղա, 1977:
Ս.Բարումեան, Չհալմահալի անգիր գրականություն, հհ.1-2, Թեհրան, 1984: ՀՀ
 ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվային նյութեր,
 անտիպ: Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 22, Ե., 2007: Հայոց լեզվի
 բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հհ.Ա-Զ, Ե., 2001-2010:

և դարձվածային պատկերի ձևավորման ժամանակ իմաստափոխության կարող են ենթարկվել մեկից ավելի բաղադրիչներ, կամ կարող է տեղի ունենալ կրկնակի իմաստափոխություն: Այսպես՝ *լիզուն կապ ընգն^h էլ* «պապանձվել» դարձվածում պատկերի ձևավորման գործընթացում *լեզու* բառի իմաստափոխությունից բացի՝ փոխաբերացման է ենթարկվել նաև *կապ ընգն^h էլ* բառը, համանման ձևով՝ *Վազուհի զ՛ալ* «հավանել մեկին», *Վանգաջը տան^h էլ* «ձանձրացնել», *Վազկ^h էրը մըթն^h էլ* «տեսողությունից զրկվել», *բերանը չըլըփացն^h էլ* «ուտելիքի կարոտ լինել» և այլն:

Ստորև փորձ կարվի ներկայացնելու իրենց կազմի մեջ մարդու միայն երկու զգայարանների (*աչք* և *ականջ*) անվանումներ ունեցող դարձվածները պարսկահայ խոսվածքներում՝ վեր հանելով և վերլուծելով դրանց դարձվածացման գործընթացի լեզվական և արտալեզվական որոշ երևույթներ:

Աչք բառը Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»³ ներկայացված է տասնյոթ իմաստներով (դրանցից երկուսը՝ փոխաբերական), սակայն այդ իմաստներից մի քանիսն են պարսկահայ տարածքի խոսվածքներում հիմք դարձել դարձվածացման համար՝ «1. տեսողության գործարան, 2. տեսողություն, 3. հայացք, նայվածք, 4. հսկողություն, խնամք»: Այսպես՝ *տեսողության գործարան*» իմաստով այսպիսի դարձվածներ են ձևավորվել՝ *Վազկերը չըր^h էլ* «վախից կամ հիացմունքից աչքերը լայն բացել», *Վազկերը ցած քըց^h էլ* «աչքերը կախել», *Վազկը կըպչ^h էլ* «քնել», *Վազկը բ՛աց* «կենդանի, ողջ», *Վազկերը խըփ էլ* «քնել» և այլն, *տեսողություն (տեսնել, նայել)*՝ *Վազկ Վազկի քըց^h էլ* «նայել», *Վազկըն ընգն^h էլ* «անսպասելի տեսնել», *Վազկ/ման/ ած^h էլ* «դիտել, որոնել», *Վազկից կօրչ^h էլ* «անհետանալ» և այլն, *«հայացք»* իմաստով՝ *Վազկը վըրէն մնալ* «կարոտ մնալ մեկի (մի

³Տե՛ս Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), հհ. 1-2, Ե., 1976, էջ 92:

բանի)», *Վաճկը վըրէն ընգն՞էլ* «հավանեւ մեկին (մի բան)», *Վաճկը ճամփին մընալ* «շատ սպասել» և այլն, «*հսկողություն, խնամք*» իմաստով՝ *Վաճկը վըրէն պահ՞էլ* «հետևել», *Վաճկ տալ* «հետևել» և այլն:

Կան դարձվածներ, որոնց մեջ իմաստափոխության է ենթարկվել դարձվածային միավորի՝ ոչ զգայարան անվանող բաղադրիչը, ընդ որում այս դեպքում ձևավորված դարձվածում մարմնի մասի անվանումը կարող է՝ ա) իմաստափոխության ենթարկված չլինել, ինչպես՝ *Վաճկը բ՛ռւռ ան՞էլ* «լավ տեսնել», *Վաճկերը բ՛ըռնըվ՞էլ* «կուրանալ», որոնցում դարձվածային իմաստի հիմքում ընկած է համապատասխան կապակցության մեջ *բ՛ռւռ ան՞էլ* և *բ՛ըռնըվ՞էլ* բառերի վերաիմաստավորումը, սակայն, կարող է բ) կատարված լինել նաև ամբողջ կապակցության վերաիմաստավորում, ինչպես՝ *Վաճկի փուշը թըռցըն՞էլ* «շատ կարճ քնել», *Վաճկ՞էրու կապը կըտըրվ՞էլ* «շատ վախենալ», որոնց մեջ կարևոր է ոչ միայն *Վաճկի փուշ* և *Վաճկի կապ*, այլև *փուշը թըռցըն՞էլ* և *կապը կըտըրվ՞էլ* կապակցությունների փոխաբերությունը: Ո՞րն է *Վաճկի կապ*-ը, որի *կտրվ՞էլ*-ը կարող է «վախենալու» պատճառ դառնալ կամ որևէ կերպ զուգորդվել դրա հետ: Դարձվածային այս սերտաձումների ձևավորման հիմքում առկա է ամբողջական պատկերի իմաստափոխությունը:

Վաճկ բ՛անալ/բ՛աց ան՞էլ «ապրել, հասկանալ», *Վաճկը բ՛աց* «ճարպիկ», *Վաճկը փակ* «անփորձ» օրինակներում դարձվածային իմաստը ձևավորվել է նույն հիմքով: Այսպես՝ *Վաճկ բ՛անալ/բ՛աց ան՞էլ* բառակապակցության հիմքում ընկած դարձվածային իմաստը զուգորդվում է մարդու ծնվելու պահի հետ. լույս աշխարհ գալով մարդը բացում է աչքերը և սկսում է **ապրել** (հմմտ.՝ *Վաճկը բ՛աց* «կենդանի»): *Վաճկ բ՛անալ/բ՛աց ան՞էլ* դարձվածում «*աչք*» բառը

դրսևորվել է «տեսողության օրգան» նախնական իմաստով: Կապակցության մեջ արդեն «աչքը բաց լինելու» հանգամանքը զուգորդվում-նույնանում է «տեսնել կարողանալու», այսինքն՝ «տեսողություն» իմաստի հետ: Այս իմաստափոխության հիման վրա կատարվում է իմաստային հաջորդ անցումը՝ ձևավորելով դարձվածային պատկերը. աչքը բացելով՝ մարդը տեսնում ու ճանաչում է աշխարհը, սովորում է **հասկանալ** ու կողմնորոշվել կյանքում, այսինքն՝ սկսում է **ապրել**:

‘աճկը բ’աց «ճարպիկ» (կա նաև՝ *‘աճկը բ’ացվ’ել* «ճարպկանալ»), *‘աճկը փակ* «անփորձ» դարձվածների իմաստները նույնպես ձևավորվել են ամբողջական պատկերի վերահիմաստավորման փոխաբերացման ճանապարհով: *Աչքը բաց* վիճակում մարդը շատ բան է տեսնում, շատ բաների մասին գիտի, ուրեմն՝ շատ բան է հասկանում և նաև գիտի՝ ինչպես դուրս գալ կամ խուսափել այս կամ այն իրավիճակից, այսինքն՝ մարդը *ճարպիկ* է (հմմտ.՝ այդ իմաստի զարգացումն է *‘աճկօվ ան’ել* «ակնարկել» դարձվածը). համապատասխանաբար՝ *‘աճկը փակ* մարդը չունի այդ հատկանիշները, այսինքն՝ *անփորձ* է:

Պարսկահայ տարածքի խոսվածքներում, ինչպես և հայերենի դարձվածների ընդհանուր կազմում, զգայարանի կամ մարմնի որևէ անդամի անուն պարունակող դարձվածների մեջ հաճախ են հանդիպում հակադիր իմաստներ ունեցող դարձվածներ: Վերևում բերված օրինակները, որոնք հակադիր պատկերային հիմքեր ունեն՝ *‘աճկը լի(քը)* «1.գոհ, կուշտ, 2.հպարտ» – *‘աճկը ծակ/ծակ ‘աճկ* «աչքածակ, ազահ, անկուշտ», *‘աճկ(եր)ը բաց’ել /բանալ* «արթնանալ» – *‘աճկ(եր)ը փագ’ել /խրփ’ել/կըպցըն’ել* «քնել», *‘աճկն առն’ել/ընգն’ել/‘աճկ(ուս)ը գ’ալ* «հավանել» – *‘աճկիցը քըջ’ել/‘աճկիցը ընգըն’ել* «համակրանքից զրկվել, ատելի դառնալ» և այլն: Դժվար չէ նկատել, որ հականիշությունը ձևավորվել է **աչք+այլ հականիշ բառ(եր)** կադապարով: Վերջիններիս հակադրության շնորհիվ է, որ հակադիր պատկերային հիմքեր և դարձվածային իմաստներ են ձևավորվում: Մինչդեռ վերևում բերված օրինակներ-

րից *Վաճկը բճուռ ան՞էլ* «լավ տեսնել», *Վաճկ՞էրը բճռնըլ՞էլ* «կուրանալ» դարձվածներում դիտարկվում է յուրահատուկ մի երևույթ. հականիշությունը ձևավորվել է *աչք՝նույնարմատ բառեր* կաղապարով: Առաջին դեպքում դարձվածային պատկերը հավանաբար զուգորդվում է լավ տեսնելու համար տեսողությունը կենտրոնացնելու, «սրելու» պատկերի հետ⁴, իսկ երկրորդ դեպքում, կարծում ենք, ձևավորվում է *բռնել* բառի՝ «մի բանի մակերևույթը պատել, կապել» իմաստի հիման վրա:

Վերախմաստավորման հետաքրքրական նմուշներ են պարսկահայ խոսվածքում տեղ գտած հետևյալ դարձվածները՝ *Վաճկերը գ՞էշ տ՞էղ՞էն ծակած* «խորամանկ», *Վաճկըն իստագ* «մաքուր, բարոյական», *Վաճկերու մ՞էվը գճնալ, ճ՞էրմագը գճալ* «ուշաթափվել», *գճրօղի Վաճկին չէրէվալ* «շատ տգեղ լինել», *Վաճկադեմ ան՞էլ/ըլէնալ* «սպասել/եցնել», *Վաճկ՞էրը չ՞որսըլէնալ* «շատ սպասել», *ցաճ՝ կօլ տընդըղ՞էլ* «թերագնահատել», *Վաճկը Յուռ ան՞էլ* «լավ տեսնել», *Վաճկի բճուռը կըտըրըլ՞էլ* «տեսողությունից զրկվել» և այլն: Բերված օրինակները դարձվածային սերտաճումներ են, և դրանցից յուրաքանչյուրն ունի դարձվածացման յուրահատուկ ճանապարհ անցած դարձվածային պատկեր՝ հիմնված պարսկահայ հանրության մեջ ամրակայված համապատասխան պատկերացումների վրա:

Մեր ուսումնասիրությունների համաձայն՝ բերված օրինակները ձևային և իմաստային տվյալ հատկանիշներով հատուկ են միայն պարսկահայ տարածքի խոսվածքներին: Այսպես, *Վաճկ՞էրը չ՞որս ըլնէնալ* «շատ սպասել» դարձվածը, որն առկա է վերոնշյալ խոսվածքներում, չկա ո՛չ Ա.Սուքիասյանի և Ս.Գալստյանի «Հայոց

⁴Հարկ է նշել, որ պարսկահայ տարածքի խոսվածքներում բճուռ բառն ունի նաև «տեսողություն» (տե՛ս **Ս.Բաբումեան**, նշվ. աշխ., էջ 76) իմաստը, հմմտ.՝ *Վաճկի բճուռ* «տեսողություն» (տե՛ս նույն տեղում, էջ10), սակայն, կարծում ենք, այս դարձվածը պատկերային այլ հիմքով է ձևավորվել, որը բճուռ բառի նշված իմաստից չի սերում:

լեզվի դարձվածաբանական բառարանում» (այսուհետև՝ ՀԼԴԲ), ո՛չ Պ.Բեդիրյանի «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանում» (այսուհետև՝ ՀԴԸԲԲ), ՀԼԲԲ-ում: ՀԼԴԲ-ում կան այդ դարձվածին «նման» կամ «մոտ» *աչք(եր)ը չորս անել/շինել/բանալ/բացել* ձևերը և հետևյալ իմաստներն ունեցող դարձվածային տարբերակները՝ «1.գարմանքից, անակնկալից, հիացմունքից աչքերը լայն բանալ, ապշել, 2.անակնկալից զգաստանալ, ուշադրությունը լարել, 3.ուշադիր նայել, լավ հսկել, աչալուրջ հետևել»՝ ներկայացված մեկ բառահոդվածով⁵: Համանման պատկեր է արտացոլված նաև ՀԴԸԲԲ-ում, միայն թե *աչք(եր)ը չորս անել/շինել* «ուշադրությունը, տեսողությունը լարել» և *աչք(եր)ը չորս բաց անել/բանալ* «ա) ապշահար նայել, բ) շատ ուշադիր զգաստ նայել, գննել» դարձվածները տրված են տարբեր բառահոդվածներով⁶: ՀԼԲԲ-ում կա *աչքերը չորս անել/շինել* դարձվածը՝ «1.սաստիկ գարմանալ, 2.ուշադրությունը լարել, ուշադիր նայել, հետևել» իմաստներով⁷:

Աչք բառի հետ կապված պատկերացումները և վերաիմաստավորված ու պատրաստի դարձվածների վերածված կապակցություններն արտացոլվել են նաև պարսկահայ տարածքի խոսվածքներում գործածվող օրինանքներում ու անեծքներում, որոնց մենք հանդիպել ենք մեր (Ա.Մկրտումյանի) հավաքչական աշխատանքների ընթացքում և անտիպ նյութերում⁸: Դրանցից են, օրինակ, օրինանքներ՝ *՝աճկի լուսով ապր՛ էք, Աստված չա ր՝աճկից հեռու պահի, ՝աճկի լուսով կէնաս, անեծքներ՝ ՝աճկըտ քոտանա, լուսըտ քոտանա, ՝աճկըտ դ՛ուս գ՛ա, ՝աճկիդ լուսը ձերմըգի, ՝աճկըտ բ՛ընից դ՛ուս գ՛ա, ան՝աճկի լուս մընաս, էրկու ՝աճկով քոտանաս, էրկու ՝աճկով քոտ նաստ՛ էս, ՝աճկըտ էր՛ էսիդ քոտ նըստ՛ էս, ՝աճկ՛ էրըտ*

⁵ՀԼԴԲ, էջ 36:

⁶ՀԴԸԲԲ, էջ 90-91:

⁷ՀԼԲԲ, էջ 89:

⁸Տե՛ս նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվային նյութեր, անտիպ:

ճերմագ փարդա բ՛րոնի, արածըս լավութունը ԿճԿ՛էրըտ բ՛րոնի, ԿճԿի լուսից յ՛էղ նստ՛էս, մէ ԿճԿըդ դավ ըլնէնա և այլն: Ինչպէս դժվար չէ նկատել, օրհնանքների և անեծքների մեջ զգալի տեղ են զբաղեցնում *աչքի լույս, չար աչք* հասկացությունները, որոնք հենց նույն ձևով նաև դարձվածներ են:

Ականջ բառը ԱՀԲԲ-ում⁹ ներկայացված է յոթ իմաստներով (դրանցից փոխաբերական են երկուսը), որոնցից պարսկահայ տարածքի խոսվածքներում դարձվածացման համար հիմք են դարձել երեքը՝ «1. լսողության գործարան, լսելիք, 2. լսողության գործարանի երևացող մասը, արտաքին ականջ, 3. լսելու ընդունակություն, լսողություն»: Համեմատենք համապատասխանաբար՝ 1. *Իշի Կանգրջումը քընսծ* «անտեղյակ», *Կանգաջը* (*Կանգրջին*) *հասն՛էլ* «լսել, տեղեկանալ», 2. *Կանգրջի միսն ուտ՛էլ* «շարունակ կրկնել», *Կանգրջի յէղէվը տենալ* «մի բանից զրկ(վ)ել (սպառնալիք», *մ՛էնձ կտ՛ն օրը Կանգաջը թօղ՛էլ* «սպառնալիք», *Կանգաջը ըլօր՛էլ /քաշ՛էլ* «պատժել», *Կանգաջը կըտր՛էլ/արնօտ՛էլ* «ամուսնացնել» բայց՝ 3. *Կանգաջը կըտր՛էլ* «խաբել (առևտրիմեջ)», *Կանգաճը ծանդրրանալ* «խլանալ» և այլն:

Ականջ բառն ունեցող դարձվածային միավորներում նկատվել է հետաքրքրական երևույթ. մի կողմից՝ միևնույն իմաստը կարող է արտահայտվել *ականջ + հականիշ բառեր* կապակցությամբ, ինչպես՝ *Կանգրջն՛էրը տընգ՛էլ/ցըց՛էլ* – *Կանգրջն՛էրը /Կանգրջնին կախ աւ՛էլ*, որ պարսկահայ տարածքի խոսվածքներում հանդիպում է «լսել» նշանակությամբ, *Կանգաջը լըցն՛էլ* – *Կանգաջը ծակ՛էլ* նշանակում է «1. հայտնել, 2. չարախոսել» (անշուշտ *ծակել* և *լցնել* բառերն անմիջականորեն հականիշներ չեն, սակայն անուղղակիորեն՝ իմաստային տվյալ դաշտում կարծես հակադրվում են այն հիմունքով, որ եթե մի բան լցվում է մի տեղ, ապա այդ տեղը պետք է որ փակ լինի),- մյուս կողմից՝ նկատվում է

⁹Տե՛ս ԱՀԲԲ, էջ 15:

բազմիմաստության երևույթ՝ *անգաջը կըտը՞ էլ* «1. նշան դնել, 2. պատժել, 3.խաբել», *անգաջը կախ՞ էլ* «1.ուշադրությամբ լսել, 2.տխրել,մտահոգության մեջ ընկնել, 3.համաձայնել, ենթարկվել», *անգրջի տակը քոր՞ էլ* «1.հեգնել, 2.անգոր զգալ» և այլն, երբ բառերի նույն կապակցությունը մի դեպքում հիմք է դառնում դարձվածային միանգամայն տարբեր պատկերների, հետևաբար՝ տարբեր իմաստների ձևավորման, մյուս դեպքում՝ նույն պատկերի (ինչպես *անգաճը կախ՞ էլ* դարձվածի դեպքում) միանգամայն տարբեր վերաիմաստավորումների, ինչի արդյունքում դրսևորվում է դարձվածային բազմիմաստություն կամ համանունություն:

Մյուս կողմից դարձվածներում նկատվում է լեզվական մեկ այլ երևույթ, երբ *ականջ+այլ բառ(եր)* կադապարով կազմված տարբեր կապակցությունները ձևավորում են տարբեր պատկերներ և ունենում նույն (մոտ) իմաստը(ներ), այսինքն՝ դրսևորվում է դարձվածային հոմանիշություն: Ընդ որում, եթե *անգաջը ծանդըր – անգրջն՞ էրից ի՞նչ էր՞* «1. խուլ, 2. լսողությունը թուլյլ», *անգրջ(ն՞ էր)ը բ՞ուրթ/բամբակ կօխ՞ էլ – անգաջը բաղմանչու՝ անգաջ շի՞ն էլ* «չլսելու տալ անտեսել», *անգրջի ծակ չուն՞ էնալ–քա՞ն անգաջ ըլէնալ* «չլսել, չնկատել», *անգաջը տան՞ էլ – անգրջի միսն ուտ՞ էլ* «մի բանը շարունակ կրկնելով՝ ձանձրացնել» դարձվածներն իրենց բաղադրիչային կազմով նկատելիորեն տարբերվում են միայնցից, ինչը, բնականաբար, ազդում է հոմանիշ դարձվածների պատկերային հիմքերի վրա, ապա *անգաջը դ՞րոտանը–անգաջը դ՞րոտումը–անգաջը ձ՞ենի* «սպասողական դրության մեջ», *անգրջն՞ էրը չ՞որս ան՞ էլ – անգրջն՞ էրը սըր՞ էլ* «լսողությունը լարել», *անգրջին հասն՞ էլ–անգաջն ընգն՞ էլ* «տեղեկանալ» հոմանիշ դարձվածները, ի տարբերություն նախորդների, տարբերվում են հիմնականում միայն մեկ բաղադրիչով, սակայն դարձյալ ունեն միայնցից միանգամայն տարբեր պատկերային

հիմքեր, ինչով էլ բացատրվում ու հիմնավորվում է գուգահեռաբար տրված դարձվածների՝ հոմանիշ, այլ ոչ թե տարբերակ լինելը:

Հարկ է նշել, որ մեր կողմից ուսումնասիրված աղբյուրների տվյալների համաձայն՝ ստորև ներկայացվող դարձվածները տրված իմաստներով հանդիպում են միայն պարսկահայ տարածքի խոսվածքներում՝ *Վանգրջմէրը կախէլ* «չափազանց հոգնել», *Վանգրջի տակը քորէլ* «անգոր լինել», *Վանգաջը կըտորէլ* «խաբել», համապատասխանաբար՝ *Վանգաջը կըտորոյ* «խորամանկ, խաբեբա», *Վանգաջը անուր ածէլ* «խաբել», *գհէդնին Վանգաջ դըմէլ* «քնել»:

Ընդ որում *Վանգաջը ջնուր ածէլ*, *գհէդնին Վանգաջ դըմէլ* և *Վանգաջը կըտորոյ* դարձվածները այլ աղբյուրներում չեն հանդիպում, իսկ *Վանգրջմէրը կախէլ*, *Վանգրջի տակը քորէլ*, *Վանգաջը կըտորէլ* դարձվածները բերված իմաստներով է, որ հատուկ են միայն պարսկահայ տարածքի խոսվածքներին:

Այսպես՝ ՀԴԸԲԲ-ում բերվում է *ականջները կախել* երեք համանուն դարձված, որոնցից ոչ մեկը չունի «չափազանց հոգնել» իմաստը. հմմտ.՝ 1. «ա/ ծույլ-ծույլ շարժվել, բ/ (հլու) լսել, ականջ դնել, գ) լսողությունը լարել (ու հետևել)», 2. «ա) խռովել, թթվել, բ) (բրբ.) տրտմիլ, մտածել տրտմությամբ», 3. «գղջալ»¹⁰: ՀԼԴԲ-ում տրված է այսպես՝ *ականջ(ներ)ը կախել/ կախ անել* «1. ուշադրությամբ լարված լսել, ունկնդնել, ականջ դնել, 2. զիջել, հնազանդվել, համաձայնել, լռել, 3. տխրել, մտահոգության մեջ ընկնել»¹¹: ՀԼԲԲ-ում *ականջ(ը) կախել* բացատրվում է իմաստների հետևյալ հաջորդականությամբ՝ «1. համաձայնել, անսալ, ենթարկվել, 2. տխրել, մտահոգության մեջ ընկնել, 3. ուշադրությամբ լարված լսել, ականջ դնել»¹²: ՀԴԸԲԲ-ում *ականջի տակը քորել* դարձվածը բացատրվում է այսպես՝ «մտորումների մեջ ընկնել, մտորել»¹³, ՀԼԴԲ-ում ներ-

¹⁰ ՀԴԸԲԲ, էջ 25:

¹¹ ՀԼԴԲ, էջ 7:

¹² ՀԼԲԲ, էջ 25:

¹³ ՀԴԸԲԲ, էջ 23:

կայացվում է այլ իմաստով՝ «հեզնել, ձեռք առնել»¹⁴, ՀԼԲԲ-ում՝ «1.հեզնել, մտքում ծիծաղել, 2. ինչ անելը չիմանալ, անգոր զգալ (օրինակները տրված են Երևանի կամ Արարատյան բարբառով)» իմաստներով¹⁵: Ինչպես տեսնում ենք, Արարատյան բարբառի խոսվածքներում հանդիպող դարձվածն իր մեկ իմաստով նույնանում է պարսկահայ տարածքի խոսվածքներում հանդիպող դարձվածի հետ, և դա, բնականաբար, ունի իր բացատրությունն ու հիմնավորումը, քանի որ պարսկահայ խոսվածքը Արարատյան բարբառի նախնական՝ անփոփոխ տարբերակն է ներկայացնում¹⁶: ***Ականջը կարել*** ՀԼԲԲ-ում բացատրվում է՝ «նշանադրել, ամուսնացնել»¹⁷, ՀԼԴԲ-ում՝ «1. Տղային նշանել, նշան դնել»¹⁸, ՀԼԲԲ-ում՝ «1.նշանել, նշան դնել, 2. նշան անել, 3. պատժել»¹⁹: Այսպիսով՝ պարսկահայ տարածքի խոսվածքներում ներկայացված երեք դարձվածներում բառերի նույն կապակցությամբ ձևավորված դարձվածային պատկերը այլ լրացուցիչ, իմաստավորում է ստացել, որը, հավանաբար, պայմանավորված է տարածաշրջանում ընդունված սովորություններով ու պատկերացումներով:

Մեր հավաքչական աշխատանքի ընթացքում և ուսումնասիրած աղբյուրներում *ականջ* բառը պարունակող մեկ անեծք է հանդիպել՝ *թիքէտ անգրջով կուլ տաս*, իսկ օրինանքներ ընդհանրապես չեն հանդիպել:

Այսպիսով, զգայարանների անվանումներով բաղադրված դարձվածները կարող են սերված լինել այդ բառերի տարբեր իմաստներից՝ դարձվածացման գործընթացում ընդգրկելով բաղադրիչների տարբեր կազմ և ենթարկվելով տարբեր աստիճանի վերաիմաստավորման-փոխաբերացման. ընդ որում՝ դարձվածա-

¹⁴ ՀԼԴԲ, էջ 10:

¹⁵ ՀԼԲԲ, էջ 26:

¹⁶ Հայտնի է, որ պարսկահայ խոսվածքների կրողները մոտավորապես չորս դար առաջ հիմնականում Արարատյան դաշտից բռնի տեղահանվածներ են: Ապրելով մեկուսացած՝ ավելի անխառն են պահել մայրենի՝ Արարատյան բարբառը:

¹⁷ ՀԼԲԲ, էջ 20:

¹⁸ ՀԼԴԲ, էջ 5:

¹⁹ ՀԼԲԲ, էջ 25:

յին պատկերի ձևավորման վրա կարևորագույն ազդեցություն են ունենում տվյալ տարածաշրջանում հանրության մեջ տարածում ստացած կամ հաստատված պատկերացումներն ու արտալեզվական գուգորդումները՝ դրանով ձևավորելով դարձվածներ մի կողմից՝ համընդհանուր՝ հայերենի համար ընդհանրապես, մյուս կողմից՝ յուրահատուկ՝ տվյալ դեպքում միայն պարսկահայ տարածքի խոսվածքների համար՝ կամ միայն իմաստով, կամ միաժամանակ և՛ ձևով, և՛ իմաստով: Հայերենի բարբառների ուսումնասիրությունը և միայն տվյալ բարբառում հանդիպող դարձվածային միավորների բացահայտումը ոչ միայն հարստացնում է հայերենի դարձվածային կազմի ազգային գանձարանը, այլև օգնում է՝ վերականգնելու և պահպանելու տվյալ տարածքին հատուկ լեզվամտածողության յուրահատկությունները:

Тер-Григорян Лилит, Мкртумян Анаит – Фразеологизмы с наименованиями органов чувств в говорах армян, проживающих на территории Ирана. – В статье представлены некоторые фразеологизмы с наименованиями органов чувств *глаз* и *ухо* в своем составе, существующие только в говорах армян, проживающих на территории Ирана. В число таких фразеологизмов авторами статьи включены как единицы, не имеющие аналогов и вариантов в литературном языке или в других говорах армянского языка, так и фразеологизмы, имеющие идентичную форму с фразеологизмами, общеизвестными в армянском языке, но совершенно отличающимися одним или несколькими значениями. Выявление таких фразеологических единиц с одной стороны обогащает **фразеологический** состав армянского языка, с другой стороны способствует восстановлению особенностей языкового мышления.

Ter-Grigoryan Lilit, Mkrtumyan Anahit – Idioms Based on the Sense Organs in the Subdialects of the Armenians Living in the Territory of Iran. – In this article the authors discussed some of the idioms related to the sense organs in their composition (such as *eye* and *ear*), existing only in the dialects of the Armenians living in the territory of Iran. Among such idioms the authors included both the completely unique idioms that have no analogues in the literary language or in other dialects

of the Armenian language, as well as the idioms that have identical structure with the idioms widely known in the Armenian language, but have a completely different meaning. Identifying such idioms enriches the **phraseological** structure of the Armenian language on the one hand and helps to restore peculiarities of linguistic thinking on the other hand.

ԳԼՈՒԽ Դ. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ՄՈՒՇ-ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԲԱՐԲԱՌԱԽՄԲՈՒՄ¹

Ջեմմա Բառնասայան

Ուսումնասիրության առարկա դարձնելով հայերենի բարբառների դերանվանական համակարգը՝ արդեն իսկ ներկայացրել ենք *անձնական, ցուցական, որոշյալ, ժխտական, անորոշ, հարցահարաբերական* և *փոխադարձ* դերանունների վերաբերող ուսումնասիրություններ՝ իմաստագործառական քննության ենթարկելով բարբառագիտական մենագրություններից, հայ ժողովրդական բանահյուսությունից և քարտեզագրման նպատակով հայերենի բարբառների տարբեր խոսվածքների գրանցումներից դուրս գրված համապատասխան իրողություններ: Նմանատիպ քննությունը տարբեր բարբառներում ու խոսվածքներում առկա ընդհանուր կամ միայն տվյալ տարածքի բարբառներին հատուկ իրողություններ գտնելու, համեմատելու հնարավորություն է ընձեռում: Քննության առնենք արևմտյան խմբակցության բարբառների հարավկենտրոնական կամ Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբում առկա դերանունները՝ անդրադառնալով ինքնատիպ ձևերին ու հետաքրքիր իրողություններին: Գ.Ջահուկյանն իր բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման մեջ այս բարբառախմբում է ընդգրկել նաև Բուն Սասունի (Գելիեգուզանի) և Տավրիկ-Մոտկանի բարբառները²:

Դերանուն խոսքի մասին նվիրված ծավալուն մենագրության մեջ Հ. Աճառյանը փաստում է, որ անձնական դերանունները բառապաշարի համահայերենյան շերտին են պատկանում, և հայոց լեզվի բոլոր փուլերում մշտապես գործառող *ես, դու, մենք, դուք*

¹ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 24-29 :

² Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 134:

դերանուններն առկա են հայերենի բոլոր բարբառներում: Այնուամենայնիվ, կարելի է գտնել նաև յուրօրինակ, ինքնատիպ ձևեր, ինչպես, ասենք, *լէ* (առանց *ս-ի*) բառաձևը՝ Արդվինի բարբառում գործառող, որը Հ.Աճառյանի կարծիքով՝ «նորօրինակ երևույթ է հայերենի բարբառներում»³:

Նմանատիպ բառաձև մենք գտել ենք նաև Մշո բարբառում՝ բացառապես խոսքի շղթայում, ինչպես, ասենք՝ *Հ՛ըմմէն գ՛ածին, յէ յէ գ՛ածի*:

Հոգնակի առաջին դեմքի դերանունը, որ գրաբարում *մեք* էր, հետգրաբարյան հայերենում գրեթե բոլոր բարբառներում դարձել է մենք (ն-ի հավելում): Հ.Աճառյանը դա բացատրում է հարասության օրենքով. տվյալ դեպքում «ոնգականից հետո կրկնվել է *ն* ձայնը՝ ճիշտ ինչպես ունենք կանաչ > կանանչ, կամաց > կամանց, կամուրջ > կարմուջ > կարմունջ և այլն»⁴:

Մասունի բարբառի խոսվածքներում գործառում է հենց *մըք*-ը (մըք գրկըրըք): Գեղիեգուզանի խոսվածքում սովորական է *ի* հենարանով ձևերի գործածությունը, ինչպես՝ *Մըկի կացիք, տուկի մացիք* (մենք գնացինք, դուք մնացիք)⁵:

Մշո բարբառի ուսումնասիրությանը նվիրված մենագրության մեջ կարծիք է հայտնվում, որ ստացական դերանվան իմաստը արտահայտվում է «*մի, ձի* բառերի և անձնական դերանունների հոգնակի տրական հոլովի օգնությամբ՝ *օղնէր մի* (իմ, մեր ոտքերը), *տընէր ձի* (ձեր տները), *խէլք մի* (իմ, մեր խելքը) և այլն»⁶:

Ինչպես երևում է շրջուն շարադասությամբ ոճական լրացուցիչ բաշխում ենթադրող այս կառույցներից, առաջին դեմքի դերանվան թե՛ եզակին և թե՛ հոգնակին արտահայտվում են *մեր* (տվյալ դեպքում՝ *մըք*) դերանվան վերջնահնչյունի կորստով առաջացած *մի* բառաձևով, ինչպես հետևյալ օրինակում՝ *Օղնէր մի*

³ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 2, Ե., 1954, էջ 59

⁴ Նույն տեղում, էջ 58:

⁵ Տե՛ս Վ. Պետոյան, *Մասունի բարբառ*, Ե., 1954, էջ 45:

⁶ Ս. Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառ*, Ե., 1958, էջ 98:

պաղան (իմ ոտքերը կամ մեր ոտքերը սառեցին): Նույն երևույթն առկա է Սասունի բարբառում:

Հետաքրքիր իրողություններ են ի հայտ գալիս անձնական դերանունների հոլովական համակարգը քննելիս, ինչպես, ասենք, այն, որ անձնական *ես* դերանվան հայցական հոլովաձևը նման է ուղղականին: Այլ խոսքով՝ առավել պարզ է և մոտ անվանական հոլովմանը:

Նման փաստեր շատ կարելի է գտնել հատկապես մեր կողմից քննվող բարբառախմբում: Տիգրանակերտի բարբառով գրանցված բանահյուսական պատառիկներում կան ասվածը հաստատող օրինակներ, ինչպես. *Ըմնընէ՛ դարան, յէսի* (ինձ) *չըդարան*:

Նախդրիվ հայցականով առանձնացող բարբառներում *զ* նախդիրն առ այսօր կենսունակ է: Մշո բանահյուսությունից բերենք օրինակ.

*Ապօ՛, մամօ՛, կարկէք զիս,
Ջ՛ ուլհագ տրդին տրվէք զիս,
Թալէ գմաբօք, գ՛ ըրգէ զիս...*

Այս բարբառում առաջին դեմքի անձնական դերանվան բացառական հոլովաձևը նույնպես ինքնատիպ է՝ *հ՛իսնէ*: Ասենք՝ *Հ՛իսնէ ի՛նձ է գ՛ ուլգիս* (ինձնից ի՛նչ ես ուզում): Սասունի բարբառը նույնպես ունի համարժեք ձև՝ *իսնա*: Հակադրվելով Ա.Այտընյանի հայտնած այն կարծիքին, թե որոշ բարբառներում անձնական դերանվան եզակի առաջին դեմքի բացառական հոլովում առկա *յիսնէ* (Մուշ) և *յիսմէ* (Պուլիս) ձևերն ակնհայտորեն հայցական հոլովից են ծագում և ոչ թե՛ տրականից, ինչպես ընդունված է կարծել՝ Հ.Աճառյանը տարակուսանք է հայտնում՝ արձանագրելով. «Ըստ այսմ՝ մնում ենք երկընտրանքի մեջ և չենք կարողանում որոշել *իզմէ, իսմէ, իսնէ* ձևերի ծագումը»⁷:

Մեր կարծիքով՝ խնդրո առարկա բարբառներում կիրառվող բացառական հոլովի այդ և *հ՛իսնէ* ինքնատիպ ձևերը հայցականից են սերում, թեև այս աշխատանքում մենք ընդամենը փաստում ենք սովյալ բարբառախմբում գործառող դերանվանական ինքնատիպ

⁷ Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 77:

ձևերի առկայությունը՝ դրանց ծագումնաբանությանն այլ ուսումնասիրությամբ անդրադառնալու համար:

Մշո բարբառում անձնական դերանունների սեռական՝ *իմ, քու, մեր, ձ էր* հոլովածներն ունեն նաև գուգաձևություններ՝ *իմուն, քումուն, մերուն, ձ էրուն*, որոնք ի հայտ են գալիս փոխանվանաբար հոլովվելիս: Բարբառի քննությանը նվիրված մենագրության մեջ այդ ձևերը դիտարկվում են որպես ստացական դերանուններ⁸: Իհարկե, գրաբարյան *քո* ստացական դերանվան տրականի՝ *քում* – ի հետ աղերսն ակնհայտ է, և Մշո բարբառի Մկրագոմ գյուղի խոսվածքով կարելի է ասել՝ *Իմ ու քում մը խառնէ* (մի՛ խառնիր): Նույնպիսի օրինակ բերենք Սասունի պարերգից՝ *Ըմ յար քրց քում է՛լ խօրօղից* (Իմ յարը քոնից ավելի սիրուն է)⁹:

Քանի որ անձնական դերանունները անձնանիշ են և իմաստաբանական պլանում՝ միշտ որոշյալ, ուստի և հոդառու չեն: Միայն փոխանվանական նշանակությամբ սեռականի ձևը կարող է հոդ ստանալ և իբրև անկախ, «ուղիղ» ձև՝ հոլովվել՝ *իմուն, քումուն, մերուն, ձ էրուն*: Բերենք օրինակ Մշո ասացվածքներից. *Խաճ իմուն է, զօրուտէն յէ՛ս գինամ*:

Նույնատիպ օրինակներ կարելի է բերել նաև Սասունի բարբառով գրառված ազգագրական նյութերից. *Մէլիք գըսը. «Տավի՛տ, մըզը հէրտ իմու՛նը, թը՛քը մունը»*¹⁰:

Մեր կարծիքով՝ ինքնատիպ երևույթ է Տիգրանակերտի բարբառում եզակի երկրորդ դեմքի *թուն* դերանունը փոխանվանաբար հոլովելիս ի հայտ եկող *քումէ* հոլովածը՝ *քոնը* բառիմաստով: Բարբառին նվիրված մենագրության մեջ վկայվում է, որ հատկապես անեծքներում է հանդիպում այս հոլովածնի յուրօրինակ ու հետաքրքիր գործածություն, երբ դրվելով հետադաս՝ ստորոգյալից հետո, արտահայտում է *քո* հոլովածնի իմաստ, ինչպես՝ *Վիզիթ գ՛օղրի քումէ* (քո վիզը կոտրվի): Մենագրության հեղինակը գտնում է, որ «այս երևույթը զուցե պետք է բացատրել պատմականորեն

⁸ Տե՛ս **Ս.Բաղդասարյան-Թափալցյան**, նշվ. աշխ., էջ 97:

⁹ Տե՛ս **Վ.Պետոյան**, նշվ. աշխ., էջ 79:

¹⁰ *Հայ ազգագրություն և բանահյուսություն*, հ. 19, Ե., 1999, էջ 38:

դերանվան սեռական և տրական հոլովիմաստների միասնացման, միաձուլման միտումով»¹¹: Կարծում ենք, որ այդ հոլովիմաստների միասնականությունը բարբառում եղել է ի սկզբանե:

Ինքնատիպ կարելի է համարել նաև ոչ օրինաչափ հնչյունափոխության ենթարկված (անճանաչելիորեն փոխված) դերանվանական ձևերը: Մշո բարբառում *հ՛իրար* (իրար) փոխադարձ դերանունը *հետ* կապով ձևի պարագա է ձևավորում՝ *հ՛իրարու հետ*: Սակայն բարբառին բնորոշ է նաև *հետ* կապի նախադաս կիրառությունը (հեղ ուր մօր, հեղ մըզի), իսկ *իրար* դերանվան հետ առաջին հայացքից տարօրինակ՝ *խըղրաց* բառաբաղադրությունն է կազմում, քանի որ *հ-խ* հնչյունափոխությունը օրինաչափ չէ Մշո բարբառի համար, թեև նմանատիպ օրինակ է նաև, ասենք, *լուսադեմին* իմաստով գործառող *խըղըսուն* (հետ+լուսուն) ժամանականիշ բառը: Հետաքրքիր դերանվանական ձևեր են ի հայտ գալիս նաև որոշյալ և անորոշ դերանունները քննելիս: Մշո և Սասունի բարբառում գործառող *ամեգ* դերանունն առաջին հայացքից կապվում է *ամենքը* որոշյալ դերանվան հետ: Մինչդեռ այն ուղղակի *ամեն մեկը* որոշյալ դերանունն է՝ «յուրաքանչյուրը» նշանակությամբ (բաղադրիչների կցումով և մեկ շեշտով արտասանելիս հնչյունների կորստով): Այսպես՝ *Ամեգ հավկ՝ վըր ուր էրմին* (յուրաքանչյուր հավք՝ իր երամի հետ): Անորոշ դերանունների գործառույթին անդրադառնալիս կարելի է նշել անորոշ հողին համարժեք *մեկ* (մի, մե, մը) բառի մասին, որ համատարած է հայերենի բարբառներում, և իբրև յուրահատկություն՝ ներկայացնենք Մշո բարբառում այդ դերանվան կրկնահավելման երևույթը, ինչպես՝ *Մէ կընիզ մը տեսա, մէ տըղէ մէ կար հեղ՝ մազէր հուստըզուզ* (հյուսած): Կամ, ասենք, Ալաշկերտի խոսվածքով բերվող այս ասացվածքում՝ *Մէգ մէ մէգու անուն իղա՝ յա դ՝ ուռնա, յա հ էրտիզ*¹²:

Հ. Աճառյանի վկայությամբ՝ աշխարհի շատ լեզուներում սովորական է *մարդ* բառին անորոշ դերանվան իմաստ վերագրելը:

¹¹ Տե՛ս **Ա. Զանեյան**, *Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 159:

¹² Տե՛ս **Ք. Մադաթյան**, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985, էջ 158:

Դա բնորոշ է նաև հայերենին¹³: Անորոշության իմաստն առավել խտանում է *մատուցում* բառաբաղադրության մեջ, որ գործածական է Մշո բարբառում, ինչպես՝ *Խըյ* (հո) *մատուցում* *չըտէսա՞վ ըզըզի՞*¹⁴:

Հարցահարաբերական *ուր* դերանվան արժեքով Մշո բարբառում գործառող *դ'որ* ձևը, հավանաբար, *ընդ* նախդրի և *որ* հարցական դերանվան կցումով (ընդ+որ), ինչպես նաև առաջին վանկի անկումով խոսելիս առաջացած բառաձև է՝ օրինաչափ հնչյունափոխությամբ: Գործողության ուղղություն ցույց տվող այս դերանունն առկա է Մշո, Սասունի բարբառներում՝ իր գործառական շառավղի մեջ ընդգրկելով նաև արևելյան խմբակցության մի շարք բարբառներ (Բայազետի, Ջուղայի և այլն): Ակնհայտ է, որ այդ բարբառախմբում *ինչու՞* հարցական դերանվան իմաստով գործառող ձևերը *ո՞ր* դերանունից են սերում՝ *օրի՞* (Սասուն), *հ'օրի՞* (Մուշ): Բերենք մեկ օրինակ Տարոն-Տուրուբերանի ազգագրական գոտին ընդգրկող ժողովրդական հեքիաթներից.

«Օրբմ հ'օրի՞ չըս էրտա օլըրդի քու էրգիր՝ տեսնաս ի՞մալ է, ի՞մալ չէ քու ժողովուրտ, վօր ըզվի ը վըրէն գօր կէնէ» (մի օր ինչու՞ չես գնում քո երկրներում շրջելու, որ տեսնես՝ ինչպե՞ս է, ինչպե՞ս չէ քո ժողովուրդը, ո՞վ է ում ճնշում)¹⁵: Նույն այս օրինակում առկա է Մշո բարբառի դերանվանական համակարգում գործառող հարցահարաբերական *ուլ* դերանվան ուղղական հոլովի ինքնատիպ մի ձև՝ *վօր*: Կարելի է ասել՝ *Վօ՞ր էգալ ձ ըր տուն*: Ըստ Հ. Աճառյանի՝ «Ո՞ւն *ո՞վ* միևնույն բառերն են. բուն ձևն է՝ *ո*, որ սկզբում բնականաբար *ո* ընդհանուր գործածությունն ուներ, հետո՝ ձայնավորի մոտ պատահած ժամանակ, ներդաշնակության համար (հորանջից խուսափելու նպատակով) ավելացավ *վ* բաղաձայն, իսկ *ո* մնաց բաղաձայնի մոտ»¹⁶: Ապա ավելացնում է, որ Մշո և Բայազետի

¹³ Տե՛ս Հ.Աճառյան, նշվ. աշխ., հ.2, էջ 415:

¹⁴ Տե՛ս Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Ե., 1972, էջ 93:

¹⁵ Տե՛ս Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 13, Ե., 1985, էջ 258:

¹⁶ Հ.Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 389:

բարբառները «կորցրել են նաև *ու/ը* և ունեն միայն *վոր*»¹⁷: Սասունի բարբառում օրինաչափ է *վըր* բառաձևը՝ *Վը՞ր ը զըսը* (ո՞վ է ասում):

Նշենք նաև հետևյալը. քանի որ հարցական *վօ՞ր* դերանվան հոգնակին բացակայում է Մշո և Սասունի բարբառներում, այդ իմաստն արտահայտելուն օգնում է հոգնակի թվով ստորոգյալը, ինչպես՝ *Վը՞ր ը զըսին*:

Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի դերանվանական համակարգում առկա հետաքրքիր իրողությունների փնտրտուքը ևս մեկ անգամ հաստատում է նշանավոր բարբառագետ Ա.Ղարիբյանի այն կարծիքը, որ «շատ հաճախ դերանուններն են բարբառների հարևան լինելու հանգամանքը պարզելու հայտանիշը»¹⁸:

Барнасян Джемма – Местоимение в Муш-Тигранакертской группе диалектов. – В работе рассмотрены местоимения юго-центральной или Муш-Тигранакертской группы диалектов Западной групп-пировки с учетом своеобразия форм. Результат исследования вновь подтверждает мнение выдающегося диалектолога А. Гарибяна о том, что очень часто местоимения являются показателем, позволяющим установить соседство диалектов.

Barnasyan Jemma – The Pronoun in Mush-Tigranakert Dialect Groups. – In the paper studied the pronouns south-central or Mush-Tigranakert dialect group of Western grouping taking into account the singularity of forms. The result of the study again confirms the opinion of famous dialectologist A.Gharibyan that very often the pronouns are the indication of clarifying the circumstance of dialects being neighbors to each other.

¹⁷ Նույն տեղում, էջ 394:

¹⁸ Ա.Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 144:

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ
ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ¹**

Գայանե Գևորգյան

Հայերենի եղանակաժամանակային համակարգերը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են որոշակի փոփոխությունների, որոնք իրենց արտացոլումն են գտել բարբառային միավորումներում: Զուգադրական քննության ենթարկելով հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի հետ առնչվող իրողությունները շուրջ 500 բնակավայրերի լեզվական փաստերի հիման վրա՝ կարելի է նշել մի քանի առանձնահատկություններ²:

1. Հայերենի բարբառներում միմյանց հակադրվում են 5 եղանակաձև՝ սահմանական, ըղձական, հարկադրական, ենթադրական և հրամայական: Առաջին չորսը հրամայականին հակադրվում են եղանականիշ մասնիկի առկայություն-բացակայություն հատկանիշով, ինչպես նաև կազմության վերլուծական կամ համադրական տիպով: Ըղձական եղանակի ժամանակաձևերին հատուկ չէ եղանականիշ մասնիկի գործածությունը, և նրանց եղանակային իմաստը արտահայտվում է բայահիմքով և դիմաթվանիշ թեքությամբ: Սահմանական եղանակը արևմտյան խմբակցության բարբառներում հատկանշվում է եղանականիշ մասնիկի առկայությամբ, իսկ արևելյան խմբակցությունում՝ վերլուծական կազմությամբ: Արևելյան խմբակցության բարբառներում (բացառությամբ Ագուլիս-Մեղրիի բարբառախմբի³) ենթադ-

¹ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 253-256:

² Հոդվածում օգտագործված են Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերի տվյալները, որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

³ Եղանակաժամանակային ձևերի տարածական բնութագիրը տալիս օգտվել ենք Գ. Զահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական քննության արդյունքում

րական եղանակի ժամանակաձևերը ըղձականին հակադրվում են *կու* եղանականիշ մասնիկի առկայությամբ: Հարկադրական եղանակը ըղձականին և եղանականիշ մասնիկով սահմանականին ու ենթադրականին հակադրվում է հարկադրական և սահմանական ապառնիների իմաստներ արտահայտող *պիտի* եղանականիշով: Հրամայական եղանակի ժամանակաձևերը նշված եղանակների կազմություններին հակադրվում են միայն 2-րդ դեմքում գործառող դիմաթվանիշների առկայությամբ:

2. Արևելյան և արևմտյան խմբակցության բարբառներում եղանակային ձևերը հակադրվում են ոչ միայն արտահայտության, այլև բովանդակության պլանում: Այսպես՝ ըղձական եղանակի ժամանակաձևերը արտահայտում են գործողության կատարման ցանկություն, հրամայականինը՝ հրաման, խնդրանք: Սահմանական եղանակի ժամանակաձևերը արևելյան խմբակցության բարբառներում դրսևորում են խոսելու պահին, նրանից առաջ կամ հետո կատարելի գործողություն, արևմտյան խմբակցությունում՝ նաև ենթադրաբար կատարվելիք գործողություն: Ենթադրականը արևելյան խմբակցությունում ևս արտահայտում է պայմանով կամ ենթադրաբար կատարելի գործողություն և ունի առանձին ձև, մինչդեռ արևմտյանում ենթադրականի և սահմանականի եղանակային իմաստները հատկանշվում են ձևային նույնությամբ: Դրանց իմաստային տարբերությունը դրսևորվում է խոսքաշարում: Հարկադրական եղանակի ժամանակաձևերին արևելյան խմբակցության բարբառներում բնորոշ է հարկադրաբար, արևմտյան խմբակցությունում՝ նաև հաստատապես կատարելի գործողության իմաստներ:

3. Տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերը, կրելով ներլեզվական ու արտալեզվական գործոնների ազդեցությունը, ժամանակի ընթացքում ենթարկվել են

առաջացած բարբառային միավորների դասակարգումից, և դրանց տարածքային նկարագիրը ներկայացվում է՝ ըստ բազմահատկանիշ դասակարգման (տե՛ս **Գ. Զահուկյան**, *Հայ բարբառագիտության ներածություն*, Երևան, 1972, էջ 132-136):

տեղաշարժերի: Դրանք պայմանավորված են բարբառային ազդեցություններով և ներթափանցումներով, եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկների հնչյունական և իմաստային անցումներով, դրանց անկմամբ կամ մեկ ուրիշով փոխարինմամբ, ինչպես նաև կաղապարային կառույցների գործառական սահմանափակմամբ: Բարբառային միավորների մի մասում տեղաշարժեր տեղի են ունեցել եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկներով կազմություններում. եղանականիշը փոխարինվել է մեկ այլ մասնիկով (*կոր*-ի փոխարեն գործածվում է *ունի*//*զունի*-ն, *դէ* եղանականիշի փոխարեն *դար*-ը⁴), գործածությունից դուրս է ընկել (*էր*-ը⁵), ենթարկվել հնչյունափոխության (*հայկակ-հայ*) կամ կրել իմաստագործառական փոփոխություն (*ա, ը, կա* մասնիկներ)՝ շարունակականի ժամանականիշ մասնիկներից վերածվելով ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստակիրների: Համշենի բարբառի խոսվածքներում ապառնի ժամանակաձևերի կառուցվածքային կաղապարների գործառության տեղաշարժ է նկատվում սահմանական և հարկադրական ապառնիների կազմություններում: Պիտի եղանականիշ մասնիկով բայաձևերին զուգահեռ գործածվող ենթակայական դերբայով հարադրությունները, նախապես արտահայտելով հարկադրական և սահմանական ապառնիների իմաստներ, ներկայումս որոշ վայրերում պահպանվել են միայն ժխտական խոնարհման հարացույցում:

4. Տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերում առկա են քերականական համանունության ներհարացուցային և միջհարացուցային տիպերը՝ իրենց տարաբնույթ դրսևորումներով: Միջհարացուցային համանունությունը արտահայտվում է դիմավոր բայաձևերի, դերբայի և դիմավոր բայաձևի, դերբայական ձևերի միջև՝ դիմաթվանիշների և վերջամասնիկների համանունությամբ պայմանավորված: Դիմավոր բայաձևերի միջև

⁴Տե՛ս Ն. Խաչատրյան, *Շապին Գարահիսարի բարբառ*, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 2, Երևան, 1985, էջ 149:

⁵ Տե՛ս Ա. Ղաթիբյան, *Հայ բարբառագիտություն*, Երևան, 1953, էջ 184:

առկա համանունությունը դրսևորվում է ըղձական ապառնիի և անցյալի ապառնիի եզակի 3-րդ (կըրէմ, կըրէս, կըրի) և ըղձական անցյալի եզակի 1-ին (խօսի, խօսիր, խօսէր), ի լծորդության բայերի ըղձական ապառնիի եզակի 3-րդ (հավնիմ, հավնիս, հավնի) և անցյալի եզակի 1-ին (հավնի, հավնիր, հավնէր), ինչպես նաև ապառնիի (հավնինք, հավնէք, հավնին) և անցյալի (հավնինք, հավնիք, հավնին) հոգնակի 1-ին և 3-րդ, ըղձական ապառնիի (զը գըրիմ, գը գըրիս, գը գըրա, գըգըրինք, գըգըրիք, գըգըրին) և անցյալի (կըխօսի, կըխօսիր, կըխօսէր, կըխօսինք, կըխօսիք, կըխօսին) հոգնակի բոլոր դեմքեր, ըղձական ապառնիի հոգնակի 2-րդ (*կըրմ, կըրս, կրէ, կըրք, կրէք, կըրն*), անցյալի եզակի 1-ին, հոգնակի 1-ին և 2-րդ (*կրէք, կրէր, կրէր, կրէք, կրէք, կրէն*) դեմքեր ըղձական ապառնիի և հրամայական եղանակի 3-րդ դեմք (*ըսիմ, ըսիս, ըսէ*) և եզակի հրամայական (*գըրէ՛, բըռնէ՛, գաբէ՛*), 3-րդ դեմքի (ընձէր, ընձէր, ընձէր) և եզակի հրամայականի (ընձէ՛ր Բայաձևերի միջև:

Համանունության հաջորդ դրսևորումները ըղձական և հրամայական եղանակների հոգնակի թվի կազմություններին են վերաբերում [ըղձական ապառնիի հոգնակի 2-րդ դեմք (խըմէմ, խըմէս, խըմէ, խըմինք, խըմէք, խըմին) և հոգնակի հրամայական (խաձէք), ըղձական անցյալի հոգնակի 2-րդ դեմք և հոգնակի հրամայական (ընձէք (հնձէի, հնձէք)]: Միջհարացուցային համանունություն է առկա նաև դիմավոր Բայաձևերի և Ժխտական {(ըղձական ապառնիի եզակի 3-րդ դեմք (խումիմ, խումիս, խումէ) և Ժխտական դերբայ (չըքօմ) խումէ), ըղձական անցյալի ապառնիի 1-ին դեմք (խուսի (խուսէի) և Ժխտական դերբայ (չիմ) ասի), ըղձական անցյալի ապառնիի եզակի 3-րդ դեմք (պանէր էմ (գործէի), պանէր էս, պանէր) և Ժխտական դերբայ (չի) պանէր էմ, (չի) պանէր էս)} և վաղակատար դերբայների միջև {ըղձական անցյալի ապառնիի 3-րդ դեմք (գիխօսի, գըխօսիյ, գըխօսէյ) և վաղակատար դերբայ (կըյէ (էմ), ըղձական անցյալի ապառնիի եզակի 2-րդ դեմք (կըրիմ, կըրիր, կըրէր) և վաղակատար (կըրիր (էմ)}:

Ներհարացուցային համանունությունը դրսևորվում է ըղձական անցյալի ապառնիի Ժամանակաձևերում՝ դիմաթվանիշ վեր-

ջավորությունների նույնարժեքությամբ պայմանավորված: Վերջիններս համանուն գույգեր են կազմում եզակի և հոգնակի թվի տարբեր դեմքերում՝ եզակի 2-րդ և 3-րդ (*մընէ, մընէր, մընէր, մընէնք, մընէք, մընէն, մընէն*), եզակի 1-ին, 2-րդ, 3-րդ (*խօւէր, խօւէր, խօւէր, խօւէնք, խօւէնք, խօւէն, խօւէն*), եզակի 2-րդ, 3-րդ (էր), ինչպես նաև եզակի և հոգնակի 1-ին (էնք) (*խօւէնք, խօւէր, խօւէր, խօւէնք, խօւէք, խօւէն*), եզակի 2-րդ, 3-րդ, հոգնակի 1-ին ու 2-րդ (*խօւէմ, խօւէր, խօւէր, խօւէկ, խօւէկ, խօւէն*), եզակի 2-րդ, 3-րդ (էր), ինչպես նաև եզակի 1-ին, հոգնակի 1-ին ու 2-րդ՝ (էկ) (*խօւէկ, խօւէր, խօւէր, խօւէկ, խօւէկ, խօւէն*), հոգնակի 1-ին և 2-րդ (*գինայի, գինայդ, գինար, գինայկը, գինայկը, գինայնը*), եզակի և հոգնակի 1-ին (*մընէնք, մընիր, մընէր, մընէնք, մընիք, մընէն*):

Ի մի բերելով դիմաթվանիշների նյութական արտահայտության ձևերը՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումը: Քանի որ բարբառներում առկա է եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի դիմաթվանիշների համանություն, սակայն չի արձանագրվել եզակի 1-ին և 3-րդ դեմքերի թեքությունների նույնության որևէ դեպք, հետևաբար ենթադրելի է, որ նախապես *ի* հնչյունի անկմամբ ձևային միևնույն արտահայտությունն են ստացել եզակի 2-րդ և 3-րդ դեմքերը, որոնք գրաբարում տարբերվում էին միայն *ի* հնչյունի առկայությամբ (էիր-էր), այնուհետև՝ 1-ին դեմքը՝ առաջացնելով եզակի թվի դիմային վերջավորությունների համանունության եռանդամ շարք: Համանման ճանապարհով, ըստ երևույթին, սկզբնապես կատարվել է նաև հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի նույնացում, որոնց տարարժեքությունը գրաբարում պայմանավորված էր *ա* և *ի* հնչյուններով (աք-իք): Ենթադրելի է, որ ավելի ուշ դիմային վերջավորությունների զարգացման գործընթացը հաջորդաբար ընդգրկել է նաև եզակի և հոգնակի թվի 1-ին դեմքերը: Թերևս հիշյալ երևույթը նախորդել է *ն* ռնգայինի հավելմանը, քանի որ բարբառային մի շարք միավորներում արձանագրված է հոգնակի և եզակի 1-ին դեմքերի համանունություն առանց *ն* դիմանիշի: Նման դեպքում նկատելի է եռանդամ համանունություն. եզակի և հոգնակի 1-ին, ինչպես նաև հոգնակի 2-րդ դեմքերում գործածվում է *-էք*

վերջավորությունը: Կարելի է ենթադրել, որ վերոնշյալ եռանդամ համանունությունն էլ նոնգայինի հավելվածն արտադրում է դարձել:

5. Հայերենի տարածքային տարբերակների եղանակաժամանակային կազմություններին բնորոշ է համանիշությունը, այսինքն՝ նույն իմաստի դրսևորման համար քերականական տարբերկառույցների կիրառումը բայական հարացույցներում: Դրանք եղանակաժամանակային ձևերը կազմելիս գործառուում են ձևաբանական այնպիսի միջոցներ, որոնք հատկանշվում են իմաստային համարժեքությամբ և ձևային տարարժեքությամբ: Բարբառային նյութի դիտարկումից պարզվում է, որ բայական համակարգում առկա համանիշության դրսևորումները զուրկ են միօրինակությունից և անհամասեռ պատկեր են ներկայացնում ոչ միայն ըստ տարածական բնութագրի, այլև բայական միևնույն հարացույցի ներսում⁶:

Ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերում, ըստ համանիշ կազմությունների գործառության, առանձնացնում ենք բարբառային տարածքներ, որոնցում համանիշների առկայությունը պայմանավորված է դերբայակազմ և մասնիկակազմ (*սիրիլ իմ//գրսիրում*), դերբայակազմ և գրաբարատիպ ձևերի (*խօսում ի//խօսի*), դերբայի և նրա փոփոխակի (*մընում//մըմըմ էմ*) գործածությամբ, նույն բայի տարբեր դեմքերով (*սպրեղիս ըմ* (1-ին), *սպրեղում ըս* (2-րդ), *սպրեղում ի* (3-րդ), ժխտական օժանդակ բայով (*չըբօւ սիրէ//չիմ սիրէ*): Անցյալ ժամանակաձևերում առկա համանիշության դրսևորումները պայմանավորված են տարբեր կազմությունների՝ մասնիկակազմ և դերբայակազմ (*խըմամ// խըմամ ըմ* (խըմեցի), դերբայական տարարժեք ձևերի (կըրած էմ// կըրեր էմ), նույն դերբայի փոփոխակների (*չըմ (չի) խակիր// խա-*

⁶ Քանի որ լեզվաբանական գրականության մեջ նույնանիշները համանիշների մի տեսակ են համարվում և կոչվում են բացարձակ համանիշներ (տե՛ս Ն. Պառնասյան, *Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում*, Երևան, 1970, էջ 24), այդ պատճառով էլ դրանց դրսևորումները կներկայացվեն *քերականական համանիշություն* անվանմամբ:

կիրի)⁷, բայական տարբեր հիմքերի (չափիցի/չափի) գործառու-
թյամբ:

Ապառնի ժամանակաձևերում համանիշ կազմություններ են առաջանում՝ պայմանավորված նույն դերբայի տարբեր վերջա-
մասնիկներով (*ըհըլական ըմ* (ի)//*ըհըլան ըմ* (ի) (ասելու եմ, էի),
դերբայակազմ և մասնիկակազմ ձևերի (*նըստիմ ինի* կամ *փօրօղ
ըմ*) կառուցատիպերով:

6. Եղանակի կարգը տարածքային տարբերակներում բնորոշ-
վում է քերականական բազմիմաստությամբ (բովանդակության
պլանում): Նկատելի է, որ ձևային նույնությամբ բնութագրվող եղա-
նակաժամանակային կազմությունները հաճախ իմաստային տար-
բեր բեռնվածություն ունեն: Ժամանակաձևերի քերականական
բազմիմաստությամբ նույնպես հակադրվում են արևելյան և
արևմտյան խմբակցության բարբառները: Բազմիմաստություն
հիմնականում առկա է արևմտյան խմբակցության բարբառների
եղանակաժամանակային համակարգերում, որոնցում բացակա-
յում է եղանակաժամանակային իմաստի արտահայտման այս կամ
այն ձևը: Սակայն եթե գրաբարում դրանց ձևաբանական հակա-
դրությունը արտահայտվում էր դիմաթվային վերջավորություննե-
րի միջոցով, ապա բարբառներում վերջինիս գումարվում է նախա-
մասնիկների առկայություն կամ բացակայություն հատկանիշը:
Արևելյան խմբակցության բարբառներում բազմիմաստություն է
դրսևորվում հարակատար և վաղակատար դերբայներով կազմված
վերլուծական ժամանակաձևերում: Վերոնշյալով պայմանավոր-
ված՝ սահմանազատում ենք բազմիմաստության երկու շարք՝ երկ-
անդամ և եռանդամ: Երկանդամ շարքում տարբերակվում են
հետևյալ ենթախմբերը՝

ա) սահմանական ու հարկադրական ապառնիի և անցյալի
ապառնիի (բըր կըրիմ (գրելու եմ, պիտի գրեմ), բըր կըրեր (գրելու
էի, պիտի գրեի),

⁷ Տե՛ս Մ. Մուրադյան, *Շատախի բարբառը*, Երևան, 1962, էջ 21:

բ) սահմանական ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի (կընձիմ (հնձում եմ, կհնձեմ), կընձէր (հնձում էի, կհնձէի),

գ) մի կողմից՝ սահմանական ու հարկադրական ապառնիի և անցյալի ապառնիի, մյուս կողմից՝ սահմանական ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի (*կըխըմիմ կազմությունը ունի խմում եմ և կխմեմ, կըխըմէի-ն՝ խմում էի և կխմէի*, իսկ *պի խըմիմ և պի խըմէի* ձևերը՝ համապատասխանաբար *խմելու եմ, պիտի խմեմ* և *խմելու էի, պիտի խմէի* իմաստները)⁸,

դ) հարակատար-վաղակատար ներկա-անցյալի (բիրձրիյաձ ըմ (բարձրացել եմ, բարձրացած եմ),

ե) վաղակատար ներկա-անցյալի և անցյալ կատարյալի (խըմալ ըմ (խըմել եմ և խըմեցի):

Եռանդամ շարքում առանձնացվում է երկու ենթախումբ՝

ա) սահմանական ներկայի և անցյալ անկատարի, սահմանական և ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի (կըմընամ (մնում եմ, մնալու եմ, կմնամ), կըմընէ (մնում էի, մնալու էի, կմնայի),

բ) ըղձական, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, սահմանական ներկայի և անցյալ անկատարի (գըրիմ (գրում եմ, գրեմ և կգրեմ):

Վաղակատար դերբայով արտահայտվող բազմիմաստությունը կոչել ենք միջբարբառային, քանի որ առկա է բարբառային տարբեր միավորներում, իսկ բազմիմաստության մյուս բոլոր արտահայտությունները անվանել ենք ներբարբառային՝ տարածքային նույն միավորի ներսում դրսևորվելու համար:

Այսպիսով, հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերը տարաբնույթ փոփոխությունների և հետագա զարգացման արդյունք են և ձևավորվել են՝ լեզվի ներքին զարգացման օրինաչափություններով, ձևաբանական ու հնչյունական օրենքներով պայմանավորված:

⁸ Ղ. Կոստանդյան, *Երզնկայի բարբառը*, Երևան, 1979, էջ 105:

Геворкян Гаяне - Наблюдения за сравнительными исследованиями систем времен и наклонений армянских диалектов. - Армянские диалекты имеют пять взаимоисключающих форм наклонения. Контраст заключается, прежде всего, в наличии/отсутствии элемента, указывающего на настроение, а также в аналитическом или синтетическом типах образования. Наклонение и временные формы региональных разновидностей отличаются грамматической омонимией, омографией и полисемией.

Gevorgyan Gayane -Observations on Comparative Studies of Tense and Mood Systems of Armenian Dialects. - Armenian dialects have five mutually exclusive mood forms. The contrast lies primarily in the presence/absence of mood indicating element, as well as analytical or synthetic types of formation. Mood and tense forms of regional varieties are marked with grammatical homonymy, homography, and polysemy.

ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ¹

Գայանե Գևորգյան

Բարբառների եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ հայերենի տարածքային տարբերակներում առկա են եղանակաժամանակային ձևերի կառուցատիպերի տարբեր կաղապարներ: Ժամանակակից հայերենի բայական կազմությունների կաղապարում կատարել են Գ. Ջահուկյանը, Է. Աղայանը և Լ. Խաչատրյանը²: Է. Աղայանի նշած բայակազմական կառուցվածքային կաղապարները պայմանավորված են ձևութաբանական, բայակազմական, հիմքակազմական և ձևակազմական մակարդակներով³: Ըստ Գ. Ջահուկյանի՝ «Կաղապար ասելով պետք է հասկանալ տվյալ լեզվում հնարավոր բոլոր տիպերն ընդգրկող կառուցվածքային սխեման: Խոսքի մեջ կաղապարի մասերը կարող են լրացվել տարբեր չափով, և այս դեպքում մենք կունենանք մասնիկների տարբեր քանակ ընդգրկող տիպերը»⁴: Լ. Խաչատրյանի կարծիքով՝ «Կաղապարները որոշակի բնագավառի մոդելներ են, որտեղ ցույց են տրվում տվյալ կառուցվածքի բաղադրիչների դասավորությունը, որից էլ բխեցվում են նրանց իմաստային-քերականական կապերը»⁵:

Հայերենի տարածքային տարբերակներում գործառող ժամանակաձևերը կաղապարային կառույցներով ներկայացվում են առաջին անգամ, որի համար ընտրել ենք հետևյալ սկզբունքը: Նախ՝ դրանք դասակարգել ենք՝ առանձնացնելով դրական և

¹ Բանբեր Երևանի համալսարանի, 2014, 2, էջ 88-94:

² Է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Ե., 1967, Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, Լ. Խաչատրյան, *Բարակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում*, Ե., 2011:

³ Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 379:

⁴ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 114:

⁵ Լ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 3:

ժխտական խոնարհման հարացույցներում գործածվող ձևերը, այնուհետև, այդ ժամանակաձևերի կառուցվածքային հատկանիշը նկատի ունենալով, վերլուծական և համադրական կազմությունները⁶ կամ տիպերը⁷: Բացի այդ, կաղապարների բաղադրիչները ներկայացվել են հայերեն տառերով, որոնք տվյալ եզրույթի սկզբնահնչյուններն են կամ հնչյունակապակցությունները: Կաղապարները կազմել ենք՝ հիմք ընդունելով հետևյալ նշանակումները.

1. Հ – մաքուր հիմք⁸
2. Հա– ձևավոր հիմք⁹
3. Լ – լծորդ ձայնավոր¹⁰

⁶ Գ. Ջահուկյանը որոշակի կաղապարներով ներկայացրել է միայն համադրական կազմությունները՝ ըստ մասնիկների քանակի ընդգրկման լրիվության տարբերելով լրիվ կաղապար կամ լիակաղապար և մասնակաղապար. «...լրիվ կաղապարն ընդգրկում է տվյալ լեզվում հնարավոր բոլոր տիպերը և որոշ դեպքերում կարող է չունենալ և ոչ մի նմուշ. մասնակաղապարներն ընդգրկում են որոշ թվով տիպեր և փաստորեն ներկայացնում են լիակաղապարի մասնակի կառուցվածքային դրսևորումները» (Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 115): Լ. Խաչատրյանի կողմից տրված բայական բառաձևերի կաղապարները ընդգրկում են համադրական և վերլուծական ժամանակաձևերը (տե՛ս Լ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջեր 196, 208):

⁷ Լ. Հովսեփյանը, անդրադառնալով բառակազմագիտական տերմինների քննությանը, առաջ է քաշում *վերլուծական* և *համադրական տիպ* հասկացության գաղափարը՝ այն պատճառաբանելով այսպես. «Տիպ տերմինով մենք նշանակում ենք բառերի կազմության ամենաեական կառուցվածքային հատկանիշը՝ բաղադրիչների կցման սկզբունքը, որը կառուցվածքային տիպաբանության տեսակետից լեզուների լեզուների ձևաբանական դասակարգման ելակետային հատկանիշը կամ չափորոշիչն է՝ քերականական իմաստների արտահայտման ձևը» (Լ. Հովսեփյան, *Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ*, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2009, էջ 105):

⁸ Սույն աշխատանքում, հետևելով Գ Ջահուկյանին, բայահիմքը ներկայացվում է մաքուր հիմք և ձևավոր հիմք տարբերակներով: Գ. Ջահուկյանը մաքուր հիմք է համարում ձևավոր հիմքերի անկախ առնված ձևերը (տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Երևան, 1969, էջ 210):

⁹ Ձևավոր հիմքը վերջավորություններին նախորդող մասն է, որի մեջ մտնում են մաքուր հիմքը, հիմքակազմ մասնիկները և ածանցները (տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 210):

¹⁰ Գ. Ջահուկյանի կազմած կաղապարներում լծորդ ձայնավորները դիմանիշ թեքույթների հետ են ներկայացվում որպես վերջավորություններ, քանի որ, ըստ

4. ԴԹ – լծորդներին հաջորդող դիմաթվային ցուցիչ¹¹

5. Ե – եղանականիշ մասնիկ

6. Ժ – ժամանականիշ մասնիկ

7. Ն – նախահավելված

8. Դ – դերբայ

ԱԴ – անորոշ դերբայ

ԱՆԴ – անկատար դերբայ

ԱՊԴ – ապառնի դերբայ

ՎԴ – վաղակատար դերբայ

ՀԴ – հարակատար դերբայ

ԵՆԴ – ենթակայական դերբայ

ԺԴ – ժխտական դերբայ

9. Օ – օժանդակ բայ

10. ԵԲ – եղանականիշ բայ (պիտեմ և այլն)

11. ԺՄ – ժխտական մասնիկ (չ, ոչ, մի, մեք)

Բարբառների եղանակաժամանակային համակարգում դրական խոնարհման համադրական կազմությունները գործառում են կաղապարային 8 կառույցներով¹²: Դրանք լինում են միանդամ,

Գ. Ջահուկյանի՝ «Խոնարհման քննության ժամանակ լծորդները որպես անկախ մասնիկներ քննելու դեպքում մենք պետք է ընդունեինք, որ խոնարհման համակարգում գոյություն չունի մասնիկների հաջորդման որոշակի կարգ: Այս բանից խուսափելու համար նպատակահարմար է դրանք քննել և՛ առանձին, և՛ որպես բուն մասնիկների կազմիչներ՝ նրանց հետ կապված: Այս սկզբունքը մենք տարածում ենք *գրեիր* ձևի *եիր* կոմպլեքսի վրա՝ այն դիտելով որպես մեկ ամբողջություն» (Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Երևան, 1969, էջ 206):

¹¹ Գ. Ջահուկյանը գործածում է *վերջավորություններ* եզրույթը՝ նկատի ունենալով լծորդ ձայնավորները և դիմաթվանիշ ցուցիչները միաժամանակ. «...այն վերջամասնիկները, որոնք այլ վերջամասնիկներից առաջ չեն հանդիպում և հանդիպում են միայն վերջնային դիրքում, կհամարենք վերջավորություններ (դրանք կարող են լինել մեկ կամ երկու ձայնավորից և հաջորդող մեկ կամ երկու բաղաձայնից կազմված կոմպլեքսներ՝ *ա, եի, եմ, ենք, էիք, էինք...*» (Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 210):

¹² Հայ լեզվաբանության մեջ համադրական են համարվում նաև *պիտի* և *մի* մասնիկներով կազմությունները՝ *պիտի գրեմ, մի՛ գրիր*, թեև դրանց բաղադրիչները առանձին են (տե՛ս Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզու*,

երկանդամ և եռանդամ: Միանդամ կադապարները երկուսն են, որոնք կազմված են մաքուր կամ ձևավոր հիմքից: Երկանդամ 3 կադապար է առկա $\mathcal{N}+\mathcal{Z}$, $\mathcal{Z}+\mathcal{F}\mathcal{O}$, $\mathcal{Z}\mathcal{a}+\mathcal{F}\mathcal{O}$: Դրանք ձևավորվել են մաքուր կամ ձևավոր հիմքերի և դիմաթվային ցուցիչների, ինչպես նաև նախահավելվածի և հիմքի զուգորդումներից: Եռանդամ կադապարները 3-ն են: Դրանցում առկա են մաքուր կամ *ձևավոր հիմք+լծորդ ձայնավոր+դիմաթվային ցուցիչ* և *եղանականիչ մաս-նիկ+ձևավոր հիմք+դիմաթվային ցուցիչ* զուգորդելիությունները:

դրական խոնարհ ում	ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐ	
	Կադապար	Նմուշ

Երևան, 1983, Լ. Եզեկյան, *Հայոց լեզու*, Երևան, 2007): Հիշյալ կազմությունները, ըստ Ս. Աբրահամյանի, որպես ժամանակային ձևեր, համադրական են, իսկ որպես եղանակային ձևեր՝ վերլուծական, քանի որ «ժամանակային կազմության տեսակները որոշելիս նկատի են առնվում ոչ թե նրանց բաղադրիչներն առհասարակ, այլ ժամանակ ձևավորող բաղադրիչի և բուն բայական բաղադրիչի կապի բնույթը» (Ս. Աբրահամյան, *Ժամանակակից գրական հայերեն*, Երևան, 1981, էջ 294): Ավելի վաղ գրված հոդվածում Ս. Աբրահամյանը առավել հստակ է ներկայացնում իր դիրքորոշումը. «Համադրական դիմավոր ձևերն են՝ սահմանականի անցյալ կատարյալը, ըղձական ու ենթադրական եղանակների ձևերը և հրամայականի հաստատականը..., վերլուծական են սահմանական եղանակի մյուս ձևերը, հարկադրական եղանակի ձևերը, ենթադրականի ժխտականը և հրամայականի արգելականը» (Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի դերբայների և ժամանակների մասին*, Լրաբեր հասարակական գիտությունների, 10, Երևան, 1969, էջ 29):

Հիմք ընդունելով այս և նմանատիպ այլ տեսակետներ (Ս. Աբեղյան, Գ. Ջահուկյան) մենք ևս բարբառներում գործածվող ժամանակաձևերը համադրական և վերլուծական խմբերի ենք բաժանել՝ նկատի ունենալով դրանց միասին կամ անջատ գրությունը:

	Հ	զա՛րգ
	Հա	լըվա՛ց
	Ն+Հ	էզա՛ր
	Հ+ԴԹ	խըմի
	Հա+ԴԹ	լըսէցի
	Հ+Լ+ԴԹ	գրեմ
	Հա+Լ+ԴԹ	փըռնէցէ՛ք
	Ե+Հա+ԴԹ	գրխուսայրըմ

Համադրական կազմությամբ կաղապարները, ըստ նախամասնիկների և վերջամասնիկների զուգորդելիության, կազմում են 2 խումբ՝ նախամասնիկավոր և նախամասնիկագուրկ: Նախամասնիկագուրկ խմբի համար առանձնացվում է ևս 2 ենթախումբ՝ վերջամասնիկավոր և վերջամասնիկագուրկ: Վերջամասնիկավոր ենթախմբում զետեղվում են երկանդամ կաղապարներից երկուսը (Հ+ԴԹ, Հա+ԴԹ) և եռանդամ կաղապարները: Վերջամասնիկագուրկ խմբում միանդամ կաղապարներն են և երկանդամ կաղապարներից մեկը (Ն+Հ): Եռանդամ կաղապարներից միայն մեկն է (Ե+Հա+ԴԹ) ընդգրկվում նախամասնիկավոր խմբում:

Վերլուծական ժամանակաձևերի կաղապարները 22-ն են: Դրանց կառուցատիպերը ձևավորվում են դերբայով կամ դիմավոր բայով: Դերբայով բաղադրված կազմությունները երկբաղադրիչ և եռաբաղադրիչ են: Երկբաղադրիչ կաղապարները նույնատիպ են. փոխվում է կաղապարի միայն առաջին բաղադրիչը, այսինքն՝ դերբայի անվանումը (ԱԴ Օ, ԱՆԴ Օ, ՎԴ Օ, ՀԴ Օ, ԱՊԴ Օ, ԵՆԴ Օ): Միայն մեկ կաղապարի դեպքում (ԱԴ ԵԲ) վերջնաբաղադրիչը եղանականիշ բայ է: Կաղապարների եռաբաղադրիչ լինելը պայմանավորված է անցյալ ժամանակի իմաստ արտահայտող բառմասնիկի առկայությամբ (ԱԴ Օ Ժ, ԱՆԴ Օ Ժ, ՎԴ Օ Ժ, ՀԴ Օ Ժ, ԱՊԴ Օ Ժ), որից հետևում է, որ եռաբաղադրիչ կաղապարներ հնարավոր են միայն անցյալ ժամանակաձևերի դեպքում:

Դիմավոր բայով բաղադրված կազմությունները նույնպես երկբաղադրիչ և եռաբաղադրիչ են: Երկբաղադրիչ կառուցատի-

պերը 8-ն են: Դրանցից 3-ը (Հ+ԴԹ Ժ, Հ+Լ+ԴԹ Ժ, Հ+Լ+ԴԹ Ե) սկսվում են բայահիմքով, մյուսները՝ եղանականիչ (Ե+Հա Օ, Ե Հ+Լ+ԴԹ, Ե Հա+-Լ+ԴԹ, Ե Ե+Հ+Լ+ԴԹ) և ժամանականիչ (Ժ Հա+Լ+ԴԹ) մասնիկներով: Եռաբաղադրիչ կաղապարային կառույցները 2-ն են՝ Ե Հ+Լ+ԴԹ Ժ և Ե Հ+ԴԹ Ժ: Դրանք սկսվում են եղանականիչ մասնիկով և ավարտվում ժամանականիչ մասնիկով:

Դրական խոնարհում	ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐ	
	Կաղապար	Նմուշ
	ԱԴ ԵԲ	ասիլ դեմ
	ԱԴ Օ	մընալ ըմ
	ԱՆԴ Օ	գըրըմ ըմ
	ՎԴ Օ	կարթացել ա
	ՀԴ Օ	սիրաձ իմ
	ԱՊԴ Օ	գըրելու յեմ
	ԵՆԴ Օ	ուղող իմ
	ԱԴ Օ Ժ	մընալ ըմ լ՛լ
	ԱՆԴ Օ Ժ	մընալիս ըմ լ՛լ
	ՎԴ Օ Ժ	խըմեր իմ նել
	ՀԴ Օ Ժ	խափված ըմ լ՛լ
	ԱՊԴ Օ Ժ	գիրելաց ըմ նել
	Հ+ԴԹ Ժ	խըմա լ՛լ
	Ե+Հա Օ	գըմըներ եմ
	Հ+Լ+ԴԹ Ժ	բերիմ գունի
	Հ+Լ+ԴԹ Ե	խըմիմ ը
	Ե Հ+Լ+ԴԹ	կը գրեմ
	Ե Հ+ԴԹ Ժ	գա խուսի դի
	Ե Հա+-Լ+ԴԹ	կը գրտնեմ
	Ե Հ+Լ+ԴԹ Ժ	գը մընամ գոր
	Ե Ե+Հ+Լ+ԴԹ	գա գաբրիմ

	Ժ Հա+Լ+ԴԹ	գլու առնիմ
--	-----------	------------

Ժխտական խոնարհման համադրական կազմության կաղապարները 2-ն են: Դրանք քառանդամ են: Սկզբնաբաղադրիչը ժխտական մասնիկն է, իսկ վերջնաբաղադրիչը՝ դիմաթվային ցուցիչը:

Ժխտական խոնարհում	ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐ	
	կաղապար	Նմուշ
	ԺՄ+Հա+Լ+ԴԹ	Չգտնեմ
	ԺՄ+Հ+Լ+ԴԹ	Չէրթամ

Ժխտական խոնարհման վերլուծական կազմությունները 35 կաղապարային կառույցներով են ներկայացվում: Դերբայներով բաղադրված վերլուծական կազմությունները երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և քառաբաղադրիչ են: Երկբաղադրիչ կառուցատիպերը կազմված են դերբայից և ժխտական օժանդակ բայից, *մի, մէք, ոչ* ժխտական, *պիտի* եղանականիշ մասնիկներից և դիմավոր բայաձևից: Եռաբաղադրիչ կառուցատիպերի դեպքում դերբային, ժխտական մասնիկին բաղադրվում է անցյալի ժամանակախմաստ արտահայտող մասնիկը: Միայն մեկ կառույցի եռաբաղադրիչ լինելը պայմանավորված է օժանդակ բայի կրկնությամբ: Եռաբաղադրիչ կառուցատիպեր են առաջանում նաև եղանականիշ մասնիկի, ժխտական մասնիկի և դիմավոր բայաձևի բաղադրությամբ: Քառաբաղադրիչ կառուցատիպերը 2-ն են: Դրանցից մեկում վերոնշյալ ձևին զուգադրվում է ժամանականիշ մասնիկ, իսկ մյուսը կազմված է ժխտական դերբայից, ժխտական մասնիկից, օժանդակ բայից և ժամանականիշ մասնիկից:

Դիմավոր բայով բաղադրված վերլուծական կազմությունները երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և քառաբաղադրիչ են: Երկբաղադրիչ կառուցատիպերը 8-ն են: Դրանցից 6-ի սկզբնաբաղադրիչը ժխտական մասնիկն է, որին հաջորդում են դիմավոր

բայաձևը, օժանդակ բայը կամ եղանականիչ մասնիկը: 2-ի սկզբնաբաղադրիչը եղանականիչ մասնիկն է, որը նախորդում է ժխտական մասնիկին: Եռաբաղադրիչ մեկ կառուցատիպ է առկա: Այն սկսվում է եղանականիչ մասնիկով և ավարտվում ժխտական մասնիկով: 2 քառաբաղադրիչ կառուցատիպերն էլ սկսվում են եղանականիչ մասնիկով, միայն թե դրանցից մեկն ավարտվում է ժխտական, մյուսը՝ ժամանականիչ մասնիկով:

ժխտական խոնարհում	ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
	Կաղապար	<i>Նմուշ</i>
	ԱԴ ԺՄ	կրքիլ մեք
	ՀԴ ԺՄ+Օ	գրքած չեմ
	ԱԴ ԺՄ+Օ	մընօլ չիմ
	ԺԴ ԺՄ+Օ	ասի չիմ
	ԱՊԴ ԺՄ+Օ	ըսելու չիմ
	ԱՆԴ ԺՄ+Օ	սըրէս չիմ
	ԺՄ+Օ ՎԴ	չեմ գրել
	ԺՄ+Օ ԱՊԴ	չեմ գրելու
	ԺՄ+Օ ԱՆԴ	չեմ գրում
	ԺՄ+Օ ԺԴ	չեմ մընս
	ԺՄ+Օ ԱԴ	չեն սիրալ
	ԺՄ+Օ ԱՊԴ Ժ	չեմ գրելու լէ
	ԺՄ+Օ ԱՆԿԴ Ժ	չեմ մընասս լէ
	ԺՄ+Օ ԱՆԿԴ Ժ	չեմ մընասս լէ
	ԺՄ+Օ ՎԴ Ժ	չեմ գրել նէլ
	ԺՄ+Օ ՎԴ Օ	չի՛մ դէսիր իմ
	ԺԴ ԺՄ+Օ Ժ	ասի չիմ լալ
	ԺԴ Ժ+ԺՄ+Օ	ասու ուչ իմ
	ՀԴ ԺՄ+Օ Ժ	ասած չիմ լալ
	ԱՊԴ ԺՄ+Օ Ժ	ըսելու չիմ լալ
	ԱՆԴ ԺՄ+Օ Ժ	ասըմ չիմ լալ
ԱԴ ԺՄ+Օ Ժ	մընօլ չիմ նէլ	

	ԺԴ ԺՄ Օ Ժ	ասու ուչ իմ լալ
	ԺՄ Հ+Լ+ԴԹ	մի' կրրէք
	ԺՄ Հ+ԴԹ	մէ'ք ուզե
	ԺՄ Հա+ԴԹ	մէ'ք հասնէ
	ԺՄ+Օ Հ+Լ+ԴԹ	չինք էնէնք
	Ե Հ+Լ+ԴԹ ԺՄ	մէտիլ սրբէն ուչ
	Ե ԺՄ+Հ+Լ+ԴԹ	պրտի չրգրէմ
	Ե ԺՄ+Հա+Լ+ԴԹ	բիդի չհասնիմ
	Ե Օ+Հ+Լ+ԴԹ ԺՄ	պէտկ ա կրրէմ վէչ
	Ե Հ+Լ+ԴԹ ԺՄ Ժ	մէտիլ սրբէն ուչ լէ
	ԺՄ+Ե Հ+Լ+ԴԹ	չրգո սիրիմ
	ԺՄ+Ե	չբիդի չհասնիմ
	ԺՄ+Հա+Լ+ԴԹ	

Այսպիսով, դրական խոնարհման վերլուծական կազմությամբ ժամանակաձևերը քանակով գերազանցում են համադրական կազմություն ունեցողներին (առկա է 22/8 հարաբերակցությունը): Ժխտական խոնարհման դեպքում նույնպես վերլուծական կազմությամբ ժամանակաձևերը համադրականների գերակշիռ մասն են կազմում (այս դեպքում գործում է 35/2 հարաբերակցությունը): Ինչպես դրական, այնպես էլ ժխտական խոնարհման դեպքում վերլուծական կառույցների կաղապարները ավելի բազմազան և տարատեսակ են, քան համադրականինը:

Гаянэ Геворкян – Структурное описание систем времен и наклонений в диалектах армянского языка. – В территориальных вариантах армянского языка наличествуют разные структурные модели временных форм и наклонений глаголов. Эти модели по типу образования делятся на синтетические и аналитические конструкции, причем соотношение этих типов различается в утвердительных и отрицательных парадигмах спряжения. Их сопоставительный анализ показывает, что при утвердительном спряжении временные формы, образованные по синтетическим

моделям по численности преобладают над временными формами аналитической конструкции (соотношение 21/12), тогда как при отрицательном спряжении наличествует обратная тенденция: аналитические формы уступают в количестве синтетическим формам (имеет место соотношение 9/17).

Gayane Gevorkyan – A Structural Description of Armenian Dialects' Mood-Tense Systems.– There are different tense and mood structural models in Armenian territorial variants (dialects and subdialects). As a result of their contrastive-comparative analysis, it becomes clear, that the synthetic tense forms of positive conjugation prevail over the ones that have analytical forms (correlation 21/12), whereas in the negative conjugation there is the opposite tendency: the mood forms with synthetic structure are fewer than the ones with analytical structure (correlation 9/17).

**ԲԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ¹**

Միքայելյան ժաննա

Հայերենի արևելյան խմբակցության բարբառային միավորներում բայի երկրորդական վերլուծական ժամանակների՝ մեր կատարած ուսումնասիրություններից հետո, կարծում ենք, հարկ կանման հետազոտության ենթարկել նաև արեմտյան տարածքի բարբառների բայական համակարգերը: Դրանով ավելի ամբողջական պատկերացում կարող ենք կազմել խորո առարկա հարցի վերաբերյալ: Ի դեպ, մենք ավելի վաղ արդեն քննության ենք ենթարկել Պոլսահայ բարբառում քերականական այս իրողության առկայությունը:

Եթե արևելյան բարբառներում հիշյալ ժամանակաձեերը բավականին կենսունակ են գործառում (շատ դեպքերում՝ մինչ այսօր), ապա դրանք արևմտյանում դրսևորման այլ նկարագիր ունեն:

«Քննություն Վանի բարբառի» աշխատության մեջ, խոսելով Վանի խոսվածքի բաղադրյալ ժամանակների մասին ընդհանրապես, Հ.Աճառյանը նշում է, որ դրանցով բարբառային այս միավորը այնքան էլ հարուստ չէ, ինչպես ասենք՝ պոլսահայ բարբառն է: Եվ, իրոք, երբ մենք ուսումնասիրում էինք երկրորդական ժամանակների առկայության փաստը հատկապես Հ.Պարոնյանի գրական ստեղծագործություններում, եկանք այն համոզման, որ Պոլսի խոսվածքը ընդհանրապես հարուստ է վերլուծական ժամանակաձևերով, որոնց մեջ քիչ չեն երկրորդականները:

Վանի խոսվածքի վերաբերյալ Հ. Աճառյանը գրում է. «Վանի բարբառը ... չգիտե ոչ միայն շարունակական ձևեր (կոր), ոչ միայն պայմանական եղանակը (եղեր), այլն նույնիսկ հարակատարի և

¹ Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Գիտություն» հրատ., 2014, էջ 293-296:

գերակատարի *սիրած եմ, սիրած էի* ձևերը, այլ միայն *սիրեր եմ, սիրեր էի*»։ Այնուհետև հեղինակը շարունակում է իր միտքը՝ ասելով, որ *-ած* դերբայական ձևով, այնուամենայնիվ, այդպիսի խոնարհում կա. *տիսած կամ, տիսած կաս, տիսած կա, տիսած կանք, տիսած կաք, տիսած կան, տիսած կի, տիսած կիր, տիսած կեր, տիսած կինք, տիսած կիք, տիսած կին*։ Տողատակում բացատրություն տալով՝ Ն.Աճառյանը նշում է, որ այս ժամանակաձևերը համապատասխանում են Երևանի բարբառի *տէսած կամ, տէսած կայի*, Պուլսի բարբառի՝ *տէսած ունիմ, տէսած ունէի* բայական կազմություններին²։

Ի դեպ, Վանի խոսվածքից բերված օրինակները տվյալ դեպքում հենց երկրորդական բաղադրյալ ժամանակներ են, որոնցում որպես օժանդակ բայ է ծառայում *կամ-ը* իր խոնարհված ձևերով։ Հիշեցնենք, երկրորդական են կոչվում վերլուծական այն ժամանակները, որոնք կազմվում են *եմ-ից* բացի որեէ այլ օժանդակ բայով և հիմնական բայի հարակատար, ապառնի, րնթացական, երբեմն նաև անկատար դերբայներով (վերջինս առկա է ՈԻՄ ճյուղի բարբառներում)։ Վանի բարբառային միավորում Ն. Աճառյանը առանձնացնում է «տեսնել» բայի հարակատար և ապառնի դերբայներով խոնարհված այլ բաղադրյալ ժամանակներ ևս։ Դրանցից առանձնացրել ենք միայն երկրորդական ժամանակաձևերը՝ եզակի առաջին դեմքով։ Այսպես. *տիսած էլն՞եմ, տիսած էլնի, տիսած կէլն՞եմ, տիսած կէլնի, տիսած պիտի էլն՞եմ, տիսած պիտի էլնի, տիսնէլու էլնի, տիսնէլու պիտի էլն՞եմ, տիսնէլու պիտի էլնի, տիսնէլու կէլն՞եմ, տիսնէլու կէլնի, տիսնէլու էլն՞եմ, տիսնէլու էլնի*։ Խոնարհման այս հարացույցում հիմնական բայը՝ *տէսն՞ել*, խոնարհված է սահմանական, հարկադրական, պայմանական, թղձական եղանակներով։

Բայական վերլուծական կառույցներում ոչ հաճախ հանդիպող հրամայական եղանակը, ինչպես մեծ լեզվաբանն է անվանում

² Ն.Աճառյան, *Վանի բարբառը*, Ե., 1953, էջ 178։

այնուհետև իր հիշատակած բաղադրյալ բայաձևերի խոնարհված տեսակները, նույնպես տեղ է գտել նրա բերած օրինակների շարքում: Այսպես. *տիսած էլի՛, տիսած թօ՛ղ էլնէմ, տիսած թօ՛ղ էլնի, տիսնէլու էլի՛*³: Կարծում ենք սրանք ևս երկրորդական կարեւրի է համարել:

Վերոբերյալ վերլուծական այս եղանակաժամանակային բոլոր տիպերը կազմվել են հարակատար, ապառնի դերբայների, ինչպես նաև որպես օժանդակ բայ ծառայող *ըլնի՛*-ի օգնությամբ, որը խնդրո առարկա կառույցներում մշտապես խոնարհված է հանդես գալիս, և որով էլ պայմանավորվում են հիմնական բայի խոնարհման եղանակն ու ժամանակը: Վանի խոսվածքին նվիրված հիշյալ աշխատության «Նմուշներ» բաժնում, ցավոք, խնդրո առարկա հարցին վերաբերող ոչ մի օրինակ չկար:

Վանի բարբառի մյուս՝ Շատախի, Ոզմի, Մոկսի խոսվածքների համապատասխան աշխատություններում հեղինակները որևէ ակնարկ կամ օրինակ իսկ չեն բերել վերլուծական երկրորդական ժամանակների գոյության կամ բացակայության փաստին առնչվող: Այդ բնակավայրերի բանահյուսական նյութերում էլ դրանք չեն հանդիպում:

«Ալաշկերտի խոսվածքը» գրքի հեղինակ Ք.Մադաթյանը գրում է, որ երկրորդական բաղադրյալ ժամանակները հատուկ չեն տվյալ բարբառային միավորին: Ի դեպ, Ալաշկերտի լեզուն, ըստ Գ. Ջահուկյանի բարբառների բազմահատկանիշ դասակազման սկզբունքի, մտնում է Մուշ–Տիգրանակերտի բարբառախմբի Մշն⁴ բարբառի մեջ: Այն պատկանում է Կ ճյուղին:

Ալաշկերտի խոսվածքում հազվադեպ հանդիպող «...*գալու կի՛եղնի, էրտըլու կի՛եղնի, սօվրուգ կի՛եղնի, քսէլու յա յէղի՛* և այլ բայական ձևերը գրական հայերենի ազդեցությամբ են գործածվում և օրինաչափ բնույթ չեն կրում»⁵: *Գրական հայերեն* ասելով՝ հեղինակը, անշուշտ, նկատի ունի ժամանակակից արևելահայերենը,

³ Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. Աշխ., էջ 179:

⁴ Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 134:

⁵ Ք. Մադաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985, էջ 144:

որի և՛ գրական, և՛ բարբառային տարբերակներում, ինչպես և մեր ավելի վաղ կատարած ուսումնասիրություններն են վկայում, բավականին ակտիվ են գործառում բայական երկրորդական վերլուծական ժամանակները:

«Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի 9-րդ հատորում Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքից մեզ հետաքրքրող եզակի մեկ օրինակ գտանք, *Ճօպան կտրելու վախտ էտ տոր խելք սըհաթ մի՛ երկուս գլխից էրթած կէղէի*⁶ (ենթադր. եղ.-ի անցյալ ժամանակ):

Տիգրանակերտի բարբառը միայն մեկ՝ *Կ ճյուղին պատկանող Տիգրանակերտի խոսվածքով*, ուսումնասիրել է Ա.Հանեյանը: Աշխատության համապատասխան բաժնում հեղինակը գրում է, որ, ընդհանրապես, բայի հարադրական կազմություններով սույն բարբառը հարուստ է: «Իբրե հարադրության բայական մաս գործառում են *էնիլ, էղննլ, առնիլ, իղննլ* և այլ բայեր»⁷: Քննվող նյութին առնչվող, մեզ հետաքրքրող այլ նկատառումներ գրքում չկային: Սակայն բարբառային նմուշների մեջ այսպիսի երկու օրինակ գտանք. *Նըաղուզ գէղննի* («նստած է լինում»), *էրիզէ գիյնի, քի ղօնախէ օրըզգըննց, անխիէրէ ձառված գէղննի* («ծարաված է լինում»)⁸: Այս բարբառում հարակատար դերբայն ունի *ուզ և սա* ածանցներ: Բերված օրինակներում հարակատար դերբայների կողքին խոնարհվել է *լինել >էղննալ* օժանդակ բայը ներկա ժամանակով: Այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ վերլուծական երկրորդական ժամանակները գործառության մեծ ընդգրկում չեն ունեցել նաև Տիգրանակերտի բարբառում:

Առդեալի բարբառը՝ *Կ ճյուղին պատկանող, Կուտիի և Սուչավայի խոսվածքներով* (Լեհաստանի, Հունգարիայի, Սուչավայի և Ռումինիայի հայերի խոսակցական լեզուները), ուսումնասիրել է Հ. Աճառյանը: Բաղադրյալ ժամանակներին վերաբերող բաժնում հեղինակը գրում է, որ բայը շարունակականի ձևեր չունի: Իսկ

⁶ *Հայ ժողովրդական հեքիաթներ*, Ե., 1968, հ.9, էջ 18:

⁷ *Ա. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը*, Ե., 1978, էջ 106:

⁸ Նույնը, էջ 167, 168:

Սուչավայի խոսվածքի մասին ասում է. «...այստեղ գրտ նում եմ *գուզեի ձէձիւ՝ կուզեի ծեծեմ «պիտի ծեծեի»* ձևը, որ կարող է ընդհանուր եղած լինել նույն բարբառին»: Եվ բերում է *ձէձէլ-ի խոնարհումը նշված ժամանակաձևի բոլոր դեմքերով ու թվերով. գուզեի ձէձիւ, գուզեիս ձէձիս, գուզեր ձէձէ, գուզեիք ձէձիք, գուզեիք ձէձիք, գուզեին ձէձին*: Այնուհետև ավելացնում է. «Այս բոլորը՝ ենթադրաբար⁹: Դատելով խոնարհված բայի՝ հեղինակի կատարած գրական թարգմանությունից՝ «պիտի ծեծեի», ենթադրում ենք՝ գործառում է հարկադրական եղանակի երկրորդական անցյալ ժամանակը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հիշյալ կառույցներում օժանդակ բայից բացի խոնարհվել է նաև հիմնական բայը, տվյալ դեպքում՝ ըղ ձական եղանակի ներկա ժամանակով:

Հ.Աճառյանի նշած այդ բայաձևերը իրենց կազմությամբ մեզ հուշում են, որ դրանք կարելի է անվանել երկրորդական վերլուծական ժամանակաձևեր և որ արևելյան խմբակցության բարբառներում, ինչպես նաև մեր առօրյա՝ հավանաբար բարբառներից թափանցած խոսակցական լեզվում, կենսունակ են եղանակաժամանակային նման կառույցները: Այսպես օրինակ *ուզում եմ խօսամ, ուզում ես խօսաս* (Արարատ, բրբռ., խոսակցական), *օզում էմ խօսամ, օզում էս խօսաս* (Դրբ. բրբռ.) և այլն: Թերևս կարող ենք ասել, որ *ուզել*-ը այստեղ հանդես է գալիս որպես, այսպես կոչված, կիսաօժանդակ բայ (նման տերմին կա, օրինակ, ֆրանսերենում. այն անվանում են *demi-ogiliaire*), որովհետե նրան զուգահեռ խոնարհվել է նաև հիմնական բայը:

Մեր ուսումնասիրած հաջորդ՝ Մալաթիայի բարբառն ունի միայն մեկ բարբառային միավոր՝ Մալաթիայի խոսվածքը¹⁰: Այն պատկանում է *հա>w* ճյուղին: Այս մասնիկը խոնարհման համակարգում միշտ հետադաս գործառություն ունի: Իսկ եթե բայը սկսվում է ձայնավորով, սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակներում բառասկզբում ավելանում է նաև *կ >զ*

⁹ Հ. Աճառյան, Քննություն Առտիայի բարբառի. Ե., 1953, էջ 165:

¹⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 133:

մասնիկը: Այսպես, **գաղամ ա** «աղում եմ», **գաղայի յա** «աղում էի»: Թ. Դանիելյանի «Մալաթիայի բարբառը» աշխատությունում կա «Երկրորդական բաղադրյալ ժամանակներ» վերտառությամբ ոչ ծավալուն մի բաժին: Հեղինակը գրում է, որ դրանք «...կազմվում են ապառնի և հարակատար դերբայների և *ըլիլ* բայի հարադրությամբ: *Ըլիլ-ն* այստեղ օժանդակ բայի դեր է կատարում»: Այնուհետև մեկական օրինակ է բերված *գրել > քրրել* բայի երկրորդական վերլուծական ժամանակաձևերից: Այսպես. *քրրած ըլիմ, քրրած ըլեյի, քրրած գրլիմ, քրրած գրլեյի, քրրած բիդ ըլիմ, քրրած բիդ ըլեի, քրրած եղա, քրրելու ըլիմ, քրրելու ըլեի, քրրելու գրլիմ, քրրելու գրլեյի, քրրելու բիդ ըլմ, քրրելու բիդ ըլեյի, քրրելու եղա*: Թ. Դանիելյանի վկայությամբ՝ եղանակաժամանակային այս բայաձևերը գործածվում են նաև պայմանականություն արտահայտող *նէ թեական* մասնիկի հարադրությամբ, *քրրելու ըլիմ նէ, քրրած ըլիմ նէ, քրրած եղա նէ, քրրելու ըլեյի նէ* և այլն¹¹: Հիշյալ գրքի բարբառային նմուշների բաժնից երկու օրինակ կարող ենք բերել. *Վաղը անի քալիք ըլին նէ* («Եթե գալու լինեն»), *իեչ երես բիդ ունենաս: ..քսի՝ չեղած չըլիր* («չեղած չի լինի»), *քիղցած եղի՛ր* («իմացած եղի՛ր» հրմ.) ու *դանըդ համը, հողը գը փախչի*¹²:

Սովորաբար երկրորդական վերլուծական ժամանակաձևերի ժխտականը, խոնարհվող բայի գլխավոր ժամանակների նման, կազմվում է չ- մասնիկի օգնությամբ, որը դրվում է օժանդակ բայից առաջ: Մակայն վերը բերված վերջին նախադասության մեջ չ- ժխտական է ստացել նաև հիմնական *ըլիլ* բայի հարակատար դերբայը:

¹¹ Թ. Դանիելյան, Մալաթիայի բարբառը, Ե., 1967, էջ 150:

¹² Նշվ. աշխ., էջ 244:

Կեսարիայի բարբառն ունի երեք խոսվածք՝ Թոմարգայի, Դարենդեի, Էվերեկի¹³: Բարբառին նվիրված աշխատության հեղինակ Ս.Անթոսյանը, խոսելով բայի հարակատար դերբայի գործառության մասին, գրում է, որ դրանք խոնարհման համակարգում փոխարինում են վաղակատարի ձևերին: Իսկ «...մի քանի բայերի վաղակատարի եզակի 3-րդ դեմքը (հաստատական խոնարհմամբ միայն) օգտագործվում է այսպես կոչված պատմողական եղանակի գաղափար արտահայտելու համար. Ինչպես՝ *էղէր սի, ունցէր սի*»: Այնուհետև հեղինակը, վկայակոչելով պոլսահայ բարբառում Հ. Աճառյանի կարծիքը *էղէր* վաղակատար դերբայի գործառության մասին, որը Հ. Աճառյանը համարում է թուրքերեն *իմիշ* բայաձևի թարգմանությունը, և որը (Պոլսում՝ *յէղէր*-ը) պատմողական եղանակի կազմության ժամանակ է գործածվում, այն հակադրում է Կեսարիայի հայերենում *էղէր սի, ունցէր սի* բայաձևերին: Դրանք Ս. Անթոսյանը պարզապես եղանակավորող բառեր է համարում, քանի որ գործածական չեն դրանց եզակի 1-ին, 2-րդ դեմքերը և հոգնակի թիվն ամբողջությամբ¹⁴: Աշխատության բարբառային նմուշների բաժնում կան այսպիսի օրինակներ. *Գէղացը մը յէզ իլան էշ մը ունի էղէր սի: Մայսը ադան հայվանէրու լէզուէն գա հասզընա էղէր սի: Գրեգաեր հէղը նըսդսւձ էղէր սի... Հայվանկու լէզույէն գիդանայր մարթու ըսէ նս, գը մատնը էղէր սի: անարաբագր քրսան-անսուն հադ հավ, մէ քաձիգ գօօղ ունի էղէր սի: Դասնրհինգին ֆանսսային մէշը Ամերիգայէն էգօղ հայ գըլա մը բօմբա գու շինէ էղէր սի*¹⁵: Բերված նախադասություններում հեղինակի բնորոշմամբ՝ եղանակավորող *էղէր սի*-ն գործառում է միայն եզակի երրորդ դեմքով խոնարհված բայաձևերի հետ, և տվյալ դեպքում դժվար է ասել՝ այն իսկապե՞ս եղանակավորող է, թե մի

¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 133:

¹⁴ Ս. Անթոսյան, *Կեսարիայի բարբառը*, Ե., 1961, էջ 89-90:

¹⁵ Նշվ. աշխ., էջ 314-315, 338:

այլ դերակատարում ունի համակարգում: *Ուեցեր ւի* բառակապակցությամբ, սակայն, որևէ օրինակ չգտանք:

Հարկ է նշել, որ ազգագրական և բանահյուսական նյութերում, հատկապես արեմտյան բարբառներում, ինչ-ինչ պատճառներով շատ սակավ են հանդիպում մեզ հետաքրքրող բայական երկրորդական ձևերը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ եզրակացնում ենք, որ արևմրջյան խմբակցության մեր ուսումնասիրած բարբառային միավորներում Վանի, Մշո, Տիգրանակերտի, Առդեալի, Մալաթիայի, Կեսարիայի բարբառներում, բայի երկրորդական վերլուծական եղանակաժամանակային ձևերը, ի հակադրություն արևելյան բարբառների, ինչպես նաև Պոլսի բարբառի, գործառության մեծ ընդգրկում չունեն: Պատճառները կարող են զանազան լինել: Օրինակ՝ գուցե այդ կառույցները խնդրո առարկա տարածքներում ձևավորվել են բավական ուշ և, ի տարբերություն արևելյան խմբակցության միավորների, չեն հասցրել լայն տարածում ստանալ: Հիշենք, սակայն, որ երկրորդական բաղադրյալ ժամանակներ գրաբարը նույնպես ունեցել է:

Mikayelyan Zhanna - The Secondary Compound Verb Tenses in Several Armenian Dialects of the Western Group. - From the Van accent of the Van dialect professor H. Ach-aryan brings several examples of verbal structures as *տիսած կամ*, *տիսած կաս*, *տիսած կա*, which are in reality secondary tenses where *կամ* is used as an auxiliary verb. But in the works devoted to the accents of the same dialect as Moks, Vozmi, Shamakhi as well as in the literary works connected with the dialect of Moush we haven't been able to find any examples which will interest us. An exceptional example of the Tigranakert dialect is *Նըստուզ գէղնւի* (was sitting), which we took from the section "Examples" of the consequent work. The forms used in the Malatya dialect as *քըրսած ըլիմ*, *քըրսած ըլիլի*, *քըրսած գըլիմ*, *քըրսած գըլիլի*, *քըրսած քիդ ըլիմ* and others are also the examples of

secondary compound verb tenses. S.Antosyan considers *էղէր իւ, ունէր իւ* verb forms to be modal words in the dialect of Kesaria. With the help of those modal words compound tenses are formed. In our opinion this is a very controversial issue.

Thus, in the dialects of Van, Moush, Tigranakert, Ardeal, Malatya, Kesaria from the western group, the secondary compound tenses have less frequency than in the dialect of eastern group. The reasons for this may differ: for instance, these structures might have been penetrated into the dialects later and didn't have further development.

Микаелян Жанна – Дескриптивные второстепенные времена глагола в армянских диалектах западной группы. - Р. Ачарян в своей книге “Ванский диалект” в глагольной системе Ванского говора приводит такие примеры, как *տեւած կաւ, տեւած կաւի, տեւած կա,* которые на самом деле являются второстепенными составными формами глагола. Слово *կաւ* здесь функционирует в роли вспомогательного глагола. В других говорах данного диалекта – Мокс, Возм, Шатах, такие глагольные формы нам не встречались. В книге тигранакертского диалекта в текстах мы нашли одну единственную фразу с глагольной второстепенной формой - *Նըսընոյ գէղնիւ*. А в говоре Малатии более активно функционируют дескриптивные времена, как *բըրած ըլիւ, բըրած ըլիլի, բըրած գըլիւ, բըրած գըլիլի, բըրած բիդ ըլիւ* и т.д. Второстепенные составные формы глагола вообще функционируют почти во всех наклонениях, даже в повелительном, которое очень редко встречается в данных конструкциях. Но в западных диалектах в целом дескриптивные второстепенные времена, в сравнении с восточными диалектами, более редко встречаются. Эти времена формировались в более поздний период времени, и вероятно далее не разбивались в данной группе.

**ԳԼՈՒԽ Ե. ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

**ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՒՐԱՐՏԵՐԵՆՈՒՄ¹**

Մելադա Աղաբեկյան

Հայ-ուրարտական շփումների մի որոշակի ժամանակահատված (մ.թ.ա. IX-VI-րդ դդ.) մեզ հայտնի է Վանի թագավորության սեպագիր արձանագրություններով: Ինչպես պարզվում է, երկու լեզուների ընդհանրությունների բացահայտումով ի հայտ են գալիս նաև հայերեն բարբառների յուրահատկությունների հնագույն հետքեր ուրարտերենում: Այս փաստը մեզ հնարավորություն է տալիս հայ-ուրարտական ընդհանրությունների օգնությամբ որոշելու նաև նախագրային հայերենի բարբառային տրոհվածության աստիճանը:

Հետազոտողների համար ոչ պակաս կարևոր է հենց ուրարտերեն սեպագիր տեքստերի գիտականորեն ճշգրտված ընթերցումը, քանի որ դրանց կամայական մեկնությունները նյութի պատմահամեմատական վերլուծության ժամանակ ավելի են բարձրացնում հնարավոր սխալների չափը: Ցավոք, չափազանց շատ են այս ոլորտում սիրողական մակարդակով հետազոտությունները, որոնք, անշուշտ, խանգարում են ուսումնասիրությունների ժամանակ քիչ թե շատ հավաստի արդյունքների հանգեցում:

Հիմնական պատճառը այն է, որ տարածաշրջանում ուրարտերենով զբաղվողների՝ հատկապես ոչ լեզվաբան-համեմատաբանների համար եղել ու մնում է ամեն գնով ուրարտերենը իրենց

¹«Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 16-23 :

մայրենի լեզուների նախաստիպը համարելու մտայնությունը: Դա հանգեցնում է գիտական փաստերով չհիմնավորված, ամենաարտառոց եզրակացությունների:

Մեր ուսումնասիրության ժամանակ, իհարկե, աշխատում ենք չօգտագործել այդպիսի կեղծված «փաստեր»: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ ձգտել ենք հատկապես ուրարտերեն նյութի համար դիմել հնարավորինս հավաստի, ինչ-որ տեղ էլ զգուշավորության սահմանն ավելի ընդարձակող հեղինակների հետազոտություններին:

Ուրարտերեն *edi(1)a* «այնտեղ, ինչ-որ բանի (մեկի) ուղղությամբ, դեպի» բառը *-edi* ձևով հանդես է գալիս նաև որպես ուղղության հոլովի իմաստակիր մասնիկ՝ *uštadi* ^{KUR}*Etiuniedi* «ուղևորվեցի դեպի Էթիունի», ^{KUR}*Liqiue edia* «դեպի Լիքիու», *uštadi* ^{KUR}*Urmeue edia* «ուղևորվեցի դեպի Ուրմե»²:

Կարծում ենք՝ *-edi* մասնիկը իր զուգահեռներն ունի նաև հայերեն բարբառներում. *էտդ/տի, էդտի, էնդ/տի* «դեպի (այս կողմ, այդ կողմ, այն կողմ)»: Նշված օրինակներում (*e*)*di*-ն հետադաս է, իսկ հայերենի այլ տարածքային տարբերակներում, օրինակ՝ Արցախի, Մուշի, նախադաս է, ինչպես՝ *տիյէր* «դեպի վեր», *տւէր* «դեպի վար» (Ղրբ. բրբ.) և *դիսա, դիդա, դինա* «դեպի (այս կողմ, այդ կողմ, այն կողմ)» (Մուշի բրբ.) և այլն:

Այդ մասնիկը առկա է նաև տարածաշրջանի այլ լեզուներում (քարթվելական, կովկասյան): Գուցե Հայկական լեռնաշխարհում և նրա հարակից շրջաններում վաղնջական ժամանակներից (օրինակ՝ լեզուների նոստրատիկ ընդհանրության) շրջանառվող բառմասնիկ է: Եթե այսօր հին լեզուներից ուրարտերենում ենք *-edi* մասնիկի գործառությունը բացահայտում, դա չի նշանակում, իհարե, որ մյուսները նրանից են փոխառել:

Ուրարտերեն *pit(u)-* «ջարդել, ոչնչացնել»³ բայարմատը, առանց *-u-* հիքակազմ ձայնավորի (բայի ակտիվ սեռի ցուցիչ), ինչպես կարելի է նկատել, և՛ ձևով, և՛ իմաստով գրեթե նույնանուն

² Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Е., 2001, с. 442.

³ Նշվ.աշխ., էջ 458:

է հատկապէս մեր արևմտյան բարբառներում տարածված *փիծ/ց(ի) // փիծ/ց(ե)* «սատկել, ոչնչանալ» բային:

Հ. Աճառյանը *փիծ* «պիղծ, անմաքուր», *փծել* «պղծել», *փից* – *փցկիլ* «եղծանիլ», *փցուն* «փծուն, անպիտան» ձևերի արևելահայ բարբառային համապատասխանություններից նշում է միայն *փրծնի* «գեշ, անպիտան» (Եր.) և *փրցնիլ* «կերակրի փչանալը, հացը թրջվելով խխում դառնալը» (Ազլ.)⁴:

Գ. Ջահուկյանը ուրարտերեն *pitulie* «ջարդի, ոչնչացնի» (*pit(u)*- բայի ապառնի ձև) բառի և հայերեն բարբառային *պտլիլ* «փչանալ, ավերվել» (Վան, Խլաթ) ձևերի նմանությունը պատահական է համարում: Տողատակում ավելացնում է. «...եթե, մանավանդ, հայերեն բայը կապված է *պատլիլ* համիմաստ բայի հետ, որ Հ. Աճառյանը (ՆՀԲ, 4², էջ 43) բխեցնում է արաբերեն *բլ* «սուտ լինել, չգործել, վերացվել» արմատից⁵:

Իր ավելի վաղ հրատարակած մի աշխատանքում Գ. Ջահուկյանը գրում է, որ «հայերենի վրա արաբերենի գործած համեմատաբար ուժեղ ազդեցության մասին կարելի է խոսել միայն VII դարից սկսած»⁶: Բայց և այնպես նշում է նաև «V դարի մատենագրության մեջ հիշատակված մի շարք բառեր, որոնք սեմական լեզուների համապատասխան բառերի մեջ ամենից ավելի մոտ են արաբականներին»⁷ : Սակայն այդ ցուցակում չկա արաբ. *բլ* արմատը, որից ըստ հեղինակի՝ սերում է վերը նշած հայերեն բառը: Գ. Ջահուկյանը իր մեկ այլ աշխատանքում հայ. *փիծ* արմատի և հնդեվրոպական որոշ լեզուների համապատասխան բառերի միջև ձևաիմաստային կապ է տեսնում⁸:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ երկու տաբեր արմատների (*փիծ*- և *պտլ*- // *պտլ*-) հանգող հումանիշ բառերի ստու-

⁴ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. I-IV, Ե., 1971-1979:

⁵ Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Մարգարյան, *Ուրարտու-Հայաստան*, Ե., 1988, էջ 143:

⁶ Գ. Բ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*, Ե., 1987, էջ 485:

⁷ Նույն տեղում:

⁸ Դ. Բ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Е., 1967, с. 104.

գաբանությունները հետազոտողների կողմից միախառնվել են: Հնարավոր է, որ հայերեն ձևերը հանգում են միննույն հնդեվրոպական արմատի, բայց դրանք կարող են լինել նաև օտար փոխառություններ: Սակայն բոլոր դեպքերում հայերեն բառերը և առաջարկվող նախատիպերը ժամանակագրորեն տարբերվում են, որը և վկայում են դրանց հնչյունական բաղադրիչների համեմատության արդյունքները:

Հայտնի է, որ վաղնջական ժամանակներից բառասկզբի հ.-ե. կամ տվյալ ժամանակ օտար համարվող *թ-ի դիմաց հայերենում առկա է *h/j* կամ *qrn*: Նշված դիրքում հ.-ե., ինչպես նաև օտար փոխառությունների երկշրթնային խուլերից հայերենում պահպանվել է միայն շնչեղ *թ^h -, որն ունեցել է կա՛մ հայ. *վ*-ի, կա՛մ նրան հնչարտաբերական հատկանիշներով շատ մոտ յուրահատկություններ: Ուրեմն նշված դիրքում օտար *p* և հայ. *պ* համապատասխանությունը ավելի նոր երևույթ է: Ինչ վերաբերում է մի քանի բառերում օտար *t*-ի դիմաց հայ. *ծ*-ի առկայությանը, ապա դա հավանաբար ավելի հնուց եկող հատկանիշ է հայերենում, քանի որ միննույն դիրքում հ.-ե. քմային *ǵ-ն հայերենում կարող է արտացոլնել և՛ *տ*, և՛ *ծ* հնչյուններով (*արածեմ* – *արատ*, *արատտ*, *բոյծ*, *բուծանեմ* – *բուտ*, *բտեմ*, *քերծեմ*–*քերթեմ*): Գ. Ջահուկյանը վաղնջական հայերենում հնչյունների այսպիսի տարբերակվածությունը համարում է բարբառային տրոհվածության արդյունք⁹: Ուրեմն *t* – *ծ* համապատասխանությունն հնարավոր է հայերենի վաղնջական շրջանի ավարտին, այսինքն՝ մ.թ.ա. 3-րդ և 2-րդ հազարամյակների սահմանագծին կամ մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, երբ տեղի է ունեցել հայ. առաջնալեզվային բաղաձայնների (*ղ*, *տ*, *թ*) քմայնացումը, որն էլ իր հերթին համընկնում է հայ, հետնալեզվային հպականների 2-րդ. քմայնացմանը նույն դիրքում (*i*, *e*, *j*-ի մոտ)¹⁰: Հիշենք նաև, որ Ն. Հարությունյանի վերոհիշյալ աշխատանքում «ջարդել, ոչնչացնել» իմաստով առկա է ուր. *pit-* և ոչ սեմական եռաբաղաձայն *bʰl-* արմատը:

⁹Գ. Բ. Ջահուկյան, 1987, էջ 252-253:

¹⁰Գ.Բ. Джаукян, 1967, с.182-183:

Մենք քննել ենք հատկապես Մուշի բարբառային միավորների հնչյունների պատմական անցումները և պարզել, որ բառի միջբաղաձայնային դիրքում այլ բարբառային միավորներում հանդիպող *aj>t>h* հնչյունափոխություն այստեղ ի հայտ չի գալիս, ինչպես. փայտ > փետ/դ > փետ/դնալ, սայլ > սել > սելվոր, քայլ > քել(ե) «քայլի՛ր», քել(աց)ող և այլն: Մա գալիս է ասելու, որ խնդրո առարկա բարբառային արմատի ձայնավորումը (*h*) սկզբնական է և իր պատմական ընթացքում հնչյունափոխական նշված ճանապարհով չի անցել: Հետևաբար՝ ենթադրելի է, որ հայերեն բարբառային *փիծ/g-* արմատը գալիս է ավելի վաղ ժամանակներից, երբ հայերեն բառի որոշակի դիրքերում դեռ կար *տ/ծ* հերթագայություն: Այսինքն՝ ուր. pit- և հայ. *փիծ-* արմատների ցեղակցությունը հնարավոր է: Չի ժխտվում, իհարկե, նաև այդ գործընթացին մի երրորդ լեզվի միջնորդությունը:

Ուրարտերեն արձանագրություններում հանդիպող *aštiuzi* բառն առաջինն ընթերցել ու մեկնաբանել է Գ.Մելիկիշվիլին և այն համարել հայ. *Սստուած*-ի նախատիպը¹¹: Ն. Հարությունյանը իր բառարանում *aštiuzi*-ն նշում է ոչ թե դիցանունների, այլ հասարակ անունների շարքում, քանի որ այն աստվածության որոշիչ (որոշիչ) շումերական գաղափարագիրը չունի:

Հայերեն այդ բառաձևի ստուգաբանությամբ զբաղվել են շատ համեմատաբաններ: Նրանք հիմնականում հանգել են այն եզրակացության, որ *Սստուած* բառը ունի հնդեվրոպական ծագում¹²:

Գ.Ջահուկյանը գտնում է, որ «ուրարտական արձանագրություններում ավանդված դիցանուններում հնարավոր է բացահայտել հայկական բառերով ու արմատներով մեկնվող շերտ» և օրինակներում նշում է նաև ուր. «*Aštiuzi* – հայ. *սստուած* – «հաստող, հաստատող» կամ *h.-ե.*ansu-+diu+ած*» բառերը¹³: Իսկ Վ. Համբարձումյանի ստուգաբանությամբ հայ. *սստուած* բառը ծագում է

¹¹ Գ. Ա. Меликишвили, *Урартские клинообразные надписи*, М., 1960, с.438.

¹² Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, *Հայերեն Աստված բառի ծագումն ու տիպաբանությունը*, Ե., էջ 2002:

¹³ Գ. Բ. Ջահուկյան, 1988, էջ 150-151:

հնդեվրոպական *Has-tieu-os նախաձևից¹⁴: Երկու հեղինակների ստուգաբանություններն էլ մենք հավանական ենք համարում: Սակայն հարցին, կարծում ենք, կարելի է մոտենալ և այլ տեսանկյունից:

Աստուած-ը կարելի է համեմատել նաև հայ. *աստանել* «ուղղել կամ քննել» բառի հետ, որը մոտ է ուր. *ašit(u)*- «դարձնել, անել, վերածել» ակտիվ սեռի բային: Հայերենում *Աստուած-ը* թերևս կրավորաձև հիմք է, մինչդեռ նրա բայիմաստն (արարող, ստեղծող) ընկալվում է որպես ներգործական, ակտիվ սեռի գործողություն: Ըստ Գ. Ջահուկյանի՝ *-ած-ը* հայերենի հնագույն շրջանի՝ (մ.թ.ա. I-մ.թ. I հազ.) ածանց է և գալիս է *ած-ել* -ից (հ.ե.<*aǵ-), իսկ բայաձանց դարձել է ավելի ուշ¹⁵: Բայց *-ու* հիմքով բայ (*աստ-ուլ*, *հաստ-ուլ*) հայերենում չենք գտնում: Կարծում ենք՝ պատասխանը պետք է փնտրել ուրարտերենում, որտեղ ակտիվ սեռի բայահիմքերը կազմվում են *u*-ով: Ուրեմն կարելի է ենթադրել նաև, որ հայերեն *Աստուած* բառը կազմված է ուր. *astu-* բայահիմքով, որին ավելացել է հայ. *-ած* վերջածանց:

Ուրարտերեն *astuazi* բառաձևին ավելի մոտ կարող ենք դիտել բարբառային *Աստուծ/ձ* // *Աստոծ/ձ* ձևերը, եթե, իհարկե, վերջիններս առաջացել են նախքան ուրարտերենի՝ պատմական ասպարեզից դուրս գալը: Դրանք, հնարավոր է, հայերենի տվյալ բարբառային միավորի ներքին հնչյունական օրենքների, ինչպես օրինակ՝ վերջնաթերային շեշտի, գործառության արդյունք են: Այդ տարածքային տարբերակներում (Թբիլիսի, Արցախ, Սյունիք և այլն) *Աստուած* բառի վերջին վանկի անշեշտ երկբարբառի *u* բաղադրիչը թուլանալով՝ ընկնում է՝ *Աստուծ/ոծ*: Երկու լեզուներում տվյալ բառերի ձևաիմաստային ընդհանրությունը դեռ չի կարող անառարկելի փաստ համարվել, որ դրանք այդ լեզուներից մեկի մյուսին անցած փոխառություն են: Այսպիսի դեպքում չի բացառվում, անշուշտ, մի երրորդ աղբյուրից ծագելու հանգամանքը:

¹⁴ Նշվ. աշխ., էջ 31:

¹⁵ Գ. Բ. Ջահուկյան, 1987, նույն տեղում:

Նյութի ընդհանուր ուսումնասիրության ժամանակ ի հայտ եկան նաև այլ փաստեր, որոնք հետաքրքրեցին մեզ:

Մենուայի որդի Արգիշտիի (Արգիշտի I) մի արձանագրության համատեքստի քննությամբ հնարավոր է համարվում *aštiuzi-* թարգմանել «կուռք, տոտեմ, ինչ-որ աստվածության պաշտվող արձանիկ»: Ըստ տեքստի՝ այդ իրը Էթիունիի Արդիների քաղաքից *գոդացան (*irbilani*) էթիունական ռազմիկները, որի պատճառով թագավորը նույն տարում հարձակվեց Էթիունցիների վրա ու հաղթեց նրանց¹⁶:

Իսկ ինչպե՞ս պետք է հասկանալ այս հաղորդումը: Ու՞մ էր պատկանում այդ իրը, որի պառճառով մարտեր են մղվել: Հիմնականում ենթադրվում է, որ էթիունցիները (տեղի բնիկները) նվաճված տարածքից հետ են տարել իրենց աստվածության՝ *aštiuzi-*ի արձանիկ-կուռքը: Ահա, թե ինչու ուրարտները այդ բառին, որ իրենց համար չաստվածություն է նշանակում, չեն կցում աստվածության ցուցիչ շումերական գաղափարագիր:

Հետաքրքիր է մեկ այլ հանգամանք ևս: Ուրարտերեն ^(d)ina(ini), ^(d)iniriašc, ^(d)inuanaue (տրակ. հոլ.), խուռ. *eni* բառաձևերը արձանագրություններում հանդիպում են, թեև ոչ միշտ, նաև «տեր, աստված» շումերական համապատասխան ցուցիչով: Ուրեմն դրանք տվյալ համատեքստում ունեն այդ իմաստները: Մինչդեռ ուր. *ini*, *inani* ձևերը ցուցական-անձնական դերանուններ են «այս/սա, այդ/դա, այն/նա»¹⁷: Ի դեպ, հայերեն որոշ բարբառներում, օրինակ՝ Մուշի, դրանք բոլորը գործառում են *ի* հավելյալական ձայնավորով (*իսա*, *իդա*, *ինա*), որը, կարծում ենք, հայերենի *ի* նախդիրն է: Արդ, ե՞րբ են դրանք աստվածության ցուցիչ ստանում:

Աշխարհի ժողովուրդների պատկերացումներում կարևոր տեղ է գրավել թաբուի երևույթը, որն իր արտահայտությունն է գտել խոսակցական լեզուներում: Թաբուով արգելվում է բուն անձի, իրի անունը բարձրաձայն արտաբերելը, և հաճախ դրա փոխարեն օգտագործվում է բառապաշարում առկա մեկ այլ, կա՛մ

¹⁶ Н.В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 178, 180:

¹⁷ Н.В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 448-449:

նոր ստեղծված բառ, կա՛մ էլ 3-րդ դեմքի ցուցական-անձնական դերանուն, որ հայերենի բարբառներում այսօր էլ տարածված երևույթ է՝ *էն, էնի*: Երևի դա է եղել պատճառը, որ ուրարտերենում ևս այդ դերանունը մերթ ընդ մերթ ստացել է աստվածության ցուցիչ (դետերմինատիվ) շումերական գաղափարագիր:

Հայերեն *հար* արմատով կազմված *հարուլ, հարուած* և այլն բառերի ստուգաբանության ժամանակ ևս նույն հարցն է առաջանում, ինչ և *աստուած*-ի դեպքում. արդյոք այստեղ առկա է ուրարտերենում ևս հանդիպող բայահիմք կազմող -u- ձևույթը: Հայերեն *հար*-ը հանգում է հ-ե *per- (*por-/*pr-) արմատին, որից առաջացել է նաև *հարու*-լ բայը: Այստեղ կարելի է ավելացնել նաև հայ. *հարու տալ* «պոզահարել» հարադիր բարդությունը, որի *հարու*- բաղադրիչը բայի մաքուր հիմքն է:

Չենք կարող չնկատել հայերեն նշված և ուր. par(u)- «քշել (անասուն), տանել (գերիներ)», parult(u)- «քշել, տանել»¹⁸ բառերի ձևախմբաստային նմանությունը (*հարու* - par(u)-): Մեկ այլ հարց է առաջանում: Ինչպես գիտենք, նախագրային հայերենի բառասկզբում տեղի է ունեցել *p>h (հ-ե *p->h) հնչյունափոխություն:

Ուրարտերեն բառաձևերը, ինչպես նշվեց, մեզ հայտնի են մ.թ.ա. առաջին հազարամյակի (IX-VI-րդ դարեր) սեպագիր արձանագրություններով: Սակայն դրանց և հայերենի բառանյութի հնչյունական քննությունը ուր. p-հայ. h- համապատասխանության օրինակափոխություն չի բացահայտում: Հայերենին բնորոշ հ.-ե. *p-հայ. h-, qpn- անցումը ուրարտերենում այլևս չի կրկնվում (հմմտ. ուր. pal(ı a)- «խոսել» խուռ. pal- հայ. *պաղատ-ել*, ուր. pili(e) «ջրանցք», խուռ. pala, հայ. *պեղ-ել*, paha/ini(e) «եզ, ցուլ, խոշոր եղջերավոր անասուն», հմմ. հայ. *պահրէ* և այլն¹⁹: Հետաքրքիր է, որ հ-ե *per- արմատը ուրարտերենում արտացոլված է զրո ձայնդարձի հայերեն տարբերակով՝ *pr-> հայ. *par- > *հար*: Ուրեմն, կարելի է եզրակացնել, որ ուրարտերենում ու հայերը, որպես հարևաններ,

¹⁸ Н.В. Арутюнян, նշվ. աշխ., նույն տեղում:

¹⁹ Մ. Աղաբեկյան, *Հայ-ուրարտական ստուգաբանական դիտարկումներ*, ՊԲՀ, 2013, 1:

միմյանց հետ շփվել են մ.թ.ա. առաջին հազարամյակից ավելի վաղ, երբ հ-ե արմատի թույլ ձայնավորումը հայերենում դարձել էր լիաձայն ա, իսկ բառասկզբի *ք-ն դեռ պահպանվում էր: Կարելի է ենթադրել նաև երրորդ աղբյուրի ազդեցություն ինչպես ուրարտերենի այնպես էլ հայերենի վրա: Համենայն դեպս փոխներթափանցումները ենթարկվել են յուրաքանչյուր լեզվի կանոններին: Տվյալ դեպքում ուրարտերենը պահպանել է բառասկզբի *ք-ն, իսկ հայերենը այն հնչյունափոխել է:

Агабекян Мелада – Армянские диалектные соответствия в урартском языке.– Фонетические и морфологические материалы способствуют выявлению армяно-урартских связей . Эти факты тоже утверждают, что урартцы и армяне до 9-ого века д.н.э. жили по соседству, и взаимные языковые проникновения соответствовали языковым законам, функционирующим в тот период данного языка.

Aghabekyan Melada – Armenian Dialectical Coincidences in the Urartian Language.– The phonetic and morphological materials of Armenian dialects contribute to the discovery of linguistic relations between the Armenian and Urartian languages. They also confirm the fact that Urartians and Armenians, living as neighbours, communicated with each other earlier than in the 9th century BC, and mutual penetrations from one language into the other underwent the rules of those languages existing in that period of time.

ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ^{*1}

Վիկտոր Կատվայան

Ամեն մի բարբառ իր գործառության յուրաքանչյուր փուլում ներկայացնում է բազմաշերտ իրողություն, որի մեջ զուգորդվում են ընդհանուր և բարբառային, լեզվի զարգացման տարբեր փուլերի բնորոշ, բնիկ և փոխառյալ, տվյալ բարբառին յուրահատուկ և ազդեցությունների (այլ բարբառների, նաև գրական լեզվի) հետևանք հանդիսացող, դուրս մղվող և սկզբնավորվող լեզվական հատկանիշներ և միավորներ: Ինչպես բարբառը ընդհանրության մեջ, այնպես էլ այս զուգորդումները շարունակական փոփոխության մեջ են, և բարբառը, լինելով հաղորդակցման կենդանի, բնական, չկարգաբերվող միջոց, գտնվում է հարափոփոխ վիճակում: Իրավացի է Գ.Ջահուկյանը, երբ գրում է. «Հայերենի ոչ մի բարբառ որևէ էպոխայում իր բոլոր գծերով լիովին կազմավորված հանդես չի եկել և չէր էլ կարող հանդես գալ: Հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառապաշարային հատկանիշները ձևավորվել են հայերենի պատմության ողջ ժամանակաշրջանում»²: Հետևում է, որ բարբառների հիշյալ հատկանիշները հարկ է դիտարկել նաև ըստ հայերենի զարգացման տարբեր շրջանների, և ինչպես հուշում է Գ. Ջահուկյանը, «բարբառներն ուսումնասիրելիս նրանց նկատմամբ պետք է տարբերակված մոտեցում ունենալ. բարբառները միանգամից չեն կազմավորվել. նրանց տարբեր բաղադրիչները գալիս են տարբեր հնությունից»³: Նման դիտարկումը

^{*} Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ *N^o SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում*:

¹ «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումներ, Եր., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 77-83:

² Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը, *Պատմաբանասիրական հանդես*, թիվ 2-3, Ե., 1959, էջ 311:

³ Նույն տեղում, էջ 315:

կարևորվում է երկու առումով. ա) հնարավորություն է տալիս պարզաբանել բարբառի զարգացման ընթացքին առնչվող հարցեր, որոշել բարբառային մի շարք հատկանիշների առաջացման ուղիներն ու աղբյուրները, նաև բարբառի ձևավորման հետ կապված հանգամանքներն ու հաջորդական փուլերը, բ) բարբառում, իբրև կենդանի խոսքում, գործառող իրողությունների պատճառական կապերի, օրինաչափությունների բացահայտումը թույլ է տալիս մեկնաբանել լեզվի զարգացման նախորդ փուլերի համանման իրողությունները: Բացի այդ, բարբառների պատմական զարգացման ընթացքի դիտարկումը նշանակում է լեզվի պատմական զարգացման դիտարկում:

Այս առումով, հասկանալի է, նախ և առաջ ուշադրության են արժանի բարբառներում դրսևորվող հինհայերենյան իրողությունները:

Ընդհանրապես, որևէ բարբառի ներկա համակարգում հնարավոր է դիտարկել նման երեք կարգի իրողություններ.

ա) ընդհանուրհայերենյան հատկանիշներ.

բ) հինհայերենյան շրջանից եկող բարբառային հատկանիշներ.

գ) գրաբարյան համակարգի արձագանքներ, որոնք արդի գրական լեզվում չեն արտահայտվում և համարվում են բարբառային հատկանիշներ:

Բնականաբար, ընդհանուրհայերենյան հատկանիշները բարբառագիտական առումով պակաս հետաքրքրություն են ներկայացնում: Ուստի մեր ուշադրության կենտրոնում հինհայերենյան շրջանից եկող այն իրողություններն են, որոնք Բայազետի բարբառում դրսևորվում են իբրև բարբառային հատկանիշներ:

Նախ անդրադառնանք հինհայերենյան շրջանի բարբառային հատկանիշներին: Գիտական բարբառագիտության մեջ հինհայերենյան շրջանին բնորոշ բարբառային մի շարք հատկանիշներ հիշատակում է Հ.Աճառյանը⁴, սակայն երևույթը ավելի հանգամանորեն քննում է Գ.Ջահուկյանը: Նա առանձնացնում է 5-րդ դարի

⁴ Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, հ.2, Ե., 1951, էջ 135-138:

բարբառների համար հավանական համարվող հնչյունաքերակա- նական 130 հատկանիշներ⁵ և դրանց օգնությամբ կատարելով այդ դարի բարբառների բազմահատկանիշ դասակարգում՝ ստանում է վեց բարբառ՝ իրենց ենթաբարբառներով ու միջենթաբարբառնե- րով⁶: Ըստ այդ դասակարգման՝ հարավարևելյան միջբարբառի մեջ էր նաև Կոզովիտի (Բայազետի) ենթաբարբառը⁷:

5-րդ դարի բարբառային հիմնական զուգաբանությունների՝ Գ. Ջահուկյանի կազմած ցանկից դուրս թողնելով ընդհանուրիս- յերենյան բնույթ ունեցող, ինչպես նաև Բայազետի բարբառում չդրսևորվող հատկանիշները՝ կստանանք բարբառիս այն հատ- կանիշների ցանկը, որոնք ունեն բավականին հնություն և թերևս գալիս են հինհայերենյան շրջանից: Հատկանիշները ներկայաց- նում ենք Բայազետի բարբառի օրինակներով հանդերձ.

1. Բառասկզբի ձայնեղ պայթականների և կիսաշփականների շնչեղ ձայնեղություն (բ, գ, դ, ձ, ջ ~ բ', գ', դ', ձ', ջ'), ինչպես՝ բ'ան, գ'ոռծ, դ'աս, ձ'որ, ջ'ուր.

2. Ն-ին հաջորդող խուլ պայթականների և կիսաշփական- ների ձայնեղություն (պ,տ,կ,ծ,ճ ~ բ, դ, գ, ձ, ջ), ինչպես՝ հ'ընգեր, հ'ընգընել, էրմունգ, թանգ, խունգ, կըրունգ, ճենջ, ճընջուխ, տընդըղել.

3. Բառասկզբում (ձայնավորից առաջ) գրական լեզվի համե- մատությամբ հավելական շնչի առկայություն, ինչպես՝ հ'ափեղա, հ'ակամա, հ'անքան, հ'ունթ, հ'առիք, հ'եռթիս, հ'երկէն, հ'ինքը, հ'ըղեղ, հ'ուսում.

4. Հ-ի դիմաց ոչ առնմանական /ւ, ինչպես՝ խաց, խավ, բ'ախ.

5. Բառասկզբի յ-ի անկայունություն, ինչպես՝ օրօշկըտալ (յօրանջ), անխտել (յաղթել).

⁵ Այստեղ հեղինակը ներառել է 5-րդ դարում հնարավոր համարվող, ակնհայ- տորեն արխաիկ բնույթ ունեցող, ինչպես նաև մատենագրական ու այլ կարգի վկայություններով 5-րդ դարի համար հաստատվող հատկանիշները: Տե՛ս Գ.Ջա- հուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 168-180:

⁶ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 183-187:

⁷ Տե՛ս նշվ. աշխ., էջ 185:

6. Ա-ի շրթնայնացման երևույթի առկայություն, ինչպես՝ անուն, կանտու, ծանրիկ, մանթո⁸.

7. Ե-ի երկբարբառային արտասանություն, ինչպես՝ գ՛ետ, դ՛եդ, խեդեդ, շերեփ.

8. Ո-ի երկբարբառային արտասանություն, ինչպես՝ խընձոր, բ՛օրփոս, գ՛ոլ, խըմոր.

9. Վերջընթեր վանկի ա-ի թուլացում, ինչպես՝ խասկընալ, խավսար.

10. Ե-ի սղում *η, n* ձայնորդներից առաջ, ինչպես՝ մըխ, կըխտոտ, թիթըռնեկ.

11. որ(ե)այ(ք)-ով հավաքական հոգնակի, ինչպես՝ գ՛եղրանք, տեղրանք.

12. *Քոյր* բառի *քեռ, քորք, քերց* ձևերի դիմաց *քուէր, քուէրք, քուէրց* ձևեր⁹.

Բայագետի բարբառում *քուր* բառի սեռականն է *քըվոր*, որից էլ կազմվում են մյուս ձևերը՝ *քըվորը, քըվորից, քըվորով, քըվորտանքը, քըվորտանքով* և այլն.

⁸ Ի դեպ, հնարավոր է նաև ա-ի շրթնայնացածության առումով բարբառումս գրաբարյան իրողության արտահայտություն, որը մեզ հուշում է Է.Աղայանի ուշագրավ մի դիտարկումը: Մենք արդեն ցույց ենք տվել, որ շրթնայնացած ա-ն, լինելով *ա* հնչույթի դիրքային տարբերակ, իր յուրահատուկ արտասանությամբ և գործառական հատկանիշներով Բայագետի բարբառի բնութագրական իրողություններից է (Տե՛ս **Վ. Կստովայան**, «Ա» ձայնավորի դրսևորումները Բայագետի բարբառում և «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն, 2012, 137.2, էջ 48-63): Է.Աղայանի կարծիքով՝ հնարավոր է ենթադրել, որ դասական գրաբարի ա-ն «որոշ դեպքերում արտասանվել է որոշ շրթնայնացումով, որ հանգեցրել է նրա փոխանցմանը օ-ի՝ մի շարք բարբառներում: Այդ շրթնայնացումն ավելի զգալի է եղել *աւ* երկբարբառի մեջ, որ և պատճառ է դարձել *աւ > օ* փոփոխության՝ բաղաձայնից առաջ: Այսպիսով, կարող ենք ընդունել ա-ի թույլ շրթնայնացած տարատեսակը (°) գրաբարում, որ, սակայն, հնչույթային արժեք չի ունեցել» (Տե՛ս **Է. Աղայան**, *Գրաբարի քերականություն*, Ե., 1964, էջ 221):

⁹ Տե՛ս նաև Է.Աղայան, Բարբառային հնագույն տարբերակներ հայերենում, *ՀՄՄՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.)*, թիվ 5, Ե., 1958, էջ 73-74:

13. Ուկ-ով դերբայ, ինչպես՝ նըստուկ, քընուկ, բ՛երուկ, դ՛ըրուկ:

Նկատելի է, որ բարբառային այս հատկանիշները հիմնականում վերաբերում են հնչյունական համակարգին, և այդ հանգամանքը ևս մեկ անգամ խոսում է բարբառի հնչյունական համակարգի կայունության մասին: Ի դեպ, հնչյունական հիշյալ հատկանիշները Գ.Ջահուկյանը դիտարկում է իբրև բարբառային հնաբանություններ և դրանց մեծ մասի ակունքները տեսնում նախագրային շրջանում¹⁰: Նկատենք, որ այդ զուգաբանությունների հիմնական մասը (շնչեղ ձայնեղների առկայություն, հ-ի դիմաց ոչ առնմանական /ւ, ա-ի շրթնայնացում, ե-ի և ո-ի երկբարբառային արտասանություն, վերջընթեր վանկի ա-ի տղում) այսօր էլ Բայագետի բարբառի ամենաբնութագրական հատկանիշներն են¹¹: Այս խմբի սակավաթիվ քերականական զուգաբանություններից բարբառիս համար առավել էական և բնութագրական է ուկ-ով դերբայի վկայությունը:

Բարբառային հնաբանությունների մեջ կարևոր տեղ ունեն գրաբարից տարբեր հնչյունական կերպարանք, կազմություն ունեցող, ինչպես նաև գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները¹²: Բայագետի բարբառում գրաբարի համեմատ հնչյունական յուրահատուկ կազմություն ունեցող բառերից են, օրինակ՝ տ(ո)րոփել – տըրըփալ (բաբախել). փերթ – փըթիկ (փոքր կտոր). բողբոջ – բըխպուճ. լակել – լըկել. կոկոն, կոկոմ, կոնգոմ – կօկօ (գլուխ), կօկօլ (անպոչ հավ). մողեզ – մօղօզիկ, թօթափել – թախտըփել և այլն: Գրաբարից տարբեր կազմություններ են ներկայացնում հետևյալ բառերը՝ մեզ – մըքըլկել. ջնջել – ջընջըխել. զգեստ – գ՛եստ. ծմակ – ձ՛ըմա. հանգչել – խանք. սպարդել –

¹⁰ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 260-270:

¹¹ Տեղին է հիշատակել Գ.Ջահուկյանի մեկ այլ դիտարկում ևս. «...բարբառային արդի տարբերությունների զգալի մասը հիմքեր ունի բարբառային ավելի հին տարբերությունների մեջ: Դրանց թվին են պատկանում հատկապես հնչյունական որոշ կարևոր հատկանիշներ» (Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 189):

¹² Տե՛ս նշվ. աշխ., էջ 277-330:

սըբբռել (մրսելուց գույնը գցել). տիղմ – տիլ և այլն: Բայագետի բարբառի՝ գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներից են՝ բ՛ըփուկ (փետուր), տամթ (թրիքի տափակեցված շերտ), տըրաքել (ճայթել), կմվառ (ջրի՝ թմբամեջ տանող ուղին փակող հողաշերտ), կըլըմբօստիկ (գլուխկոնծի), կըռտել (կաշին այրվել), լննքօշ (լայնաբերան), քըռփըշտուն (անհարթ), քըռնուկ (ծաղկատար), գըռըշտել (հրել), փըմփուխ (ուռած և փափուկ), սըլուլ (սառնամանիք), սըղին (սառույցի բարակ շերտ ջրի վրա), շենքել (լայն քայլով անցնել մի բանի վրայով), լախ (փչացած՝ ձու, ձմերուկ)¹³, լընգ ու լնվնգ (անպետք մարդ)¹⁴, լավօթել (անարգական խոսքերով անպատվել), լիժ, լըժիկ (ողորկ, սահուն), լըխկել (սկսել հալչել)¹⁵, լօնք (մեծ քայլ)¹⁶, լըփ (բուռ), մնլնմըշել (տխուր-տրտում նստել), մնռ (չտաշված փայտից մատը մտած շյուղ), կըմուք (քիմք), պըլպըլալ – փայլփլել, տըսկել (թրջել) և այլն¹⁷:

Բնականաբար, հինհայերենյան բարբառային վիճակը գրաբարի հետ ունեցել է հնչյունաքերականական ու բառապաշարային էական ընդհանրություններ: Դրանց մի մասը նոր շրջանում պահպանվել կամ արտացոլվում է միայն բարբառներում՝ այդպիսով ընկալվելով իբրև բարբառային հատկանիշ: Բայագետի բարբառի՝ գրաբարյան համակարգին առնչվող բարբառային հնչյունաքերականական հատկանիշներից են.

1. Գրաբարյան *է-է* հարաբերության արտացոլում.

Իրողության համեմատական դիտարկումը գրաբարում և Բայագետի բարբառում երևան է բերում շեշտակիր վանկում երկու միավորների բաշխման կանոնական համապատասխանություն, ընդ որում՝ երկու դեպքում էլ հնչյունի գործառույթը հաճախ

¹³ Գ.Ջահուկյանը այս բառը վկայում է լալկ ձևով (տե՛ս նշվ. աշխ., էջ 294):

¹⁴ Գ.Ջահուկյանի աշխատանքում՝ լավխազ (տե՛ս նշվ. աշխ., էջ 295):

¹⁵ Գ..Ջահուկյանի աշխատանքում՝ լկել (տե՛ս նշվ. աշխ., էջ 296):

¹⁶ Գ..Ջահուկյանի աշխատանքում՝ լռք (տե՛ս նշվ. աշխ., էջ 297):

¹⁷ Օրինակները բերվում են ըստ Գ.Ջահուկյանի տվյալների (նշվ. աշխ., էջ 283-330):

պայմանավորված է հաջորդ բաղաձայնի որակով¹⁸, ինչպես՝ կես, մոլվես, դ՛եզ, քառտեզ, բ՛ըփռեճ, գօմեշ, բ՛եռ, ձ՛եռ, մսեղ, դ՛եղ, թեփ, ծեփ և այլն:

2. Գրաբարյան *յ-հ* հարաբերության արտացոլում.

Բարբառի հինհայերենյան բառաշերտում բառակզբի գրաբարյան *յ-ի* դիմաց ունենք *հ*, իսկ գրաբարյան *հ-ի* դիմաց՝ *յ* (օրինակ՝ յոյս – հ՛ուս, հաց – խաց): Այսինքն՝ հին բառաշերտում պահպանված *հ-յ* հարաբերությունը համապատասխանում է գրաբարյան *յ-հ* հարաբերությանը¹⁹:

3. Բազմավանկ բառերի սկզբում *ե*, *ռ* պարզ ձայնավորների նախնական, անհնչունափոխ վիճակի պահպանում, ինչպես՝ երկու (երկու), երեվալ (երևալ), օղըղել (ողողել), օսկոռ (ոսկր):

4. Գրաբարյան Ա վերջադրական հոլովման արտացոլում.

Հատուկ տեղանունները բարբառում պահպանել են հինհայերենյան հոլովման հատկանիշներ՝ Հերեվան (ը), Հերեվնա (ն), Հերեվնա, Հերեվնօվ:

5. Ներգոյական հոլովի իմաստի արտահայտում ոչ հոլովական վերջավորությամբ.

Բայազետի բարբառում այս հոլովի իմաստն արտահայտվում է կա՛մ հայցականով, կա՛մ *մեջ* կապով, ինչպես՝ *Տըղէն հ՛ամալսարանն ա սօրվում, գ՛ըրքերը սումկի մէջն ա դ՛ընում*:

6. Բացառական հոլովի է վերջավորության արտացոլում.

Բարբառում սովորական է *ից* (ուց) վերջավորությամբ բացառականը, սակայն հազվադեպ չէ նաև *ե-ն*, ինչպես՝ *օրէ, տընէ, մըկավնէ, մօրէ, դ՛ըսէ դ՛ուս, վոտէն գ՛ըլօխ, քեզնէ* և այլն:

7. Գրաբարյան *այս, այդ, այն* դերանունների երկար ձևերի *իկ* մասնիկի արտացոլում.

Բարբառում *իկ* մասնիկ կամ նրա կրճատ *ի* ձև հանդիպում է և՛ ցուցական, և՛ անձնական դերանունների համակարգերում,

¹⁸ Տե՛ս Վ.Կատվայան, *Մեսրոպյան Է,Ե գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը*, Ե., 2006:

¹⁹ Տե՛ս Վ.Կատվայան, Հ-Խ հնչյունների համապատասխանությունը հայերենի բարբառներում, *Պատմաբանասիրական հանդես*, թիվ 3, Ե., 2007, էջ 163-172:

ինչպես՝ *ընձի, ընձիկ, քեզի, քեզիկ, մեզի, մեզիկ, ձեզի, ձեզիկ, էսի, էսիկ, էտի, էտիկ, էնի, էնիկ*²⁰:

8. Գրաբարյան *ն՞, ո՞վ* դերանունների ձևերի արտացոլում.

Բարբառում *ն՞* դերանվանը համապատասխանող ձևն է *վոն* (*Վոն՞ն ա գ՞ացե – Ո՞վ է գնացել*), իսկ *վիր* սեռականը համապատասխանում է *ոյր* ձևին (*Էսի վի՞ր գիրքըն ա – Սա ո՞ւմ գիրքն է*):

9. Սեռի արտահայտություն ներգործաձև և կրավորաձև վերջավորություններով.

Բայազետի բարբառում նույնպես մի շարք դեպքերում բայի սեռը արտահայտվում է համապատասխան ներգործաձև և կրավորաձև վերջավորություններով, ինչպես՝ անցյալ կատարյալում՝ *բ՛էրի, մօռթի* (ներգ. սեռ) – *մըռսա, նըստա* (չեզոք սեռ), հրամայականի եզակիում՝ *գ՛ըրկա՛, բ՛ընա՛* (ներգ. սեռ) – *թըռի՛, քընի՛* (չեզոք սեռ), նաև՝ *կօղրեց* (կոտրեց) – *կօղրավ* (կոտրվեց)²¹:

10. Հասարակ բայերի առկայություն.

Բարբառումս որոշ բայեր մի շարք դեպքերում նույն ձևով կարող են արտահայտել ինչպես ներգործականության, այնպես էլ չեզոքության կամ կրավորականության իմաստներ, ինչպես՝ *էտ կօֆէն քօ ձ՞եռօվ ա թափե, հիրան-հիրան ա թափե՞, թե՞ էնի յա թափե* (Այդ սուրճը քո ձեռքով է թափվել, իրեն-իրեն է թափվել լ, թե՞ նա է թափել): Նման բայերից են՝ *բ՛ըռթել, թացօտել, ճըլխել, ծըռել, կըղրել, կըխօտել, շըռճել, ջ՛առթել, վառել* և այլն²²:

11. Եզակի հրամայականի գրաբարաձև վերջավորության արտացոլում.

Եթե գրաբարում Ե խոնարհման պարզ բայերը ներգործաձև խոնարհման դեպքում բուն հրամայականի եզակի թվում վերջավորվում էին *ես*՝ մասնիկով, ապա Բայազետի բարբառում նույն

²⁰ Տե՛ս **Վ. Գատվայան**, Յուզական դերանունների դրսևորման առանձնահատկություններ հայերենի բարբառներում, *Հայկազյան հայագիտական հանդես*, Բեյրութ, 2011, էջ 413-427:

²¹ Ավելի հանգամանորեն տե՛ս **Վ. Գատվայան**, Բայի սեռը Բայազետի բարբառում, *Բանբեր Մատենադարանի*, Ե., 2012, թիվ 19, էջ 379-387:

²² Տե՛ս նույն տեղում:

այդ դեպքում բայերն ունենում են ա՛ վերջավորություն, ինչպես՝ գրեա՛ - գ՛րբա՛, սիրեա՛ - սիրա՛: Կարծում ենք՝ գրաբարյանի հետ ընդհանուր նախնական ձևից ե-ի անկումով է առաջացել ներկայիս բարբառային հրամայականի ձևը:

Բացի հնչյունաքերականական հատկանիշները, Բայագետի բարբառի, մասնավորապես՝ բառապաշարի բնութագրական իրողություններ են նաև պահպանված գրաբարյան այն բառերը, որոնք գրական լեզվում չեն գործառուում կամ սակավ են գործառուում: Նման բառերից են՝ հ՛առիք (առիք), հ՛անքան (անագան), հանքընալ (անագանել), անըղնակ (աղեղնակ), հ՛ընթել (անթել՝ թևի տակ դնել), անխեռ-անխայի (անխեռ՝ խելոք, հանդարտ), հ՛ատրկել (ատակել՝ հոգսից ազատվել), գ՛ըլխըվըրել (գլխիվայրել), հ՛երկէն (երկայն), զատ (զատ՝ հեռու), զօրել (զօրել՝ ուժը պատել), խափան (խափան՝ ընդհատում), խօլոր զանել (խոլորել), կակուկակա (կալ եւ կապ), կուշտուպինդ (կշտապինդ), կըռնել (կռանել), խուրովալըրեղեն (հուրն ի հրեղէն), մընձըրել (մանձրել՝ խանձվել), մուխ (մուխ՝ ծուխ), հ՛խստրկել (խտակել), օղորթ (ուղորդ), պանքել (պագանել), փոնթ (փոթ՝ ծալք, ոլորք) և այլն:

Այսպիսով, բերված փաստերը վկայում են, որ Բայագետի բարբառի մի շարք էական հատկանիշներ՝ թե՛ գրաբարից տարբեր և թե՛ գրաբարին համընկնող, գալիս են հինհայերենյան շրջանից²³: Այդ հանգամանքը թույլ է տալիս պնդել, որ Բայագետի բարբառը իր արմատներով ձգվում է մինչև մի հնագույն բարբառային վիճակ, որը որոշակի տարածքում հայերենի դրսևորում էր դեռևս նախագրաբարյան շրջանում: Բայագետի բարբառի և գրաբարի ընդհանրությունները վկայում են ոչ միայն այն մասին, որ բարբառս

²³ Ղարաբաղի բարբառում համանման իրողություններ դիտարկել է Լ. Հովհաննիսյանը՝ եզրակացնելով, որ «Պատմական և լեզվական նմանօրինակ փաստերը հավաստում են, որ Արցախ-Սյունիքում հայերենը սկսել է գործածվել հայ տարրերի կազմավորման ընթացքին զուգահեռ: Այդ տարածքում գործածվող հայերենը բազում դարերի ընթացքում կրելով զգալի փոփոխություններ, մեզ է հասել մի վիճակով, որը կոչվում է Ղարաբաղի բարբառ» (տե՛ս Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջը*, Պատմաբանասիրական հանդես, Ե., 1977, թիվ 1, էջ 151):

եղել է գրաբարի համար հիմք դարձած բարբառախմբում կամ մերձավոր հարաբերություններ է ունեցել դրանց հետ, այլ նաև այն մասին, որ գրաբարը իսկապես իր հնչյունական կազմությամբ, քերականական համակարգի շատ իրողություններով ներկայացնում է ժամանակի ժողովրդախոսակցական լեզուն և դրա մշակված, գրական լեզվի մակարդակի հասցված վիճակն է²⁴:

Виктор Катвалян - Древнеармянские реалии в диалекте Баязета.- Наблюдения свидетельствуют о том, что ряд значительных признаков в диалекте Баязета, как отличных от грабара, так и совпадающих с ним, проистекают из древнеармянского периода. Следует, что диалект Баязета своими корнями простирается до такого древнего диалектного состояния, которое на определенной территории являлось проявлением армянского языка еще в период предшествующий грабару. Общности в диалекте Баязета и грабаре свидетельствуют не только о том, что указанный диалект был в группе диалектов, ставшей основой грабара, или имел родственные отношения с ними, но и о том, что грабар действительно по своей фонетической структуре, многими реалиями грамматической системы представляет народно- разговорный язык своего времени и является его обработанным, доведенным до уровня литературного языка состоянием.

Viktor Katvalyan - Old Armenian Realities in the Dialect of Bayazet.- Observations show that a number of significant features in the dialect of Bayazet, that are either differing from Grabar (Old Armenian) or matching with it, derive from Old Armenian period. It follows that the origin of the dialect of Bayazet traces back to an ancient dialectical situation which existed as a speech variant of the Armenian language in a certain area still in pre-grabarian period. These common features of the dialect of Bayazet and Old Armenian verify not only the fact that this

²⁴ Բայազետի բարբառի՝ գրաբարին առնչվող իրողությունները որևէ կերպ չեն կարող բացատրվել բարբառիս վրա գրաբարի ազդեցությամբ, որովհետև նույնիսկ մեր օրերում գրական լեզուն որևէ բարբառի վրա համակարգային նման ազդեցություն չունի:

dialect was included in or kin to the group of dialects on the basis of which Grabar was developed, but these features also come to certify the fact that Grabar with its phonetic structure and a number of realities in its grammar system really presents the spoken colloquial language of that time and has developed into a literary language level.

ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ^{*1}

Վիկտոր Կատվայան

Լեզվի պատմական զարգացման ընթացքը նախ և առաջ տեսանելի է դառնում գրավոր աղբյուրների լեզվական նյութի դիտարկումով: Մինևույն ժամանակ, այդ ընթացքը դիտարկելի է նաև բանավոր խոսքի, հատկապես՝ բարբառների ընձեռած նյութի շրջանակներում: Բարբառները, լինելով գիտակցական մշակման ու կանոնարկման չենթարկվող լեզվավիճակներ, իրենց համակարգերում յուրահատուկ կերպով զուգորդում են լեզվի զարգացման տարբեր փուլերի վերաբերող իրողություններ, որոնց առանձնացումը և խմբավորումը ըստ փուլերի կարող է կարևոր լինել ոչ միայն տվյալ բարբառին վերաբերող, այլ նաև ընդհանուր լեզվի պատմական զարգացմանն առնչվող հարցեր քննելիս: Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև բարբառներում միջինհայերենյան իրողությունների դրսևորումները, մանավանդ որ, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, «կարելի է ասել, որ արդի բարբառների հնչյունական և ձևաբանական խմբերը սկսում են գծագրվել հին շրջանի վերջերից և միջին շրջանի սկզբներից»²: Միաժամանակ, ըստ Հ. Մուրադյանի, հայերենի գրի առման շրջանի բանավոր-խոսակցական լեզվի դրսևորումներն են, որ տարբեր «գործոնների փոխազդեցությամբ և իրենց ներքին զարգացման օրինաչափությունների ուժով գալիս հասնում են մինչև միջին դարերը, ստեղծելով լեզվական մի նոր համակարգ՝ իրենց ընդհանրություններով ու տարբերություններով հանդերձ»³: Այսպի-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

¹ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Ստողիկ» հրատ., 2014, էջ 49-61:

² Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 192:

³ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Եր., 1972, էջ 35:

սով, միջինհայերենյան իրողությունները մի կողմից իրենց արմատներով գալիս են հինհայերենյան շրջանից, մյուս կողմից պարունակում են բարբառային ներկա վիճակի սաղմերը: Բոլոր դեպքերում փաստ է, որ այդ իրողությունները վկայված են հենց միջին հայերենի շրջանից սկսած:

Հայտնի է, որ միջին հայերենը ընդհանուր առմամբ չի ներկայանում իբրև միասնական նորմավորված գրական լեզու⁴: Ինչպես նկատել է Յ. Կարստը, «Թեև, ի հակադրություն հին ու նոր հայերենի և նրանց բնութագրող հատկանիշների, միջին հայերենը երևում է որպես մի ամբողջություն, այնուամենայնիվ այն ոչ մի դեպքում իրենից չի ներկայացնում միատարր մի լեզու, այլ հանդես է բերում բարբառային զգալի տարբերություններ»⁵: Այդ հանգամանքը ընդգծել է նաև Հ.Աճառյանը. «միջին հայերենը մի ընդհանուր լեզու չէր, այլ թե կային Հայաստանում և Հայաստանից դուրս բազմաթիվ միջին հայերեն բարբառներ, որոնցից մեկն էլ կիլիկյան հայերենն էր»⁶: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ լեզվաբանը նշում է, որ միջին հայերենի և աշխարհաբարի ընդհանրությունները «ավելի կշատանան, եթե փոխանակ առնելու գրական աշխարհաբարը, համեմատության առնենք արդի զանազան բարբառները»⁷: Չներկայանալով իբրև միասնական գրական լեզու՝ միջին հայերենը, իր բոլոր տարբերակային ձևերով հանդերձ, այնուամենայնիվ մեկ միասնական լեզու էր, որի ներսում տեղի էին ունենում նաև լեզվական ընդհանուր և միասնական գործընթացներ, և որի բոլոր դրսևորումների հիմքում ընկած էին ընդհանուր և միասնական հատկանիշներ: Մերօրյա բարբառները միջինհայերենյան շրջանից ժառանգել են ինչպես ընդհանուրհայերենյան, այնպես էլ բարբառային, մասնավոր հատկանիշներ: Հասկանալի է, որ բարբառագիտական առումով հետաքրքրություն են ներկայացնում

⁴ Տե՛ս **Գ.Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 193, **Ս.Ղազարյան**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Ե., 1981, էջ 247:

⁵ **Յ.Կարստ**, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 14:

⁶ **Հ.Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 1951, էջ 253:

⁷ Նույն տեղում, էջ 252:

միջին հայերենի շրջանից գրավոր աղբյուրներում ավանդված և՛ լայն տարածում ունեցող, և՛ մասնավոր այն հատկանիշները, որոնք, արդի բարբառային հայերենի այս կամ այն տարբերակին կամ մի շարք տարբերակների բնորոշ լինելով, ընկալվում են իբրև բարբառային հատկանիշներ: Այդպիսիք իրենց արտահայտությունն ունեն նաև Բայազետի բարբառում:

Կատարելով V դ. բարբառների բազմահատկանիշ դասակարգում՝ Գ. Ջահուկյանը հարավարևելյան միջբարբառի մեջ ընդգրկում է նաև Կոզովիտի ենթաբարբառը⁸, որի հետագա զարգացումն է ներկայացնում Բայազետի բարբառը: Բարբառային այդ միավորը միջինհայերենյան շրջանում շարունակել է իր զարգացումը, ձեռք բերել թե՛ հնչյունական, թե՛ քերականական բնույթի նոր հատկանիշներ, հարստացրել բառապաշարը նորակազմություններով ու փոխառություններով: Նախ ներկայացնենք Բայազետի բարբառի՝ միջինհայերենյան իրողություններին համընկնող հնչյունական հատկանիշները:

1. Շեշտի հետ կապված հնչյունափոխական իրողությունների ծավալում:

Միջին հայերենի շրջանից սկսած՝ ա, ե, ո ձայնավորները ևս շեշտի հետ կապված փոփոխությունների են ենթարկվում: Համարվում է, որ միջին հայերենի տարբերակների մի մասում բազմավանկ բառերը վերջնավանկի գլխավոր շեշտից բացի առաջին վանկում ունեցել են նաև երկրորդական շեշտ, իսկ միջնավանկի ձայնավորները թուլացել են և սղվել⁹: Նկատվել է, որ այս երևույթը հատկապես հատուկ է կիլիկյան հայերենին և ընդհանրապես միջին հայերենի արևմտյան տարբերակներին: Առավել տարածում է գտնում ա-ի սղումը, ինչպես՝ հասկնալ, հավնել, ճանչնալ, գանկտել, դարսկել, տաքնալ և այլն¹⁰: Պատմական այս հնչյունափոխությունը լայն ընդգրկում ունի Բայազետի բարբառում, ինչպես՝ խասկընալ, խավնել, խավըրծիլ, ճանչընալ, գանգըտել,

⁸ Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 185:

⁹ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 73-74:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 74-75, նաև՝ Հ.Աճառյան, նշվ. աշխ., էջ 241-242:

դ՛առտըկել, տմքնալ, մմդնիք, մնոթբան, մմչըկոտ, մպակընել, հ՛առչի, բ՛ալնիս, գ՛էրընդի, կմողել, կմրկըտան, խավսար, փատըտել, փառաբ՛ընել և այլն: Միջին հայերենում ավելի քիչ են հանդիպում ե-ի և ո-ի սղման դեպքերը¹¹ ինչպես՝ գիտնան, ուննալ, երսուն, վայլէ¹², պատըտե, բորբսե, ժողվել¹³ և այլն: Այդպիսիք համեմատաբար քիչ են նաև Բայագետի բարբառում, ինչպես՝ գիդալ, յեռուն, խսյլի, մոծըլի, մնրդնակ, մվլել, թիթըռնեկ, խառճըկաթ (խաչերկաթ), տիրապըտել, հ՛առավտուն, դ՛ողդ՛ըղալ, թօռմել, պմտըտել, ժողվել, օղըղել, տըրըփալ և այլն:

Միջին հայերենում հիշյալ ձայնավորները սղվում էին նաև շեշտի տեղափոխության հետևանքով, ինչպես՝ դարպսեն, ի քաղքեն, երկթե, հիւրնդին, ճակտին, բերնին¹⁴ և այլն: Այս կարգի հնչյունափոխությունը (նաև է-ի և օ-ի) օրինաչափական է Բայագետի բարբառում, ինչպես՝ դմրվըզի, քախկի, էրկըթե, խիվընդի, ճակտի, բ՛էրնի, հ՛անգըճի, մմրընոցով, մշխըրքով, մնմացավ, հ՛առճըկել, բ՛ամբըկե, բ՛արեգմասեր, հ՛ավըլնալ, հ՛իրսով (հ՛իրես), մեռլի (մեռել), վառկի, ցօրնի (ցօրեն), հ՛առչըկըտուր (հ՛առչ), գ՛օմշի (գ՛օմշ), իւէվխըվալ, բ՛օլըրել, բ՛օրփըսնել, կօշկըռնել (կօշկոռ), կօտըշխըրել (կօտոշ), մօլըրել, օլըրել, սմբնել (սմպոն), կօղվիկ (կօղով) և այլն:

¹¹ Շատ Հ.Մուրադյանի՝ այն, որ միջին հայերենում բառական ուղիղ ձևերում բառամիջի ո և ե ձայնավորների սղումը արձանագրվում է սակավ օրինակներով, «բացատրվում է ո՛չ թե օրինաչափության անհետևողականությամբ, այլ միայն նրանով, որ տվյալ դիրքում, ա-ի համեմատությամբ, մյուս ձայնավորները ավելի քիչ հաճախականություն ունեն» (տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 88):

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 82:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 87:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 75: Բերված օրինակները վերաբերում են ա ձայնավորին, բայց Հ.Մուրադյանը կարծում է, որ «միջին հայերենի շրջանում բառաթեքման ընթացքում նման հնչյունափոխություն կատարվում էր նաև ո և ե ձայնավորների հետ, երբ նրանք շեշտագրվում էին» (տե՛ս **Հ.Մուրադյան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Ե., էջ 77):

Ինչպես փաստում է Հ. Մուրադյանը՝ բառամիջի ձայնավորների անկման առաջին վկայությունները գալիս են XI դարից¹⁵: Հետագա դարերի գրավոր աղբյուրներում երևույթը ավելի մեծ տարածում է ստանում¹⁶:

2. Ձայնավորների՝ մասնավոր բնույթ ունեցող փոփոխություններ:

Միջինհայերենյան գրավոր աղբյուրներում արձանագրվում են ձայնավորների՝ մասնավոր բնույթ ունեցող պատմական փոփոխություններ, որոնք իրենց արտահայտությունն ունեն հայագետի բարբառում: Նման փոփոխություններից են.

ա > ը – միջ. հյ.՝ ընկնիլ, ընգողին, XV-XVI դարերից նաև՝ ընել, ըսել, ըմմեն և այլն¹⁷. Բայագետի բարբառ (այսուհետև՝ Բ. բրբ.)՝ հ՛ըմեն, հ՛ընցընել, նաև՝ իընձըրել (խանձել), ճըբըղվել (ճապաղիլ), մընձըրել (մանձրել), շըլանկ (շալակ) և այլն.

ու > վ (թվականներում՝ իբրև շաղկապ) – միջ. հյ.՝ տասնվիաթն¹⁸. Բ. բրբ.՝ տըսվերկու, տըսվիրեք.

ու > օ – միջ. հյ.՝ յօղարկե¹⁹. Բ. բրբ.՝ հ՛օղըրկել, օղոռթ (ուղոռդ).

ու > ը կամ գրո – միջ. հյ.՝ ըղեղ, յղրկեց, դրկե²⁰. Բ.բրբ.՝ հ՛ըղեղ, հ՛ըղըրկել, դըրկել.

ե > ի – միջ. հյ.՝ իրեք, իրիկուն²¹, ավիրել. Բ. բրբ.՝ իրեք, հ՛իրկուն, հ՛իրես, ամիրել.

¹⁵ Տե՛ս **Հ.Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 78: Հ.Մուրադյանի կարծիքով՝ «բառական ուղիղ ձևերում միջնավանկի ձայնավորի անկման երևույթը հաջորդել է բառաթեքման ժամանակ շեշտազրկությունից կատարվող հնչյունափոխությանը: Այսինքն՝ այստեղ նախնականը բառաթեքման ընթացքում կատարված փոփոխությունն է, որը այսուհետև նմանությամբ տարածվել է նաև բառական ուղիղ ձևերի վրա» (նույն տեղում, էջ 87):

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁷ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 75-76:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 78:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 80:

²⁰ Տե՛ս նույն տեղում:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 82:

ե > ա – միջ. հյ.՝ աղբեր²² . Բ. բրբ՝ ամխպեր.

n > ու – միջ. հյ.՝ Գուհար, մինչուր, ինչուր (մինչ որ)²³ . Բ. բրբ՝ Գուվար, չուր, թունդիր, խունջան, կուժդեզ, կուրել (կորնչել).

n > ա – միջ. հյ.՝ Շնահաւոր (Շնորհաւոր), կաթաղիկոս, Յաւանէս²⁴ . Բ. բրբ՝ շընախավոր.

ը > ու, ի – միջ. հյ.՝ պուտուկ (պտուկ), ճիճի (ճճի), յիստակ²⁵ . Բ. բրբ՝ պուտուկ, կունգուխ (կնգուղ), ճիճու, հ՛իստըկել, քիսիկ (քսակ):

3. Երկբարբառների մենաբարբառացում.

Գրաբարի հետդասական շրջանում սկիզբ է առնում երկբարբառների մենաբարբառացման միտում, որը, հետագա դարերում ծավալվելով բանավոր խոսակցական տարբերակներում, միջին-հայերենյան շրջանում վերածվում է կատարված իրողության²⁶ : Բայագետի բարբառում այդ իրողությունն արտացոլվում է հետևյալ կերպ.

այ > է²⁷ – միջ. հյ.՝ ձէն, աղբեր, կեր (կայր), զարմաներ (զարմանայր). Բ. բրբ՝ ձ՛էն, ամխպեր, կեր, զարմաներ, կէժակ, էժ, գ՛ էլ և այլն:

Դեռևս միջին հայերենում նկատելի է այն երևույթը, որ թեև բառավերջի այ-ի յ-ն համը էր, սակայն բաղաձայն մասնիկի հավե-

²² Տե՛ս նույն տեղում:

²³ 23 Տե՛ս նույն տեղում, էջ 85-86:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 86:

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 87-88:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 90: Ի դեպ, երկբարբառների մենաբարբառացման մասին պետք է նկատի ունենալ, որ «Կիլիկյան հայերենի մեջ նման փոփոխությունները գրական լեզվի նորմա չեն. դրանք գրավոր լեզվում արձագանքներն են բանավոր-խոսակցական լեզվում կատարված հնչյունափոխական տեղաշարժերի» (տե՛ս նույն տեղում, էջ 91):

²⁷ Համարվում է, որ այ երկբարբառի վերածվելը պարզ ձայնավորի սկսվել էր միջին հայերենի նախորդ շրջանում և լայն տարածում ստացել XIV-XV դդ.: Այ > է հնչյունափոխությունը տարածված է հատկապես Վասպուրականում, Սյունիքում, Արարատյան գավառում, Վայոց ձորում և Արևելյան Հայաստանի այլ վայրերում ստեղծված ձեռագրերում ու պատմական հուշարձանների արձանագրություններում (տե՛ս նույն տեղում, էջ 91-92):

լումից հետո գործում էր նույն այ > է օրինաչափությունը՝ քահանայ > քահանէք, տղայ > տղէք, Թումայ > Թումէն²⁸ : Իրողությունը հատուկ է նաև Բայազետի բարբառին, ինչպես՝ տըղա – տըղէս, տըղէն. անլըվա- անլըվէք, բուղա – բուղէն, գ՝աթա – գ՝աթէք, ձ՝ըմա – ձ՝ըմէն, շուշպն – շուշպէն, լուլն – լուլէն, հ՝ալվա – հ՝ալվէն, մանյն- մանյէք և այլն²⁹ :

Ոյ > ու³⁰ – միջ. հյ.՝ քուր, բուս, թուլ, ընկուզ. Բ. բրբ.՝ քուր, քօքուր՝ ուս, թուլ, լուս, ըզզուշ, բ՝ուն, հ ուս:

Իւ > ու³¹ – միջ. հյ.՝ ձութ, հարուր, արուն, ձուն. Բ. բրբ.՝ ձ՝ութ, հ՝արուր / հ՝արիբ, անուն, ձ՝ուն, բ՝արութուն, անուր, խուր (հիր), ճուղ, շուղ:

Եւ > ե – միջ. հյ.՝ գեղ, եղ. Բ. բրբ.՝ գ՝եղ, յեղ³²:

4. Բառասկզբում նաև մաքուր ձայնեղ հպականների և հպաշականների գործառություն:

Բայազետի բարբառի հինհայերենյան բառաշերտում բառասկզբում ձայնեղները միշտ շնչեղ են, ինչպես՝ բ՝ան, բ՝ուսել, գ՝երան, գ՝ըթնել, դ՝աթար, դ՝եղին, ձ՝ի, ձ՝ուն, ջ՝առթել, ջ՝ուր: Շնչեղ ձայնեղները պահպանվում են նաև միջինհայերենյան կազմություններում, ինչպես՝ բ՝անարար, բ՝ընակըռել, գ՝ովասանք, գ՝եղացի, դ՝արուփոս, դ՝ուրել, ձ՝ըկտել, ձ՝իյավոր, ջ՝ընջըխել, ջ՝ըրել: Հավանաբար ավելի

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 93: Հ.Մուրադյանը ենթադրում է, որ «այստեղ ո՛չ թե բառավերջի ա-ն է հնչունափոխվել է-ի, այլ նախնական այ-ը: Ուստի այ > է հնչունափոխությունը ավելի հին երևույթ է, քան բառավերջի բաց վանկում յ-ի անկումը» (նույն տեղում):

²⁹ Ինչպես երևում է, օրինաչափությունը գործում է նաև փոխառյալ բառերում՝ ըստ երևույթին համաբանությամբ:

³⁰ Այս հնչունափոխության հիմքը, ըստ Հ.Մուրադյանի, շեշտագրկման հետևանքով հնչունափոխված ձևի անցումն է բառական ուղիղ ձևին (տե՛ս նույն տեղում, էջ 102):

³¹ Միջին հայերենում հանդիպում է այս երկբարբառի երկու կարգի փոփոխություն՝ իւ > ու, իւ > ի. տարբերակների մեծ մասին բնորոշ է առաջին փոփոխությունը (տե՛ս նույն տեղում, էջ 105):

³² Միջին հայերենում ձայնավորների և երկբարբառների փոփոխությունների մասին տե՛ս նաև **Հ.ԱՃառյան**, նշվ. աշխ., էջ 241-242:

վաղ շրջանում կատարված փոխառություններ են շնչեղ ձայնեղներով սկսվող բ՛իճ (թրք.), դ՛ախ (պրսկ.), բ՛ըրինձ (պհլ.) բառերը: Մինչդեռ միջինհայերենյան շրջանի փոխառությունների սկզբում բարբառս այլևս չունի շնչեղ ձայնեղներ. դրանցում գործառում են մաքուր ձայնեղներ, ինչպես՝ բնրեմբնր, բեգուման, գանգանր, դան, ջանդու, ջըվալ (պրսկ.), բնրիշել, բիգ, դամաղ, դոշ (թրք.), դանվի, ջաֆա, ջըվուդ, ջուլ (արաբ.) և այլն: Այսպես միջինհայերենյան շրջանից սկսած՝ Բայազետի բարբառը փոխառյալ բառերի սկզբում, ի տարբերություն հինհայերենյան բառաշերտի բառերի և դրանցով ձևավորված նոր կազմությունների, ունի մաքուր ձայնեղ հպականներ և հպաշփականներ:

5. Ձայնեղ հ՛-ի հավելում ձայնավորով սկսվող բառերի սկզբում:

Այս հավելումը հատուկ է Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի և հարակից այլ շրջանների բարբառներին³³: Ըստ Հ. Մուրադյանի՝ հավելման գործընթացը սկսվել է X-XI դարերից ոչ շուտ և այնուհետև հարատևել է մինչև մեր օրերը³⁴: Բայազետի բարբառում հ՛-ի հավելում հանդիպում է բոլոր ձայնավորներից առաջ էլ, ինչպես՝ հ՛ափեղա, հ՛անգաճ, հ՛ախպուր, հ՛ըմեն, հ՛էքուց, հ՛էսօր, հ՛անքան (անագան), հ՛ընգընել, հ՛ունթ (անութ), հ՛ընցընել, հ՛անշկ (աչք), հ՛անէչ, հ՛առավոտ, հ՛առիք, հ՛առու, հ՛ատըկել (ատակել), հ՛արափացի (արաբացի), հ՛էժան, հ՛առձակ, հ՛առտ, հ՛ավել, հ՛ափ, հ՛ըլնել, հ՛էոթիս, հ՛էրէկ, հ՛իրկուն, հ՛իրես, հ՛էրկեն, հ՛ընգեր, հ՛իմանալ, հ՛ինքը, հ՛իշնել, հ՛իրար, հ՛օղըրկել, հ՛ըղեղ, հ՛ուսում, հ՛ուստ և այլն:

6. Հնչյունափոխական մասնավոր երևույթներ:

Բայազետի բարբառում արձանագրվող մասնավոր հնչյունափոխական շատ իրողություններ կատարված փաստ էին դեռևս միջին հայերենում: Ներկայացնենք այդ իրողությունների մի քանի օրինակներ ըստ հնչյունափոխության տեսակների:

³³ Տե՛ս Հ.Մուրադյան, նշվ. աշխ., էջ 315:

³⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 318:

Հնչյունի անկում.

ր, ն, հ, դ – միջ. հյ. ջաղաց, աժել, եփ, շնահառոր, դուս, ժածել, ճամփա, մտե, Արտաւազ³⁵. Բ. բրբ. ջ'աղաչ, սժել, յեփ, շընախավոր, դ'ուս, ժսժել, ճմմփա, մըտում (մտնում), մոտավազ (Արտավազդ).

Հնչյունի հավելում.

ն, դ – միջ. հյ. կանանչ, ճանանչել, կարմունջ, մանտր, ծանդր, թոնտրէն³⁶ 36 , Բ. բրբ. կմնանչ, ճմնչընալ, կմրմունջ, մմնդրր, ծմնդրր, թունդիր.

Առնմանում.

միջ. հյ. թուխտ, նաֆթ, պաքսեալ, ժածել, ջաղաջ, ցեթեց (ցայտել)³⁷ , Բ. բրբ. թուխտ, նսֆտ, պսքսել, ժսժել, ջ'աղաչ, ցեթել.

Դրափոխություն.

միջ. հյ. դարսկել, կարմունջ, վլանալ, բալնիք³⁸ , Բ. բրբ. դ'ատրկել, կմրմունջ, վըլալ, բ'ալնիս:

Բերված փաստերը անշուշտ վկայում են միջին հայերենի շրջանում բանավոր խոսքում կատարված հնչյունաբանական էական զարգացումների մասին: Եվ իրավացի է Ս. Ղազարյանը, երբ գրում է. «Հայոց լեզուն իր զարգացման ոչ մի շրջանում հնչյունափոխական կանոնների այնպիսի բազմազանություններ, ինչպիսին միջին հայերենում է, չի ունեցել: ... Հնչյունափոխական այդ օրինաչափությունների մի մասը կապված էր շեշտի հետ և ընդհանրապես հատուկ է հայերենին՝ իր զարգացման բոլոր շրջաններում, իսկ մնացած ձևերը շեշտի փոփոխմամբ չի կարելի բացատրել. նրանք ավելի շատ բարբառային առանձնահատկություններ են, որոնք ներթափանցել էին միջին հայերենի հնչյունական համակարգի մեջ և զգալի չափով ազդել նրա դրսևորումների վրա»³⁹ :

³⁵ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 144-150:

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 154-155:

³⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 156-158:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 161-163:

³⁹ Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 221:

Միջինհայերենյան գրավոր աղբյուրները երևան են բերում զգալի տեղաշարժեր նաև բառապաշարում, որոնք հաճախ պայմանավորված են բանավոր խոսքից կատարվող ներթափանցումներով⁴⁰ : Իբրև դրա արտահայտություն՝ Բայազետի բարբառի բառապաշարում զգալի տեղ է զբաղեցնում միջինհայերենյան շերտը: Այն իր մեջ ներառում է ինչպես բնիկ ու բարբառային բառեր, նորակազմություններ, այնպես էլ փոխառյալ բառեր: Մեր մոտավոր հաշվարկներով՝ ներկայումս Բայազետի բարբառում գործառում են միջին հայերենով ավանդված առնվազն 1100 բառեր⁴¹ : Սրանցից բնիկ են հնդեվրոպական ծագում ունեցող այն բառերը, որոնք, տարբեր պատճառներով հին գրականությանը ավանդված չլինելով, հայտնի են դարձել միջին գրական հայերենի միջոցով⁴²: Նման բառերից են, օրինակ՝ մըժ (միջ. հյ.՝ մշուշ), բ'օվել, լըխկել «փափկել, հալվել» (միջ. հյ.՝ լքչիլ, լքնուլ, որոնք, ըստ Հ. Աճառյանի, կապվում են լկիլ «կակղել, թուլանալ, հալվել» բային), թառ, չիր, ս'թ (դռշար), մըքըլկել «ամպել» /Բայազետի բարբառում գործառում է նաև մըքըռեկ «մռայլվել. ամպել» բառը/ (միջ. հյ.՝ մգլիլ «նեխել. բորբոսնել. ամպել»), դ ախժ (դաղձ «վայրի անանուխ»), մըլիկ «մրջուն» (միջ. հյ.՝ մլուկ «փայտոջիլ»), փընթի, լակ և այլն⁴³ :

Միջին հայերենի շրջանում բարբառներից գրական լեզու են ներթափանցել բազմաթիվ բառեր, որոնց ծագումը դեռևս (կամ վերջնականապես) ճշտված չէ: Այդ բառերի մի մասը⁴⁴ գործառում է և Բայազետի բարբառում, ինչպես՝ պմո, ժուկ, մագռա, վիզ, թուշ, ճիվ, ճուռ, գ'ոզ, բ'ըշտել, քարով քարալեղ մնել (միջ. հյ.՝ լեխել

⁴⁰ Ինչպես նշում է Ս.Ղազարյանը, «միջին հայերենի բառային կազմը գրաբարի համեմատությամբ ավելի հարուստ էր ու բազմազան և ուներ զարգանալու, իր միջոցները ընդլայնելու անսահման հնարավորություններ» (նույն տեղում, էջ 277):

⁴¹ Հաշվարկը կատարել ենք Ռ.Ղազարյանի և Հ.Ավետիսյանի «Միջին հայերենի բառարան» (հ. 1, Ե., 1987, հ. 2, Ե., 1992) աշխատության ընձեռած բառամթերքի շրջանակներում:

⁴² Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, էջ 187:

⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 187-191:

⁴⁴ Ակատի չունենք գրական աշխարհաբարում գործածվող բառերը: համակարգի ձևավորմանը:

«սաստիկ ծեծել»), ճօճ ու կէյբսթ (միջ. հյ.՝ ճօջ «բամբասանք»), շիվար, ճ՛ըցում, պուլիկ, կմնթ, մնմշել, տըսկել (միջ. հյ.՝ տզկիլ «թացանալ»), ճիբել, շըտուկ, բ՛էտ, ջ՛ոչ, խախանդ (միջ. հյ.՝ հարհանդ), կուտ, յեղա (միջ. հյ.՝ եդի), զօխ, պուպու (միջ. հյ.՝ բուբու), ճըմուռ, սըբաս (միջ. հյ.՝ սպաս), փօխիհնդ, ժուռ, շոռ և այլն:

Բայազետի բարբառում զգալի քանակություն են կազմում միջինհայերենյան շրջանում արաբերենից, պարսկերենից և թուրքերենից փոխառված բառերը: Այդ շրջանի արաբական փոխառություններից են՝ մլէնի, մմանաթ, մյիբ, դմվի, զաբուն, լմզմթ, վարամ «պալարախտ» (Բ.բրբ. «ցավ, հիվանդություն»), բըղլամ, ժըղլել, խալիս (մաքուր), խըլըսել (սպառվել), մջբ, թմրգել, թորգել, միրաթ, թաբութ, կմբուլ (համաձայն), խըլդ, կմլբ, խալվաթ, խմյսմթ, կօլօտ, հմզըր, հալ, հմյվմն, խարամ, հավալա, կմլմթ, ջըրեզ, քուֆըռ սմբմբ, հուքմ և այլն: Պարսկերենից կատարված փոխառություններ են հետևյալ բառերը՝ մէյմուն, փաչա, գմզ, թմբմզու, բալըշ, փմռդմ, քուֆտմ, գումմն, զիյան, յադ, ոըժբմբ, կօտոշ, թուռշի, ջերգմ, գ՛ախ, չափառ, դմստմ, զաբուն, զըլֆ, թմսմ, թըրաշել, լախ, խըշտ, խըշկել, չմբեք, ջ՛օկ և այլն: Թուրքերեն փոխառություններից են՝ թօփ, ժընջիլ, մնջախ, թըվանք, փարա, բէլ, բ՛իճ, թօզ, յօրդան, ջուլ, չիթ, մդըլ, յմդմկ, չմյիբ, տմդլի, յարա, յախու, բմրիշել, կութի, ճիմ, ճոթ, քօք և այլն:

Հնչյունական ու բառապաշարային նշված երևույթների հետ Բայազետի բարբառում իրենց արտացոլումն ունեն նաև միջինհայերենյան քերականական մի շարք իրողություններ: Ինչ խոսք, միջինհայերենյան քերականական համակարգը, էականորեն տարբերվելով զրաբարյանից, պարունակում էր լեզվի զարգացման այն միտումները, որոնք հետագայում հանգեցնելու էին աշխարհաբարյան: Չանդրադառնալով միջին հայերենի համակարգի ընդհանուրհայերենյան իրողություններին՝ դիտարկենք այդ համակարգի այն

հատկանիշները, որոնք բնութագրական են Բայազետի բարբառի համար: Այդ կարգի հատկանիշներից են հետևյալները.

1. Ա խոնարհման ածանցավոր բայերի ան ածանցի ձայնավորի անկում.

միջ. հյ.՝ շատնալ, խոշորնալ, մեծնալ⁴⁵, Բ. բրբ.՝ շմտընալ, ջ՛օչընալ, խասկընալ և այլն.

2. -եր վերջավորությամբ վաղակատար դերբայի առկայություն⁴⁶.

միջ. հյ.՝ տեսեր, շրջեր, իջեր, մնացեր, հաներ, Բ. բրբ.՝ տեսեր, հ՛իչեր, մնցեր, խաներ.

3. Էական բայի եզակի երրորդ դեմքում ա ձևի դրսևորում:

Առայժմ հայտնի առաջին վկայությունը վերաբերում է 13-րդ դարին՝ «այս այ հանգիստ Ովանիսի»⁴⁷: Բայազետի բարբառում էթում ա, գ՛ալում ա:

4. Մի շարք դեպքերում անցյալի նախկին կամ հետագա ցոյական հիմքի դիմաց՝ արմատական հիմք.

միջ. հյ. չասի, տուի, տուիր, տուաւ, տուին⁴⁸, ավելի ուշ նաև՝ արիր, ասիր, ասաւ, ասին, կանչէք, ծիծաղէք, խմէք, պահէք⁴⁹. Բ. բրբ.՝ մսի, մսիր, մսավ, մսինք, մսիք, մսին, տըվի, տըվիր, տըվեց, տըվինք, տըվիք, տըվին, մրի, մրիր, մրավ, մրինք, մրիք, մրին, կմնչէք, խըմէք, պմխէք:

⁴⁵ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա., էջ 303: Այս անկմանն անդրադարձել ենք նաև հնչյունափոխությունների մասին խոսելիս:

⁴⁶ Ընդհանրապես միջին հայերենում հեղինակները խառը օգտագործում են վաղակատար դերբայի էլ, եր վերջավորություններով ձևեր, և դրանք դեռևս չեն տարբերակվում ըստ բարբառների Ում (էլ) և Կը (եր) ճյուղերի (տե՛ս նույն տեղում, էջ 374):

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 83:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 332, 351:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 365, 387, 390: Նկատվել է, որ անցյալյան հիմքից կազմվող հոգնակի հրամայականի ձևերը առավելապես բնորոշ են Ում ճյուղի բարբառների ներկայացուցիչ հեղինակներին (տե՛ս նույն տեղում, էջ 390):

5. Սահմանափակ տարածում ունեցող հոգնակերտների դրսևորում.

միջ. հյ. կնանիք (անիք), գեղրանք (րանք), իշվանք (վանք)⁵⁰, Բ. բրբ. կընանիք, գ'եղրանք, տեղրանք, դ'իզրանք, իշվանք, գ'իլվանք, տիրվանք⁵¹ և այլն:

6. Միջինհայերենյան Ու հոլովման արտացոլում.

միջ. հյ. ահու, արևու, գլխու, պապու, լուսու, ծախու, ճամփու, տիրու⁵². Բայագետի բարբառում սրանք դրսևորվում են իբրև քարացած ձևեր (հ'ախու /վախենալով/, հ'իր արեվու /իր կարծիքով/, հ'իրա գ'ըլխու /հինքնագլուխ/, պապու տուն, լուսու դ'եմ /լուսադեմին/, ծախու /վաճառելու/, ճամփու դ'ընել /ճանապարհել/, տիրու /գործածվում է հայհոյանքներում/), քանի որ այստեղ այդ բառերը Ու հոլովման չեն ենթարկվում:

7. Անձնական դերանունների թեք ձևերում ի, իկ մասնիկների դրսևորում. միջ. հյ. ինձի, ինձիկ, մեզի, մեզիկ, քեզի, քեզիկ⁵³, Բ. բրբ. ընձի, ընձիկ, մեզի, մեզիկ, քեզի, քեզիկ, ձ'եզի, ձ'եզիկ:

8. Անձնական դերանունների կրճատ ձևերի դրսևորում. միջ. հյ. քե⁵⁴, Բ. բրբ. քե, մե, ձ'ե:

Ինչ խոսք, բերված բարբառային հատկանիշներով Բայագետի բարբառում միջինհայերենյան իրողությունների դրսևորումները չեն սահմանափակվում, որովհետև, հասկանալի է, այդ շրջանի գրավոր աղբյուրներում չէին կարող արտահայտվել ժամանակի բանավոր խոսքի, բարբառների (բնականաբար նաև Բայագետի բարբառին վերաբերող) բոլոր իրողությունները: Ներկայիս բարբառներում միջին հայերենից եկող բարբառային այլ հատկանիշներ թերևս կարելի է վեր հանել ներքին համեմատությունների, լեզվի պատմական զարգացման բոլոր փուլերի տվյալների համա-

⁵⁰ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Ե., 1975, էջ 60:

⁵¹ Տե՛ս նաև **Վ. Գատվայան**, Գոյականի հոգնակի թվի կազմությունը Բայագետի բարբառում. – Լեզու և լեզվաբանություն, 2007, 1-2, էջ 3-13:

⁵² Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, էջ 22-25:

⁵³ Տե՛ս նույն տեղում, էջ 92:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում:

դրման միջոցով: Ինչևէ, Բայազետի բարբառի համար բնութագրական հնչյունական, բառապաշարային և քերականական բերված փաստերը մեզ թույլ են տալիս եզրակացնել, որ Բայազետի բարբառի ներկա վիճակը շարունակությունն է միջին հայերենի շրջանում ևս գործառած բարբառային մի համակարգի, որի ներսում յուրօրինակ կերպով զուգորդված են եղել ինչպես ընդհանուր-հայերենյան, այնպես էլ բերված ու գրավոր աղբյուրներում չվկայված այլ հնչյունաքերականական ու բառապաշարային հատկանիշներ:

Катвалян Виктор – Среднеармянские реалии в Баязетском диалекте. – Проистекающие из среднеармянского периода и характерные для Баязетского диалекта фонетические, лексические и грамматические признаки свидетельствуют о том, что нынешнее состояние Баязетского диалекта является продолжением диалектной системы, функционировавшей в период среднеармянского языка, внутри которой своеобразно сочетались признаки как общеармянские, так и свойственные диалектному армянскому языку.

Katvalyan Viktor – Middle Armenian Realities in the Dialect of Bayazet. – The phonetic, lexical and grammatical features, characteristic to the dialect of Bayazet and derived from the Middle Armenian period, certify the fact that the present level of the dialect of Bayazet comes from a dialectical system which was used in the Middle Armenian period and in which features typical to both common Armenian and Armenian dialects co-existed.

**ԱՌԿԱՑԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ՄՇՈ ԲԱՐԲԱՌՈՒՄ*¹**

(Չուգադրահամեմատական քննություն)

Գարիկ Մկրտչյան

Հայերնի զարգացման բոլոր փուլերում առկայացման քերականական կարգը նշույթային արտահայտություն ունի: Անորոշությունն ու որոշյալությունն արտահայտության պլանում ներկայանում են որոշակիորեն ընդգծված հակադրությամբ: Եթե որոշյալության դեպքում ձևաբանորեն դրսևորվում է բառերի վերջում հոդերի ավելացմամբ, ապա անորոշության իմաստը եղել է աննշույթ, զրո վերջավորությամբ², սակայն, ինչպես կտեսնենք, նախաաշխարհաբարյան շրջանից սկսած՝ լայն տարածում է ստացել նաև անորոշի նշույթավոր տարբերակը ևս: Հայերենի զարգացման բոլոր փուլերում առկայացման քերականական կարգի համար ծառայել են հնդեվրոպական ծագման **ս, դ, ն** հոդերը, որոնք, որպես արմատահնչուններ, հանդես են գալիս նաև գրաբարյան **սս, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն** ցուցական դերանուններում: Մա ապացուցվում ներքին վերականգնման այն օրինաչափությամբ, որ բազմիմաստ **ս, դ, ն** հոդերն անհրաժեշտության դեպքում կարող էին ստանալ անձնական, ցուցական, ստացական դերանունների իմաստ և գործածվել՝ կա՛մ փոխարինելով համապատասխան դերանուններին, կա՛մ վերջիններիս հետ զուգահեռաբար³:

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

¹ Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 4-րդ գիտաժողովի զեկուցումներ, Եր., «Ասողիկ», հրատ., 2014, էջ 38-46:

² **Գ. Զահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, էջ 205:

³ *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Բ, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975, էջ 78:

Գոյականների առկայացման համակարգայնությունն արտացոլվում է նաև միջինհայերենյան լեզվական հուշարձաններում ու Մշո բարբառի տարաբնույթ լեզվանյութում՝ թե՛ գրավոր խոսքում, թե՛ կենդանի խոսքում: Գրաբարում որոշյալության իմաստի արտահայտությանն էին ծառայում **ս, դ, ն** հոդերը, ընդ որում, առաջին երկուսն այս գործառույթով հանդես էին գալիս ավելի սահմանափակ կիրառությամբ, քան վերջինը: Միջին հայերենում ձևաիմաստային այս նմանօրինակությունը մասնակիորեն վերանում է: Ստացականության իմաստը սկսում է կապվել հիմնականում **ս, դ** հոդերի հետ, իսկ **ն** հոդը ստանում է առաջին հերթին որոշյալություն արտահայտելու գործառույթ, թեև երկրորդաբար կարող է ունենալ ստացականության և ցուցականության իմաստ: Խիստ հազվադեպ **ս** կամ **դ** հոդերը կարող են կատարել որոշիչ հոդի գործառույթ, ինչպես՝ *Ով գեղեցիկ ի հաւերդ, երնէկ ականջին, որ լսէ զբարի բարբառ քո*-ՎԱ-30 /դ-որոշիչ/: Բերենք հոդառության տարբեր դրսևորումներին վերաբերող օրինակներ միջին հայերենից՝ *մինչ որ վճարի պարտքերս, որ ի յիմ շալակս է կուսած*-Ֆր.-388 /ս-ստացական/, *տեսէք թե քանի մարդիք յաշխարհէս դարտակ մնացին*, -Ֆր.-434 /ս-ցուցական/, *աչերդ է ի ծով նրման, ուներդ՝ աղեղան լարման*-ԿԵ-156 /դ-ստացական/, *ես այդ աթոռոյդ տէրն եմ*-ԷՄԱ-114 /դ-ցուցական/, *թագաւոր մի կայր, աչուին էր յաժՆՇ-638* /ս-ստացական/, *ասեն իշխանքն և ճորտերն առ թագաւորն*-ՎԱ-211, *նոր տնկին գինին բնութեամբ այլ հով է, քան քան գինն այգւոյն*-ԳՎ-84 /ս որոշիչ հոդ/*:

Առկայացման քերականական կարգում նորություն է այն, որ մեր լեզվի պատմական զարգացման ընթացքում մուտք է գործել նաև որոշիչ **ը** հոդը, որի ծագումն ու լեզվաժամանակագրությունը մինչ օրս հարաբերականորեն է որոշված, սակայն լեզվական փաստերը, ինչպես կտեսնենք, ցույց են տալի, որ որոշյալ **ը** հոդը հայերենի զարգացման ներքին օրինաչափությունների արդյունք է

* Միջին հայերենին վերաբերող լեզվական փաստերը հիմնականում տրվում են ըստ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմություն աշխատության /հատոր Բ, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1975/:

և, կարծում ենք, հնչյունական մակարդակում այն եղել է հայերենի զարգացման ավելի վաղ շրջաններից ու միայն վաղ և ուշ աշխարհաբարյան գրավոր տեքստերում ստացել ձևաբանական արտահայտություն:

Միջին հայերենում և Մշո բարբառում **ը** որոշիչ հոդը բացակայում է, երկու տարածքներում էլ որոշյալությունն արտահայտվում է **և** հոդի միջոցով: Միջին հայերենում և Մշո բարբառում **և** հոդ են ստանում նաև բաղաձայնով վերջացող բառերը՝ **դաշտըն, տունըն, ձորըն, մուգըն, քարըն, մաղըն, ձեռըն, բախտըն, զօւըն** և այլն: Հոդառության այսօրինակ գործածությունը կարող է վկայել, որ **ը** հոդը հնչյունաբանորեն եղել է հայերենի զարգացման ավելի վաղ շրջաններում՝ ձևաբանորեն չարտահայտվելով: Բառավերջյան **և** հոդից առաջ հնչող **ը**-ն, հավանաբար, լրացուցիչ բաշխման մեջ է մտել **և**-ի հետ ավելի վաղ: Ը հոդի **և** հոդից առաջ հնչման փաստերը գտնում ենք միջնադարյան լեզվական հուշարձաններում: Միջին հայերենով ստեղծագործող Ֆրիկի տաղերում վկայված փաստերը՝ **Արդունըն ի նչ վնաս գործեց, զինչ պատարագըն Աբելի, Երկնատորքըն զհաւանին, զինչ ազատեաց տէրըն զԱդամ**⁴ և այլն, թույլ են տալիս մասնակիորեն եզրակացնելու որոշյալ **ը** հոդի ծագման ժամանակի հարցը: Ը հոդի այսպիսի գործածության առկայությունը ի ցույց է դնում, որ **ը**-ն, որպես հոդ, ծագել է **և** որոշիչ հոդից. սկզբում որպես հավելադիր ձայնավոր է եղել, որպեսզի երկու բաղաձայն հնչյունների միջև եղած բաղաձայնական կուտակումը և արտասանական դադարը վերանա, ապա հետագայում **ը**-ն իր վրա է վերցնում **և**-ի գործառույթը, սկսում է գործածվել ինքնուրույնաբար⁵՝ դուրս մեղելով **և**-ին: Լեզվական գործող փաստերը ցույց են տալիս, որ Մշո բարբառի խոսվածքներում տակավին պահպանվել է **ը**-ի որպես հավելադիր ձայնավոր լինելը **և**-ից առաջ, քանի որ Մշո բարբառը այս համակարգում հա-

⁴ *Հայկական համաբարբառ*, 19, **Ֆրիկ**, Բանաստեղծություններ, զիրք առաջին, Ա-Կ, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ, Ե., 1986, էջ 1-10:

⁵ *Պատմաբանասիրական հանդես*, Ա. Խաչատրյան, Հայերենի «Ը» ձայնավորի հնչույթայնության հարցը, համար 4, Եր. 1966, էջ 145:

րագատորեն պահպանել է նախորդ լեզվափուլերի որակները, իսկ այսօրվա դրությամբ **ը** հողի եղած գործածություններն ուղղակիորեն պայմանավորված են գրական լեզվի ազդեցությամբ:

Միջին հայերենում և Մշո բարբառում տարբերակվում են **ա/որոշիչ, բ/ ստացական, գ/դիմորոշ, դ/ ցուցական** հողեր: Այս բոլոր իմաստային տարբերակումները որոշ չափով որոշյալության տարր են պարունակում և վերջին հաշվով ծառայում են բառերի նշանակած առարկաների առկայացմանը⁶: Միջին հայերենում և Մշո բարբառում **ն** որոշիչ հողը չունի իր դիրքային տարբերակը՝ **ը**, որը, ինչպես նշեցինք, ավելի նոր ժամանակների ծնունդ է և զարգացել է միայն աշխարհաբարում՝ հնչյունական որոշ օրենքների գործադրման հետևանքով: Որոշիչ հողը միշտ կցվում է բառավերջին, անկախ այն բանից, բառը ուղիղ ձևով է հանդես գալիս, թե հոլովված, այսինքն՝ բոլոր դեպքերում դրվում է հոլովաթվանիշ ձևային հետո, ընդ որում՝ լինելով բաղաձայն, չի առաջացնում շեշտի դիրքի փոփոխություն և դրա հետ կապված հնչյունափոխություններ: Մ. Հ. Բաղդասարյան-Թափալցյանի գնահատմամբ Մշո բարբառի որոշիչ հողերն են **ն-ն** և **ը-ն**: **Ն** որոշիչ հողը դրվում է ձայնավորով վերջացող բառերից հետո՝ **ճին, կադուն, լուն, գինին, Կառուն, քեռին** և այլն: Բարբառագետը **ը** որոշիչ հողը ներկայացնում է բաղաձայնով վերջացող բառերում գործածություններով, որպես օրինակներ բերում **տունը, շունը, քաղաքը, գեղը, հերը, ախշարքը** բառերը: Այս հանգամանքը կասկածելի ենք համարում, քանի որ Մշո բարբառում **ը** հողը, ինչպես արդեն նշեցինք, տիպաբանորեն բացակայում է, քանի որ համակարգային է **ն-ի** գործածությունն անգամ բաղաձայնավերջ բառերում: Եթե **ը** հողի գործածությունները կան էլ, ապա դրանք, ենթադրում ենք, հարևան բարբառների՝ **Վանի, Արարատյան, Արցախի** ազդեցություն են, որոնցում **ը** հողը ներկայանում է առանց **ն-ի** զուգորդման: Մ. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը նույնպես նկատել է, որ Մշո բարբառում, երբ բառը վերջանում է բաղաձայնով, հաճախ **ն** որոշիչ հողից

⁶ **Գ. Ջահուկյան**, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 184:

առաջ բառին ավելանում է **ը** ձայնավորը, այսպես՝ **տունըն, շունըն, քաղաքըն, գեղըն, հերըն, ախշարքըն**, սակայն որևէ կերպ չի բացատրում դրա էությունը, դեռ ավելին որոշ մեկնաբանություններում վրիպում: Հետագոտողը գրում է. «Երբ որոշիչ **ը** հոդը ստացած բառին հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, այն դեպքում **ը**-ն, հակառակ աշխարհաբարի, չի դառնում **ն**»⁷, ասենք՝ *կընհզըն ըսեծ, կօվըն ուռավ* և այլն: Որպես բացատրություն է հիշատակում այն դեպքերը, երբ հաջորդող բառը **լե**-ն է: Այդ դեպքում, ըստ Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանի, որոշյալ **ը** հոդին ավելանում է **ն**՝ *զերգու հացըն լե կերավ, ըզճ ուրըն լե խըմեց ու գընաց: զերգու ախպերըն լե գճացին սալղաթ* և այլն: Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյանը, կարծեք թե, ընդունում է **ը** հոդի գոյությունը **ն**-ի հետ զուգորդմամբ, որը ընդունելի չէ, քանի որ մեր լեզվում երկու հոդ համատեղ, նույն նշանակությամբ գործածվել չեն կարող: Ընդամենը կարելի է ասել, որ մինչ օրս Մշո բարբառում **ն** հոդը բաղաձայնավերջ բառերի վերջում շարունակում է գործառել: Այն, որ Մշո բարբառում չկա **ը** հոդը, ժամանակին Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքի տվյալներով դիտարկել է նաև Քերոբ Մադաթյանը⁸: Մշո բարբառը, ըստ ամենայնի, մինչ օրս օրինաչափորեն պահպանել է հինհայերենյան հոդառության այս հանգամանքն անաղարտորեն, քանի որ քերականական կարգերը տոկուն են և հեշտությամբ չեն փոփոխվում և ոչ մի լեզվում:

Մշո բարբառում ու նրա խոսվածքներում կան կիրառություններ, երբ գոյականը որոշիչ հոդ չի կրում: Նմանատիպ դրսևորումները բերում ենք ստորև. ա/ շատ հաճախ ենթական գործածվում է անհոդ՝ *Առշագ գճնած գճեղ, Ծաղիգ շընգավ գճեղին* և այլն, բ/ հանգման և մատուցման անուղղակի խնդիրները հոդ չեն ստանում այն դեպքում, երբ բառը հոգնակի թվում **օծ** հոլովման է պատկանում.

⁷ Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., Եր., 1958, էջ 102:

⁸ Ք. Մադաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Եր., 1985, էջ 95-98:

գօռձիկներ քաճկեմին գէղածոծ, ճամպոտուներ մօղէճան քաղկրծօծ,
 գ/ ուղիղ խնդիրը՝ թե՛ անձ, թե՛ իր ցույց տվող, դրվում է առանց
 որոշիչ հողի՝ *Մարօն հաճ թրխէճ, ջնուր քէրէճ, օճխար կըրտէճ,*
էրէխէն մօր շաղ գուգա և այլն, դ/ ձայնավորով վերջացող անձնա-
 նուն ուղիղ խնդիրը գործածվում է առանց հողի՝ *Մամվէլ գըրգէճ*
Վանօյ, զարգէճ Կարօյ, ծէձէճ Մարօյ և այլն, ե/ առանց հողի են գոր-
 ծածվում տրականով դրված նպատակի պարագան՝ *Մառան վա-*
գալ ջըրու և այլն, գ/ ուղղական և տրական հոլովներով տեղի պա-
 րագաները, որոնք ներգոյական հոլովի իմաստ ունեն՝ *Քօճօ*
արէստանօծ գօռձիկ շաղ կա, դնայնօծ թագա փուկս ա դըրաձ,
գաղէն էգալ ճէռնէր ծօց և այլն: Մշո բարբառում ու նրա խոսվածք-
 ներում որոշիչ հողը հաստատուն կիրառություն ունի: Վերոբերյալ
 անհող կիրառությունները ցույց են տալիս այս քերականական
 կարգի ոչ համակարգվածությունը, որը պետք է պայմանավորել
 նախորդ լեզվափուլերի հետ ունեցած առնչությունների համա-
 տեքստում: Քիչ հավանական ենք համարում այսպիսի կիրառու-
 թյունների արագախոսության հետևանք լինելը:

Որոշյալությունն արտահայտելիս Մշո բարբառը երկու
 հնչյունական յուրահատկություն է հայտաբերում: Եթե հողակիր
 բառին հաջորդորդում է ձայնավորով սկսվող բառ, ապա **ն** հողը
 արտասանվում է այդ ձայնավորի հետ, իսկ **ը**-ն ընկնում է՝ *քարըն*
կօղրալ, բայց՝ *էձըն ուռալ /էձ նուռալ/*: Այս նույն օրինաչափու-
 թյունն է գործում նաև **հ**՝-ից առաջ. **հ** խուլ հազազը դուրս է
 ընկնում, **ն** հողին հաջորդում է ձայնավոր՝ *քար նընգալ*, այլ ոչ թե
քարըն հ ընգալ: Թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում այն
 բառերը, որոնք բառավերջում ունեն ա ձայնավոր, ն հողից առաջ
 հնչյունափոխվում են է-ի՝ *տղա>տղէն, փարա>փարէն, շըլապկա>*
շլապկէն, էրէխա> էրէխէն, փէսա>փէսէն և այլն:

Որոշիչ հողը միջին հայերենում միանգամայն գուրկ է հոլո-
 վատարբերակիչ գործառույթից, ձևաբանական մակարդակում
 դիրքային ոչ մի պայմանավորվածություն չունի և կարող է կցվել

ցանկացած հոլովածևին՝ լինի այն եզակի, թե հոգնակի: Օրինակ, *կատարեցաւ յիճ ճորտերուն անսիզնին և իրաւներն*-ՍՍԱ-43 /հոգ. սեռ.-տր. և ուղղ./ *հլրեանք հլրեանց անձներովն և ըորզակովն*-ՎԼ-187 /հոգն. և եզ. գործ./, *մէկ մի ի զգայարանցն կամ չորս զգայարանքն*-Գր.-93 /հոգն. բաց. և ուղղ./, *զայն այգոյն գեղեցկութիւն* -ՎԱ-179 /եզ. սեռ.-տր./, *եւ թէ մի ոմն հանց նեղ և մութն տեղումն կենար՝ չէր ապրիլ*-ԱՕԲ-27 /եզ. ներգ./: Այս հանգամանքը Մշո բարբառում զգալի սահմանափակումներով է ներկայանում, քանի որ հոդերն առհասարակ կցվում են բացառապէս ուղղական-հայցական և տրական հոլովներին: Սակայն Մշո խոսվածքներում հանդիպում ենք կիրառությունների, համաձայն որոնց՝ բացառական հոլովը **և** հոդ է ստանում՝ **չուրի յասուց տուն, բէռնիցըն բէրէց, ախճըզա մառթիցըն լուր մի չիկա** և այլն:

Մշո բարբառում պատկանելությունն արտահայտելիս մեծ կիրառություն ունեն ստացական դերանունները, սակայն շատ հաճախ այդ իմաստն արտահայտելու համար գործադրվում են ստացական հոդերը, որոնք իրացվում են **ս, դ/տ, ն** մասնիկներով: Ընդ որում, առաջին դեմքը ստանում է **ս /ի/- գիրքսի, գրքերսի-գիրքս, գրքերս**, երկրորդ դեմքը՝ **դ/տ/ի/- գիրքտի, գրքերտի-գիրքդ, գրքերդ**, երրորդ դեմքը՝ **ն-ն՝ գիրքըն, գրքերն-գիրքըն, գրքերն**: Մշո բարբառով, Ալաշկերտի, Մանազկերտի խոսվածքներով խոսող բարբառախոսները ստացական **ս**, և դիմորոշ **դ/տ** հոդերին են ավելացնում նաև **-ի** մասնիկը՝ **օրդներ> իմ օրդներ> օրդներս>օրդներսի, մադ>իմ մադըն>մադըս>մադըսի, զլօխ>իմ զրլօխն> զլօխս>զլօխսի, ցավ>քօ ցավը>ցավըդ/տ> ցավըդ/տի, մրոութ/տ>իմ մրոութ/տն> մրոութ/տս>մրոութսի, մէջք>քօ մէջքը>մէջքըդ> մէջքըդ/տի, թէվ>թէվըս> թէվտի, թուշ> քօ թուշը>թուշդ/տ>թշներդ/տի, միդ>իմ միդ> մըտէս> մըդէսի, ախպէր>քու ախպէր>ախպէրտի, փօր>իմ փօրի մէչ> փօրուսի մէչ** և այլն: Օրինակներից երևում է, որ երբ **-ի** մասնիկն ավելանում է **ս** հոդին, արտահայտում է ստացականի իմաստ, իսկ երբ ավելանում է **դ/տ**-ին՝ արտահայտում է դիմորոշի իմաստ:

Ստացական **ս, տ /ղ/** հոդերը Մշո բարբառում ինքնուրույնաբար չեն ավելանում բառերին: Մշո բարբառում տարածված գործածություն է բառերի՝ ոչ միայն ստացական հոդեր, այլև՝ ստացական դերանուններ ստանալը՝ **իմ քուրսի, քու հաստի, մեր տավարի, ձեր քափօրսի** և այլն: Ս. Ն. Բաղդասարյան-Թափալցյանը ստացական -ի մասնիկը համարում է աճական, բայց, ըստ մեզ, -ի մասնիկը ես դերանվան սեռական հոլովի, պատկանելություն արտահայտող իմ բառաձևի ի արմատահնչյունն է և, հավանաբար, ստացականության իմաստը սաստկացնելու համար դրվում է բառի վերջում: Մեր այս տեսակետին նպաստում է նաև այն հանգամանքը, որ հինհայերենյան լեզվական հուշարձաններում **իմ** ստացական գործառում է նաև հետադա:

Մշո բարբառի խոսվածքներում ստացական հոդերը գործածվում են դերանունների եզակի թվի փոխարեն, հոգնակի թվում պատկանելության իմաստն արտահայտվում է դերանուններով՝ **ճ՛եռնէրս, ճ՛եռնէրտ, ճ՛եռնէրն=իմ ձեռքերը, քո ձեռքերը, նրա ձեռքերը**, իսկ երկուսի կամ շատերի ձեռքերը նշելու համար ասվում է՝ **մեր ճ՛եռնէր, ճ՛եր ճ՛եռնէր, ընդօնձ ճ՛եռնէր**: Ետադաս գործածության ժամանակ **մէր, ճ՛եր** դերանունները ենթարկվում են կրճատման՝ **ճ՛ենէր մէ, ճ՛եռնէր ճ՛է**: Մըզի /մէզի/, ճ՛ըզի /ճ՛էզի/ դերանունները ետադաս գործածվելիս չեն կրճատվում՝ **գ՛ըլօխ մըզի, գ՛ըլօխ ճ՛ըզի** և այլն:

Քննարկվող խոսվածքներում դիմորոշ են **ս, դ, ն** հոդերը, իսկ **ն-ն** ցուցական հոդի կիրառություն ունի՝ արտահայտելով ցուցական դերանունների նշանակությունը՝ **կրնիգրն>այս կնիգր/այն կնիգր/այդ կնիգր** և այլն: Այս հանգամանքը կասկած է հարուցում: Նույն ստացական հոդերը բարբառում ծառայում են որպես դիմորոշ հոդեր: Ք. Մադաթյանի դիտարկումներով՝ Ալաշկերտի խոսվածքում բացակայում են ցուցական հոդերը: Մշո բարբառի խոսվածքներում օրինաչափ երևույթ է կապերի ստացական, դիմորոշ

հող ստանալը՝ *խոսվան հետս «խոսվեցին ինձնից», կրնաստիմ մօղրդ «նստում եմ քեզ մոտ», կերտամ հետրդ «կգնամ քեզ հետ»* և այլն:

Մշո բարբառում ցուցական հողը ն-ն է, որը հավասարապես կարող է գործածվել և՛ այս, և՛ այն դերանունների իմաստն արտահայտելու համար՝ *գիրքըն, տունըն* և այլն: Ն հողն այստեղ միաժամանակ նշանակում է և՛ *այս գիրքը, այս տունը, և՛ այն գիրքը, այն տունը*:

Միջին հայերենում արդեն նկատելի է դառնում մի թվականի անորոշության իմաստ արտահայտելու գործառույթով հանդես գալու միտումը: Գործածության հատուկենտ դեպքերը, ինչպես՝ *«թագաւոր մի կայր»* կամ *«վարդապետի մն խօսքն բարի խրատ լինի»* /ԱՕԲ-6/, աստիճանաբար լայն տարածում են ստանում, որի արտացոլումը տեսանելի է նաև Մշո բարբառում ու հայերենի մյուս տարածական միավորներում: Մշո բարբառում անորոշ առումն արտահայտվում է գրո վերջավորությամբ, ինչպես նաև *մի/մե/մը* անորոշ հողերի միջոցով, թեև հնչյունական *մը* տարբերակը, որը հիմնականում հայերենի արևմտյան, եզրային բարբառներին է հատուկ, հազվադեպ է հանդիպում, համակարգային չէ և, ըստ էության, հնչաշղթայում արագախոսության հետևանք է: Այս ձևությոները, որոնք նաև դիտվում են որպես անորոշ դերանուններ, ծագմամբ կապվում են մի թվականի հետ՝ որոշակիացնելով գոյականի ընդհանուր իմաստը՝ *մէ բան, մէ գօռձ, մէ խատ, մէ օր, մը ճար, մը խօսք/կ, տուն մի, բան մի, ճար մի, շօր մի* և այլն: Եթե գոյականը լրացում է ունենում, անորոշ *մի/մը* հողերը դրվում են լրացումից առաջ՝ *մէ ցօջ քար, մէ խուռձ փայլախ խօղ* և այլն: Մէ-ն միշտ նախադաս է լինում գոյականին, իսկ *մի-ն*՝ հետադաս: Անորոշ հողի հետ կարող է գործածվել նաև *հաղ* բառը, ինչպես՝ *մէ հաղ տուն, մէ հաղ շուն* և այլն: Հողի նման գործածությունը Հր. Աճառյանը համարում է «անորոշի գորացում»⁹: Մշո բարբառում նկարագրական եղանակով հողի արժեք ունի նաև *մէգ* բառը՝ անորոշ կիրառությամբ՝ *մէգ մարթ, մէգ տուն* և այլն:

⁹ Հր. Աճառյան, *Քննություն Վանի բարբառի*, Երևան, 1953, էջ 142:

Զուգադրահամադրումը ցույց է տալիս, որ առկայացման քերականական կարգը միջին հայերենում դեռևս պահպանում է նախորդ լեզվափուլի նույն կարգի դրսևորումները, որոնք հատկապես տեսանելի են ցուցական, դիմորոշ և ստացական հոդերի առումով, իսկ Մշո բարբառը որոշյալության գրեթե բոլոր դրսևորումներում աղերսվում նախորդ լեզվափուլերին, որոշ դեպքերում, ինչպես տեսանք, հայտաբերում ձևային ինքնատիպ յուրահատկություններ: Միասնաբար վերցրած՝ թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում, առկայացման քերականական կարգի ձևախմբաստային լուծումները նույն են, որոնք կարող ենք գտնել հայերենի զարգացման բոլոր վիճակներում: Միայն ը հոդն է, որ մինչին հայերենում ընդհանրապես ձևաբանորեն չի արտահայտվել, իսկ Մշո տարածքի խոսվածքներում տարբեր պատճառներով համակարգային չի դարձել մինչ օրս:

Гарик Мкртчян- The Peculiarities of Grammatical Category of Taking Articles in Middle Armenian and Dialect of Moush (contrastive comparative analysis).-The analysis based on the data of Middle Armenian and the dialect of Moush showed that the grammatical category of taking article in Middle Armenian still possesses the manifestations of the same system of the previous linguistic stage. Both in Middle Armenian and the dialect of Moush the form and meaning of the grammatical category of taking article are almost the same. The article “Ը” in Middle Armenian and in the dialect of Moush was not expressed morphologically, but according to linguistic facts it was expresses phonetically. In the dialect of Moush the article “Ը” is not systemic till now.

Гарик Мкртчян-Особенности расчлененной грамматической системы в среднеармянском и мушском диалекте (сравнительное исследование). Исследование сделанное по учетам данным среднеармянского и мушского диалекта, показывают, что расчленение грамматической системы в среднеармянском, до сих

пор сохраняет проявления предыдущих лингвистических этапах. И в среднеармянском, и в мушском диалекте образно-смысловые решения расчленения грамматической системы, почти одинаковые. Артикль Ը в наречиях среднеармянской и мушской территории формально не выражалась, но, как показывают лингвистические факты, они существовали по фонетически. В мушском диалекте артикль Ը до сих пор не стала системной.

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՄՇՈ ԲԱՐԲԱՌՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՂ
ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԸ¹

(ընդհանրություններն ու տարբերությունները)

Գարիկ Մկրտչյան

Միջին հայերենը և Մշո բարբառը կցական կառուցատիպով լեզվավիճակներ են: Այն արտահայտվում է նաև գոյականների թվակազմության մեջ՝ պահպանելով թվի քերականական կարգի՝ եզակի/հոգնակի իմաստային հակադրությունը: Պարզ է՝ միջին հայերենը 12-16-րդ դդ. «գրախոսակցական» լեզուն է, իսկ Մշո բարբառը Կենտրոնական Հայաստանում ձևավորված ու կազմավորված, ապա ՀՀ տարածքում և այլուր գործածվող, լայն ընդգրկում ունեցող բարբառ է՝ իր ենթաբարբառներով, տասնյակ խոսվածքներով: Այն լեզվական մի շարք հատկանիշներով աղերսվում է հայերենի տարբեր լեզվավիճակների հետ, ի մասնավորի՝ միջին հայերենի: Երկու լեզվավիճակները խնդրո՝ հոգնակիակազմության հարցում հայտաբերում են հոգնակերտների նորատիպ՝ գուգամիտվող և տարամիտվող համակարգեր*:

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

¹ Ջահուկյանական ընթերցումներ, Միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2014, էջ 125-133:

* Միջին հայերենի հոգնակերտ մասնիկների քննությունը կատարվում է ըստ 12-16-րդ դդ. գրավոր աղբյուրների, ուստի համապատասխան եզրահանգումները տրվում են այդ դարերից ավանդված լեզվական փաստերի դիտարկումներով, և դրանց գիտական ուսումնասիրությունը տեսնում ենք «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» ուսումնասիրության երկրորդ հատորում /Ե., 1975 թ./, իսկ Մշո բարբառի տվյալները բերվում են ըստ առկա ուսումնասիրությունների, ՀԲԱ ծրագրով լրացված տետրերի՝ 354 /Մուշ, Մուշի գավառ, Վարդխաղ գյուղ/, 401 /Մուշ, Մուշի գավառ, Վարդենիս գյուղ/, 447 /Մուշ, Խլաթ գավառ,

Միջին հայերենում ձևավորված հոգնակիակազմության նոր տիպն իր մասնակի արտացոլումն ունի նաև Մշո բարբառում: Թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում տարբերակվում են միավանկ, երկվանկ, բազմավանկ հիմքատեսակներ: Ինչպես Հ. Պետրոսյանն է գրում, հիմքատեսակների և հիմքատարբերակների համակարգումը հիմնվում է վանկարարության սկզբունքի և հնչյունաբանական այլ գործոնների վրա²: Նշված հիմքատեսակների գործառումը երկու լեզվավիճակները միավորող հատկանիշ է: Եթե Մշո բարբառում դրանք գործող համակարգեր են և ներկայանում են հնչյունական տարաբնույթ փաստերով, ապա միջին հայերենում դրանք ի հայտ են գալիս այդ լեզվավիճակի կազմավորմանը զուգընթաց՝ բազմաթիվ հարցերում մնալով անբացատրելի: Հիմքատեսակների տարբերակումը նախորդ լեզվափոփոխում և չի կարևորվել, քանի որ մեզ հայտնի **ք, ս, ց** հոգնակերտները տարբեր հիմքատեսակներով անուններին կցվել են առանց խտրության:

Ըստ մատենագրական տվյալների՝ միջին հայերենի հոգնակերտները թվով 44-ն են, որոնցից 23-ը ներկայացվում են որպես կազմությամբ պարզ, թեև վիճարկելի է նրանցից շատերի պարզ հոգնակերտ լինելը, 21-ը՝ բաղադրյալ³, իսկ Մշո բարբառում, ըստ առկա տվյալների, գործում են 32 հոգնակերտներ, որոնցից 28-ը բաղադրյալ են, իսկ 4-ը՝ պարզ:

Հետազոտությունները ցույց են տալիս՝

Օղակ գյուղ/, 353 / Մուշ, Ալաշկերտի գավառ, Խաստուր գյուղ/, և ՀՀ Ապարանի, Մարտունու տարածաշրջաններում ապրող մշեցիների կենդանի խոսքի:

² Հ. Պետրոսյան, *Գոյականի թվի կարգը հայերենում*, Ե., ԵՊՀ հրատ., 1972, էջ 49:

³ *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, Բ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 38:

Դիտարկվող երկու տարածքներում ընդհանուր են հետևյալ պարզ հոգնակերտները՝ **-ք, -եր/-եր, -վի, -ան** /իշան, ջորեան/, **-իկ/ք** /մարդիկ/:

Միայն միջին հայերենին հատուկ պարզ հոգնակերտներ են՝ **-նի** /ախոռնի/, **-անի** /անձրևանի/, **-ունք** /ազգունք/, **-այք** /իշխանայք/, **-որայք** /գեղորայք/, **-իք** /այծիք/, **-տի** /այրկտի/, **-աք** /տեղաք/, **-ենի** /բախչենի/, **-արեք** /գեղարեք/, **-եան** /իշեան/, **-իք** /այծիք/, **-ոք** /շատոք/, **-ոնք** /շատոնք/, **-ունաք** /ծաղկունաք/: Բերվածները ցույց են տալիս, որ հոգնակերտ **ք**-ի ն նախորդող հիմքակազմ ձայնավորների կապակցությունները գիտակցվում են որպես առանձին հոգնակերտ մասնիկներ՝ տարածվելով մաքուր հիմքերի վրա, սակայն ակնբախ է դրանց ոչ պարզ հոգնակերտ լինելը: Դրանք միջին հայերենին նախորդած լեզվափոփոխ մնացած հետքերն են, որոնք կան նաև Մուշի տարածքում՝ **շատոք/շաղօկ, օրթունք/օրտունկ, սերմանք/կ, ծաղգունկ**:

Սուկ Մշո բարբառում գործառող պարզ հոգնակերտներ չկան, եղածները, ինչպես տեսանք, կան նաև միջին հայերենում:

Վիճակագրական հաշվարկները ցույց են տալիս, որ միջին հայերենում և Մշո բարբառում ընդհանուր են բաղադրյալ հետևյալ հոգնակերտները՝ **-ներ, -ստան, -երք** /գետերք/, **-վներ/-վրներ**, /ճրդվրներ/, **-անիք** /կնանիք/, **-անք** /փշրանք/, **-եք** /փեսեք/, **-վանք** /իշվանք/, **-տիք/ դիք/կ** /ծակտիք/, **-վան** /տիրվան/, **-րանք** /դերանք/, **-վտանք/-վղանք** /ճիժվրղանք/:

Միայն միջին հայերենին հատուկ բաղադրյալ հոգնակերտներ են՝ **-նիք** /կնկնիք/, **-վիք** /իրվիք/, **-եանք** /գրեանք/, **-իկք** /մարդիկք/, **-երայք** /դեղերայք/, **-երնի** /սրտերնի/, **-վնի** /աչվնի/, **-վանի** /իշվանի/, **-վեր** /ականջվեր/, **-վտի** /քուրվտի/, **երվի** /զողուածերվի/, **-տիկ** /մանկտիկ/, **-ստներ** /լեռնստներ/:

Մշո բարբառին հատուկ բաղադրյալ հոգնակերտներ են՝ -վրդիք/կ, -դ/տան, -տ/դանք/կ, -վանք/կ, -վրտ/դանք/կ, -վըրդան, -ունք/կ, -էնք/կ, -րունք/կ, -անիք/կներ, -էք/կներ, -աներ, -րան, -րաներ, -իդէք /խնամիդէք/, -ուշկ, -նք, -էրներ:

Միջին հայերենում և Մշո բարբառում գործառող բաղադրյալ հոգնակերտների առանձին բաղադրիչների քննությունը հետևյալ պատկերն է տալիս՝ -նիք /նի+ք/, -վիք /վի+ք/, -եանք /եան+ք/, -իկք /իկ+ք/, -երայք /եր+այ+ք/, -երնի /եր+նի/, -վընի /վի+նի/, -վանի /վի+անի/, -վեր /վի+եր/, -վնե/եր /վի+նի+եր/, -վտի /վի+տի/, -վան /վի+ան/, -երվի /եր+վի/, -տիկ /տի +իկ/, -ստներ /ս+տի+ան+եր/, -էնք /էն+ք/, -էք /այ+ք/, -ներ /նի+եր/, -դիք /տի+ք/, -վրդիք /վի+տի+ք/, -դանք /տի+ան+ք/, -վրդանք /վի+տի+ան+ք/, -անք /ան+ք/, -վան /վի+ան/, -վանք /վի+ան+ք/, -րան /եր+ան/, -վանք /վի+ան+ք/, -րանք /եր+ան+ք/, -ունք /ու+ան+ք/, -րունք /եր+ու+ ան+ք/, -ստան /ս+տի+ան/, -էքք /եր+ք/, -էկներ /այ+ ք+նի+եր/, -իդէք /տի+այ+ք/, -ուշկ /ուշ+կ/, -նք /ան-ք/, -վըրդան /վի+եր+տի+ան/, -էրներ /եր+նի+եր/, -անիքներ /ան+իք+նի+եր/: Փաստերը ցույց են տալիս, որ բաղադրյալ հոգնակերտների երկու ձայնավորներից առաջինը շեշտափոխության օրենքներով ընկնում է: Այս օրինաչափությանը հնչյունափոխվում են -վի, -նի, -տի, -ստան, -եր, -անք /վերջին երկուսը միայն մեկական օրինակով/ մասնիկների ձայնավորները՝ կա՛մ սղվում են, կա՛մ վերածվում են գաղտնավանկի ը-ի: Մյուս հոգնակերտները հնչյունափոխության չեն ենթարկվում: Մշո բարբառին հատուկ -էք հոգնակերտի է ձայնավորը բաղաձայն ք-ից առաջ ձևավորված այ երկբարբառի մենաբարբառացման հետևանք է:

Մշո բարբառում մեծ տարածում ունեցող բաղադրյալ հոգնակերտները հիմնականում ներկայանում են -ք մասնիկի հավելումով՝ որպես ամենատարածված հոգնակերտ, սակայն այդ

մասնիկները առանց **ք**-ի էլ են գործածվում՝ **-դան/-դանք, -վան/-վանք, -րան/-րանք, -րուն/-րունք, -ան/-անք, վրդան/-վրդանք՝** *ճնգերդան- ճնգերդանք, իշվան-իշվանք, գճերան-գճերանք, դճերուն-դճերունք, իձվան-իձվանք, քուրվրդան-քուրվրդանք*: Առանց **ք**-ի տարբերակները գրանցվում են հատկապես Մուշի տարածքի Ալաշկերտի խոսվածքում⁴: Բացառություն են միայն **-դիք** և **-վրդիք** մասնիկները, որոնք առանց **ք**-ի չեն կիրառվում՝ **քուրվրդիք, ախպրդիք**:

Հիմքերը, որոնց վերջից կցվում են թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ հոգնակերտները, միջին հայերենում և Մշո բարբառում երկու կերպ են դրսևորվում. անփոփոխ «մաքուր» հիմքեր, այսինքն՝ չհնչյունափոխված, և քերականական ծանրաբեռնվածություն չունեցող, բայց հնչյունափոխված հիմքեր, որոնք լինում են շեշտով պայմանավորված և շեշտից անկախ:

Միջին հայերենում և Մշո բարբառում հոգնակի թվի ընդհանրական ցուցիչ չկա: Գործածության հաճախականությամբ միջին հայերենում առաջատար են **-եր, -ներ, -նի, -ք**, իսկ Մշո բարբառում՝ **-եր, -ներ, -ք** հոգնակերտները: Նախորդ լեզվափոփոխ երբեմնի սակավադեպ կիրառություն ունեցող հոգնակերտները, որոնք հավաքականության իմաստ արտահայտող ձևայիններ են եղել⁵, միջին հայերենում ստացել են սովորական ու լայն կիրառություն, տարածվել այնպիսի գոյականների վրա, որոնք հավաքականություն չէին կարող արտահայտել, և այդ ամենի արտացոլումը կանան Մշո բարբառում: Միջին հայերենում կիրառման հաճախականությամբ գործառական որոշակի ծանրաբեռնվածություն ունեն -

⁴ **Ք. Մադաթյան**, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 71:

⁵ **Ա. Աբրահամյան**, *Գրաբարի ձևնարկ*, Ե., Հայպետուսմանկիրատ., 1976, էջ 20:

ունք, -վի, -անի, -ստան, -այք, -որայք հոգնակերտները, որոնց գործառույթը վերաբերում է տասից մինչև մի քանի տասնյակ գոյականների: Մնացյալ՝ **-իք, -տի, -աք, -ան, -ենի, -արեք, -իկ, -եան, -ոք, -ոնք, -ունաք, -եք** հոգնակերտներից յուրաքանչյուրով հոգնակի են կազմում մեկ տասնյակից էլ ավելի քիչ բառեր, երբեմն միայն՝ մեկ բառ: Իսկ Մուշում գործառական լայն ընդգրկում չունեցող մյուս հոգնակերտներն ընդգրկում են երկու տասնյակը չգերազանցող բառախմբեր, երբեմն մեկ բառ կամ մի քանի բառ: Հատկապես մեծ թիվ են կազմում **-անք** հոգնակերտով կազմությունները: Պետք է կարևորել, որ Մշո բարբառում ընդհանրացումները ավելի մեծ են, քան միջին հայերենում: Բոլոր այն բառերը, որոնք բարբառում հոգնակիի իմաստ են արտահայտում այլ մասնիկներով, կարող են հոգնակի թիվ կազմել նաև **-եր**-ով և **-ներ**-ով ևս, մինչդեռ այն բառերը, որոնց հոգնակին կազմված է այս մասնիկներով, սակավադեպ են այլ հոգնակերտներ ստանում՝ **սերմեր/սերմանք/կ, ճըվեր/ճըվան, լընդեր/լընդերք**:

Այդ անմիատարրությունը միջին հայերենի պարագայում պայմանավորված է պատմահասարակական իրադրությամբ և գրական լեզու չլինելով, իսկ Մշո բարբառում պատմահասարակական իրադրությանը հավելվում է ոչ միայն անմշակ և խոսակցական լեզու լինելը, բարբառախոսների անընդմեջ տեղահանությունները, այլև լեզվական փաստերի կենսունակությունը: Ընդ որում, թե՛ միջին հայերենում, թե՛ Մշո բարբառում ընդհանուր է միավանկ բառերի **-եր**, բազմավանկների **-ներ** մասնիկներ ստանալը: Միջին հայերենում երկվանկ բառերը ու մեկուկես վանկանի հիմքերը ստանում են **-նի՝ գըլուխ-գըլխնի, մըզկիթ-մըզկիթնի** և այլն, բազմավանկ բառերը կարող են ստանալ նաև **-նի** և **-եր** մասնիկները: Միջին հայերենի հոգնակերտների այսօրինակ բաշխվա-

ծուրթյան վկայությունն են նաև միջինհայերենյան հիշատակարանների լեզուն և դրանց լեզվական փաստերը⁶: Մշո բարբառում մեկուկես, երկվանկ բառերը համաչափորեն ստանում են **-եր, -ներ** մասնիկները՝ **արգըրեր, սանդըրներ, մանդըրներ** և այլն: Փաստերը ցույց են տալիս, որ Ալաշկերտի խոսվածքում **-ներ** մասնիկը կարող է տարածվել նաև միավանկ բառերի վրա՝ **գինդ- գընդըներ, լուծլըձներ**⁷, **թուշ-թուշներ** /Ալաշկերտ, Խաստուր գյուղ/, **ծառ-ծառներ, դոշ-դոշներ, թէլ-թէլներ**⁸ և այլն: Մշո տարածքին բնորոշ են նաև և բաղաձայնով վերջացող բազմաթիվ բառերի ոչ թե **-ներ**, այլ **-եր** մասնիկ ստանալու վկայությունները, որոնցում փոխազդեցական հնչյունափոխության օրենքներով ընկնում է երկու նույնանման հնչյուններից մեկը՝ **մաձներ, բուտըներ, չօբներ, օաովըներ, ամներ, յեղներ** և այլն: Մշո բարբառում բազմավանկ հիմքերի հոգնակերտ ստանալու համակարգայնությունն ավարտված իրողություն է, քանի որ համատարած գործածվում է **-ներ** մասնիկը, իսկ միջին հայերենում բազմավանկ հիմքերը չունեն այդ համակարգվածությունը: Ինչպես տեսանք, սրանք միավանկ հիմքերին հակադրվում են երբեմն **-եր**, երբեմն **-ներ**, նույնիսկ՝ **-նի** մասնիկ ընդունելով՝ **այգեպներ, աղախներ, հեքիաթնի, սպիտակուցնի, փախլավաներ, որոզայթներ** և այլն: Միջին հայերենում հատկապես դիտարկելի են բազմավանկ հոգնակիակազմ հիմք**+-եր** կաղապարի սահմանափակ վկայությունները՝ **կերակրեր, սենեսկալեր**: Սրանք էլ, չի բա-

⁶ Լ. Հովսեփյան, *ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն*, Ե., 1997, էջ 18:

⁷ Զ. Մաղաթյան, *նույն տեղը*, էջ 70:

⁸ Գ. Մկրտչյան, *Ապարանի տարածաշրջանի բարբառային և խոսվածքային տարբերակների քննություն* [ատենախոսություն, ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ], Ե., 2011, էջ 66:

ցառվում, արհեստական կառույցներ են՝ սպրդած լեզվական հուշարձաններում:

Միջին գրական հայերենում հոգնակի ուղղականի թվակազմության մեջ գործում են երեք կարգի կաղապարներ՝ **ա/չեզոք** վերջնահանգով հիմք+ք, **ք/ոչ չեզոք**, ընդ որում բաղաձայն+(ը)ն վերջնահանգով հիմք+ք, **գ/այս** երկու կաղապարների նորակազմ ձևեր: Առաջին և երկրորդ կաղապարները «ժառանգորդային» են՝ ավանդված նախորդ լեզվափոփոխից: Ի հակադրություն միջին հայերենի՝ Մշո բարբառում թվակազմության կաղապարների սահմանափակություն կա. այստեղ հիմնականում գործում են բուն միջինհայերենյան կաղապարները: Բարբառը բնութագրվում է նաև յուրահատուկ ձևերով, իսկ չեզոք վերջնահանգով հիմք+ք կաղապարը որոշակի օրինաչափ սահմանափակումներով է ներկայանում՝ **ւ՞օրդիք, այգիք, կաղնիք, օսկիք, քամիք** և այլն: Միջին հայերենի և Մշո բարբառի համար բնորոշիչ է այն, որ եզակի ուղղականի ձևը հոգնակիակազմ հիմք է, որը թեև միջին գրական հայերենում ավարտուն տեսք չի ունենում, սակայն այս տիպը, ինչպես ուսումնասիրություններն են ցույց տալիս, այսօր գործում է Մշո բարբառում և, առհասարակ, արդի հայերենում: Միջին հայերենում և Մշո բարբառում նորակազմ ձևերի հոգնակի ուղղականում վերականգնվում է եզակիում ընկած **ն** հիմքակազմ տարրը՝ **ձեռներ, վօտ/դներ, մրկներ** և այլն:

Դիտարկված ձևախմբերը ցույց են տալիս, որ միջին հայերենում և Մշո բարբառում գոյականների թվակազմությունն արտահայտվում է գործառական ծանրաբեռնվածության խիստ արտահայտված անհամաչափությամբ: Եթե միջին հայերենում գոյականների մեծամասնությունը հոգնակի է կազմում չորս հիմնական ձևայիններից որևէ մեկով՝ **-ք, -եր, -ներ, -նի**, ապա Մշո բարբառը հիմնականում կենսունակ է **-եր, -ներ** ձևայիններով: Մյուս հոգնա-

կերտներն ունեն սահմանափակ գործածություն: Մշո բարբառում - **ք** հոգնակերտի գործառությունը սահմանափակվում է **ի** ձայնավորով վերջացող երկվանկ և բազմավանկ բառերի կցվելով՝ **հօքիկ**, **ւ՞ռորթիք/կ**, **տընէծիկ** և այլն, մի շարք բաղադրյալ հոգնակերտների կազմությանը մասնակցելիս, որով -**ք** մասնիկի գործառական ծանրաբեռնվածությունը կտրուկ աճում է, երբ կարևորվում է բառավերջի դիրքը, ինչպես նաև այն կա **քեռակին** բառի հոգնակին կազմելիս՝ **քեռնգիք**՝ բառավերջյան **ն**-ի անկմամբ: Բարբառում այն ունի նաև **քեռնգըղիք** /Մուշ, Ծղակ գյուղ/, **քեռնգիներ** տարբերակները:

Միջին հայերենում և Մշո բարբառում հոգնակերտ մասնիկներն ունեն հնարավոր փոխանցումներ, որոնց նպաստում է այն, որ այդ մասնիկներն ունեն միևնույն քերականական իմաստն արտահայտող ձևայթի ազատ տարբերակների գործառույթ: Խոսքը հատկապես վերաբերում է ամենագործածական հոգնակերտներին՝ բացառությամբ նրանց դիրքով պայմանավորված մի քանի սակավ գործածվողների: Ընդ որում, երկու լեզվական տարբերակներում էլ այդ հնարավոր փոխանցումները մեծ թիվ են կազմում: Միջին հայերենի դեպքում զուգաձևերի հայտաբերած այդ հանգամանքը առնչվում է նախորդող լեզվափուլին: Գործառական մեծ ընդգրկում ունեցող -**ք**, -**եր**, -**նի**, -**ներ** հոգնակերտները կարող են զուգահեռաբար գործածվել մյուս հոգնակերտների փոխարեն՝ որպես դրանց ազատ տարբերակներ: Մի բառը կարող է ստանալ երկուսից մինչև յոթ տարբեր հոգնակերտներ: Միջին հայերենով վկայված նմանատիպ դրսևորումները բերվում են ստորև՝ -**ք**/**-եր** /բեռինք-բեռներ/, -**ք**/**-ներ** /մեղուք-մեղուներ/, -**ք**/**-նի** /արուեստք-արուեստնի/, -**ք**/**-ստան** /ընպելիք-ընբելեստան/, -**ք**/**-անի** /թրնջիք-թրնջանի/, -**ք**/**-վի** /միտք-մտվի/, -**ք**/**-այք** /իշխանք-իշխանայք/, -**ք**/**-ունք** /անդամք-անդամունք/, -**եր**/**-ներ** /սպաննություններ-սպաննու-

թեններ/, **-եր/-նի** /ամաներ-ամննի/, **-եր/-ունք** /գորտեր-գորտունք/, **-եր/-որայք** /գեղեր-գեղորայք/, **-նի/-ներ** /հաբեղանի-հաբեղաներ/, **-եր/-վրդդան** /ճրժեր-ճիժվրդդան⁹/, **-նի/-ունք** /ատամնի-ատամունք/, **-ներ/-ունք** /աղջիկներ-աղջկունք/, **-ներ/-աք** /վարպետներ-վարպետաք/, **-ներ/-վի** /ճնկներ-ճնկվի/, **-ունք/-վի** /եղնկունք-եղնկվի/, **-ք/-եր/-ներ** /ճառք-ճառեր-ճառներ/, **-ք/-եր/-վի** /շունք-շներ-շնվի/, **-ք/-եր/-ունք** /դաշտք-դաշտեր-դաշտունք/, **-ք/-եր/-նի** /որսորդք-որսորդեր-որսորդնի/, **-ք/-եր/-անք** /միսք-մսեր-մսանք/, **-ք/-եր/-իք** /այծք-այծեր-այծիք/, **-ք/-եր/-ենք** /գալք-գալեր-գալենք/, **-ք/-նի/-ներ** /դուրք-դուռնի-դուռներ/, **-ք/-նի/-անի** /ջաղաջք-ջաղացնի-ջաղացանի/, **-ք/-ոք/-ոնք** /շատք-շատոք-շատոնք/, **-եր/ -անք/-ունք** /հնտեր-հնտանք-հնտունք/, **-եր/-անք/-վի** /խօսեր-խօսանք-խօսվի/, **-նի/-ունք/-ներ** /պոկնի-պոկունք-պոկներ/, **-ք/-եր/-նի/-ներ** /ակոայք-ակոեր-ակոանի-ակոաներ/, **-ք/-եր/-տի/-տիք** /ծակք-ծակեր-ծակտի-ծակտիք/, **-ք/-եր/-ունք/-անք** /միրգք-մրգեր-մրգունք-մրգանք/, **-ք/-եր/-աք/-ստան** /տեղիք-տեղեր-տեղաք-տեղեստան/, **-ք/-նի/-ներ/-ունք** /քաղաքք-քաղաքնի-քաղաքներ-քաղաքունք/, **-ք/-վի/-ան/-վտանք** /իրք-իրվի-իրվան-իրվտանք/, **-եր/-այք/-նի/-անի** /կներ-կանայք-կաննի-կնանի/, **-եր/-ունք/-եանք/-վի** /գրեր-գրունք-գրեանք-գրվի/, **-նի/-ունք/-ներ/-անիք** /սարկաւագնի-սարկաւագունք-սարկաւագներ-սարկաւագանիք/, **-ք/-եր/-նի/-վի/-ներ** /ոտք-ոտեր-ոտնի-ոտվի-ոտներ/, **-ք/-ներ/-նի/-ունք/-ունաք** /ծաղիկք-ծաղկներ-ծաղկնի-ծաղկունք-ծաղկունաք/, **-ք/-ներ/-նի/-վի/-վեր** /ականջք-ականջներ-ականջնի-ականջվի-ականջվեր/, **-ք/-եր/-ունք/ -վի/-վեր/-վներ/-վնի** /աչք-աչեր-աչունք-աչվի-աչվեր-աչվներ/աչվնի/:

Եթե միջին հայերենում **-ք** ձևայթև է համարյա առանց սահմանափակման մասնակցում հնարավոր փոխանցումներին, ապա

⁹ Գ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 69:

Մշո բարբառում այդ գործառույթը ստանձնել են ոչ միայն **-ք**, այլև **-էր** ու **-ներ** մասնիկները: Թեև նշվում է, որ այս հարցում բարբառում կա նաև սահմանափակություն, քանի որ որոշ բառեր հոգնակի թիվ կազմելիս զուգորդումներ չեն հայտաբերում¹⁰, սակայն համաժամանակյա փաստերը ցույց են տալիս, որ ոչ տարածված հոգնակերտները փոխարինվում են համակարգայիններով, որոնք այդ հարցը վերացնում են: Օրինակ՝ **-ստան** մասնիկը, **ի** և **ա** ձայնավորներով վերջացող մի շարք բառերում (**գճարեստան, օսկեստան, տարեստան**) կարող է փոխարինվել այլ հոգնակերտներով՝ ձևավորելով զուգածներ՝ **օսկիներ, էրէիէք** և այլն: Որպես բացառություն կարող ենք վկայել միայն **կին** բառի **կընանիք** տարբերակը: Սա էլ Մշո մեկ այլ խոսվածքում ունի նաև **կընկըտիք** տարբերակը:

Լեզվական փաստերը ցույց են տալիս, որ **-էր**, **-ներ** մասնիկները աստիճանաբար սկսում են դուրս մղել մյուսներին, կարող են հանդես գալ ընդհանրացնող հոգնակերտներով. անգամ **մառտ** բառը, որը **-էր** կամ **-ներ** չի ստանում, ունի **մառտիք/կ** ձևը, որոշ խոսվածքներում ներկայանում է **մառտէր** տարբերակով¹¹: Այդուհանդերձ, Մշո բարբառը նույնպես ներկայանում է զուգածներով, որոնք տրվում են ստորև՝ **-ք/-ներ** /քէնիք/կ-քէնիներ/, **-դիկ/-ներ** /մօրկուրդիկ-մօրկուրներ/, **-էր /-բանէր** /ճուղէր-ճըղբանէր/, **-ներ/-դան** /գօմշըներ-գօմշըդան/, **-էք/-ներ** / գիներ- գիներներ/, **-էր/-էք** /չօքէր-չօքէք/կ/, **-էր/-էրներ** /տէղէր-տէղէրներ/, **-դիկ/-էր** /տէկըրդիկ-տէկըրէր/, **-էր/-վըդան** /տանտէրէր-տանտիրվըդան/, **-դան/-ներ** /ախպըրդան-ախպէրներ/, **-էք/-էքներ** /տղէք/ կ-տղէկներ/, **-ներ/-բան** /գօմշըներ-գօմշըբան/, **-էր/-վանկ** /էշէր-իշվանկ/, **-էր/-տան**

¹⁰ Մ. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, *Մշո բարբառը*, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1958., էջ 75-79:

¹¹ Գ. Մկրտչյան, *նշվ. աշխ.*, էջ 68:

/ձաքեր-ձրքտան/, **-եր/-վրդիկ** /քուրեր-քուրվրդիկ/, **-եք/-երք** /լրնդեր-լրնդերք/, **-ք/-դիկ** /խրնամիք-խրնամդիկ/, **-եր/-րան** /փեջեր-փիջրան/, **-եր/-ունք** /օրթեր-օրթունք/, **-ներ/-ունք** /ծաղզրներ-ծաղզունք/, **-ներ/-երք** /լրնդրներ-լրնդերք/, **-ներ/-ուշկ** / մանդրներ-մանդրուշկ «հացահատիկի մանրուք»¹², **-եր/-վան** /գեժեր-գիժվան/, **-եր/-վանք** /ճօթեր-ճօթվանք/, **-դիք/-դանկ** /հօխպերդիք/կ-հօխպերդանկ/, **-եր/-անք** /գեղեր-գեղրանք/, **-դանք/կ/-եր** /տեքրրտեքրրդանք/, **-ներ/-դան/-դանք** /աճրոներ-աճրոդան-աճրոդանք/, **-եր/-րաներ/-անկ** /գեղեր-գեղրաներ-գեղրանք/կ/, **-եր/-դան/-դանք** /քուրեր-քուրվրդան-քուրվրդանք/, **-եր/-վրդան/-վրդանք** /տերերտիրվրդան-տիրվրդանք/, **-անիք/-տիք,անիքներ** /կրնանիք-կրնկրտիք-կրնանիքներ/, **-ք/-դիք/-ներ** /քեռնգիք-քեռնգրդիք-քեռնգիներ/, **-եր/-ան/-աներ** /ճիան- ճիան-ճիաներ/, **-եր/-վան/-վանք** /ճեղեր-ճիդվան -ճիդվանք/, **-եր/-ան/-անք** /եշեր-իշան-իշանք/, **-եր/-ան/-վրներ** /ճրդեր-ճիդան-ճրդվրներ/, **-եր/-րան/-րանք** /տեխտե/ խրանտե/խրանք/, **-ք/-ներ/-իդեք** /խնամիք-խնամիներ-խնամիդեք/, **-եք /-դան, -դանք** /ագեք-ագրոդան-ագրոդանք/, **-ներ/-դիք/-դան/-դանք** /խնամիներ-խնամդիք-խրնամդան-խրնամդանք/, **-եր/-ան,-վան-վանք** /եձեր-իձան-իձվան-իձվանք/, **-ք/-եք,-ներ,-երներ** /քեռիք-քեռիներ-քեռեք-քեռեքներ/, **-եր/-րան/-րանք/-րունք** /դեղ-դեղրան-դեղրանք-դեղրունք/, **-ան/-անք/-աներ/-նք** /ձիան-ձիանք/կ-ձիաներ-ձինկ ¹³, **-եր/-վան/-վրդիք/-դան/ -դանք** /տերերտիրվանտիրվրդիքտիրվրդանտիրվրդանք/։ Ինչպես երևաց, Մշո բարբառում մի բառը կարող է ստանալ երկուսից մինչև հինգ տարբեր հոգնակերտներ (առավելագույնը հինգն է), իսկ գործառական

¹² Գ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 69:

¹³ Գ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 69:

ծանրաբեռնվածությամբ կենսունակ են երկձև ու **-ներ/-դան/-դանք** կաղապարներով կառույցները:

Խնդրո հարցում միջին հայերենն ու Մշո բարբառը բնորոշվում են մեկ այլ յուրահատկությամբ ևս. բառը կարող է միաժամանակ ստանալ մեկից ավելի հոգնակերտներ: Սակայն այս հարցում ևս կան սահմանափակումներ. ոչ բոլոր հոգնակերտներն են համակցվում: Միջին հայերենում և Մշո բարբառում համակցմամբ գուգորդվում են գործածության լայն շրջանակներ ունեցող, հիմնականում բաղադրյալ ձևույթները: Միջին հայերենում **-ունք, -որայք, -իք, -աք, -ենի, -արեք, -ոք, -ունաք, -եք** հոգնակերտները մնում են անկախ և չեն գուգորդվում: Պետք է կարևորել, որ բաղադրյալ մասնիկները գուգորդվելով են ձուլվել և ժամանակի ընթացքում գիտակցվել որպես մեկ հոգնակերտ, սակայն նորատիպ ձևերում այդ տարբերակների գոյությունը հիմնավորվում է հոգնակերտներից մեկի՝ առաջինի իմաստի մթագնմամբ և պասիվությամբ¹⁴: Միջին հայերենում այս երևույթն այնքան է խորացել, որ **-եր, -նի, -ներ** հոգնակերտների իշխող դիրք ձեռք բերելը և ընդհանրացման միտումը պայմանավորվում են գուգորդումների առկայությամբ, որոնք տարածվում են անգամ երկակի և անեզական թվերի վրա: Մշո բարբառում բառին կցվում է առավելագույնը երկու հոգնակերտ, միջին հայերենում կան դեպքեր, երբ երեք հոգնակիակերտ է կցվում բառին: Այսպիսի գուգորդումները՝ որպես բաղադրյալականության դրսևորում, սահմանափակ են, հաճախ, վկայված ընդամենը մեկ բառով: Մշո բարբառում կրկնակ հոգնակիներ ձևավորվում են ի հաշիվ **-ք** և **-ներ** հոգնակերտների՝ **տիրվրդան/տիրվրդանք/ տիրվրդաններ, հօքեստան-հօքեստանք/ հօքեստաններ, տրդեկ/տրդեգ-ներ, դեվեկ/ դեվեկներ, ախչրկներ/ախչրկերք, լրնդեր/լրնդերք**: Հոգնակերտների այս դրսևորում-

¹⁴ Ս. Ն. Բաղդասարյան-Թափալցյան, *նույն տեղում*, էջ 79:

ները ցույց են տալիս, որ բառահիմքի և վերջին հոգնակերտի միջև ընկած ձևույթն աստիճանաբար մթագնում է և միտում ունի վերջին մասնիկի հետ ձևավորել բաղադրյալ հոգնակերտ: Ինչպես նկատելի է, սրանք հատկապես այն բառերն են, որոնք վերջանում են **ա, ի** ձայնավորներով և հոգնակիանում են **-ք/-կ** մասնիկով: Վերոբերյալ վկայությունների բառավերջյան **ք**-ն ունի հոգնակիության իմաստ, իսկ այն բառերում, երբ **ք**-ին հաջորդում է մեկ այլ հոգնակերտ, չի պահպանում հոգնակիակերտի իմաստը: **Ք/կ**-ի իմաստը սկսում է մթագնվել գրաբարյան **ք**-ի համաբանությամբ, որը միջին հայերենից սկսած ձեռք է բերել նաև ածանցի արժեք. հատկապես մեկ, մեկուկես, երկվանկ, նաև անեզական բառերում **ք**-ն այլևս չի գիտակցվել որպես հոգնակերտ՝ **աչք- աչքեր, ձեռք- ձեռքեր, միտք-մըտքեր, խելք-խելքեր, պարտք-պարտքեր, բալնիք-բալնիքներ** և այլն: Այս պատճառներով է, որ բառին այլ մասնիկ հավելելու անհրաժեշտություն է առաջացել, ու այն համակարգայնացել է: **-Ք** ձևույթը հոգնակիի իմաստով գործառում է միայն բառավերջում, իսկ հիմքատեսակի և հոգնակերտի միջև այն կա՛մ բառակազմական ձևույթ է, ինչպես **աչքեր, ունքեր, հաւքեր, քնքեր** և այլն, կա՛մ բաղադրյալ հոգնակերտի աստիճանաբար մթագնող տարր: Մշո բարբառում գրանցվում է անգամ **-եր** հոգնակերտի մթագնման փաստ **տեղ բառում՝ տեղեր-տեղերներ՝** ձևավորելով բաղադրյալ **-երներ** հոգնակերտը:

Անդրադառնանք ոչ եզակիության մեկ այլ խնդրի ևս: Միջին հայերենն ու Մշո բարբառն ունեն նաև նախնական երևույթ համարվող երկակի թվի որոշակի արտահայտվածություն, որն իրացվում է **-ու/-վի** ձևույթով: Սակայն միջին հայերենում և Մշո բարբառում երկակի թվի իմաստը հստակ ձևավորված արտահայտություն չունի, իմաստաբանորեն չի արդարացվում. այդ մասնիկն են ընդունում նաև մի շարք այնպիսի գոյականներ, որոնք

մարմնի կրկնակ անդամների անվանումներ չեն. այդ մասնիկը պարզապես հոգնակերտ է՝ համաբանությամբ պայմանավորված: Միջին հայերենում ու Մշո բարբառում գործ ունենք երկակի թվի մասնակի արտահայտության հետ: Ինչպես տեսանք, **-վի** մասնիկը հանդես է գալիս ն՛ պարզ տեսքով, ն՛ բաղադրյալ մասնիկների կազմում՝ **ականջվի, խօսվի, երեսվի, դովնի, աչևեր /միջին հայերեն/, ճ՛/ձեռվի, ոտվի/օղվի, %աչվի, ունքվրներ, իշուանք /Մշո բարբառ/** և այլն:

Քննարկվող լեզվավիճակներում թվակազմությունը ձևավորել է որոշակի համակարգային օրինաչափություններ, թեև կան նաև բազմաձևություններ ու անմիօրինակություններ: Միջին հայերենում ու Մշո բարբառում գործում է թվային իմաստների հակադրություններից ամենակարևորը՝ եզակի-հոգնակի հակադրությունը՝ համապատասխան բազմաձև մասնիկներով՝ պարզ ու բաղադրյալ, իսկ մյուս հակադրությունները պահպանվում են լեզվական մնացուկների տեսքով: Հատկանշական է, որ միջին հայերենում ու Մշո բարբառում անհոգնական գոյականներ գրեթե չկան: Իսկ անեզականները թե՛ միջին հայերենում, թե՛ Մուշի տարածքում մեծ թիվ են կազմում՝ որպես նախորդ լեզվափուլերի մնացուկներ: Եթե միջին հայերենում դրանք նախորդ լեզվափուլից անցած փոխառություններ են, ապա Մշո բարբառում դրանք ունեն որոշակի օրինաչափություններ: Այս տարածքում հավաքականության համար գործում են **-ներ** և **-անք** մասնիկները՝ **Սուլօներ, Տեր Սըզըրդիճներ, աներանք, կիսրանք, հերանք, սերմանք** և այլն:

Mkrtchyan Garik - Plural Forming Particles in Middle Armenian and the Dialect of Moush (similarities and differences).-The article touches upon the author's observation of the plural forms of the nouns in Middle Armenian and the dialect of Moush reveals the existence of

new converging and diverging systems. Research shows that the new typology of forming the plural established in Middle Armenian is partially reflected in the dialect of Moush as well. According to the statistical data the plural forming endings in Middle Armenian are 44 in number 23 of which are presented as simple and 21 as compound. Whereas, in the dialect of Moush there are 32 plural forming endings 28 of which are compound and 4 are simple. There is no common marker of noun plurality in Middle Armenian and the dialect of Moush. In Middle Armenian the most productive endings are: -եր [er], -ներ [ner], -ի [ni], -ք [k] and in the dialect of Moush they are: -եր [er], -ներ [ner], -ք [k]. In the observed areas the plural forming endings are freely interchangeable.

Гарик Мкртчян- Употребляющиеся в мушском диалекте и среднеармянском языке частицы, образующие множественное число (сходства и различия).- Исследования показывают, что в формировавшемся в среднеармянском языке новая типология образования множественного числа имеет свое частичное отражение в мушском диалекте. По статистике в среднеармянском языке слов, образующих множественное число-44, из них 23 слова-простые, 21-составное. А в мушском диалекте, слов, образующих множественное число-32, из которых составные-28, а 4 слова-простые. В среднеармянском языке и мушском диалекте нет показателя множественного числа. В среднеармянском языке главными частицами являются -եր, -ներ, -ի, -ք, а в мушском диалекте- եր, ներ, ք. В исследуемых территориях, частицы, которые образуют множественное число, имеют функцию свободного перечисления.

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՉ¹

Գարիկ Մկրտչյան

Միջին հայերենի տարբերակման հարցին հայագիտության մեջ անդրադարձել են մեր գրեթե բոլոր նշանավոր հայագետները, ինչպիսիք են Ա. Այտընյանը, Ղ. Հովնանյանը, Հր. Աճառյանը, Ժ. Կարստը, Ս. Ղազարյանը, Գ. Ջահուկյանը, Մ. Մուրադյանը և այլք:

Դիտարկվող խնդրին առաջինն անդրադարձած հայագետը Արսեն Այտընյանն է: Հիմնվելով հայ մատենագրության մեջ վկայված լեզվական փաստերի վրա՝ Ա. Այտընյանը «Քննական քերականությունն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» (1866, Վիեննա) աշխատության մեջ սահմանում է, որ դասական գրաբարով ավանդվող գրական լեզվին զուգընթաց զարգացող բանավոր խոսակցական լեզուն 11-րդ դարում աստիճանաբար համատարած գործածություն է ստանում. «Որչափ որ գրաբարին՝ իւր երազ անկմանը մէջ բարձր էր յարգը, նոյնչափ ալ աշխարհաբարին հարգը նուազ էր իւր օրըստօրական զարգացմանը մեջ»²:

Աշխատության ընթացիկ շարադրանքում Այտընյանը ընդգծում է ձևավորված նոր լեզվի ոչ մշակված լինելը, անմիօրինակությունների առատությունը և, ըստ էության, փոխա-ռություն ընկալվող «օտարութեանց» հաճախադեպ գործածությունը: Ա. Այտընյանը 11-16-րդ դարերի հայերենը բնորոշում է այսպէրպ. «զաղթականութեանց սկզբներեն հառաջ Հայաստանի /և Կիլիկիայի/ աշխարհիկ լեզուն քանի մը տեսակ էր»³: Այտընյանը միջնադարի բանավոր խոսակցական լեզվում զարգացման միասնական ընթացք չի

¹ Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի զեկուցումների ժողովածու, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2014, էջ 300-303:

² Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Երևան, ԵՊՀ հրատ, 1987, էջ 146:

³ Ա. Այտընյան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի*, Երևան, ԵՊՀ հրատ, 1987, էջ 165:

կանխատեսել՝ աշխարհիկ լեզվի զարգացումը դիտելով որպես առանձին բարբառների գոյացում, որոնք «իրենց զարգացման բնական ընթացքով հասան ժամանակակից բարբառներին և նրանց տարբեր հիմքերի վրա բարձրացող գրական լեզուներին»⁴:

Միջին հայերենի տարբերակվածության խնդրին որոշակի լուծումներ է տվել նաև Ղ. Հովնանյանը: «Հետազոտությունք նախնեաց ռամկորենի վրա» /Վիեննա, 1897թ./ աշխատության մեջ վերջինս զարգացնում է այն մտայնությունը, որ միջնադարյան հուշարձանների լեզուն լեզվական տարրերի ընդգրկմամբ նույն ժամանակաշրջանում միատարր չէ: Նա միջնադարի ողջ գրականությունը, ըստ լեզվական նյութի ընդգրկման, ներկայացնում է չորս հիմնական խմբերում՝ ա/ բացառապես գրաբարով գրված գրաբար աշխատություններ, բ/ ժողովրդական լեզվի տարրերով և գրաբարի գերակշռությամբ ներկայանալի ռամկախառն գրականություն, գ/ գրաբարի որոշ տարրերով և ժողովրդական լեզվի գերիշխմամբ գրաբար-րախառն գրականություն, դ/ ռամկական գրականություն, որի հիմնական լեզուն ժողովրդական խոսքն է: Հովնանյանի այս ստորաբաժանումն իր արդիականությունը մինչ օրս պահպանում է, և միջնադարյան հուշարձանների այսօրինակ սահմանաբաժանումը կհեշտացնի խնդրի լուծման շահեկանությունն ապագայի հեռանկարում, առավել ևս, որ Հովնանյանն անձամբ որոշակիորեն մատնանշում է ժողովրդական լեզվով ավանդված գրավոր հուշարձանները⁵:

Միջինհայերենագիտության զարգացման հեռանկարում մինչ այժմ եղած գնահատականներում առանցքային են Յոզեֆ Կարստի ուսումնասիրությունները, ի մասնավորի՝ նրա Historische Grammatik des Kilikisch-Armenischen (Strassburg, 1901) աշխատությունը: Միջին հայերենին՝ որպես հին և նոր հայերենների միջև ընկած անցման ժամանակաշրջանի, հատկացնելով 10-15-րդ դարերը՝ Կարստը մեծ կարևորություն է տալիս 11-րդ դարում Կիլիկիայում

⁴ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Ա. մաս, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ, 1972, էջ 11:

⁵ Ղ. Հովնանյան, Հետազոտությունք նախնեաց ռամկորենի վրայ, Վիեննա, 1897:

ստեղծված հայկական պետության գոյությանը, որով պայմանավորված՝ հայ ժողովրդի հասարակական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքը բուն երկրից տեղափոխվում է այնտեղ: Միջին հայերենը չի ներկայանում որպես մի միասնական ու միատարր լեզու. նրանում որոշակիորեն առկա են բարբառային աչքի զարնող դրսևորումներ, որոնք փաստում են բարբառային տարբերությունների գոյության հանգամանքը:

Միջին դարերում եղել է ոչ թե մի գրական լեզու, այլ մեկից ավելին, ասենք, երեքը՝ պահպանվող գրաբարը, Կիլիկիայում գործառած գրախոսակցական լեզուն և բուն Հայաստանում գրականությամբ ավանդված գրական լեզուն՝ ժամանակի խոսակցական, բարբառային տարբերով համեմված: Այս գնահատականը ժամանակի ընթացքում համապատասխան նյութերի հանրագումարային ուսումնասիրությամբ և դասդասամբ կհիմնավորվի: Հիշատակման արժանի է Յ.Կարստի հետևյալ միտքը. «Եթե Կիլիկյան հայերենը միջին հայերենի միակ բարբառը չէ, ապա գոնե ամենից լավ հայտնի և ամենակարևոր բարբառն է»⁶, հետևաբար միջինհայերենյան շրջանում մեկից ավելի գրական լեզուների ընդունումը չի կարելի բացառել՝ պայմանավորված բարբառային տարբեր հիմքեր ունենալու հանգամանքներով: Առավել ևս, որ անգամ բուն կիլիկյան շրջանից ավանդված մատենագրության մեջ, ըստ Կարստի, լեզվական առանձնահատկությունները մի միասնություն չեն կազմում՝ ունենալով որոշակի տարբերություններ հայախոս այլ տարածքներից ավանդված լեզվական հուշարձանների լեզվից:

Մանուկ Աբեղյանն անդրադարձել է միջին հայերենի տարբերակվածության խնդրին «Գուսանական ժողովրդական տաղեր» աշխատության մեջ և զարգացրել այն տեսությունը, որ միջնադարյան հայերենների լեզուն միակերպ չէ, նրանց մեջ կան լեզվական շերտավորումներ՝ եզրակացնելով. «Չնայած այս բոլոր լեզվական շերտավորումներին, հայերենի մեջ իշխող լեզուն միջին հայերենն

⁶ Յ. Կարստ, *Կիլիկյան հայերենի պատմական քերականություն*, Երևան, ԵՊՀ հրատ, 2002, էջ 14:

է, որ պատկանում է մեր արևմտյան բարբառներին»⁷: Արեղյանի այս դիտողությունները վերաբերում են 16-րդ դարի հայերենին և նրան հաջորդող ժամանակների լեզվի տարբերակվածությանը: Սա լրացուցիչ հավաստիք է, որ այդօրինակ լեզվական անմիօրինականությունները կարող էին լինել նաև 16-րդ դարից առաջ ևս:

Միջին հայերենի հիմնախնդիրներով հիմնովին զբաղվել է Հր. Աճառյանը: Միջին հայերենի տեսության քննությամբ Հր. Աճառյանն իր գնահատականները հիմնականում ամփոփել է «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորում: Աճառյանը լեզվական փաստերի վկայակոչմամբ հիմնավորում է, որ արդեն 11-րդ դարում նախորդ դարերի հայերենն անհասկանալի էր ժողովրդական լայն զանգվածներին և ստանձնել էր լոկ գրական լեզվի գործառույթ կատարելը՝ կոչվելով «գրաբար», որին ի հակադրություն՝ լայն շրջանառության մեջ էր մտել խոսակցական, ժողովրդական բանավոր լեզուն, Աճառյանի տերմինավորմամբ լինելով «գոեհիկ, մթին լեզու, գեղջուկ բան, ռամկօրեն, սովորական խօսք, աշխարհական խոսք, աշխարհաբար»⁸: Եվ այդ անհասկանալիությունը հիմք է դառնում, որ ժամանակի խոսակցականը դառնա գրականության լեզու՝ աստիճանաբար վերածվելով գրական լեզվի: Հ. Աճառյանն ամեննին միջին հայերենի սկզբնավորումը չի պայմանավորում միջին հայերենով ավանդված գրականության սկզբնավորման հետ՝ փաստելով, որ «երբ խոսում ենք միջին հայերեն գրականության սկզբնավորության մասին...., պետք չէ բնավ հասկանալ միջին հայերեն բանավոր լեզուն, որի ծագումը շատ ավելի հին էր, քան գրավորը»⁹:

Միջին հայերենի բարբառային հիմքի և տարբերակվածության հարցում Հ. Աճառյանն ունի ինքնատիպ դիրքորոշում՝ հայ բարբառների առաջացումը տեսնելով բացառապես 11-12-րդ դարե-

⁷ Մ. Արեղյան, *Գուսանական ժողովրդական տաղեր*, Երևան, Արմֆան, 1940, էջ 19-20:

⁸ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն, երկրորդ մաս*, Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 231:

⁹ Նշվ. աշխ., էջ 234:

րում: Աճառյանը գրում է. «Այս ժամանակ արդեն կազմված էին Հայաստանում և Հայաստանից դուրս գաղթավայրերում զանազան բարբառներ, իրարից ավելի կամ պակաս մեծ տարբերությամբ: Միջին հայերենն էլ ուրեմն մի բարբառ չէր, այլ ուներ իր զանազան ձևերը, ինչպես հին բարձր գերմաներենը: Այս զանազան ձևերը ընդհանրապես մեզ հայտնի չեն. կա նրանցից միայն մեկը (այն է կիլիկյան բարբառը), որ թեև գաղթավայրի մի բարբառ, բայց պետականության շնորհիվ ստացավ ավելի պատվավոր դիրք և անցավ գրականության: Այս բարբառը կամ լեզուն է՝ որ պիտի կոչենք այսուհետև կիլիկյան հայերեն և որ միջին հայերենի ճյուղերից մեկն է միայն»¹⁰: Նույն խնդրի մասին հավելում է. «Միջին հայերենը մի ընդհանուր լեզու չէր, այլ թե կային Հայաստանում և Հայաստանից դուրս բազմաթիվ միջին հայերեն բարբառներ, որոնցից մեկն էլ կիլիկյան հայերենն էր, որ պետականության շնորհիվ բարձրացավ գրականության: Ուրիշ բարբառների հետքեր երևան են գալիս տարբեր վայրերում գրված գրքերի և արձանագրությունների մեջ»¹¹: Հ. Աճառյանը, ընդունելով տարբեր բարբառների առկայությունը միջին հայերենում, օրախնդիր է համարում այս շրջանի հայերեն բարբառների վերաբերմամբ մի «կանոնավոր հետազոտության» անհրաժեշտությունը արձանագրությունների և հիշատակարանների ճշգրիտ հաշվառմամբ:

Ականավոր լեզվաբան Ս. Ղազարյանը քննարկվող խնդրին անդրադարձել է իր երկու կարևորագույն՝ «Հայոց լեզվի համառոտ պատմություն» և «Միջին հայերեն» աշխատություններում: Դեռևս առաջին աշխատության մեջ հեղինակը գրել է. «միջին հայերեն ասելով մենք հասկանում ենք 10-12-րդ դարերի հայ գրականությամբ ավանդված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջությունը, որը հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին»¹²: Ս. Ղազարյանն օբյեկտիվ-

¹⁰ Հ. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն, երկրորդ մաս*, Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 238:

¹¹ Նշվ. աշխ., էջ 253:

¹² Ս. Ղազարյան, *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Երևան, 1981, էջ 231:

րեն փաստում է միջին հայերենի՝ ոչ միատարր լեզու լինելը, նրանում տարբերակում նոր և հին շերտեր՝ լեզվական նոր տարրերի ավելի մեծ կիրառությունը տեսնելով գեղարվեստական, մասամբ՝ գիտական գրականության մեջ:

Երբեք չժխտելով այն հանգամանքը, որ միջին գրական հայերենը խարսխված է մեկից ավելի բարբառների վրա՝ Ս. Ղազարյանը «Միջին հայերեն» աշխատության մեջ օբյեկտիվորեն հակադրվում է Հր. Աճառյանի՝ կիլիկյան բարբառին նախապատվություն տալուն՝ նկատելով. «Մեր կարծիքով միջին հայերենը կիլիկյան հայկական թագավորությունից առաջ իր հիմնական արտահայտություններով ուրվագծված էր, հետևաբար կիլիկյան բարբառը չէր, որ գրական լեզվի աստիճանի բարձրացավ, թեև նա իր որոշ իրողություններով ներթափանցեց գրական լեզվի սահմանները»¹³: Ս. Ղազարյանն իր այս տեսակետը հիմնավորում է պատմական փաստերով՝ ընդգծելով, որ Կիլիկյան թագավորության ստեղծման ժամանակահատվածում կիլիկյան բարբառը միասնական չէր Կիլիկյայի բնակչության ոչ միատարր լինելու պատճառով. այնտեղ հանգրվանել էին Անիի, Վասպուրականի, Վանանդի, Գանձակի և այլ վայրերից գաղթած հայ բնակիչները, որոնք, բնականաբար, տարբեր բարբառների կրողներ էին: «Պատմական այդ հանգամանքը նկատի ունենալով՝ մենք կարծում ենք, որ միջին հայերենը Կիլիկյայի բարբառը չէր, և Կարսի ուսումնասիրությունը ոչ թե Կիլիկիայի բարբառի, այլ միջին հայերենի զարգացման մի փուլի ուսումնասիրություն է»-եզրակացրել է լեզվաբանը¹⁴: Սա տեղին դիտարկում է, քանի որ Կարսը, թեև իր աշխատությունը վերնագրել է որպես «Կիլիկյան հայերենի պատմական քերականություն» և տվել է միայն Կիլիկյան հայերենի բնութագիրը՝ հավանաբար այլ տարածքներին վերաբերող համապատասխան նյութերի բացակայության պատճառով, ընդամենը մի տարածք է ուսումնասիրել, որն էլ սխալմամբ հայագիտության մեջ վերագրվում է հայերենի զար-

¹³ Ս. Ղազարյան, *Միջին հայերեն*, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ, 1960, էջ 92:

¹⁴ Նույն տեղում:

գացման մի ողջ շրջանի: Իրիականում, Կիլիկյան հայերենը միջնադարի բարբառներից մեկն էր ընդամենը:

Ականավոր լեզվաբան Գ. Ջահուկյանը խնդրին անդրադարձել է «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» և «Հայոց լեզվի զարգացման փուլերը» աշխատություններում: Ջահուկյանը հայերենի միջին շրջանի համար տարբերակում է միջին հայերեն, միջին գրական հայերեն, կիլիկյան հայերեն, կիլիկյան գրական հայերեն եզրույթները: Ջահուկյանը պատահաբար չի կատարել այսպիսի տարանջատումները՝ հստակ գնահատելով միջին հայերենյան շրջանում լեզվական առումով առկա խառնակ իրավիճակը: Ըստ նրա, կիլիկյան հայերենը բանավոր-խոսակցական լեզվի՝ կիլիկյան պետականության շրջանակներում խոսվող ամբողջությունն է, որը հիմնական գծերով արտահայտված է նաև կիլիկյան գրական հայերենում և ընկալվում է որպես նրա գրական արտահայտությունը՝ իր մեջ բացի կիլիկյան հայերենի բարբառային խոսակցական լեզվի հիմնական հատկանիշներից ներառելով նաև այլ բարբառների առանձնահատկություններ: Միջին գրական հայերենը, ըստ Ջահուկյանի, կիլիկյան գրական հայերենի համեմատությամբ ավելի լայն հասկացություն է՝ ընդգրկելով ինչպես կիլիկյան գրական հայերենը, այնպես էլ Կիլիկիայից դուրս գրի առնված կամ գրավոր արտահայտություն ստացած միջին հայերենի դրսևորումները: Իսկ միջին հայերենը վերաբերում է միջնադարյան հայերենների ինչպես գրավոր, այնպես և բանավոր դրսևորման բոլոր արտահայտություններին: Ջահուկյանը հստակ է գնահատում միջին հայերենի տարբերակվածությունը. «Կիլիկյան միջին հայերենը դառնում է Կիլիկիայի հայկական պետականության պաշտոնական լեզուն, բայց պատմական որոշ հանգամանքներում չի կարողանում հասնել ընդհանուր գրական լեզվի աստիճանին. շարունակում է իբրև գրական լեզու գործել նաև գրաբարը, միաժամանակ

Կիլիկիայի սահմաններից դուրս գրավոր արտահայտություն են ստանում և միջին հայերենի բարբառային այլ տարբերակներ»¹⁵:

Բացարձակ ճշմարտություն է այն, որ միջնադարում գոյություն ունեին հայերենի բանավոր-խոսակցական լեզվի բազմաթիվ տարբերակներ, հետևաբար Կիլիկյան հայերենի գրական լեզու լինելու հանգամանքը պետք է ընդունել որոշ վերապահումներով՝ այդ փաստը բացառապես պայմանավորելով Կիլիկիայում պետականություն ունենալու հանգամանքով: Կիլիկյան հայերենի ոչ գրական լեզու լինելու մասին է խոսում նաև այն փաստը, որ այն իր գոյության ողջ ընթացքում միօրինակ չէր, համակարգված չէր, իսկ նշված հանգամանքները գրական լեզվի կարևորագույն հանգամանքներից են: Մինչդեռ Կիլիկյան հայերենի հիմքում ընկած բանավոր-խոսակցական հայերենը ներկայանում է տարբեր բարբառների լեզվատաղձի հանրագումարով՝ բնակչության տարասեռ լինելու հիմունքով: Կիլիկիան, ըստ ամենայնի, մի մեծ գաղթավայր էր, ուր մեկտեղվել էին բուն Հայաստանից արտագաղթած տարբեր բարբառների՝ հատկապես արևմտահայ բարբառների կրողների գերակշռությամբ: Հետևաբար, Կիլիկյան հայերենը գրական լեզու ընդունելիս պետք է այն ներկայացնել գրական լեզու՝ իր բարբառային, խոսակցական տարբերակների առատության ընդգծմամբ, կամ էլ՝ պետք է ընդունել ոչ համակարգված, ոչ միօրինակացված գրական լեզվի գոյությունը:

Միջնադարում ստեղծված գրականության մեջ բանավոր լեզվին անցնելու սկզբունքը ինքնըստինքյան կատարվող փաստ էր, որը դրսևորվում էր տեղային լեզվական առանձին դրսևորումներով ու պատկանելությամբ: Ամեն մի հեղինակ մղվում էր դեպի իր միջավայրի խոսակցական հայերենը, որոնք, բնականաբար, հանդես էին բերում հնչյունական, բառապաշարային, իմաստային, քերականական որոշակի տարբերություններ միմյանց նկատմամբ: Ինչպես գնահատել է Մարո Մուրադյանը, առկա տարբերությունները պատճառ էին միջին հայերենի՝ գրավոր արտահայտություն

¹⁵ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացման փուլերը*, Երևան, ԵՊՀ հրատ, 1964, էջ 43:

ստացող տերիտորյալ տարբերակների գոյացման¹⁶: Միջնադարի լեզվի քննությունը ենթադրում է նրանում գոյացած գրական լեզվի և նրա բարբառների ուսումնասիրություն, որը հնարավորություն կընձեռնի միջնադարի գրական լեզուն ու բարբառները մեկը մյուսից տարանջատել, որոշել նրանց մերձավորությունը և հեռավորությունը, սերտության աստիճանը, գրական լեզվի միասնական կամ ոչ միասնական լինելու իրական հիմքերը:

Garik Mkrtchyan- The question of distinction of the Middle Armenian language in Armenian studies.-In this article the question of dialect distinction of the middle Armenian language has been discussed in Armenian linguistics. Not only the whole published theories but also the ones regarding the issue have been pointed out , as well as all the possible versions have been mentioned to determine the classification and the time-extensive exact calculation of the linguistic facts in the middle Armenian language on showing the exact time when used and where they were common. The author came to the conclusion that during the period of the middle Armenian language under the reign of Armenian kingdom of Cilicia for some period of time the Cilician Armenian language changed to an official one because of some historical circumstances not being able to be a common literary language. Various dialect distinctions and usages in middle Armenian have obtained written expressions, thus not being involved in the Cilician Armenian language. Therefore, the author didn't exclude the existence of more than one literary languages during the usage period of the middle Armenian language under the existence of some dialects, which, however hasn't been proved yet.

¹⁶ Մ. Մուրադյան, *Գրական միջին հայերենի տերիտորյալ տարբերակների հարցի շուրջը* (12-14 դարեր), Լեզվի և ոճի հարցեր, 3-րդ, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ, 1975 թ., էջ 212:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	3
ԳԼՈՒԽ Ա. ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	5
Բառնապան Ջ.Ա., Հայոց ցեղասպանությունը և հայ բարբառները.....	5
Կատվայան Վ.Լ., Տարբերակայնությունը իբրև բարբառի կարևոր հատկանիշ.....	13
Միքայելյան Ժ.Ա., Մոկսի հայ բանահյուսությունը և խոսված- քը Հովսեփ Օրբելու դիտարկմամբ.....	22
Մկրտչյան Գ.Գ., Մշո բարբառի արդի վիճակը Գեղարքունիքի տարածաշրջանում.....	33
Մկրտչյան Գ.Գ., Մշո բարբառի տեղաշարժերը, տարածական բուն հիմքերի խախտման պատճառները եվ դիրքը հայերենի բարբառների շարքում.....	45
ԳԼՈՒԽ Բ. ՀՆՅՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	65
Միքայելյան Ժ.Ա., Արցախի բարբառային միավորների քմային բաղաձայնները.....	65
ԳԼՈՒԽ Գ. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	72
Բառնապան Ջ.Ա., Բառակազմական իրողություններ հայե- րենի բարբառներում.....	72
Խաչատրյան Հ.Ռ., Ազգակցական հարաբերություններ ար- տահայտող բառանունների բարբառային պատկերը Գեղար- քունիքի տարածաշրջանում.....	81
Խաչատրյան Հ.Ռ., <i>Ճանապարհ</i> հասկացության բառանվա- նումների գործառական-ծագումնաբանական քննությունը հայերենի բարբառներում.....	94
Խաչատրյան Հ.Ռ., <i>Փողոց</i> և <i>արահետ</i> հասկացությունների բարբառային բնութագիրը և նրանց բառիմաստային զար- գացումները հայերենի բարբառներում.....	103
Մեսրոպյան Հ.Հ., <i>Ծաղկազարդի</i> բարբառային անվանում- ները.....	115

Մեսրոպյան Հ.Հ., Տոնական օրերի բարբառային անվանումների շուրջ.....	131
Մեսրոպյան Հ.Հ., Քրիստոնեական խորհրդանիշների բարբառային դրսևորումները.....	140
Միքայելյան Ս.Ա., Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունների ձևախմաստային քննություն.....	154
Տեր-Գրիգորյան Լ., Սկրտումյան Ա.Մ., Գունանունները պարսկահայ տարածքի խոսվածքների օրինանքներում և անեծքներում.....	162
Տեր-Գրիգորյան Լ., Սկրտումյան Ա.Մ., Ջգայարանների անվանումներով բաղադրված դարձվածները պարսկահայ տարածքի խոսվածքներում.....	172
ԳԼՈՒԽ Դ. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.....	185
Բառնապյան Ջ.Ա., Դերանունները Սուշ-Տիգրանակերտի բարբառախմբում.....	185
Գևորգյան Գ.Գ., Դիտարկումներ հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննության շուրջ.....	192
Գևորգյան Գ.Գ., Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգի կառուցվածքային նկարագրությունը.....	201
Միքայելյան Ժ.Ա., Բայի երկրորդական վերլուծական բաղադրյալ ժամանակները հայերենի՝ արևմտյան խմբակցության մի քանի բարբառներում.....	211
ԳԼՈՒԽ Ե. ՊԱՏՄԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ.....	220
Աղաբեկյան Մ.Ա., Հայերեն բարբառային համապատասխանություններ ուրարտերենում.....	220
Կատվալյան Վ.Լ., Հինհայերենյան իրողություններ Բայագետի բարբառում.....	229
Կատվալյան Վ.Լ., Միջինհայերենյան իրողություններ Բայագետի բարբառում.....	240
Մկրտչյան Գ.Գ., Առկայացման քերականական կարգի առանձնահատկությունները միջին հայերենում և Սշո բար-	

բառում.....	254
Մկրտչյան Գ.Գ., Միջին հայերենում և Մշո բարբառում գործառող հոգնակերտ մասնիկները.....	265
Մկրտչյան Գ.Գ., Միջին հայերենի տարբերակվածության հարցը հայագիտության մեջ.....	281

ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՐԱԿ Բ

Ձևավորումը և էջադրումը՝
Մ.Խառատյանի

Կազմը՝ Ս. Արևշատյանի